

ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

**Մեծ Հայքի և
Ծոփքի անկա-
խության վերա-
կանգնումը**

Ք. ա. երկրորդ դարի սկզբում Արևելքում հանդես է գալիս մի նոր հզոր ուժ: Դա ստրկատիրական Հռոմն էր: 200–197 թթ. տեղի ունեցած Մակեդոնական երկրորդ պատերազմի ժամանակ Հռոմը, իր գերիշխանությունը ենթարկելով Հունաստանը, անմիջական սպառնալիք է ստեղծում նաև Փոքր Ասիայի համար: Հռոմը իր նվաճողական ծրագրերը քողարկելով՝ Հունաստանում և Արևելքում սկզբում հանդես է գալիս հույներին «ազատագրելու» կեղծ ու երկդիմի կարգախոսով, ինչպես և փոքր ժողովուրդներին «հովանավորողի» և «ազատագրողի» դիմակով:

Հռոմի կողմից Փոքր Ասիայի նկատմամբ ստեղծած անմիջական սպառնալիքը անխուսափելի է դարձնում սելևկյանների և հռոմեացիների ընդհարումը: Կողմերի միջև պատերազմը սկսվում է 192 թ.: 192–191 թթ. Հունաստանում՝ Թերմոպիլյան կիրճում, իսկ 190 թ. Փոքր Ասիայի Մազնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում Սելևկյան Անտիոքոս III-ը, չնայած իր ունեցած ուժերի գերակշռությանը, սոսկալի պարտություն է կրում և գլխովին ջախջախվում:

Մազնեսիայի մոտ Անտիոքոսի պարտությունը ոչ միայն դառնում է Սելևկյան պետության քայքայման և անկման սկիզբը, այլև ազդանշան է հանդիսանում սելևկյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական շարժման համար: Հայերը ևս 189 թ., օգտվելով ստեղծված դրությունից, Մեծ Հայքում Արտաշեսի, իսկ Ծոփքում Զարեհի գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում սելևկյան տիրապետության դեմ և վերականգնում իրենց ան-

կախութիւնը: Մեծ Հայքում իրեն անկախ թագավոր է հռչակում Արտաշէսը, իսկ Մոփքում՝ Զարեհը:

Արտաշէս I-ը (189–160) հելլենիստական կրթութիւն ստացած, վարչական ու ռազմական մեծ ընդունակութիւններ ունեցող իր ժամանակի նշանավոր պետական գործիչներից մեկն էր: Նա Հայաստանում հիմնադրում է Արտաշէսյան հարստութիւնը, որը շատ կարևոր դեր է կատարում Հայկական հողերի միավորման, Հայաստանի քաղաքական հզորացման, նրա տնտեսական և մշակութային կյանքի զարգացման ասպարեզներում:

Հայկական հողերի միավորումը

Հայկական առաջին միասնական պետութիւնը ստեղծում են Երվանդունիները: Հայկական այս հնագույն թագավորութիւնը իր գոյութեան ընթացքում շատ կարևոր դեր է կատարում Հայկական լեռնաշխարհի ցեղային երկրներն ի մի ձուլելու, միավորելու և հայ ժողովրդի կազմավորման գործընթացը խթանելու գործում: Սակայն Երվանդունիների միասնական թագավորութիւնը դասակարգային հարաբերութիւնների ու քաղաքային կյանքի թույլ զարգացման, երկրի տարբեր մասերի միջև գոյութիւն ունեցող տնտեսական ու քաղաքական կապերի թուլութեան, արտաքին ուժերի միջամտութեան և Ք. ա. III դարում ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով տրոհվում և բաժանվում է մասերի:

Սելևկյան տիրապետութիւնից ազատագրվելուց հետո էլ դեռևս Հայաստանը բաժանված էր չորս ինքնուրույն, մանր թագավորութիւնների: Բացի Մեծ Հայքի Արտաշէսյան և Մոփքի թագավորութիւններից, իրենց գոյութիւնը պահպանում էին նաև Այրարատ նահանգի Երվանդունիների և Փոքր Հայքի թագավորութիւնները: Նման բաժանվածութիւնը Հայկական հասարակութեան խոշոր բացասական երևույթներից և Հայաստանի թուլութեան հիմնական պատճառներից մեկն էր:

III դարում Հայաստանում տնտեսութեան բոլոր ճյուղերի, առևտրի և քաղաքների աննախընթաց զարգացումը, դասակարգային հարաբերութիւնների խորացումը, II դարի սկզբում հայ ժողովրդի կազմավորման գործընթացի հիմնականում ավարտվելը անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում նոր հիմքերի վրա հայկական հողերը միավորելու և ավելի կայուն ու կենսունակ կենտրոնացված միասնական պետականութիւն ստեղծելու համար:

Հայկական հողերի միավորման և կենտրոնացված միասնական

պետականությունն ստեղծման նախաձեռնությունը Արտաչես I-ի գրված լավորությունները իրենց ձեռքն են վերցնում Մեծ Հայքի իշխանավորները, որոնք ձգտում էին ընդարձակել իրենց տիրապետության սահմանները, ձեռք բերել նոր հողային կալվածքներ, հարստություններ և ստրուկներ: Մեծ Հայքի ստրկատերերի այս դասային ու անձնական շահագրգռվածությունը զուգադիպում էր Հայ ժողովրդի իրարից բաժանված տարբեր հատվածների առարկայական ցանկությունը: Ի տարբերություն իշխանավորների, ժողովրդական զանգվածները ձգտում էին իրենց ուժերն ու ջանքերը միավորել, համախմբել մի միասնական պետության մեջ՝ երկիրը օտարերկրյա թշնամիներից համատեղ կերպով պաշտպանելու, նրա տնտեսական ու մշակութային կյանքի հետագա վերելքը, նրա քաղաքական հզորությունը պահպանելու համար: Հայաստանի քաղաքները նույնպես առավել մեծ չափով շահագրգռված էին ընդարձակ, միասնական և ուժեղ պետականությունն ստեղծման մեջ, քանի որ միայն այդպիսի պետականությունը կարող էր հնարավորություններ ստեղծել ներքին շուկայի ընդարձակման, առևտրի զարգացման համար:

Արտաչես I-ը նախ որոշում է գրավել և իր թագավորությունը միացնել Արարատյան թագավորությունը, որտեղ դեռևս իշխում էր Երվանդ IV-ը: Արտաչեսը, ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, զգալի ուժերով հարձակվում է Երվանդի վրա, որն իր բանակով գտնվում էր Ախուրյան գետի հյուսիսային կողմերում: Ճակատամարտը տեղի է ունենում Երվանդավան կոչվող վայրում, որի ժամանակ Երվանդի զորքի մի մասը լքում է նրան և անցնում Արտաչեսի կողմը: Ճակատամարտում Երվանդը ծանր պարտություն է կրում, փախչում է և ամրանում մայրաքաղաքում: Արտաչեսի զորքը կրնկակոխ հետապնդելով փախուստի դիմած Երվանդին՝ շուտով պաշարում և գրավում է նաև Երվանդաշատը: Մայրաքաղաքի գրավման խառնաչփոթություն ժամանակ զինվորներից մեկը վաղորով սպանում է Երվանդին: Դրանից հետո Արտաչեսը, գրավելով նաև Բագարանն ու սպանելով Երվանդի եղբորը՝ քրմապետ Երվազին, ոչնչացնում է Երվանդունիների հարստությունը և տնտեսապես ու քաղաքային կյանքով մեծ չափով զարգացած Այրարատ նահանգը միավորում իր թագավորության հետ: Երվանդաշատի և Բագարանի գրավման ժամանակ Արտաչեսի ձեռքն են անցնում նաև զգալի հարստություններ:

Հ. Մանանդյանը գտնում է, որ Արմավիրում հայտնաբերված արձանագրություններից չորսը, որոնք գրված են մի քարի վրա, գտնվել են Երվանդ IV-ի մահարձանին և անմիջականորեն առնչվում են

նրա հետ: Առաջին ու երկրորդ արձանագրությունների մեջ Արմավիրի Միթրաս թագավորը բարև է ուղարկում Երվանդ թագավորին և ցանկանում, որ նա և նրա սերունդը տարվա բոլոր ամիսներին առողջ լինեն, և որ թագավորն իր թագավորությունը կառավարի բարեհաջող կերպով: Երրորդ ու չորրորդ արձանագրությունների մեջ Հաղորդվում է թագավորի (Երվանդի)՝ զինվորների կողմից սպանված լինելու և «գեղեցիկ երկիր Արմենիան» թշնամիների կողմից նվաճված լինելու մասին: Հետաքրքիր է նշել, որ Ստրաբոնը նույնպես գիտե, որ Երվանդունյաց Հայաստանի վերջին իշխողը եղել է Օրոնտես-Երվանդը, իսկ սրան հաջորդել է Արտաշեսը:

«Պատմում են,- վկայում է Ստրաբոնը,- որ Հայաստանը առաջ եղել է փոքր և մեծացել է Արտաշեսի և Զարեհի ձեռքով»: Ըստ Ստրաբոնի վկայության, Արտաշես I-ը Ատրպատականի մարերից գրավում է Կասպիանեն, որին հայերը կոչում էին Փայտակարան, Փավնիտիսը և Վասպուրականը, իբրևներից՝ Գուգարքը, Տայքը և Նորձյանը, Փոքր Հայքից և նրա շրջակա ցեղերից՝ Կարինը, Դերջանը, Եկեղյաց և Դարանաղյաց գավառները, իսկ սելևկյաններից՝ Տնորիքը: Մովսես Նորենացու տարբեր վկայություններից երևում է, որ այս ժամանակ Արտաշեսի թագավորության անբաժանելի մասն էին նաև Սյունիքը, Ուտիքը և Արցախը:

Զարեհի թագավորության ժամանակ Ծոփքը ևս իր տարածքը զգալի չափով ընդարձակում է Անտիտավրոսի կողմերը գտնվող երկրամասերի հաշվին:

Զարեհի մահից հետո Արտաշեսը փորձում է Ծոփքը նույնպես միացնել Մեծ Հայքի թագավորությանը: Այդ նպատակով նա հարձակվում է Ծոփքի թագավոր Մեհրուժանի վրա, որը չկարողանալով դիմադրություն ցույց տալ, փախչում է Կապադովկիա և ապաստանում Արիարաթես V-ի մոտ: Կապադովկիան, որի համար ցանկալի չէր և նույնիսկ վտանգավոր էր Մեծ Հայքի հզորացումը, զինվորական ուժերով օգնում է Մեհրուժանին, որը վերագրավում է իր հայրենի թագավորությունը: Այսպիսով, Կապադովկիայի միջամտության հետևանքով Արտաշեսին չի հաջողվում հայկական այս կարևոր երկրամասը միավորել իր թագավորությանը:

Չնայած Ծոփքում կրած անհաջողությանը, Արտաշես I-ին հաջողվել էր ստեղծել հայկական մի ընդարձակ և հզոր թագավորություն, որի սահմանները տարածվում էին գրեթե Կասպից ծովի արևմտյան ափերից մինչև Եփրատ գետը, Վիրահայոց լեռներից մինչև Տավրոսյան լեռնաշղթան: Մեծ Հայքի թագավորությունն արդեն իր սահ-

մանների մեջ ընդգրկում էր գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը. Այրարատը, Սյունիքը, Գուգարքը, Տայքը, Արցախը, Ուտիքը, Վասպուրականը, Մոկքը, Բարձր Հայքը, Տարոնը, Աղձնիքը, Կորճեքը, Փայտակարանը և Պարսկահայքը: Անշուշտ, այս հանգամանքը նկատի ունի Հոռոմեացի պատմիչ Պոլիբիոսը, երբ Արտաշեսին անվանում է «Հայաստանի մեծագույն մասի կառավարիչ»:

Կարճ ժամանակամիջոցում Մեծ Հայքի թագավորության այսպես ընդարձակվելն ու հզորանալը առաջին հերթին հետևանք էր այն բանի, որ Արտաշեսի գրաված նահանգները, բացի Կասպիանե երկրամասից, վաղուց արդեն հայացել էին, կամ նրանց բնակչության մեծամասնությունը կազմված էր հայեր էին: Արտաշեսը, իրոք, ոչ միայն գրավում էր այս կամ այն երկրամասը, այլև միավորում հայկական հողերը մի միասնական պետության մեջ: Նա այդ ձեռնարկով հիմնական գծերով իր ավարտին էր հասցնում վաղուց սկսված հայ ժողովրդի կազմավորման գործընթացը և քաղաքական իշխանությունամբ ամրապնդում այն: Այս տեսակետից էլ իրավամբ Արտաշես I-ը հանդիսացել է ոչ միայն հայկական կենտրոնացված պետության հիմնադիրը, այլև հայկական հողերի միավորողը:

Արտաշես I-ի ներքին քաղաքականության,

Արտաշես I-ի ներքին քաղաքականությունը նրա պետական ու մշակութային շինարարության մասին հին, արժանահավատ սկզբնաղբյուրներից և ժողովրդական վեպից ու երգերից քաղելով՝ մեզ որոշ տեղեկություններ է հաղորդում Պատմահայր Մովսես Ոորենացին:

Արտաշես I-ը ստեղծելով մի ընդարձակ պետություն, բնականաբար պետք է մտածեր նաև այդ պետության կառավարման ու ամրապնդման մասին: Կենտրոնական իշխանությունը ամրապնդելու, տեղերում առաջացող ապստամբությունները ճնշելու նպատակով նա պետական, զինվորական կարևոր պաշտոնները և երկրի տարբեր մասերի կառավարման գործը կենտրոնացնում է իր որդիների ու մերձավորների ձեռքում: Նա իր անդրանիկ որդուն՝ Արտավազդին ոչ միայն դարձնում է պետության երկրորդ դեմքը և նրան հանձնում արևելյան նահանգների կառավարումն ու պաշտպանությունը, այլև նրան նշանակում է հայկական բանակի սպարապետ: Իր երկրորդ որդուն՝ Վրույրին, որը նաև իմաստուն և բանաստեղծ մարդ էր, նշանակում է Ֆինանսական, հարկային, շինարարական և արքունի բոլոր գործերի կառավարիչ, չորրորդ որդուն՝ Տիրանին, հանձնարարում է արևմտյան, հինգերորդ որդուն՝ Ջարեհին, հյուսիսային, իսկ իր դայակ

Սմբատին՝ հարավային նահանգների կառավարումը: Ինչպես Արևելքի մյուս երկրներում, նույնպես Հայաստանում կարևոր պաշտոններից մեկն էր նաև քրմապետությունը պաշտոնը: Դրա համար էլ Արտաշեսը իր երրորդ որդուն՝ Մաժանին, նշանակում է քրմապետ:

Արտաշեսի թագավորության ժամանակ զգալի չափով բազմանում, ընդարձակվում և զարգանում են պետական, տաճարական ու մասնավոր դաստակերտային և ազարակային տնտեսությունները: Սրանց զարգացմանը նպաստում են մեծ թվով գերեվարված ստրուկները, որոնց Արտաշեսը և Մեծ Հայքի իշխանավորները ձեռք էին բերել իրենց գրավումների և արտաքին արշավանքների ժամանակ:

Մովսես Խորենացին վկայում է, որ Արտաշեսը հողերի վերաբաժանում է կատարում և իր անունով հատուկ սահմանաքարեր է դնում գյուղերի ու ազարակների միջև: Պատմահոր նշած այս սահմանաքարերից հինգ հատ հայտնաբերվել են Սևանա լճի ավազանում, որոնց վրա արամեատառ արձանագրություններ նշված են Արտաշեսի և նրա հոր՝ Զարեհի անունները: Հետաքրքիր է նշել, որ Արտաշեսի անունից գրված այս արձանագրությունների մեջ կարդացվում է նաև «Երվանդական» տերմինը: Եթե այս տերմինը վերաբերում է Արտաշեսին, ապա պետք է կարծել, որ դրանով նա ցանկացել է նշել, որ ինքը հանդիսանում է Երվանդունիների թագավորության ժառանգորդը և նրանց ավանդույթների շարունակողը: Կարելի է ենթադրել նաև, որ ինքը՝ Արտաշեսը, նույնպես եղել է Երվանդունիների տոհմից, մասնավորապես որ հայ իշխողների մեջ Արտաշես անունը դեռևս հիշատակված է Դարեհ I-ի արձանագրության մեջ «Դադարչիչ», իսկ Քսենոփոնի մոտ՝ «Արտուխաս» ձևերով: Այս տեսակետից ուշագրավ է, որ Մովսես Խորենացու մոտ ևս Երվանդ IV-ը և Արտաշեսը համարվում են նույն թագավորական տոհմից:

1959 թ. էջմիածնի չրջանի Փարաքար գյուղի մոտ մի հին հուշարձանի ավերակներում հայտնաբերվել է Արտաշեսի և նրա հոր՝ Զարեհի անունը կրող մի նոր արամեատառ արձանագրություն: Հետազոտողները ենթադրում են, որ այդ հուշարձանը մեհյան-աշտարակ է, որը կառուցել է Արտաշեսը: Նույն այս տեղում հայտնաբերվել է նաև հայոց Արտավազ II թագավորի (55-34) կտրած արծաթե դրամներից մեկը:

Բնական է, որ Հայկական լեռնաշխարհի և հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը միավորումը մի միասնական պետության կազմի մեջ պետք է նպաստեր Հայաստանի նաև տնտեսական ու մշակութային կյանքի նոր վերելքին:

«Բայց ասում են,- վկայում է Մովսես Խորենացին,- որ Արտաշեսի ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող չէր կարելի գտնել ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային մասերում, երկրի շենության պատճառով»: Պատմահայրը մի այլ տեղ վկայում է, որ որոշ ժամանակ Հայերի մոտ ունայնացել էին մեծամեծ արվեստներն ու գիտությունները, մոռացվել էին նավագնացությունը, արհեստները, մասամբ նաև երկրագործությունը, սակայն այդ բոլորը վերստին ստեղծվում և զարգանում են Արտաշեսի օրոք: Արտաշեսի և Սաթենիկի ամուսնություն կապակցությամբ ժողովրդական երգի մեջ ասված է.

Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի հարսնութեան Սաթինկանն:

Հին ժողովրդական վեպի մեջ Արտաշեսի մահվան առթիվ ասված է, որ նրա դագաղը, թագը և զենքերը ոսկեղեն էին, գահույքը և անկողինը պատրաստված էին բեհեզից, իսկ պատմուճանը՝ ոսկեթել բեհեզից:

Չնայած վերոհիշյալ վկայությունների մեջ եղած խիստ մեծ չափազանցություններին, այնուամենայնիվ, դրանք մասամբ ցույց են տալիս, որ իրոք Արտաշեսի թագավորություն տարիները հանդիսացել են Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի նոր և աննախընթաց զարգացման սկիզբը:

Հայաստանում տնտեսական կյանքի ընդհանուր վերելքը, բայց հատկապես արհեստագործության, առևտրի և դրամական շրջանառության հետագա զարգացումը անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում նոր քաղաքների և քաղաքատիպ ավանների առաջացման համար: Արտաշեսը 180-160 թթ. ընթացքում Արարատյան դաշտում, Արաքսի ձախ ափին կառուցում է մի նոր մայրաքաղաք, որը նրա անունով կոչվում է Արտաշատ:

«Արտաշեսը,- վկայում է Մովսես Խորենացին,- գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը իրար էին խառնվում, և հավանելով՝ բլրի վրա շինում է քաղաք և իր անունով կոչում Արտաշատ»:

«Հայաստանի քաղաքներն են,- ասում է Ստրաբոնը,- Արտաշատը (որն անվանում են նաև Արտաշաշատ և որը հիմնել էր Հաննիբալը Արտաշեսի համար) և Արքստան: Երկու քաղաքներն էլ գտնվում են

Արաքսի վրա, Արքսատան՝ Ատրպատականի մոտ, իսկ Արտաշատը՝ Արաքսյան դաշտի մոտ: Այս վերջինը գեղեցիկ քաղաք է և երկրի մայրաքաղաքն է: Նա չինված է գետի թև ձևացրած թերակղզու վրա, որի պարիսպները շուրջանակի պատում են գետը, բացի պարանոցից, որը փակված է խրամով և պատնեշով»:

Հոռմենացի պատմագիր Տակիտոսի և Ագաթանգեղոսի վկայություններից հայտնի է նաև, որ Արտաշատը Արաքս գետի հակադիր ափի հետ կապված է եղել կամուրջներով:

Չնայած Արտաշատի տեղադրություն մասին սկզբնաղբյուրների հաղորդած վերոհիշյալ և այլ տեղեկություններին, դժբախտաբար մինչև այժմ նրա ավերակների ճիշտ տեղը հնագիտական հետազոտումներով պարզված չէ: Միայն ուսումնասիրողները ենթադրում են, որ նրա ավերակները պետք է գտնվեն Ուոր Վիրապի շրջակայքում:

Ստրաբոնը և Պլուտարքոսը վկայում են, որ Արտաշատը կառուցվել է Կարթագենի նշանավոր զորավար Հաննիբալի խորհրդով, և իբր սա է Արտաշեսին ցույց տվել քաղաքի կառուցման տեղը և ուրվագծել նրա հատակագիծը: Սակայն ուսումնասիրողներից չատերը խիստ կասկածելի են համարում ընդհանրապես Հաննիբալի Հայաստանում լինելը, որովհետև ավելի ստույգ աղբյուրներից հայտնի է, որ Հաննիբալը Մագնեսիայի ճակատամարտից հետո սելևկյան Անտիոքոս III-ի մոտից սկզբում փախել էր Կրետե կղզին, իսկ հետո՝ Բյութանիա, որտեղ և Ք. ա. 183 թ. թույն խմելով, ինքնասպանությունը վերջ էր տվել իր կյանքին:

Արտաշատի տեղը չատ հաջող էր ընտրված, անկախ նրանից, թե ով էր ընտրել նրա տեղը կամ ուրվագծել նրա հատակագիծը: Նա կառուցված էր ոչ միայն տնտեսապես ավելի զարգացած, քաղաքային կյանքի զգալի ավանդույթ ունեցող և արտաքին թշնամիների հանկարծակի հարձակումներից ավելի ապահով Արարատյան դաշտում, այլև Չինաստանից, Միջին Ասիայից, Միջագետքից ու Մարաստանից եկող և դեպի Սև ծովի նավահանգիստները գնացող միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհների հանգուցակետում:

Արտաշեսը իր մայրաքաղաքը արագ կերպով բնակեցնելու և զարգացնելու նպատակով Երվանդաշատից, Արմավիրից և այլ վայրերից այնտեղ է տեղափոխում մեծ թվով բնակիչներ: Նա Բագարանից Արտաշատ է տեղափոխում նաև հայկական աստվածների, ինչպես և հունական Արտեմիս և Ապոլլոն աստվածների արձանները, որոնցից Ապոլլոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհի վրա:

Արտաշատը սկսում է արագ կերպով զարգանալ: Կարճ ժամանակից հետո նա դառնում է ոչ միայն Հայաստանի պետական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոնը, այլև Առաջավոր Ասիայի բազմամարդ, հարուստ, վաճառաչահ քաղաքներից, միջազգային տարանցիկ առևտրի խոշորագույն հանգույցներից մեկը: Առևտուր անելու համար այստեղ էին գալիս ոչ միայն մոտիկ ու հարևան, այլև հեռավոր երկրների վաճառականները:

Պատահական չէ, որ Ստրաբոնը Արտաշատը անվանում է «գեղեցիկ քաղաք», իսկ Պլուտարքոսը՝ «մեծ և շատ գեղեցիկ քաղաք»: Պլուտարքոսը մի այլ տեղ Արտաշատը անվանում է «Հայաստանի Կարթագեն», անշուշտ, այդ բնորոշման տակ նկատի ունենալով ոչ միայն Արտաշատի ամրությունը, այլև նրա բազմամարդ, հարուստ և վաճառաչահ լինելը:

Բացի Արտաշատից, Արտաշեսի թագավորության ժամանակ են առաջանում նաև Զարիշատ և Զարեհավան խոշոր քաղաքները, որոնց կառուցումը վերագրվում է նաև Արտաշեսի հորը՝ Զարեհին, կամ նրա նույնանուն որդուն: Հավանաբար, նույն այս ժամանակ է առաջանում նաև Արքաստա քաղաքը, որի մասին հաղորդում է Ստրաբոնը:

Հայաստանում քաղաքների, առևտրի ու դրամական շրջանառության հետագա զարգացման կարևոր ապացույցներից մեկն էլ այն է, որ Արտաշատում հիմնադրվում է փողերանոց, որտեղ սկսում են կտրել տեղական դրամներ: Հայտնաբերվել են պղնձե երկու դրամներ, որոնց վրա հունարեն գրված է Արտաքաստա, այսինքն՝ Արտաշատ:

Արտաշես I-ի արտաքին քաղաքականությունը

Արտաշես I-ի արտաքին քաղաքականության մասին մեզ են հասել միայն պատահական և կցկտուր տեղեկություններ:

Ստրաբոնը վկայում է, որ Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III-ի պարտությունից հետո Արտաշեսը և Զարեհը հարել ու անցել էին հաղթող հռոմեացիների կողմը: Արտաշեսը իրեն արտաքուստ հռոմեացիների կողմնակից հայտարարելով և գուցե նրանց մոտ դեսպաններ ուղարկելով՝ անշուշտ, հետապնդել էր մի հիմնական նպատակ, այն է՝ իր երկիրը զերծ պահել պարտված, բայց դեռ զգալի ուժեր ունեցող Սելևկյան պետության հարձակումներից: Անկասկած, մասամբ Արտաշեսի այս հեռատես քաղաքականության և Հայաստանի նկատմամբ հռոմեացիների հանդես բերած բարյացակամության պատճառով էր, որ Անտիոքոսը 187 թ. դեպի Արևելք

կատարած իր արչավանքի ժամանակ չէր համարձակվել մտնել Հայաստան, արչավանք, որի նպատակն էր ձեռք բերել դրամ՝ հոռմեացիների սահմանած պատերազմական տուգանքը վճարելու համար:

180 թ. պատերազմ է առաջանում, մի կողմից՝ Պոնտոսի ու Փոքր Հայքի, իսկ մյուս կողմից՝ Կապադովկիայի, Պերգամոնի ու Բյութանիայի թագավորությունների միջև: Սակայն հոռմեացիների միջատույթյան պատճառով չուտով պատերազմը դադարեցվում և կողմերի միջև հաշտության պայմանագիր է կնքվում: Պոլիբիոսը, որն իր աշխատությունների մեջ ամբողջությամբ բերել է այդ դաշինքը, ավելացնում է, որ պայմանագրին մասնակից էր արվել նաև «Արտաշեսը, որը Հայաստանի մեծագույն մասի կառավարիչն էր»: Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ արդեն այս ժամանակ Հայաստանը այնքան էր ուժեղացել և նրա հեղինակությունն ու դերը միջպետական հարաբերություններում այնքան էր բարձրացել, որ նույնիսկ Փոքր Ասիայի իրար դեմ կռվող թագավորները դիմել էին Արտաշեսի հաշտարար միջնորդությունը:

Չնայած Սելևկյան թագավորության թուլացմանը, այնուամենայնիվ, Հայաստանի նկատմամբ նրա վտանգը դեռևս չէր վերացել: Մոտ 165 թ. Անտիոքոս IV Եպիփանեսը (175–164), ինչպես վկայում են Դիոդորոս Սիկլիդացին և Ապպիանոսը, հարձակվում է Հայաստանի վրա և պարտություն մատնում Արտաշեսին: Սակայն սելևկյան տիրապետությունը Հայաստանում երկար չի տևում: Հավանաբար նույն տարում Արտաշեսը, օգտվելով Հրեաստանում սելևկյան զորքի կրած ծանր պարտությունից ու կորուստներից, Հայաստանից դուրս է քշում սելևկյաններին և լրիվ կերպով վերականգնում նրա անկախությունն ու ինքնուրույնությունը:

161 թ. սելևկյան կուսակալ Տիմարքոսը Մարաստանում ապստամբություն է բարձրացնում և իրեն հայտարարում թագավոր: Արտաշեսը, որի համար խիստ ցանկալի էր Սելևկյան թագավորության հետագա թուլացումը և Հայաստանի համար նրա անվտանգ դառնալը, ընդառաջում է Տիմարքոսի ցանկությունը և դաշն կնքում նրա հետ: Արտաշեսի ցույց տված ռազմական օգնությամբ Տիմարքոսը ոչ միայն ամրապնդում է իր դիրքերը Մարաստանում, այլև սելևկյաններից գրավում է նաև Հյուսիսային Միջագետքը:

Արտաշեսի արտաքին պատերազմների և քաղաքականությունների մասին մեզ որոշ տվյալներ են հասել նաև ժողովրդական վեպից, որն իր Պատմությունների մեջ բերել է Մովսես Ուորենացին: Ըստ այդ վեպի Արտաշեսը կռիվներ է մղում նաև ալանների և նրանց միացած լեռ-

նական ցեղերի դեմ, որոնք Վրաստանի կողմերից ներխուժել էին Հայաստանի հյուսիսային շրջանները: Տեղի ունեցած ճակատամարտում պալանները պարտվում են և ստիպված են լինում բարեկամական դաշինք կնքել Արտաշեսի հետ:

Հայկական և վրացական ժողովրդական վեպի կամ զրույցների համաձայն Արտաշեսը կռիվներ է մղում նաև վրացիների դեմ: Սակայն այդ կռիվները նույնպես վերջանում են բարեկամական դաշինքի կնքումով: Ըստ վրացական ավանդույթյան, վրացիները պարտավորվում են Հայաստանի վրա արտաքին թշնամիների հարձակման դեպքում իրենց ամբողջ ռազմական ուժով օգնել Արտաշեսին, իսկ Հայաստանի սահմաններից դուրս՝ Արտաշեսի մղած պատերազմների ժամանակ նրան տրամադրել տասը հազարանոց զորք:

Ժողովրդական վեպի հաղորդած այս տեղեկություններից դժվար է նկատել, որ Արտաշեսի վերոհիշյալ կռիվների և կնքած բարեկամական դաշինքների հիմնական նպատակն է եղել Հայաստանի հյուսիսային շրջաններն ապահովել պալանների ու վրացիների ներխուժումից, ինչպես և Հայաստանի վրա արտաքին թշնամիների հարձակման դեպքում օգտագործել նրանց ռազմական ուժերը:

Արտաշեսի մահից հետո Հայաստանում գահ Հայաստանը Ար- է բարձրանում նրա անդրանիկ որդին՝ Արտա- տաշես I-ի հաջորդ- վազդ I-ը (մոտ 160–115):

Ների ժամանակ Բ. ա. II դարի կեսից սկսած մեծ չափով ուժեղանում է Պարթևական թագավորությունը: Օգտվելով Սելևկյան պետության թուլացումից և ներքին կռիվներից՝ պարթևները իրար հետևից գրավում և իրենց թագավորությանն են միացնում Մարաստանը, Պարսկաստանը և Միջագետքը: Նրանք մոտավորապես 150 թ. գրավելով և իրենց գերիշխանությունը ենթարկելով նաև Մարաստան–Ատրպատականը՝ փտանգավոր հարևան են դառնում Հայաստանի համար: Պարթևական թագավորությունը մեծ հզորության է հասնում հատկապես Միհրդատ II Մեծի ժամանակ (123–88): Իր պետությունը սպառնացող միջինասիական քոչվոր ցեղերին հաղթելուց հետո սա զգալի նվաճումներ է կատարում նաև արևմուտքում ու վերջնականապես ամրապնդում պարթևների տիրապետությունը նոր նվաճված երկրներում:

Արտավազդ I-ի մասին արտաքին սկզբնաղբյուրներից մեզ հասել է միայն մի փոքր տեղեկություն: Լատին մատենագիր Ջուստինոսը խոսելով պարթևական Միհրդատ II թագավորի մղած պատերազմների ու նվաճումների մասին, ավելացնում է. «Վերջը կովեց հայոց

Թագավոր Արտավազդի դեմ»: Այս պատերազմում Թեև Հայաստանը չէր նվաճվել պարթևների կողմից, բայց և Արտավազդը ստիպված էր եղել ընդունել պարթևների գերիշխանությունը և ժառանգ չունենալու պատճառով իր եղբորորդուն՝ Տիգրանին, պատանդ տալ պարթևների մոտ:

Որ իրոք ինչպես այս, նույնպես և հետագա ընդհարումների ժամանակ պարթևներին չէր հաջողվել նվաճել Հայաստանը, շատ պարզ կերպով մատնանշված է Ստրաբոնի մոտ: «Պարթևները,– վկայում է Ստրաբոնը,– տիրեցին մարերի և բաբելոնացիների երկրներին, բայց ո՛չ Հայաստանին: Թեև հարձակումներ հաճախ տեղի ունեցան, սակայն երկիրն ուժով չնվաճվեց»:

Արտավազդ I-ի մասին պատմական թույլ հիշողություններ և նրա մասին հյուսված ժողովրդական վեպի կամ առասպելների առանձին կտորներ պահպանվել են նաև Մովսես Խորենացու մոտ:

Արտավազդը, ինչպես վկայում է Մովսես Խորենացին, քաջ, բայց միաժամանակ անձնահաճ, հպարտ, իշխանասեր, դաժան ու նախանձոտ մի մարդ էր: Սա իր գահակալության հենց սկզբում, կասկածելով իր եղբայրների հավատարմության վրա, նրանց արքունիքից և Այրարատ նահանգի արքունի կալվածքներից հեռացնում է Աղիովիտի և Առբերանի գավառները, բացի Տիրանից, որին պահում է իբրև իր ժառանգորդը, որովհետև ինքը որդիներ չունեցր:

Արտավազդին հաջորդում է նրա եղբայրը՝ Տիրանը, որին Ապպիանոսը և վրաց տարեգրությունը անվանում են նաև Տիգրան: Սա պարթևների մոտ պատանդ տրված և հետագայում Հայաստանում գահ բարձրացած Տիգրան II-ի հայրն էր:

Տիրան–Տիգրան I-ի (մոտ 115–95) գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Միայն Մովսես Խորենացին հայտնում է, որ սա մեծամեծ գործեր չի կատարել, ապրել է խաղաղությամբ, զբաղվել է որսորդությամբ ու զրոսանքներով և թագավորել է քսանմեկ տարի:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀԶՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

**Տիգրան II-ի
գահակալությունը
և
Տիրան Մեծ (95–55):**

Ք. ա. 95 թ. Հայկական գահ է բարձրանում հին Հայաստանի ամենանշանավոր պատմական դեմքերից մեկը՝ Տիգրան II-ը, որին պատմագրության մեջ հաճախ անվանում են նաև Տիգրան Մեծ (95–55):

Տիգրան II-ը, ինչպես արդեն նշվել է, մինչև գահ բարձրանալը պարթևների մոտ պատանդ էր: Նա իր հոր մահից հետո սահմանակից գավառներից «70 հովիտներ» կոչվող տեղանքը պարթևներին զիջելով՝ ազատվում է պատանդությունից, վերադառնում Հայաստան և ժառանգում իր հոր գահը: Այս ժամանակ նա արդեն 45 տարեկան էր:

Տիգրան II-ը պետական-վարչական ու ռազմական բացառիկ ունակություններ ունեցող, դիվանագիտական հմտությամբ օժտված, տաղանդավոր և եռանդուն զորավար-միապետներից մեկն էր: Նա շուտով դառնում է նաև Արևելքի խոշոր նվաճողներից ու ականավոր միապետներից մեկը:

Հայաստանը Տիգրան II-ի ժամանակ հասնում է իր քաղաքական հզորության ամենաբարձր կետին և դառնում Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը:

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի հզորացումը նախ սերտորեն կապված էր երկրի ներքին արտադրողական ուժերի, տնտեսության զարգացման հետ: Արեմենյան դարաշրջանից սկսած՝ Հայաստանի տնտեսությունը անչեղ կերպով զարգանում և վերելք էր ապրում: Այդ վերելքը մեծ չափով ուժեղանում է հելլենիզմի դարաշրջանում և առանձնապես Հայկական հողերի միավորումից հետո: Որպես բնական զարգացման հետևանք, երկրում կուտակվում են տնտեսական զգալի ուժեր: Արդեն Ք. ա. I դարի սկզբում Հայաստանում գյուղատնտեսություն և արհեստագործությունների բոլոր ճյուղերը հասել էին զարգացման այնպիսի աստիճանի, որ դրանք, նույնիսկ արտադրողների զգալի մասի՝ բանակում ծառայության զորակոչվելուց հետո էլ, կարող էին ոչ միայն բավարարել բնակչության տնտեսական պահանջները, այլև պարենավորել ու հանդերձավորել թվական մեծ կազմ ունեցող բանակը և այն զինել իր ժամանակի զենքերով ու ռազմական տեխնիկայով:

Տիգրան II-ը և Հայոց ավագանին, օգտագործելով երկրի տնտեսական հնարավորությունները և կուտակված պաշարները, կարողանում են կարճ ժամանակամիջոցում ստեղծել ժամանակի մեծ և ուժեղ բանակներից մեկը: «Հետևակ կովողները,՝ վկայում է Մովսես Սորենացին,՝ ձիավոր դարձան, պարսավորները՝ հաջող աղեղնավորներ, շերտավորները զինվեցին սրերով ու տեղավորները՝ նիզակներով, մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստ-

ներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու ղենքերի փայլատակումը բավական էին թշնամիներին հալածելու և վանելու համար»:

Հայաստանի հզորացման մեջ շատ կարևոր դեր են կատարում նաև հայ ժողովրդի կազմավորման գործընթացի ավարտումը և հայկական հողերի միավորումը մի միասնական պետության կազմի մեջ: Այս նշանակալից իրողությունները ոչ միայն տնտեսական, քաղաքական ու մշակութային ավելի սերտ կապեր են հաստատում երկրի տարբեր մասերի միջև, ոչ միայն համախմբում են ժողովրդի ուժերը և միավորում նրա ջանքերը, այլև ամրապնդում ու հզորացնում են կենտրոնական իշխանությունը: Դրանք հնարավորություն են ընձեռում նաև կազմակերպելու նույն լեզվով խոսող մարտիկներից համալրված, ավելի վստահելի, համախմբված, կայուն ու մարտունակ բանակ:

Ք. ա. II դարի կեսից Արևելքի շատ երկրների, այդ թվում և Հայաստանի արտաքին դրությունը զգալի չափով ծանրանում է, մի կողմից՝ Պարթևական թագավորության, իսկ մյուս կողմից՝ Հռոմի նվաճողական քաղաքականության պատճառով:

Այս ժամանակ պարթևները, ինչպես արդեն նշվել է, նվաճելով Մարաստանը, Պարսկաստանը, Ատրպատականը և Միջագետքը, ոչ միայն վտանգավոր հարևան են դառնում, այլև իրենց մի շարք հարձակումներով սպառնալիք են ստեղծում Հայաստանի անկախության համար:

Պարթևական թագավորության հետ գրեթե միաժամանակ Արևելքում իր զավթողական նվաճումներն է սկսում նաև Հռոմեական հանրապետությունը: Հռոմեացիները, որպես նվաճողներ, առաջին անգամ ոտք դնելով Փոքր Ասիայի արևմտյան մասում՝ 133 թ. գրավում են Պերգամոնի ընդարձակ թագավորությունը, իսկ 102 թ.՝ արևմուտյան Լեոնային Կիլիկիան: Շուտով Հռոմը ակտիվ կերպով միջամտում է նաև Գաղատիայի, Բյութանիայի և Կապադովկիայի ներքին գործերին և այդ երկրները զցում իր ազդեցություն տակ: Հռոմեական զենքի ուժով գահ բարձրացած կամ իրենց գահը այդ ուժով պահպանող հիշյալ երկրների թագավորները ոչ միայն կախման մեջ են ընկնում Հռոմից, այլև Հռոմի ձեռքին դառնում են խաղալիք: Հռոմեական նվաճող զինվորների հետքերով Արևելքի երկրներն են ներխուժում նաև կապալառուները, ստրկավաճառները և առևտրա-վաճախատուական տարրերը, որոնք սկսում են դաժան և անզուսպ կերպով կողոպտել ու շահագործել տեղական բնակչությունը:

Արևելքում ստեղծված վերոհիշյալ քաղաքական իրադրությունների հետևանքով Հայաստանը, Սելևկյան Ասորիքը և Պոնտոսը անմիջականորեն կանգնում են արևելքից Պարթևական թագավորության, իսկ արևմուտքից՝ Հռոմի նվաճման վտանգի առաջ:

Սակայն Տիգրան II-ի գահ բարձրանալու ժամանակ Հայաստանի արտաքին դրությունը մեծ չափով բարելավվում է: Առժամանակ ոչ միայն վերանում են Հայաստանին սպառնացող հռոմեական և պարթևական վտանգները, այլև ընդհակառակն՝ Հայաստանի հզորացման, նրա արտաքին նվաճումների և հաղթական առաջընթացի համար ստեղծվում են միանգամայն նպաստավոր արտաքին պայմաններ:

Հռոմեական հանրապետությունը սկսում է խոր ճգնաժամ ապրել: Դեռևս Ք. ա. II դարի 30-ական թվականներից Հռոմում ծավալված ստրուկների պայքարը և ներքին քաղաքացիական կռիվները սուր և կատաղի բնույթ են ստանում Ք. ա. I դարի սկզբում: Կատաղի և արյունահեղ կռիվներ են սկսվում դեմոկրատիայի և հետադիմության (պոպուլյարների և օպտիմատների), մարիուսականների և սուլլայականների միջև, որոնք հասցնում են Ք. ա. 83 թ. Հռոմում Սուլլայի հետադիմական բռնապետության հաստատմանը: Սուլլայի մահից (Ք. ա. 78 թ.) հետո քաղաքացիական կռիվները վերսկսվում են նոր թափով: Իսպանիայում ամրացած ընդդիմության պարագլուխ, մարիուսական Սերտորիուսը մի քանի տարի հաջող և հաղթական պատերազմներ է մղում սուլլայական վարչակարգի կողմնակիցների դեմ: 74 թ. Սպարտակի գլխավորությամբ Հռոմում բռնկվում է Հին աշխարհի ստրկական ամենախոշոր ապստամբությունը, որը տևում է մինչև Ք. ա. 71 թ.:

Քաղաքացիական կռիվներում և Սպարտակի դեմ մղվող պայքարում Հռոմը կորցնում է զգալի ուժեր և միջոցներ: Հռոմը այս ժամանակ առավելապես զբաղված լինելով իր ներքին գործերով, հնարավորություն չունեն կասեցնելու Հայաստանի հզորացումը: Հռոմը Արևելքի գործերով առավելապես զբաղվում էր քաղաքացիական կռիվների ընդմիջումների ժամանակ և հիմնականում ձգտում էր պահպանել այստեղ իր նվաճած երկրները:

Ք. ա. I դարի սկզբում միջինասիական քոչվոր ցեղերի ներխուժման, երկրի ներսում առաջացած խռովությունների և գահակալական կռիվների պատճառով ժամանակավորապես խիստ կերպով թուլանում է նաև Պարթևական թագավորությունը: Ինչ վերաբերում է Սելևկյան պետությանը, ապա նա ներքին պայքարից և գահակալա-

կան կոիվներից այնքան էր թուլացել, որ գտնվում էր կործանման եզրին: Այսպիսով, ո՛չ Պարթևական թագավորությունը և ո՛չ էլ Սելևկյան պետությունը չէին կարող արգելք հանդիսանալ Հայաստանի հզորացմանը և նրա հաղթական առաջընթացին:

Տիգրան II-ը, օգտագործելով ներքին և արտաքին նպաստավոր պայմանները, եռանդուն կերպով աշխատում է ամրապնդել ու հզորացնել Հայկական պետությունը, ավարտել Հայկական հողերի միավորումը, նոր երկրներ ու ժողովուրդներ նվաճելու հաշվին ընդարձակել իշխող վերնախավի շահագործման հենքը, կողոպուտի ու հարստահարման միջոցով ձեռք բերել նոր հարստություններ և ստրուկներ:

Տիգրան II-ը նախ որոշում է Մեծ Հայքին

Ծոփքի միացումը միացնել Ծոփքը: Ք. ա. 94 թ. նա հարձակվում է Ծոփքի Արտանես թագավորի վրա, հաղթում է նրան և Ծոփքը միացնում իր թագավորությունը:

«Արտաշեսի սերնդիցն էր,– վկայում է Ստրաբոնը,– Տիգրանը. նա իշխում էր այսպես կոչված բուն Հայաստանում, որը սահմանակից էր Մարաստանին, Աղվանքին, Իբերիային՝ մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կապադովկիային: Իսկ Զարեհի սերնդից էր Արտանես Ծոփացին, որը իշխում էր Հայաստանի հարավային և մանավանդ հարավ-արևմտյան մասերում: Տիգրանը հաղթեց սրան և ինքը տեր դառավ բոլոր այդ երկրներին»:

Ինչպես արդեն նշվել է, Ծոփքը Մեծ Հայքին միացնելու առաջին փորձը կատարել էր Արտաշես I-ը, սակայն այն անհաջող էր անցել Կապադովկիայի միջամտությունից պատճառով: Այս անգամ արդեն Կապադովկիան, որը Հռոմի հյուսիս-հնարանդ կամակատարն էր և հազիվ էր պահպանում իր ձևական ու անվանական անկախությունը, չի կարողանում օգնել Ծոփքի թագավորությունը: Այն, ինչ չէր հաջողվել իրագործել Արտաշեսին, այժմ հաջողվում է նրա թոռանը՝ Տիգրան II-ին:

Գրավելով Ծոփքը, Տիգրանը ոչ միայն իր թագավորությունն է միացնում Հայկական զարգացած ու հարուստ երկրամասերից մեկը, ոչ միայն տիրում է միջազգային տարանցիկ առևտրի հիմնական մայրուղու՝ «Արքայական ճանապարհի» այստեղից անցնող հատվածին և Եփրատի կարևոր գետանցքին, այլև ռազմավարական կարևոր դիրք է զբաղում Հյուսիսային Ասորիքի և Կապադովկիայի նկատմամբ:

Ծոփքի միավորումը Մեծ Հայքի հետ, անկախ Տիգրանի ու Մեծ

Հայքի ստրկատերերի անձնական նկատառումներից, առարկայորեն ունեւր դրական նշանակութիւն, քանի որ այն գրեթե ավարտին էր հասցնում հայկական հողերի ու հայ ժողովրդի միավորման գործընթացը և ուժեղացնում էր կենտրոնական իշխանութիւնը:

Շուտով Տիգրան II-ը ետ է խլում և կրկին Հայաստանին է միացնում նաև այն «70 հովիտները», որ ինքը զիջել էր պարթևներին՝ պատանդութիւնից ազատվելու համար: Նա հայկական հողերից միայն Փոքր Հայքը ամբողջովին չի կարողանում միացնել Մեծ Հայքին, քանզի նրա անդրեփրատյան գավառները դեռևս Ք. ա. 111 թ. նվաճվել ու միացվել էին Պոնտոսին:

Հայ-պոնտական դաշինքը

Ք. ա. I դարի առաջին կեսից զգալի չափով ուժեղանում է Հյուսիս-արևմուտքից Հայաստանի սահմանակից Պոնտական թագավորութիւնը: Պոնտոսն իր հզորութեան գագաթնակետին է հասնում Հին աշխարհի հռչակավոր գորավարներից և պետական գործիչներից մեկի՝ Միհրդատ VI Պոնտացու կամ Միհրդատ Եվպատորի (111-63) թագավորութեան ժամանակ: Իր գահակալութեան առաջին տարիներին Միհրդատ Եվպատորը, նվաճելով և կամ իր գերիշխանութեանը ենթարկելով Փոքր Հայքը, Կոլխիդան, Տավրիկյան խերսոնեսը, Բոսփորը (Ղրիմ) և սկյութական երկրները, Պոնտոսը դարձնում է Փոքր Ասիայի ամենաընդարձակ և հզոր պետութիւնը:

99 թ. Միհրդատ Պոնտացին գրավում է նաև Կապադովկիան, որի բնակչութիւնը ցեղական, մշակութային և կրոնական ընդհանուր կապերով կապված էր Պոնտոսի բնակչութեան հետ: Սակայն շուտով, 95 թ. հռոմեացիների միջամտութեան պատճառով պոնտական գորքերը հարկադրված են լինում հեռանալ Կապադովկիայից: Հռոմը այստեղ գահ է բարձրացնում իր հյու-հնազանդ կամակատարներից մեկին՝ Արիորարդան I-ին:

Կապադովկիայում Արիորարդանի գահ բարձրանալը և այստեղ Հռոմի ազդեցութեան հետագա ուժեղացումը մեծ վտանգ է ստեղծում Պոնտոսի և Հայաստանի համար: Բնական է, որ թե՛ Միհրդատը և թե՛ Տիգրանը պետք է աշխատեն վերացնել այդ վտանգը:

Միհրդատ Պոնտացին, չնայած իր կրած անհաջողութեանը, ոչ միայն աշխատում է կրկին գրավել Կապադովկիան, այլև ծրագրում՝ հռոմեացիներին Փոքր Ասիայից, Հունաստանից և Մակեդոնիայից դուրս քշելով, ստեղծել հելլենիստական մի ընդարձակ պետութիւն:

Հռոմի դեմ վճռական գոտեմարտի դուրս գալուց առաջ Միհրդատը իր թիկունքն արևելքից ապահովելու և հայկական գորքի օժան-

դակությունը ստանալու նպատակով աշխատում է դաշինք կնքել Տիգրանի հետ: Միհրդատի այս ձգտումը համընկնում էր Տիգրանի ցանկության հետ, որն իր հերթին ծրագրում էր պարթևներից ետ խլել հայկական հողերը, գրավել Հյուսիսային Միջագետքն ու Ասորիքը և դուրս գալ Միջերկրական ծով:

Փոխադարձաբար իրար օգնելու և միմյանց թիկունքն ապահովելու, ինչպես և Հոռմի դեմ համատեղ պայքարելու նպատակով 94 թ. Միհրդատ Պոնտացին և Տիգրան II-ը ռազմաքաղաքական դաշինք են կնքում: Այդ դաշնագրով Միհրդատն ու Տիգրանը իրար միջև են բաժանում ապագա նվաճումների ազդեցություն չընձանները: Միհրդատին վերապահվում է գրավել Փոքր Ասիան, Հունաստանը, Մակեդոնիան և Սև ծովի ափերը, իսկ Տիգրանին՝ Ատրպատականը, Մարաստանը, Միջագետքը, Ասորիքը և սրանց շուրջը գտնվող երկրները: Բացի այդ, սահմանվում է նաև, որ Կապադովկիան գրավելու դեպքում տարածքը պետք է պատկանի Միհրդատին, իսկ ավարը, գանձերը, շարժական գույքը և գերիները՝ Տիգրանին: Այս դաշինքը ավելի ևս ամրապնդելու նպատակով Միհրդատը իր դստերը՝ Կլեոպատրային, կնության է տալիս Տիգրանին:

Պայքար Կապադովկիայի համար Հայաստանին ու Պոնտոսին սպառնացող հոռմեական վտանգը կանխելու և Հոռմի դեմ ռազմավարական ավելի հարմար դիրքեր գրավելու համար Միհրդատը և Տիգրանը որոշում են գրավել Կապադովկիան: 93 թ. հայկական և պոնտական բանակները հարձակվում են Կապադովկիայի վրա և առանց մեծ դժվարությունների գրավում են այն: Կապադովկիայի Արիոբարդան թագավորը պարտվելով՝ փախչում է Հոռմ: Ըստ դաշնագրի՝ նվաճված երկրի ամբողջ տարածքը անցնում է Միհրդատին, բացի հնում Ծոփքի մասը կազմող Մելիտինեի մարզից, որը միացվում է Հայաստանին:

Կապադովկիայում տեղի ունեցած այս փոփոխությունը զգալի հարված էր հասցնում Հոռմի վարկին Արևելքում: Դրա համար էլ Հոռմեական սենատը կարգադրում է Կիլիկիայի փոխպրետոր Սուլլային՝ վերագրավել Կապադովկիան: 92 թ. Սուլլան զգալի ուժերով գալիս է Կապադովկիա, պարտություն մատնում հայկական ու պոնտական զորքերին և կրկին Կապադովկիայի գահի վրա է հաստատում Արիոբարդանին:

Սակայն Սուլլան երկար չի մնում Կապադովկիայում: Նա 91 թ. իր բանակով վերադառնում է Հոռմ: Սուլլայի հեռանալուց անմիջապես հետո հայկական զորքերը Տիգրան II-ի զորավարներ Միթրասսի և

Բագոասի (Բագարատ) ղեկավարութեամբ կրկին հարձակվում և գրավում են Կապադովկիան: Նույն այս ժամանակ պոնտական զորքերը գրավում են նաև Հոռոմի կամակատար Բյութանիան և այստեղ Նիկոմեդես III-ի փոխարեն գահ են բարձրացնում նրա կրտսեր եղբորը՝ Սոկրատեսին:

Հայկական և պոնտական զորքերից պարտված Արիոբարզանն ու Նիկոմեդեսը փախչում են Հոռոմ և օգնություն են խնդրում Հոռոմեական սենատից: Հոռոմեական սենատն այս անգամ Արևելք է ուղարկում զորավար Մանրոս Ակվիլիոսին, որը 89 թ. վերականգնում է նախկին դրությունը Կապադովկիայում և Բյութանիայում: Միհրդատը և Տիգրանը առանձին դիմադրություն ցույց չեն տալիս, որովհետև նրանք այդ պահին չէին ցանկանում պատերազմել Հոռոմի դեմ:

89 թ. աշնանը Հոռոմեացիների զորումով և **Տիգրան II-ի նվաճումները** նախաձեռնությունը սկսվում է պատմության մեջ հայտնի Միհրդատյան առաջին պատերազմը:

Պատերազմի սկզբում Միհրդատը, ջախջախելով Հոռոմեացիներին և նրանց դաշնակիցներին, նվաճում է ամբողջ Փոքր Ասիան: Իր տիրապետությունը ամրացնելու և ճնշվող ու շահագործվող զանգվածներին հակահոռոմեական պայքարի մեջ ներգրավելու նպատակով Միհրդատը իր կողմն անցնող ստրուկներին խոստանում է ազատություն, իսկ պարտապաններին՝ պարտքերի ոչնչացում: Նրա հրամանով որոշված օրը փոքրասիական քաղաքներում կտորվում է 80 հազար հոռոմեացի:

Փոքր Ասիայից Միհրդատի զորքերը հաղթական կերպով մտնում են Հունաստան: Հունական քաղաքները իրենց դռները բաց են անում Միհրդատի առաջ և նրան դիմավորում մեծ ցնծությունը, իբրև ազատարարի:

Այս հաղթական նվաճումներին և հետագա կոիվներին, ինչպես վկայում է հոռոմեական պատմիչ Ապպիանոսը, մասնակցում էր նաև 10 հազար հոգուց բաղկացած հայկական մի հեծյալ զորագունդ:

Միհրդատի հաղթական առաջխաղացումը լուրջ վտանգ է ստեղծում Հոռոմի համար, որն առանց այն էլ զգալի չափով թուլացել էր ներքին քաղաքացիական կոիվների պատճառով: Սակայն Հոռոմը իր ուժերը համախմբում է առաջացած այս վտանգը վերացնելու համար: Հոռոմեական սենատի որոշմամբ մեծ ուժերով Միհրդատի դեմ է ուղարկվում Սուլլան: Սա, գալով Արևելք, երկու տարվա արյունահեղ ու համառ կոիվներից հետո հաղթում է Միհրդատին, որը ստիպված է լինում հաշտություն խնդրել: Սուլլան, որը շտապում էր վերադառ-

նալ Հոոմ և Հաշվեհարդար տեսնել իշխանությունը գրաված մարիուսականների հետ, ընդունում է Հաշտություն ատաջարկը: 84 թ. Գարդանոսում բանավոր կերպով կնքված դաշնագրի համաձայն Միհրդատը հրաժարվում է իր բոլոր նվաճումներից, պարտավորվում է Հոոմին վճարել 2000 տաղանդ ոսկամատուցանք և նրան հանձնել 80 նավ:

83 թ. Հոոմեացիները կողոպուտի նպատակով Հարձակվում են Պոնտոսի վրա, բայց պարտություն են կրում: Սակայն այս պատերազմը, որը հայտնի է նաև Միհրդատյան երկրորդ պատերազմ անունով, շուտով՝ 82 թ. դադարեցվում է Սուլլայի միջամտության շնորհիվ:

Միհրդատյան ատաջին պատերազմի գրեթե սկզբից Արևելքում նվաճումներ է սկսում կատարել նաև Տիգրան II-ը: Նա իր ատաջին հարվածը ուղղում է արևելքից Հայաստանի անկախությունը սպառնացող Պարթևական թագավորության դեմ: 88 թ. Հայկական զորքերը, հարձակվելով Պարթևական թագավորության վրա, նախ ետ են գրավում այն «70 հովիտները», որ Տիգրանը գիջել էր պարթևներին՝ պատանդությունից ազատվելու համար: 88-85 թթ. ընթացքում Հայկական բանակը Հաղթական կերպով ատաջ շարժվելով՝ իրար ետևից գրավում է հարավ-արևելքում՝ Ատրպատականը, Մարաստանը, իսկ Հյուսիսային Միջագետքում՝ Կորդուքը, Ադիարենեն, Միգդոնիան, Օսրոնեն: Հայկական բանակը Միջագետքում հասնում է մինչև Նինվեի և Արբելայի շրջանները, իսկ հարավ-արևելքում՝ մինչև պարթև Արշակունիների ամառային մայրաքաղաք Էկբատան:

Պարթևները, պարտություն կրելով Հայկական բանակից, ստիպված են լինում հաշտություն խնդրել Տիգրանից: 85 թ. կնքված Հայպարթևական հաշտության դաշնագրով պարթևները ոչ միայն հրաժարվում են Տիգրանի նվաճած երկրներից և ընդունում նրա գերիշխանությունը, այլև պարթևական թագավորները հրաժարվում են նաև իրենց «արքայից արքա» տիտղոսից, որն այնուհետև կրելու էին Տիգրանը և նրա հաջորդները:

Այս նվաճումների հետևանքով ոչ միայն Տիգրան II-ի տիրապետության տակ են ընկնում զգալի թվով հարուստ քաղաքներ ու երկրամասեր, այլև նրա ձեռքն են անցնում Հյուսիսային Միջագետքի, Մարաստանի ու Ատրպատականի վրայով անցնող միջագային տարանցիկ առևտրի ճանապարհները և Եփրատի բոլոր կարևոր գետանցքները: Այս գետանցքներից հատկապես նշանավոր էր Օսրոնենում (Եղեսիայի շրջան) Զևգմայի մոտ գտնվող գետանցքը: Տիգրա-

նը, Հարավային Միջագետքից այստեղ փոխադրելով արաբական թափառական ցեղերի, նրանց է հանձնարարում առևտրական ճանապարհների պահպանությունն ու վերահսկողությունը, ինչպես և իր համար այս գետանցքից մաքս գանձելու պարտականությունը:

Նվաճված երկրների թագավորները թեև պահպանում էին իրենց գոյությունը, և նույնիսկ Ատրպատականի թագավորը ամուսնացել էր Տիգրանի դստեր հետ, սակայն նրանք որպես ենթականեր հպատակեցված էին Տիգրանին և պարտավոր էին նրան հարկ վճարել և օգնել զորքով:

Հավանաբար, նույն այս ժամանակ Տիգրանն իր գերիշխանությունն է ենթարկում նաև Իրերիան (Վրաստանը) և Աղվանքը:

Հայ-պարթևական դաշնագրից անմիջապես հետո Տիգրանը, գրավելով և իրեն ենթարկելով նաև Ասորիքի Հյուսիսային մասում գտնվող Կոմմագենեն, ղենքը ուղղում է Սելևկյան թագավորություն դեմ: Տիգրանի այս նվաճողական քաղաքականությունն նպատակն էր գրավել Ասորիքի ու Փյունիկիայի հելլենիստական հարուստ քաղաքները և դուրս գալ Միջերկրական ծով:

Սելևկյան երբեմնի հզոր ու աշխարհակալ թագավորությունն արդեն այս ժամանակ ամփոփված էր միայն Ասորիքի ու Փյունիկիայի սահմաններում և գտնվում էր կործանման եզրին: Երկրում և հատկապես Անտիոք մայրաքաղաքում ներքին գահակալական անվերջ կռիվների և դասակարգային սուր պայքարի հետևանքով տիրում էր ճգնաժամային ու անիշխանական վիճակ: Անտիոքի ստրկատիրական ու առևտրավաշխատուական իշխող խավերը ձգտում էին արտաքին ուժի միջոցով պահպանել իրենց ունեցվածքը, ճնշել ու հնազանդություն մեջ պահել շահագործվող զանգվածներին և դուրս բերել երկիրն ու մայրաքաղաքը ծանր վիճակից:

Տիգրան II-ի հարձակումը Սելևկյան թագավորություն վրա համընկնում էր Անտիոքի տիրող խավերի ցանկությունը: Ուստի նրանք Ք. ա. 84 թ., առանց դիմադրություն ցույց տալու, Անտիոքի դռները բաց են անում Տիգրանի հաղթական բանակի առաջ: 84–83 թթ. Հայկական բանակը, առանց լուրջ դիմադրություն հանդիպելու, գրավում է նաև ամբողջ Ասորիքն ու Դաշտային Կիլիկիան: Անտիոքի և Ասորիքի վաճառաչահ շատ քաղաքների՝ կամավոր կերպով Տիգրան II-ին անձնատուր լինելը պետք է բացատրել նաև նրանով, որ արդեն այս ժամանակ Ասորիքը Փոքր Ասիայի ու Հյուսիսային Միջագետքի հետ կապող առևտրական բոլոր ճանապարհները գտնվում էին Տիգրանի տիրապետություն տակ: Սելևկյանների հռչակավոր, հարուստ ու մոտ

կես միլիոն բնակչություն ունեցող Անտիոք մայրաքաղաքը այսուհետև ղառնում է Տիգրանի մայրաքաղաքներից մեկը, որտեղ նրա անունով ու պատկերով սկսում են կտրվել արծաթե դրամներ:

Ի տարբերություն Ասորիքի քաղաքների, Փյունիկիայի ծովափնյա անառիկ քաղաքները, որոնք առանձին չահագրգոյվածություն չունեին ցամաքային առևտրի մեջ և կապված էին ծովային առևտրի հետ, սկսում են համառ դիմադրություն ցույց տալ Տիգրան II-ին: Հայկական բանակը երկարատև կռիվներից հետո միայն կարողանում է գրավել այդ քաղաքները: 71 թ. Տիգրանը մեծ զորքով գալիս և պաշարում է Փյունիկիայի հարավում գտնվող Պտղոմայիդ քաղաքը, որտեղ ամրացել էր սելևկյան Սելենե-Կլեոպատրա թագուհին: Հակառակ ցույց տրված համառ դիմադրության, Տիգրանը գրավում է քաղաքը և գերի վերցնում Սելենե-Կլեոպատրա թագուհուն, որը հետագայում Տիգրանի հրամանով մահապատժի է ենթարկվում:

Տիգրանի մեծաթիվ զորքի երևալը Փյունիկիայի հարավում սարսափ է տարածում նաև սահմանակից Պաղեստինում: Հրեաստանի Ալեքսանդրա-Սոլոմեա թագուհին, վախենալով հայկական զորքի ներխուժումից, մեծաքանակ ու արժանավայել ընծաներ է ուղարկում Տիգրանին և ընդունում է նրա գերիշխանությունը:

Տիգրան II-ի տերությունը

Տիգրան II-ի նվաճումները ավարտվում են Ք. ա. 70 թ.:

Տիգրանը մոտ 25 տարի տևող իր հաղթական առաջխաղացման և նվաճումների ընթացքում ստեղծում է մի լայնածավալ տերություն, որի սահմանները տարածվում էին Կասպից ծովից մինչև Եգիպտոսի սահմաններն ու Միջերկրական ծովը, Մարաստանի լեռներից մինչև Արևմտյան Եփրատի ափերը: Համեմատաբար մի փոքր թագավորությունից Հայաստանը վերածվում է Առաջավոր Ասիայի հզոր տերության:

Իր բնույթով Տիգրան II-ի ստեղծած տերությունը հելլենիստական տիպի միապետություն էր, որի գլխավոր հենարանները հանդիսանում էին հայ տիրապետող դասակարգը և հայկական բանակը: Սակայն ինչպես Արևելքի բոլոր մեծ նվաճողների, նույնպես և Տիգրան II-ի ստեղծած տերությունը ազգային պետություն չէր, այլ բազմացեղ ու բազմալեզու, տնտեսական-հասարակական կյանքի զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների ու ժողովուրդների խառնուրդ էր: Այստեղ բռնի զինվորական ուժով իրար էին միացված՝ սկսած դեռևս տոհմատիրական կարգերում ապրող, վաչկատուն ու վրանարնակ ցեղերից մինչև ամենազարգացած հելլե-

նիստական քաղաքները:

Հայաստանի և նրա տիրապետություն տակ գտնվող երկրների փոխադարձ տնտեսական կապերը շատ թույլ էին կամ բացակայում էին բոլորովին: Հայաստանը նվաճված որոշ երկրներից լինելով ավելի թույլ զարգացած, բնականաբար, ոչ միայն չէր կարող տնտեսապես իրեն ենթարկել նվաճված երկրները, այլև կարճ ժամանակամիջոցում իր և զարգացած հեղինակական երկրների միջև ստեղծել տնտեսական փոխադարձ կայուն կապ ու շահագրգռվածություն:

Տիգրան II-ի տերությունը և պահպանությունը առավելապես հիմնված էր ռազմական ուժի վրա: Մեծ նվաճումներ կատարելու և հպատակեցված երկրները հնազանդություն մեջ պահելու համար Տիգրանը ստեղծում է ստվարաքանակ բանակ, որի մի մասը կազմված էր հպատակ երկրների օժանդակ ուժերից և վարձկան զորքերից:

Նվաճված երկրները կառավարելու, այդ երկրներում իր տիրապետությունը ամրապնդելու և առաջացած ապստամբությունները ճնշելու նպատակով Տիգրանը Հյուսիսային Միջագետքում, Ասորիքում, հավանաբար նաև այլ երկրամասերում հիմնում է փոխարքայություններ: Նա Հյուսիսային Միջագետքում փոխարքա է նշանակում իր Գուրաս անունով եղբորը, իսկ Ասորիքում՝ Բագարատ Հայ զորավարին:

Նվաճված երկրներից Տիգրանը և Հայ վերնախավը կողոպուտի ու ավարի միջոցով ձեռք են բերում հսկայական հարստություններ և տանյակ հազարավոր ստրուկներ: Այդ երկրները այնուհետև հարկատու են դառնում Տիգրանին:

Մովսես Խորենացին, խոսելով Տիգրան II-ի մասին, բայց չփոթելով նրան Կյուրոս Մեծի ժամանակվա Տիգրան Երվանդյանի հետ և գունազարդելով վերջինիս կերպարը, վկայում է. «Սա մեր բոլոր թագավորներից ամենահզորն էր և ամենախոհեմը և սրանցից բոլորից քաջը: Նա ... տապալեց մարաց իշխանությունը և, նվաճելով հույներին, ոչ քիչ ժամանակ իրեն հնազանդեցրեց: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերի վրա լուծ դնողներ և հարկապահանջներ: Նա բազմացրեց արագ կերպով կուտակումները՝ ոսկու, արծաթի և պատվական քարերի, նաև զանազան գույների զգեստների ու գործվածքների»:

Հայաստան տեղափոխված հսկայական հարստությունները, նյութական արժեքները և բազմահազար գերիններն ու ստրուկները չէին

կարող չնպաստել Հայաստանի տնտեսական կյանքի հետագա ընդհանուր վերելքին: Տիգրան II-ը, լինելով Առաջավոր Ասիայի հելլենիստական տիպի խոշոր միապետներից մեկը, իր քաղաքականությունը նույնպես մեծ չափով խթանում է Հայաստանի տնտեսական կյանքի, հատկապես քաղաքների, արհեստագործությունների և առևտրի զարգացմանը: Նա զգալի չափով նպաստում է նաև Հայաստանում հելլենիստական մշակույթի տարածմանը և զարգացմանը:

Տիգրանակերտի կառուցումը

Տիգրան II-ի տերությունը առավելապես ընդարձակվել էր հարավից: Արտաշատը և Անտիոքը, որոնք գտնվում էին նրա տերության հյուսիսային ու հարավային ծայրամասերում, չէին կարող լրիվ կերպով մայրաքաղաքի դեր կատարել: Բացի այդ, Անտիոքը, որի ներսում ու շրջապատում բնակչությունը բաղկացած էր էթնիկական տեսակետից օտար, նվաճված ու թշնամաբար տրամադրված տարրերից, չէր կարող Տիգրանի տերության համար ամուր հենարան դառնալ:

Նվաճված երկրները ավելի հեշտ կերպով կառավարելու, այդ երկրները Հայաստանի հետ կապելու և Հայաստանում քաղաքային կյանքը ավելի զարգացնելու նպատակով Տիգրանը 80-70 թթ. ընթացքում Աղձնիք նահանգում, հետագայի Նփրկերտ-Փարկին քաղաքի տեղում հիմնադրում ու կառուցում է մի նոր մայրաքաղաք, որը նրա անունով կոչվում է Տիգրանակերտ: Ըստ Ապպիանոսի վկայություն, Տիգրանը իր նոր մայրաքաղաքը հիմնադրել էր Հայաստանի այն վայրում, որտեղ նա պատանդությունից ազատվելուց հետո եկել և թագավոր էր հռչակվել:

Տիգրանակերտի կառուցման տեղը հաջող էր ընտրված: Նա ոչ միայն գտնվում էր նորաստեղծ տերության կենտրոնում, այլև հյուսիսային Միջագետքից դեպի Փոքր Ասիա, Արարատյան դաշտը և Սև ծովի նավահանգիստները տանող գլխավոր ճանապարհների հանգուցակետում:

Տիգրանը ոչ մի միջոց ու ջանք չի խնայում որքան կարելի է իր մայրաքաղաքը շքեղ և փառահեղ կառուցելու համար: Ապպիանոսը վկայում է, որ Տիգրանակերտը շրջապատված էր բարձրաբերձ պարիսպներով, որոնք ունեին 50 կանգուն բարձրություն: Այդ պարիսպները այնքան լայն էին, որ նրանց մեջ Տիգրանը կառուցել էր տվել ձիերի ախոռներ ու պահեստներ: Քաղաքն ուներ ամուր և անմատչելի միջնաբերդ: Միջնաբերդի պարիսպներից դուրս կառուցված էր Հայոց արքայի փառահեղ պալատը, որը շրջապատված էր պարտեզ-

ներով, զրոսարաններով, որսատեղիներով և ձկնավազաններով:

Իր նոր մայրաքաղաքը և Հայաստանի մյուս քաղաքները արագ կերպով շինացնելու և զարգացնելու նպատակով Տիգրանը 78 թվականին մի արչավանք է կազմակերպում դեպի Կապադոկիա, Դաշտային Կիլիկիա և Ասորիք: Այդ արչավանքի ժամանակ գրավելով Կապադոկիայի մայրաքաղաք Մաժաքը և ամայացնելով տասներկու հելլենիստական քաղաքներ՝ սրանց բնակիչներին՝ մոտ 300.000 հոգի, բռնությամբ գաղթեցնում և բնակեցնում է Տիգրանակերտում և Հայաստանի մյուս քաղաքներում: Նա Հայաստան է գաղթեցնում նաև զգալի թվով բնակիչներ Կորդուքից, Ադիաբենեից և այլ վայրերից: Հայաստան գաղթեցված մոտ կես միլիոն բնակչություն մեջ բացի բազմահազար ստրուկներից և քաղաքներում բնակվող կիսակախյալ ու ազատ հողագործներից, կային նաև մեծ թվով հույն, հրեա և ասորի արհեստավորներ ու առևտրականներ:

Տիգրանը իր նորակառույց մայրաքաղաքում է բնակեցնում հատկապես Մաժաքից, Դաշտային Կիլիկիայի ծովափնյա Սոլի և այլ քաղաքներից բերված բնակիչներին: Ուսումնասիրողներից շատերը ենթադրում են, որ Տիգրանակերտը այդ ժամանակ ուներ մոտ 300.000 բնակչություն:

Մայրաքաղաքում հայկական տարրը ավելացնելու և այնտեղ իր արքունիքի համար ամուր հենարան ստեղծելու նպատակով Տիգրանը հարկադրում է հայ ավագանու ներկայացուցիչներին թողնել իրենց բնակությունն ախսկին վայրերը և բնակություն հաստատել Տիգրանակերտում, հակառակ դեպքում նա սպառնում է գրավել նրանց ունեցվածքը: Հայ մեծատոհմիկները և քաղաքի ունևոր բնակիչները, հաճոյանալով Տիգրանին, նոր, չքեղ շենքեր են կառուցում, գեղեցկացնում ու ընդարձակում են մայրաքաղաքը:

Կարճ ժամանակում Տիգրանակերտը դառնում է Հայաստանի և Առաջավոր Ասիայի չքեղ, բազմամարդ ու հարուստ քաղաքներից մեկը:

Հայ մատենագրության մեջ, բացի Տիգրանակերտ մայրաքաղաքից, հիշատակվում է նաև Տիգրանակերտ՝ Ուտիք նահանգում, Տիգրանակերտ՝ Արցախ նահանգում և Տիգրանավան՝ Գողթն գավառում: Պետք է ենթադրել, որ այս փոքր քաղաքները կամ քաղաքատիպ ավանները նույնպես առաջացել են Հայաստանում քաղաքային կյանքի զարգացման վերելքի այս շրջանում և հիմնադրվել են Տիգրան II-ի կողմից:

3. ՀԱՅ – ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Լուկուլլոսի արչավանքը Հայաստան

Ք. ա. 73 թ. զարնանը սկսվում է Միհրդատյան երրորդ պատերազմը: Հռոմեական սենատը զգալի ուժերով Միհրդատ Պոնտացու դեմ է ուղարկում Հայտնի զորավար Լուկուլլոսին: Այս պատերազմի սկզբում ևս Հաջողությունը Միհրդատի կողմն էր: Նա մի քանի ճակատամարտերում ծանր պարտություն ենթարկելով Հռոմեական զորքերին ու նավատորմիին և գրավելով Հռոմեական պրովինցիա դարձած Բյութանիան, գալիս պաշարում է Մարմարա ծովի ափին, Դարդանելի նեղուցից ոչ այնքան հեռու գտնվող Կիզիկ քաղաքը: Սակայն այստեղ, 73–72 թթ. ձմռանը, Միհրդատը ծանր պարտություն է կրում Լուկուլլոսից և իր բանակի մնացորդներով նահանջում Պոնտոս:

Հռոմեացիների դեմ պայքարը շարունակելու համար Միհրդատը օգնություն է խնդրում իր որդուց՝ Բոսփորի փոխարքա Մաքարեսից, իր փեսայից՝ Տիգրանից, պարթևներից և սկյութներից: Սակայն ոչ ոք օգնության ձեռք չի մեկնում նրան: Նրա հարազատ որդին ոչ միայն չի օգնում իր հորը, այլև աշխատում է անջատ հաշտություն կնքել Հռոմեացիների հետ:

Միհրդատը Տիգրանի մոտ իբրև դեսպան ուղարկում է Հայտնի Հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Սկեսպիացուն: Սակայն սա, որ թշնամացել էր Պոնտացու հետ, Տիգրանին խորհուրդ չի տալիս օգնել Միհրդատին: Տիգրանի այն հարցին, թե «Իսկ դու ինքդ, ռ՛վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կտաս այս մասին», սա պատասխանում է. «Իբրև դեսպան խորհուրդ եմ տալիս, իսկ իբրև խորհրդատու խորհուրդ չեմ տալիս»:

Տիգրանը, որ ձգտում էր ամրապնդել իր նոր նվաճած երկրները և չէր ցանկանում ընդհարվել Հռոմի հետ, որոշում է չօգնել իր աներորդը: Տիգրանի այս որոշման մեջ, անկասկած, որոշակի դեր են կատարել նաև Հռոմեացիների այն կեղծ հավաստիացումները, որ իրենք Հայաստանի նկատմամբ թշնամական մտադրություններ չունեն: Դա երևում է նրանից, որ այս դեպքերի ժամանակ Տիգրանը և հայկական զորքը գտնվում էին Ասորիքում և զբաղված էին Փյունիկիայի հարավային քաղաքները նվաճելով: Ինչ էլ որ լինի, իր այս որոշումով Տիգրանը քաղաքական մեծ սխալ է գործում: Նա, չօգնելով Միհրդատին, ոչ միայն Հռոմեացիներին հնարավորություն է տալիս պար-

տության ենթարկելու նրան և գրավելու Պոնտոսը, այլև հոռմեական գորքը կանգնեցնում է իր իսկ պետության սահմանագլխին՝ իր տերության բախտն ու ապագան դնելով մեծ վտանգի տակ:

Գրսից ոչ մի օգնություն չստանալով, այնուամենայնիվ, Միհրըզատը որոշում է Պոնտոսում հավաքած նոր ուժերով շարունակել պայքարը հոռմեացիների դեմ: Սակայն 71 թ. Կաբիրայի մոտ տեղի ունեցած անհավասար ճակատամարտում պոնտական զորքերը խիստ ծանր պարտություն են կրում: Միհրըզատը փոքրաթիվ զորքով փախչում է Հայաստան: Տիգրանը հոռմեացիների հետ չեզոքություն պահպանելու հույսով Միհրըզատին չի հրավիրում իր մոտ և չի տեսակցում նրա հետ, այլ միայն թույլ է տալիս նրան ապրել իր պետության հեռավոր ու սահմանային երկրամասերից մեկում:

Սակայն իզուր էին Տիգրանի գործադրած բոլոր զգուշավորությունները: Լուկուլլոսը Պոնտոսը նվաճելուց հետո, նույնիսկ առանց հոռմեական սենատի թույլտվությունը ստանալու, որոշում է նվաճել նաև Հայաստանը:

Արևմտաեվրոպական պատմագրություններից ենթադրվում է, որ Լուկուլլոսի այս որոշումը աշխատել են բացատրել միայն հոռմեացի զորավարի փառամոլությունը ու մեծամտությունը: Սակայն իրականությունից մեջ այդ որոշումը բխում էր Հռոմի նվաճողական քաղաքականությունից և ելնում էր հոռմեական ստրկատերերի շահերից: Լուկուլլոսը և հոռմեական ստրկատերերը ծրագրելով Հայաստանի նվաճումը՝ ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, Անդրկովկասում, Միջագետքում և Ասորիքում, ձեռք բերել կողոպուտի, շահագործման և տասնյակ հազարավոր թարմ ստրուկներ հայթայթելու նոր աղբյուրներ: Լուկուլլոսը, լինելով հոռմեացի ընչաքաղց ու փառամոլ զորավարներից մեկը, անկասկած, անձամբ ևս շահագրգռված էր Հայաստանի նվաճումով: Նա ցանկանում էր կողոպուտի միջոցով ձեռք բերել նոր հսկայական հարստություններ և Միհրըզատ Պոնտացուն հաղթողի իր փառքի վրա ավելացնել նաև Տիգրան II-ի հաղթողի փառքը:

71 թ. Լուկուլլոսը մի դեսպանություն է ուղարկում Տիգրանի մոտ և պահանջում, որպեսզի սա Հայաստանում ապաստանած Միհրըզատին հանձնի հոռմեացիների ձեռքը: Սակայն Տիգրանը իրավացի կերպով մերժում է կատարել հոռմեացի զորավարի անօրինական և Հայաստանի ու Տիգրանի համար անպատվաբեր, ստորացուցիչ այդ պահանջը:

Լուկուլլոսի դեսպանություն անդամները, օգտվելով առիթից, իրենց շրջագայությունների ժամանակ անհրաժեշտ ռազմական ու

լրտեսական տեղեկություններ են հավաքում Հայաստանի մասին, Ասորիքի հեյլենիստական քաղաքներին ու նվաճված երկրների առանձին իշխանավորներին ապստամբություն կոչ անում և գրգռում Տիգրանի դեմ:

Միհրդատի հարցը պատրվակ դարձնելով, Լուկուլլոսը մեկ ու կես տարի եռանդուն և գաղտնի կերպով սկսում է պատրաստություններ տեսնել Հայաստանի վրա հարձակվելու համար:

Օգտվելով նրանից, որ Տիգրանը իր բանակով դեռևս գտնվում էր Փյունիկիայի հարավում, 69 թ. հռոմեական զորքերն առանց նախօրոք պատերազմ հայտարարելու Մելիտինե քաղաքի մոտից հանկարծակի անցնում են Եփրատ գետը և ներխուժում Մոփք: Մոփքի հայ ավագանին, որը դժգոհ էր Տիգրանից՝ իր երբեմնի ունեցած մի քանի արտոնություններից զրկված լինելու պատճառով, ոչ մի դիմադրություն չի կազմակերպում երկիրը ներխուժած թշնամու դեմ:

Հռոմեական զորքերը Մոփքից ուղղություն են վերցնում և արագ կերպով շարժվում դեպի Տիգրանակերտ: Լուկուլլոսի ռազմավարական ծրագիրն էր՝ արագ ու անակնկալ հարվածով գրավել Տիգրանակերտը, դրանով իսկ անջատել Տիգրանի՝ հարավում նվաճած երկրները Հայաստանից և թույլ չտալ այդ երկրներին՝ օգնություն ուղարկելու Տիգրանին:

Տիգրանը հանկարծակիի էր եկել, քանզի Հայաստանում անհրաժեշտ քանակությամբ պատրաստի զորք չկար: Նա միայն 3000 հոգուց բաղկացած հեծելազորային մի զորամաս է ուղարկում թշնամու դեմ՝ Մեհրուժան զորավարի ղեկավարությամբ, որպեսզի սա կասեցնի հակառակորդի առաջխաղացումը և ուշացնի նրա գրոհը: Միաժամանակ մայրաքաղաքի պաշտպանությունը հանձնարարում է կայազորի հրամանատար Մանկայոսին:

Մեհրուժանի հեծելազորային զորամասը մարտի է բռնվում թշնամու հետ, սակայն անհավասար կռվում պարտվում է: Հանդուգն ու խիստ անհավասար այս կռվում ընկնում են հայ զինվորներից շատերը, որոնց թվում և նրանց խիզախ հրամանատար Մեհրուժանը:

Հայկական այս փոքրաթիվ զորամասի դիմադրությունը հաղթահարելուց հետո հռոմեական զորքերը գալիս ու պաշարում են Տիգրանակերտը: Հռոմեացիները պարիսպներ քանդող ռազմական մեքենաների օգնությամբ բազմաթիվ գրոհներ են կատարում քաղաքը գրավելու համար: Սակայն ամեն անգամ մայրաքաղաքի կայազորի մարտիկները, նետերի տարափ տեղալով և նավթով ռազմական մեքենաները այրելով, ետ են քշում հռոմեական զավթիչներին: Մոտ հինգ ամիս Տիգրանակերտի կայազորը և բնակչությունը, Մանկայոս զորա-

վարի գլխավորությամբ, համառ ու հերոսական դիմադրություն են ցույց տալիս քաղաքը պաշարած հոռմեական զորքերին:

Պաշարման սկզբում հայկական հեծելազնիներից մեկը ճեղքելով հոռմեացիների պաշարողական շղթան՝ մտնում է քաղաք և այնտեղից դուրս բերում Տիգրանի կանանոցը և պետական արժեքավոր գանձերը, որոնց Տիգրանը հեռանալիս իր հետ չէր վերցրել:

Լուր ստանալով հոռմեացիների հարձակման **Տիգրանակերտի մասին, Տիգրան II-ը** իր բանակով Փյունիկիայից **ճակատամարտը** վերադառնում է Հայաստան: Նա իր մոտ է հրավիրում Միհրդատին և խորհրդակցում նրա հետ: Որոշվում է, որ Միհրդատը 10.000 հայկական զորքով մեկնի Պոնտոս և այնտեղ նոր կռիվներ սկսի հոռմեացիների դեմ, որպեսզի նրանք ստիպված լինեն իրենց ուժերը բաժանել երկու մասի և հնարավորություն չունենան նոր ուժեր ուղարկել Հայաստան:

Նույն այդ ժամանակ Տիգրանը հետզհետե զգալի ուժեր է հավաքում: Բացի Հայաստանում զորակոչված զորքից, նրան իրենց ուժերով օգնություն են գալիս ենթակա երկրների՝ Ատրպատականի ու Ադիարենեի թագավորները, ինչպես և օժանդակ զորամասեր են ուղարկում Վրաստանը, Աղվանքը և Միջագետքի արաբները:

Տիգրանն իր բանակով Մշո դաշտի ու Տավրոսյան լեռների վրայով շարժվելով, 69 թ. հոկտեմբերի սկզբին գալիս է և բանակ դնում Տիգրանակերտի մոտից հոսող Նիկեփորիոն-Ֆարկին գետակի ափին: Սակայն անհեռատեսություն հանդես բերելով, նա չի գրավում իր բանակի թիկունքում գտնվող ցածրադիր բլուրները:

69 թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտի մոտ հայկական և հոռմեական բանակների միջև տեղի է ունենում ճակատամարտ:

Պլուտարքոսը և Ապպիանոսը, որոնք հավանաբար օգտվել են Լուկուլլոսի՝ չափազանցություններով, սուտ տեղեկություններով, ինքնապարծենկոտություններով լի և պատմական իրականությունը խեղաթյուրած զեկուցագրերից, վկայում են, որ իբր թե Տիգրանակերտի ճակատամարտում հայկական բանակը բաղկացած է եղել 300.000 հոգուց, իսկ հոռմեական բանակը՝ մոտ 15.000 հոգուց: Մինչդեռ փոքրասիական ավելի չեզոք պատմագիրներ Մեմոնի և Փլեզոն Տրալլացու մոտ հայկական բանակի թիվը ցույց է տրված 70.000 կամ 80.000, որը ավելի ճիշտ է: Հոռմեական աղբյուրներում դիտավորյալ կերպով ոչ միայն խիստ պակաս է ցույց տրված բուն հոռմեական զորքի թիվը, այլև բոլորովին չի հիշատակված Լուկուլլոսի բանակում գտնվող գաղատական, թրակիական, բյութանական, կապադովկյան և Հոռմի մյուս «ղաչնակից» զորքերի թիվը: Հ. Մանանդյանը իրավա-

ցի կերպով գտնում է, որ Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսի բանակը բաղկացած էր առնվազն 40.000 հոգուց:

Ճակատամարտի սկզբում թշնամու հեծելազորը հարձակվում է հայկական բանակի կենտրոնի վրա և ապա կեղծ փախուստի է դիմում: Հայկական զորքերը հետապնդելով փախուստի դիմած թշնամուն, զգալի չափով բացազատվում և ցրվում են: Նույն այդ ժամանակ հակառակորդի հետևակ զորքերը, որոնք մինչ այդ գաղտնաբար գրավել էին հայկական բանակի ետևում գտնվող բլուրները, սկսում են թիկունքից հարձակվել հայկական զրահավոր հեծելազորի և գրաստագումակի վրա: Այս հանկարծակի հարձակումը առաջ է բերում խուճապ: Չնայած իր ունեցած թվական գերակշռությանը, ոչ այնքան հոռմեացիների քաջություն, որքան առաջացած խուճապի հետևանքով հայկական բանակը պարտվում է:

Պլուտարքոսը տեղեկացնում է, որ իբր թե Տիգրանակերտի ճակատամարտում հայկական հետևազորից կոտորվել է ավելի քան 100.000 մարդ, իսկ հեծելազորից շատ քչերն են ազատվել. դրանց դիմաց հոռմեացիներից վիրավորվել է 100 և սպանվել ընդամենը 5 մարդ: Այս թվերը այնքան չինձու են և բացահայտ կերպով սուտ, որ ոչ մի արժանահավատություն չեն ներշնչում: Ուսումնասիրողները այդ թվերը լոկ մտացածին և հնարովի հերյուրանքներ են համարում: Ավելի արժանահավատ է ու ճիշտ Փլեգոն Տրալլացու վկայությունը, ըստ որի հայկական զորքի կորուստը կազմել էր մոտ 5000 մարդ:

Հայկական բանակի պարտությունից հետո Լուկուլլոսը շարունակում և ուժեղացնում է Տիգրանակերտի պաշարումը: Մինչև ճակատամարտի սկսվելը մայրաքաղաքի օտար ու բռնի կերպով այստեղ գաղթեցված բնակիչները և նրանցից կազմված կայազորի առանձին զորամասեր հավատարիմ էին մնացել և նույնիսկ կռվում էին մայրաքաղաքի պաշտպանություն համար: Սակայն ճակատամարտից որոշ ժամանակ անց նրանք ապստամբություն են բարձրացնում և դավաճանաբար մայրաքաղաքը հանձնում են թշնամու ձեռքը:

Հոռմեացիները անխնա կերպով կողոպտում և ավերում են Տիգրանակերտը: Այդ կողոպուտից Լուկուլլոսին անձնապես բաժին է ընկնում 8000 արծաթ տաղանդ (մոտ 17 միլիոն ոսկի ուլբի), իսկ հոռմեական ամեն մի զինվորին՝ 800 դրաքան (մոտ 280 ոսկի ուլբի), չհաշված մյուս թանկագին իրերն ու հարստությունները:

Ի փոխհատուցումն իրենց ապստամբության և դավաճանությունից, Լուկուլլոսը Տիգրանակերտի հույն և օտար բնակիչներին ետ է ուղարկում իրենց նախկին քաղաքներն ու երկրները:

Հայկական գորքի պարտութիւնը ծանր ու բացասական հետեանք է ունենում Տիգրան II-ի տերութեան համար: Ասորիքը, Փյունիկիան, Դաշտային Կիլիկիան և Կոմմագենեն անջատվում են Հայաստանից: Այդ երկրներից առաջին երեքը կարճ ժամանակից հետո վերածվում են հռոմեական պրովինցիայի, իսկ Կոմմագենեն, իր տեղական թագավորութիւնը պահպանելով հանդերձ, դառնում է Հռոմի հլու-հնազանդ ենթակա երկրներից մեկը:

Ժամանակավորապես Հայաստանից անջատվում է նաև Կորդուքը կամ Կորդվաց աշխարհը: Այս երկրի Զարբինոս թագավորը դեռ մինչև Լուկուլլոսի արշավանքը դավաճանելով Տիգրանին՝ գաղտնաբար անցել էր հռոմեացիների կողմը: Սակայն Տիգրանը՝ լուր ստանալով սրա դավաճանութեան մասին, հրամայել էր՝ նրան և նրա ընտանիքին սրի անցկացնել:

Լուկուլլոսի հետագա արշա- վանքը և պար- տութիւնը

Տիգրանակերտի անկումից հետո ձմեռվա սկսվող ցրտերի պատճառով երկու կողմերն էլ դադարեցնում են պատերազմական հետագա գործողութիւնները և նախապատրաստվում նոր ընդհարումների:

Լուկուլլոսը, վախենալով թշնամարար տրամադրված շրջապատից և հռոմեացիների համար անսովոր՝ ձմեռվա ընթացքում հայկական բանակի հարձակումներից, իր գորքը դուրս է բերում Տիգրանակերտից ու Հայաստանից և գնում ձմեռում է հայերի հետ թշնամացած Կորդվաց աշխարհում, որտեղ կային նաև հացի առատ պաշարներ:

Միհրդատը դեռ Պոնտոս չհասած, լուր ստանալով Տիգրանի պարտութեան մասին, ետ է վերադառնում: Տիգրանը և Միհրդատը անմիջապես եռանդուն կերպով ձեռնամուխ են լինում նոր պատերազմի նախապատրաստմանը: Նրանք հայ երիտասարդներից նոր գորք են հավաքում: Հռոմեացիների դեմ մղած պատերազմների երկարամյա փորձ ունեցող Միհրդատը և նրա զորավարները վերակառուցում և վարժեցնում են հայկական բանակը՝ այն հռոմեականի նման բաժանելով ջոկատների, վաշտերի: Զմեռվա ընթացքում հայ արհեստավորները բանակի համար կռում են նոր զենքեր և պատրաստում այլ ուղղամահանդերձանք:

Տիգրանը և Միհրդատը կարճ ժամանակում ոչ միայն պատրաստում են ավելի վարժեցված ու արագաշարժ հետևազոր, այլև հռոմեականից ավելի մարտունակ ու մեծաթիվ հեծելազոր: Տիգրանի նոր բանակում կային նաև վրացական ու մարական զորամասեր: Մարա-

կան գործառնասերին ինչպես Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ, նույնպես և այժմ առաջնորդում էր Ատրպատականի Միհրդատ թագավորը, որը Տիգրանի փեսան էր:

69-68 թթ. ձմեռվա ընթացքում թե՛ Տիգրանն ու Միհրդատ Պոնտացին, թե՛ Լուկուլլոսը ծավալում են նաև դիվանագիտական աշխույժ գործունեություն: Պատերազմող երկու կողմերի համար էլ շատ կարևոր ու էական նշանակություն ունենր Պարթևական թագավորության դիրքը: Եթե պարթևները միանային կովոդ կողմերից մեկին, ապա այդ կողմը կստանար բացարձակ գերակշռություն:

Տիգրանն ու Միհրդատը իրենց դեսպանների միջոցով, նվաճված անդրեփրատյան երկրները պարթևներին վերադարձնելու պայմանով, աշխատում էին համոզել պարթևների Հրահատ III թագավորին (70-57), որպեսզի նա միանար իրենց հետ և համատեղ պայքար սկսեր Արևելքի ընդհանուր և վտանգավոր թշնամու՝ Հոմի դեմ: Նրանք միաժամանակ զգուշացնում էին Հրահատին, որ եթե Հայաստանը պարտվի ու նվաճվի, ապա այնուհետև հոռմնացիները կհարձակվեն պարթևների վրա:

Իր հերթին Լուկուլլոսը իր դեսպանների միջոցով օգտագործելով հայերի ու պարթևների միջև գոյություն ունեցող թշնամությունը՝ աշխատում էր Հրահատին գրավել իր կողմը և նրան դուրս բերել Հայաստանի դեմ:

Սակայն պարթևները որոշում են չեզոքություն պահպանել: Նրանք հույս ունենին, որ պատերազմում երկու կողմերն էլ խիստ կերպով կթուլանան, դրանով իսկ կապահովվի իրենց տերության անվտանգությունը, և իրենք Արևելքում կգրավեն գերիշխող դիրք:

68 թ. գարնան վերջին վերսկսվում են պատերազմական գործողությունները: Լուկուլլոսը տեսնելով, որ Տիգրանը ո՛չ նախահարձակ է լինում և ո՛չ էլ հաշտություն է խնդրում, իր զորքերով դուրս է գալիս Կորդվաց աշխարհից և Տիգրանակերտի մոտով ու Տավրոսյան լեռների վրայով շարժվում դեպի Մշո դաշտը և Արածանիի հովիտը, դեպի Հայաստանի խորքերը: Լուկուլլոսի նպատակն էր կանոնավոր ու բաց ճակատամարտում հաղթել հայկական բանակին կամ գրավել Հայաստանի հին մայրաքաղաք Արտաշատը և ստիպել Տիգրանին վերջնական հաշտություն կնքել հոռմնացիների առաջարկած պայմաններով:

Հայկական բանակը այս նոր կոիվների ժամանակ գործադրում է աշխույժ պաշտպանական նահանջի, թշնամուն դեպի երկրի խորքերը քաշելու, մանր ու անկանոն կոիվներում նրա ուժերը հյուծելու ու բարոյալքելու մարտավարություն:

Միհրդատի ղեկավարութեամբ գործող հայկական բանակի հետևակային զորամասերը և հեծելազորի մի մասը որոշ հեռավորութունից թշնամուն ճակատից անընդհատ նետահարելով կամ նրա հետ փոքր ընդհարումներ ունենալով, բայց և խուսափելով կանոնավոր ճակատամարտից, սկսում է շատ դանդաղ կերպով ու աստիճանաբար նահանջել և թշնամուն քաշել դեպի երկրի խորքերը: Մյուս կողմից, Տիգրանի հրամանատարութեամբ գործող հեծելազորային արագաշարժ զորամասերը, չարժվելով թշնամու բանակի թեփերից ու թիկունքից, հեռվից նետահարում և գիչեր ու ցերեկ լարված ու անհանգիստ վիճակի մեջ էին պահում հակառակորդին, չըջապատում ու ոչնչացնում էին թշնամու փոքր խմբերն ու գումակը, կտրում հաղորդակցութեան ճանապարհները և դժվարացնում պարենավորումը:

Երբ հոռմեացիները խորանում են երկրի խորքը և անմիջական սպառնալիք են ստեղծում հայկական պետականութեան գոյութեանը, հայ ժողովուրդը նույնպես ոտքի է կանգնում իր հայրենիքը, անկախութունն ու պետականութունը օտարերկրյա նվաճողներից պաշտպանելու համար: Ժողովրդական զանգվածների ցատումն ու վրեժխընդրութունը ավելի է բորբոքվում, երբ հոռմեացիները Լուկուլլոսի հրամանով սկսում են ավերել ու այրել հայկական գյուղերը: Հոռմեական զավթիչների կամ, ինչպես ժողովրդական ավանդութունն է բնորոշում նրանց, «ելուզակների», այսինքն կողոպտիչ ավազակների դեմ ծավալվում է ժողովրդական պայքար:

Հայկական զորքերի հասցրած հարվածների, ժողովրդական զանգվածների ծավալած պայքարի, ատելութեան և թշնամանքի հետևանքով հոռմեական բանակը ընկնում է ծանր դրութեան մեջ: Դժվարանում է հոռմեական բանակի պարենավորումը, անընդհատ աճում է սպանված և ծանր վիրավորված զինվորների թիվը:

Հոռմեացիներն իրենց ուժերը լարելով, ճիշտ է, շատ դանդաղ կերպով, բայց և առաջ շարժվելով, հասնում են Արածանի գետանցքին, որտեղից ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Արտաշատ: Տիգրանը և Միհրդատը նկատի ունենալով Հայաստանի մայրաքաղաքին սպառնացող վտանգը՝ որոշում են թշնամու դեմ տալ վճռական ճակատամարտ:

68 թ. սեպտեմբերին Արածանի գետի ափին տեղի է ունենում Հայհոռմեական պատերազմի երկրորդ խոշոր ճակատամարտը:

Հոռմեացի զորավարների, այդ թվում և Լուկուլլոսի փառքը փողով

գովերգող Պրուտարքոսը տեղեկացնում է, որ իբր թե Արածանիի ճակատամարտում ևս հաղթել են հռոմեացիները և ոչնչացրել հայկական բանակը: Հակառակ Պրուտարքոսի, հույն պատմագիր Դիոն Կասիոսը վկայում է, որ այս ճակատամարտում հայկական հեծելազորը շատ նեղն էր գցել հռոմեացիներին և շատերին սպանել ու վիրավորել էր: Նույն հեղինակը վկայում է նաև, որ հայերի գործածած նետերի սլաքները թունավոր էին և ունեին երկու ծայր, որոնք այնպես էին իրար կցված, որ թե՛ վերքի մեջ մնալով և թե՛ դուրս հանելով՝ արագ մահ էին պատճառում:

Եթե իրոք, ըստ Պրուտարքոսի, հայկական զորքը պարտված ու ոչնչացված էր, ապա ամենաուշը հինգ օրից հռոմեացիները պետք է հաղթական կերպով մտած լինեին Արտաշատ: Սակայն ընթերցողի համար միանգամայն անսպասելի կերպով նույն Պրուտարքոսը հայտնում է, որ ճակատամարտից մի քանի օր հետո Լուկուլլոսի հրամանով հռոմեական բանակը սկսեց ետ նահանջել, որովհետև զորքը ապստամբել և կտրականապես պահանջել էր Լուկուլլոսից՝ ետ դառնալ: Նա հռոմեական զորքի ապստամբությունը և նահանջը պատճառաբանում է նրանով, որ իբր թե սեպտեմբերի կեսին ձյուն էր եկել Հայաստանում, և սկսվել էին անժամանակ ցրտերը: Ցիցերոնը նույն այս ապստամբությունն և նահանջի պատճառը համարում է այն, որ իբր թե հռոմեացի զինվորները շատ էին հեռացել երկրից և կարոտել էին հայրենիքը:

Հայաստանում, առավել ևս Արածանիի վերին հոսանքի շրջանում, սեպտեմբերին ուժեղ ցրտեր չեն լինում, իսկ եթե, այնուամենայնիվ, իրապես ցրտեր էին սկսվել, ապա ցրտից պատսպարվելու համար շատ ավելի մոտ էր Արտաշատը, քան հռոմեական զորքի նահանջի ուղին: Անկասկած է նաև, որ հաղթող և կողոպուտի տենչով տարված հռոմեական զինվորների մոտ հայրենիքի կարոտ չէր կարող առաջացած լինել, մանավանդ որ այդ զինվորների առջևում էր գտնվում կողոպուտի ենթակա այնպիսի մի հարուստ քաղաք, ինչպիսին էր Արտաշատը կամ, ինչպես իրենք հռոմեացիներն էին անվանում, «Հայաստանի Կարթագենը»: Թե՛ Պրուտարքոսի և թե՛ Ցիցերոնի բացատրությունները լոկ շինծու ու հնարովի հերյուրանքներ են, որոնց նպատակն էր քողարկել Լուկուլլոսի խայտառակ և ծանր պարտությունը: Հռոմեական զորքի ապստամբությունը և նահանջը ոչ թե ցրտի և հայրենիքի կարոտի, այլ այդ զորքի տված մեծ կորուստների ու պարտությունների հետևանք էր: Պարտված և բարոյալքված հռոմեացի զինվորները ոչ միայն չէին ուզում կորցնել Փոքր Ասիայում, Պոնտոսում

և Տիգրանակերտում իրենց ձեռք բերած կողոպուտը, այլև առավել ևս չէին ցանկանում հայկական հողում թողնել իրենց անարգ դիակը: Հայկական զորքի նետերից ու սրերի հարվածներից ընկած կամ ծանր և անբուժելի վերքերով ծածկված թշնամու շատ զինվորներ վառ օրինակ էին հանդիսանում իրենց ողջ մնացած ընկերների համար:

Արածանիի ճակատամարտում պարտված կամ լավագույն դեպքում ծանր կորուստներ կրած հռոմեական բանակը իր եկած ճանապարհով սկսում է ետ նահանջել դեպի հարավ: Սակայն Տիգրանը և Միհրդատը այս նահանջի ժամանակ թույլ են տալիս ռազմագիտական խոշոր սխալ: Նրանք, հետևելով իրենց առաջվա մարտավարությունը, խուսափում են թշնամու դեմ կանոնավոր ու վճռական ճակատամարտ տալուց, չեն հետապնդում նահանջող թշնամուն: Եթե հռոմեական զորքի հարձակման ժամանակ այս մարտավարությունը ճիշտ էր և ընդունելի, ապա այժմ այն բոլորովին սխալ էր: Ընդհակառակն, այժմ Տիգրանի և Միհրդատի հիմնական խնդիրը պետք է լիներ անպայման կանոնավոր ճակատամարտ տալ բարոյալքված, հուսալքված ու հյուժված թշնամու դեմ և թույլ չտալ, որ ոչ մի հռոմեացի նվաճող կենդանի դուրս գար հայկական հողից:

Լուկուլոսը, օգտվելով Տիգրանի և Միհրդատի թույլ տված այս սխալից, կարողանում է իր զորքի մնացորդները դուրս բերել Հայաստանից և տանել Հյուսիսային Միջագետք: Այստեղ հռոմեական զորքը պաշարում է հայկական փոխարքայություն կենտրոնը հանդիսացող Մծբին քաղաքը, որը ռազմական կարևոր նշանակություն ուներ և չրջապատված էր կրկնակի պարիսպներով: Մծբինի հայկական փոքրաթիվ կայազորը Տիգրանի եղբոր՝ Գուրասի գլխավորությամբ համառ ու երկարատև դիմադրություն է ցույց տալիս թշնամուն: Միայն երկու կամ երեք ամսից հետո հռոմեացիները, օգտվելով գիշերային տեղատարափ անձրևից ու փոթորկից, կարողանում են գրավել քաղաքը: 68–67 թթ. ամբողջ ձմեռը հռոմեացիները մնում են Հյուսիսային Միջագետքի տաք և պաշարներով լի կայաններում:

Հռոմեական զորքի նահանջից հետո Միհրդատը 8000 զինվոր ստանալով Տիգրանից՝ մեկնում է Պոնտոս և կարճ ժամանակամիջոցում ազատագրում իր թագավորության արևելյան շրջանները: Ժողովուրդը ցնծություն է ընդունում և օգնում է Միհրդատին, որովհետև ցասումով և ատելությամբ էր լցված դեպի հռոմեացի կեղեքիչները: 67 թ. գարնանը Զելայի մոտ հայ-պոնտական զորքերը գլխովին ջախջախում են այստեղ գտնվող հռոմեական ուժերին և ազատագրում ամբողջ Պոնտոսը:

Նույն այս ժամանակ հայ-մարական զորքերը, Տիգրանի և նրա փեսա Միհրդատի գլխավորությամբ, անցնում են Եփրատ գետը և հարձակվում Հոռմի «դաշնակից» Կապադովկիայի վրա: Հայ-մարական զորքերը, անխնա կերպով կոտորելով հոռմեացիներին, ավերում և նվաճում են Կապադովկիան:

67 թ. գարնանը Լուկուլլոսը իր զորքով, դուրս գալով Միջագետքից և շարժվելով դեպի արևմուտք, գնում է Փոքր Ասիա: Նրա հեռանալուց հետո Տիգրան II-ը կրկին գրավում և իր տերությունն է միացնում Կորդվաց աշխարհը և Հյուսիսային Միջագետքը:

Այսպիսով, Լուկուլլոսի՝ յոթ տարի առաջ սկսած պոնտական և հայկական արշավանքները վերջանում են առանց էական արդյունքի և անփառունակ կերպով: Լուկուլլոսը, որ չէր բավականացել Միհրդատ Պոնտացուն հաղթողի իր փառքով, այժմ զրկվել էր նաև դրանից: Տիգրանը և Միհրդատը ոչ միայն վերականգնել էին իրենց թագավորությունները, ոչ միայն հայկական զորքերը գրավել էին Կապադովկիան, այլև Հոռմի փոքրասիական պրովինցիաները գրտնրվում էին հայկական և պոնտական զորքերի ներխուժման վտանգի տակ:

Ներքին հակասությունների սրումը

Հայ-պոնտական դաշինքն ու համագործակցությունը ոչ մի անգամ այնքան ամուր չէին թվում, որքան Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքից և նրա պարտությունից հետո: Սակայն այդ դաշինքը շուտով քայքայվում և նույնիսկ թշնամությամբ է փոխարինվում՝ Հայաստանում առաջացած ներքին գահակալական կռիվների և իշխող վերնախավի ներսում հակասությունների սրման հետևանքով:

Հայ ավագանու մի շարք ներկայացուցիչներ, որոնք հավանաբար, դժգոհ էին թագավորի ներքին ու արտաքին քաղաքականությունից, պայքար են սկսում Տիգրան II-ի իշխանության դեմ: Տիգրանի դեմ կազմակերպվում են խռովություններ ու դավադրություններ, որոնց գլուխ կանգնում են հայկական գահի ամենամոտիկ հավակնորդները՝ նրա հարազատ որդիները: Անդրանիկ որդին՝ Զարեհը, Տիգրանից դժգոհ հայ ավագանու ներկայացուցիչների հետ գաղտնի դավեր լարելով՝ խռովություն է բարձրացնում իր հոր դեմ: Սակայն խռովությունը ճնշվում է: Զարեհն ու նրա կողմնակիցները կռվում հաղթվում և սպանվում են: Նրա երկրորդ որդին, որի անունը մեզ չի հասել, նույնպես աշխատում է գահը խլել, օգտվելով հոր հետ պատահած մի արկածից: Մի անգամ որսի ժամանակ Տիգրան II-ը ձիուց

վայր է ընկնում ու ուշաթափվում: Այս որդին, թողնելով իր հորը ծանր վիճակում, վերցնում է նրա թագը, դնում է իր գլխին և հեռանում: Տիգրանը ուշքի գալուց հետո հրամայում է բռնել և մահապատժի ենթարկել նրան:

Սակայն շուտով իշխող վերնախավի ընդդիմադիր ու դժգոհ տարրերի պարագլուխը և նրանց շահերի արտահայտիչն է դառնում Տիգրանի երրորդ որդին, որի անունը նույնպես Տիգրան էր: 67 թ. վերջին Տիգրան Կրտսերը, օգտվելով այն բանից, որ հայրը արչավանքի մեջ էր գտնվում Կապադովկիայում, իր կողմնակիցների հետ ապստամբում ու խռովություն է բարձրացնում և փորձում է գրավել գահը: Տիգրան Մեծը, լուր ստանալով այս ապստամբության մասին, 66 թ. սկզբին զորքով վերադառնում է Հայաստան և կռվում պարտություն է մատնում որդուն: Տիգրան Կրտսերը իր կողմնակից ղավաղիր հայ ավագանու ներկայացուցիչների հետ փախչում է պարթևների մոտ և այնտեղ ամուսնանում Հրահատ III-ի դստեր հետ:

Իրար ետևից առաջացած այս դավադրություններն ու խռովությունները ոչ միայն ծանրացնում և անկայուն են դարձնում Հայաստանի ներքին դրությունը, այլև խիստ կերպով վատացնում են դաշնակից թագավորների՝ Տիգրանի և Միհրդատի բարեկամական հարաբերությունները: Տիգրան Մեծը իրավացի հիմքով կասկածում էր, որ իր որդիներին խռովության և դավադրության գրողն ու հրահրողը հանդիսանում է Միհրդատը: Հայկական ռազմական ուժերը իր քաղաքական նպատակներն օգտագործելու տեսակետից, անշուշտ, Միհրդատի համար ավելի ցանկալի էր հայկական գահի վրա տեսնել իր երիտասարդ թոռանը, քան ինքնուրույն քաղաքականություն վարող Տիգրան Մեծին: Բացառված չէ նաև այն ենթադրությունը, որ այս խռովությունները կարող էին հրահրված լինել նաև հռոմեացիների և պարթևների կողմից:

Ք. ա. 67 թ. վերջին հռոմեական սենատի

Պոմպեոսի ար- որոշմամբ Լուկուլլոսի փոխարեն Արևելքում
չավանքը և հայ- գործող հռոմեական զորքերի ընդհանուր հրահրողն էր
հռոմեական հաշ- մանատար է նշանակվում Պոմպեոսը, որը մինչ
տությունը այդ հռչակվել էր Իսպանիայում Սերտորիուսի,
խակ Միջերկրական ծովում ծովահենների դեմ
մղված պատերազմներում: Նրան տրվում են պատերազմ վարելու,
հաշտություն կնքելու, պրովինցիաները կառավարելու ու նրանց
եկամուտները տնօրինելու արտակարգ լիազորություններ և անսահմանափակ իշխանություն:

Պոմպեոսը իր նշանակման մասին լուրը ստանալով Կիլիկիայում՝ անմիջապես ձեռնամուխ է լինում Միհրդատի և Տիգրանի դեմ նոր պատերազմի նախապատրաստմանը: Նա կարճ ժամանակամիջոցում իր, Լուկուլլոսի և Հոմմին ենթակա ու դաշնակից երկրների ուժերից ստեղծում է մի խոշոր բանակ: Նախքան պատերազմական գործողու-թյուններ սկսելը Պոմպեոսը կարողանում է Միջագետքում Տիգրանի գրաված երկրները պարթևներին վերադարձնելու խոստումով իր կողմը գրավել Հրահատ III-ին և սրան դարձնել Հայաստանի վտանգավոր հակառակորդ՝ թիկունքից: Հայաստանի և Պոնտոսի դեմ ուղղված պարթևահռոմեական այս դաշինքի կնքման մեջ որոշ դեր է կատարում նաև Տիգրան Կրտսերը:

66 թ. գարնանը Պոմպեոսը ափելի քան 60.000 զորքով Հարձակվում է Պոնտոսի վրա: Հռոմեական ուժերի դեմ Միհրդատը իր քայքայված և ուժասպառ եղած երկրից կարողանում է դուրս բերել միայն 33 հազար զորք: Նկատի ունենալով հակառակորդի գերակշռու-թյունը՝ Միհրդատը խուսափում է կանոնավոր ճակատամարտից և սկսում է մղել պարտիզանական լեռնային մանր կռիվներ: Սակայն Պոմպեոսը Գայլ գետից դեպի հարավ, Փոքր Հայքի Դաստիր բնակավայրի մոտ գտնվող նեղ կիրճում չրջապատում է Միհրդատի բանակը ու վերջնական պարտության մատնում: Միհրդատը փոքրաթիվ ուժե-րով փախչում է սկզբում Կողքիս, իսկ հետո Բոսփոր (Ղրիմ), որտեղ և Ք. ա. 63 թ. ինքնասպանությամբ վերջ է տալիս իր խռովահույզ ու փոթորկալից կյանքին: Պոնտոսը և Փոքր Հայքը նվաճվում ու վերած-վում են հռոմեական պրովինցիայի:

Ք. ա. 66 թ. գարնանը Հայաստանը իր հերթին ենթարկվում է պարթևների հարձակմանը: Հրահատ III-ը պարթևների կորցրած հո-ղերը վերագրավելու և իր փեսա Տիգրան Կրտսերին հայկական գահի վրա բարձրացնելու նպատակով ներխուժում է Հայաստան և գալիս պաշարում Արտաշատը: Տիգրան Մեծը, մայրաքաղաքի պաշտպանու-թյունը կայազորին հանձնարարելով, ինքը հեռանում է երկրի լեռ-նային չրջանները զորք հավաքելու համար: Արտաշատի կայազորը և բնակչույթյունը երկարատև ու համառ դիմադրություն են ցույց տալիս թշնամուն:

Երբ Հրահատը տեսնում է, որ Արտաշատի պաշարումը խիստ եր-կարում է, հետագա պաշարումը հանձնարարելով Տիգրան Կրտսերին, ինքը զորքի մի մասով վերադառնում է իր երկիրը: Սրա հեռանալուց անմիջապես հետո Տիգրան Մեծը իր հավաքած զորքերով հարձակ-վում և գլխովին ջախջախում է դավաճան որդուն, վերջինս մազա-պուրծ փախչում և գնում է Պոմպեոսի մոտ:

Միհրդատին վերջնական պարտություն ենթարկելուց հետո 66 թ. աշնանը Պոմպեոսը հարձակվում է նաև Հայաստանի վրա և շարժվում դեպի Արտաշատ:

Տիգրան Մեծի համար ստեղծվում է շատ ծանր դրություն: Նա միայն իր ուժերով, առանց դաշնակիցների չէր կարող միաժամանակ պատերազմել թե՛ հզոր Հռոմի և թե՛ Պարթևական թագավորության դեմ, մանավանդ որ Հայաստանի ներքին դրությունն էլ կայուն չէր: Հայաստանի պարտությունը դառնում էր անխուսափելի: Ելնելով ստեղծված դրությունից, ինչպես և երկիրը անտեղի ու անօգուտ ավերածություններից զերծ պահելու, պարթևների հետագա արշավանքներն ու նվաճողական ձգտումները սանձահարելու և ժամանակ չահելու նպատակով Տիգրանը հաշտություն է առաջարկում Պոմպեոսին, որն ընդունում է այդ առաջարկությունը: Երկու կողմերի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո, 66 թ. աշնանը Արտաշատում հաշտության պայմանագիր է կնքվում Հռոմի և Հայաստանի միջև:

Այդ պայմանագրով նախատեսվում է հետևյալը.

1. Բացի պարթևներից գրաված հողերի մեծ մասից, Տիգրանը հրաժարվում էր Հայաստանից դուրս կատարած իր բոլոր նվաճումներից:

2. Ծովքը ժամանակավորապես անջատվելու էր Հայաստանից, և այստեղ թագավոր էր դառնալու Տիգրան Կրտսերը: Սա իր հոր մահից հետո ժառանգելու էր նաև նրա գահը:

3. Տիգրանը պարտավորվում էր իբրև պատերազմական տուգանք Պոմպեոսին վճարել 6000 տաղանդ, յուրաքանչյուր հոռմեացի զինվորին՝ 50 դրաքմե, յուրաքանչյուր հարյուրապետին՝ 100 դրաքմե, իսկ յուրաքանչյուր զինվորական տրիբունին՝ մեկ տաղանդ: Ընդհանուր առմամբ Տիգրանը պետք է վճարեր մոտ 12.000 տաղանդ (մոտ 25 միլիոն ոսկի ուրբի): Այս գումարները մեծ մասամբ պետք է տրվեին Ծովքում պահվող պետական գանձերից:

4. Այսուհետև Տիգրանը հռչակվում էր «հոռմեական ժողովրդի բարեկամը և դաշնակիցը»:

Այս վերջին կետը նշանակում էր, որ Հայաստանը, իր ներքին ինքնուրույնությունը և պետականությունը պահպանելով հանդերձ, ճանաչում էր Հռոմի գերիշխանությունը և պատերազմի ժամանակ պարտավորվում էր նրան օգնել զորքով:

Այսպիսով, ներքին հակասությունների և հոռմեական նվաճողական քաղաքականության հետևանքով քայքայվում է Տիգրան II-ի

տերութիւնը: Հայաստանը դադարում է Առաջավոր Ասիայի հզոր պետութիւն լինելուց և ամփոփվում է Հայկական լեռնաշխարհի սահմաններում:

Պատմաբաններից ոմանք գտնում են, որ իբր թե Պոմպեոսը, խրդ-ճալով Տիգրանի ծերութիւնը, նրա հետ կնքել է շատ մեղմ պայմաններով հաշտութիւն: Սակայն նրանք մոռանում են, որ նվաճողները խիղճ չեն ունենում:

Պոմպեոսը համեմատաբար ընդունելի պայմաններով հաշտութիւն կնքելով Տիգրանի հետ՝ իրապես ոչ թե խղճացել էր ծերունի թագավորին, այլ ելել էր հռոմեական ստրկատերերի, Հռոմի հետագա նվաճողական քաղաքականութեան շահերից: Նա, լինելով հռոմեական հեռատես ու քաղաքագետ զորավարներից մեկը, լավ էր հասկանում, որ վաղ թե ուշ Հռոմը անխուսափելիորեն պետք է ընդհարման ժամանակ խիստ էական նշանակութիւն կունենային Հայաստանի ռազմավարական դիրքը և հայերի վերաբերմունքը: Այս պայմանագրով հռոմեացի զորավարը պարզապես աշխատել էր շատ չգրգռել հայերին և ապագա պատերազմում նրանց չմղել պարթևների կողմը: Անշուշտ, հայ-պարթևական հետագա դաշնակցութիւնը խափանելու նպատակով էր նաև, որ Պոմպեոսը հայկական գահը չէր տվել Տիգրան Կրտսերին, որովհետև Տիգրան Մեծը, լինելով պարթևների հակառակորդ, ավելի ցանկալի դաշնակից էր հռոմեացիների համար, քան պարթևների կողմը թեքված և նրանց հետ ազգակցական կապերով կապված Տիգրան Կրտսերը: Բացի այդ, Պոմպեոսը Հրահատ III-ի փեսային՝ Տիգրան Կրտսերին էր տվել Ծոփքը և ոչ թե Հայաստանի մի այլ մաս այն պարզ պատճառով, որ սա ընդհանուր սահման չունենա պարթևների հետ:

Կնքված հաշտութիւնից խիստ դժգոհ է մնում Տիգրան Կրտսերը, որն ի փոխհատուցում իր դավաճանութեան, հույս ուներ ստանալու հայկական գահը: Սա անարգում ու վիրավորում է Պոմպեոսին, ըմբոստանում և չի ուզում իր հորը հանձնել Ծոփքում գտնվող գանձերը նոր դավեր նյութելով հոր դեմ: Պոմպեոսը ձերբակալում է Տիգրան Կրտսերին, սրա ընտանիքին ու զավակներին և, հակառակ Հրահատ III-ի բողոքներին, ուղարկում Հռոմ:

65 թ. Հայաստանից Պոմպեոսը արչավում է դեպի Իբերիա (Վրաստան), իսկ ապա՝ Աղվանք: Իբերները և աղվանները ուժեղ ու համառ դիմադրութիւն են ցույց տալիս հռոմեական զավթիչներին: Սակայն հարևան այս երկրների թագավորները նույնպես ստիպված են լինում

ընդունել Հոռմի գերիշխանությունը և իրենց հռչակել «Հոռմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից»: Շուտով Հոռմի գերիշխանությունը ընդունում է նաև Հայաստանի հարևան ու դաշնակից Ատրպատականը:

Նույն 65 թ. Հրահատ III-ը գրավում է Միջագետքն ու Կորդվաց աշխարհը, որոնք Պոմպեոսի հետ կնքված դաշինքի համաձայն պատկանելու էին պարթևներին: Սակայն Պոմպեոսը պահանջում է Հրահատից ազատել Կորդվաց աշխարհը և Հյուսիսային Միջագետքի մի մասը: Նա, նույնիսկ չսպասելով Հրահատի պատասխանին, հրամայում է Հոռմեական զորքերին՝ գրավել այդ երկրները և հանձնել Տիգրան II-ին: Այս գործողությամբ Պոմպեոսը խախտում էր իր իսկ կնքած դաշինքը: Այժմ, անշուշտ, Հոռմեացիների համար ավելի ձեռնտու էր, որ ռազմավարական կարևոր դիրք ունեցող Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը գտնվեին դաշնակից հայերի, քան թե ուժեղացող պարթևների ձեռքում:

Հրահատ III-ը ստիպված է լինում անլուր կերպով տանել Հոռմեացի զորավարի նաև այս բացարձակ բռնությունն ու անարգանքը: Այժմ արդեն Հրահատը պետք է հասկացած լիներ, թե ինչպիսի խոշոր ու ճակատագրական սխալ էր գործել՝ դաշնակցելով Հոռմեացիների հետ: Նա լքելով իր բնական դաշնակցին՝ Հայաստանին, և խփելով նրա թիկունքին՝ ոչ միայն նպաստել էր Հայաստանի նվաճմանը, այլև Հոռմեական վտանգը անմիջականորեն մոտեցրել իր պետության սահմաններին:

Հաշտության դաշնագրից հետո Տիգրան II-ը թագավորում է ևս տասը տարի: Նա մահանում է Ք. ա. 55 թ. 85 տարեկան հասակում:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԻՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Արտավազդ II Տիգրան II-ին հաջորդում է նրա որդին՝ Արտավազդ II-ը (55-34), որը, հավանաբար, ղեռնակող կենդանություն վերջին տարիներին դարձել էր նրա աթոռակիցը:

Արտավազդը քաղաքական բարդ իրադրությունների մեջ կողմնորոշվող, իր հայրենիքի շահերը պաշտպանող հայ թագավորներից մեկն էր: Նա հայկական արքունիքում հեղինակալի հիանալի կրթություն ստացած, հեղինակալի մշակույթը մեծապես զնահատող ու հովանավորող, զարգացած պետական գործիչներից էր:

Մեզ են հասել Արտաշատի փողերանոցում կամ դրամատանը կտրված Արտավազդի գեղեցիկ արծաթյա դրամները, որոնց առաջին երեսում դրոշմված է արքայական թագով նրա պատկերը, իսկ երկրորդ երեսում՝ քառաձի մարտակառք: Իր դրամների վրա հունարեն մակագրությունը Արտավազդը իրեն անվանում է «արքայից արքա»:

Չնայած Լուկուլլոսի և Պոմպեոսի կատարած արչավանքների հետևանքով Հայաստանի կրած տարածքային մեծ կորուստներին, հոռմեացիների կողմից կատարած ավերումներին և կողոպուտին Արտավազդի ժամանակ դեռևս Հայաստանը բավական ընդարձակ և ուժեղ պետություն էր: Նա ուներ զգալի ռազմական ուժեր և նյութական միջոցներ: Այդ հանգամանքը իրենց պայքարի ժամանակ հաշվի էին առնում թե՛ հռոմեացիները և թե՛ պարթևները: Եթե հռոմեացիները, հենվելով իրենց կնքած հաշտության դաշնագրի վրա, առանց Հայաստանի բուն շահերը նկատի ունենալու, աշխատում էին հայկական ուժերը օգտագործել բացառապես իրենց նվաճողական քաղաքականություն իրականացման համար, ապա պարթևները, ուղղելով իրենց սխալը, ձգտում էին դաշնակցել հայերի հետ՝ ընդդեմ Հռոմի: Այդ պատճառով էր, որ պարթևները լուեյայն համաձայնվել էին, որ Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը մնային Հայաստանի կազմում:

Արտավազդ II-ը զահ բարձրանալուց հետո, հենվելով երկրի ռազմական ուժերի վրա և օգտագործելով հռոմա-պարթևական հակասությունները, աշխատում է Հայաստանը դուրս բերել Հռոմի նկատմամբ ունեցած կախումից, վերականգնել Հայաստանի ինքնուրույնությունն ու նախկին հզորությունը:

Ք. ա. 60 թ. Հռոմում կազմվում է առաջին

Կրասոսի պարթե- տրիումվիրատը կամ եռապետությունը, որի վական արչավան- կազմի մեջ մտնում էին Գնեսոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը: Եռապետները փաստորեն իրենց ձեռքում են կենտրոնացնում ամբողջ իշխանությունը և Հռոմի նվաճած երկրների կառավարումը բաժանում իրար միջև:

Արևելքի երկրների կառավարումը հանձնարարվում է Կրասոսին, որը Հռոմի ամենահարուստ, ընչաքաղց ստրկատեր-վաշխառուներից մեկն էր: Նա հայտնի էր նաև Սպարտակի ապստամբությունը ճնշելու ժամանակ իր գործադրած վայրագությունը ու դաժանությունը:

54 թ. Կրասոսը զալով Ասորիք, նախապատրաստվում է Միջագետքի վրայով մեծ արչավանք կատարել պարթևների դեմ: Այդ ար-

չավանքով նա ձգտում էր ձեռք բերել նոր հարստություններ և ուղ-մական փառք:

Նույն այս թվականին Արտավազդ II-ը 6000-անոց հեծելազորով գալիս է Կրասոսի մոտ և նրան խոստանում տալ 10.000 հեծելազոր և 30.000 հետևազոր: Միաժամանակ, հաշվի առնելով, որ հայկական զորքը երկրից դուրս գալու դեպքում պարթևները կարող են հարձակվել ու ավերել Հայաստանը, նա խորհուրդ է տալիս Կրասոսին իր արչավանքը կատարել ոչ թե Միջագետքի անապատային հարթավայրերով, այլ Հայաստանի լեռնային շրջաններով, որտեղ հոռմեացիները կչարժվեին ապահով կերպով և չէին ենթարկվի պարթևական հեծելազորի վտանգավոր հարձակումներին: Սակայն Կրասոսը մերժում է այդ խորհուրդը, որից հետո Արտավազդը վերադառնում է Հայաստան:

53 թ. գարնանը Կրասոսը ավելի քան 45.000 զորքով անցնելով Եփրատ գետը՝ Միջագետքի անապատային հարթավայրերով շարժվում է պարթևների դեմ: Պարթևների Օրոդես I թագավորը (56-37) իր զորքի մի մասը՝ տաղանդավոր զորավար Սուրենի առաջնորդությամբ, ուղարկում է Կրասոսի դեմ, իսկ ինքը զորքի մյուս մասով արշավում է Հայաստան:

Արտավազդը սուրհանդակներ է ուղարկում Կրասոսի մոտ և Հայտնում, որ ինքը չի կարող օժանդակ զորք տալ նրան, որովհետև պարթևները հարձակվել են Հայաստանի վրա: «Կրասոսը, - ասում է Պլուտարքոսը, - բարկացած լինելով և անբաղաքավարի գտնվելով, Արտավազդին գրավոր պատասխան չուղարկեց, այլ ասաց բերանացի, որ այժմ նա ժամանակ չունի զբաղվելու հայերով, բայց կվերադառնա և կպատժի Արտավազդին՝ դավաճանություն համար»:

Մեծամիտ ու ամբարտավան հոռմեացի զորավարը ոչ միայն կարծում էր, որ հայկական բանակը ստեղծված է միայն հոռմեական նվաճողական քաղաքականությունը ծառայելու համար, այլև գտնում էր, որ հայերի՝ իրենց իսկ հայրենիքի պաշտպանությունը հանդիսանում է դավաճանություն: Ահա թե հոռմեացիները ինչպես էին հասկանում «բարեկամությունն ու դաշնակցությունը»:

Արտավազդը և հայկական զորքը ոչ մի շահագրգռվածություն չունեին պարթևների դեմ մղվող պատերազմում: Դեռ ավելին. նրանք շատ լավ էին գիտակցում, որ հոռմեացիները պարթևներին հաղթելուց հետո անպայման կավերեն, կկողոպտեն երկիրը, կվերացնեն հայկական պետականությունը և Հայաստանը կդարձնեն հոռմեական սովորական մի պրովինցիա: Կրասոսի վերոհիշյալ սպառնալիքից հե-

տո Նայաստանի շահերը պահանջում էին անհապաղ դաշինք կնքել պարթևների հետ և համատեղ կերպով պայքարել հռոմեական նվաճողների դեմ, մանավանդ որ պարթևներն էլ ձգտում էին դրան: Շուտով Օրոդեսը և Արտավազը բանակցություններ են սկսում և հռոմեացիների դեմ ուղղված բարեկամական դաշինք են կնքում: Այդ դաշինքը ամրապնդելու նպատակով Արտավազը իր քրոջը կնույթյան է տալիս Օրոդեսի որդուն՝ Թագաժառանգ Բակուրին:

Մինչ այդ Կրասոսը, շարունակելով արշավանքը, աշխատում է շուտափույթ բախվել պարթևական զորքի հետ, որը հիմնականում կազմված էր հեծելազորից: Սկզբում պարթևները խուսափում են ճակատամարտից և թշնամուն քաշում են Միջագետքի անապատները: 53 թ. մայիսի 6-ին պարթևները Նառան քաղաքի մոտ հանկարծակի շրջապատում, անխնա կերպով կոտորում ու գլխովին ջախջախում են հռոմեացիներին: Պարթևների հաղթությունը կատարյալ էր ու փառավոր: Հռոմեացիները տալիս են 20.000 սպանված և 10.000 գերի: Սպանվում են Կրասոսը և նրա որդին: Բացի հարուստ ավարից, պարթևների ձեռքն են ընկնում նաև հռոմեական արծվանիչ զորացիները:

Սուրեն զորավարը Կրասոսի կտրված գլուխը ուղարկում է Արտաշատ, որտեղ այս ժամանակ գտնվում էին պարթևների Օրոդես թագավորը և պարթև մեծամեծները: Այստեղ հռոմեացիների դեմ տարված հաղթանակի և թագաժառանգ Բակուրի ու Արտավազի քրոջ ամուսնությունյան կապակցությամբ տեղի էին ունենում զվարճություններ և տոնահանդեսներ: Կրասոսի գլուխը բերում են այն ժամանակ, երբ արքունի թատրոնում հույն դերասանների խումբը ներկայացնում էր էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Ըստ ողբերգության գործողության ընթացքի, երբ պետք է ցուցադրվեր բաքոսուհիների կողմից հռչուտված առասպելական Պենթևս թագավորի գլուխը, դերակատար Յասոնը մի կողմ նետելով Պենթևսի բուտաֆորային գլուխը և նրա փոխարեն վերցնելով ու հանդիսատեսներին ցուցադրելով Կրասոսի կտրված գլուխը՝ մոլեգնությունը ու խանդավառությունը արտասանում է ողբերգության հետևյալ տողերը. «Տուն վերադառնալով, մենք բերում ենք լեռներից նոր սպանված եղջերուն, բախտավոր մի որս»: Այս տեսարանը հանդիսատեսները ընդունում են բուռն ծափահարություններով և մեծ ցնծությամբ:

51-40 թթ. ընթացքում հայ-պարթևական զորքերը բազմաթիվ արշավանքներ են կատարում դեպի Ասորիք, Փյունիկիա և Պաղեստին: Հռոմեացիների կողմից կեղեքված ու հարստահարված այս երկրների բնակչությունը համակրանքով է ընդունում և ոչ մի դի-

մազրություն ցույց չի տալիս հայ-պարթևական գորքերին: Այս ար-
շավանքների ընթացքում, բացի հարուստ ավարից, Արտավազդ II-ը
բերում է նաև զգալի թվով հույն, ասորի և հրեա զաղթականներ,
որոնց բնակեցնում է Հայաստանի քաղաքներում:

Հավանաբար Ք. ա. 52 կամ 51 թ. Արտավազդը գրավում և կրկին
Հայաստանին է միացնում Մոփքը, որը դեռևս 63 թ. Պոմպեոսը հանձ-
նել էր Կապադովկիային:

Այսպիսով, Արտավազդ II-ը, օգտվելով հռոմեացիների պարտու-
թյունից, վերականգնում է Հայաստանի լրիվ ինքնուրույնությունը,
մասամբ նաև՝ նրա նախկին հզորությունը:

Ք. ա. 49 թ. Հռոմում ներքին քաղաքացիական
Անտոնինոսի պար- կոիվներ են սկսվում Հուլիոս Կեսարի և Պոմ-
թևական և հայ- պետսի միջև: 48 թ. հունիսի 6-ին Հունաստանում
կական արշա- Փարսալոսի մոտ տեղի ունեցած ճակատա-
վանքները մարտում Պոմպեոսը պարտվում և փախչում է
Եգիպտոս, որտեղ և սպանվում է: Սակայն Հու-
լիոս Կեսարը, որ ձգտում էր Հռոմում միապետական կարգեր հաս-
տատել, երկար չի ապրում: Հանրապետության կողմնակիցները Ք. ա.
44 թ. նրա դեմ զավաղրություն են կազմակերպում և սենատում
սպանում նրան:

Հուլիոս Կեսարը սպանությունից հետո 43 թ. Անտոնինոսը, Սկ-
տավիանոսը և Լեպիդոսը Հռոմում կազմում են երկրորդ եռապետու-
թյունը: Եռապետության անդամները 42 թ. Հունաստանում ամրա-
ցած հանրապետականներին հաղթելուց և այնուհետև իրար դեմ
պայքարելուց ու հաշտվելուց հետո 40 թ. հռոմեական պրովինցիա-
ները բաժանում են իրար միջև: Արևելքը բաժին է ընկնում Մարկոս
Անտոնինոսին:

Անտոնինոսը Արևելք է ուղարկում իր նշանավոր զորավարներից
մեկին՝ Վենտիդիոս Բասսոսին: Սա 39–38 թթ. ընթացքում ծանր
պարտություն է մատնում պարթևներին և նրանցից վերագրավում
Ասորիքը: Հյուսիսային Ասորիքում տեղի ունեցած ճակատամարտե-
րից մեկում սպանվում է նաև պարթևական զորքի հրամանատար
թագաժառանգ Բակուրը:

Ք. ա. 38 թ. մեծ ուժերով Արևելք է գալիս նաև ինքը՝ Անտոնինոսը:
Սա երկու տարի մնում է Եգիպտոսում իր կնոջ՝ Կլեոպատրա թագու-
հու մոտ: Նա միաժամանակ նախապատրաստվում է մի խոշոր արշա-
վանք կատարել պարթևների դեմ:

Անտոնինոսը հաշվի առնելով Կրասոսի արշավանքի տխուր փորձը՝

ծրագրում է իր արչավանքը կատարել Հայաստանի և Ատրպատականի վրայով, Հայաստանը դարձնել իր արչավանքի ելակետն ու հենարանը: Այդ նպատակով նա որոշում է Հայաստանը կրկին ենթարկել Հոռմի գերիշխանությունը:

Անտոնիոսի հրամանով 37 թ. նրա արևելյան պրովինցիաների կառավարիչ Պուբլիոս Կանդիդոսը զգալի ուժերով ներխուժում է Հայաստան: Դաշնակից պարթևները ոչ մի օգնություն չեն կարողանում ցույց տալ Հայաստանին, որովհետև հենց նոր զաՀ բարձրացած Հրահատ IV-ը (37-2) վտանգավոր մրցակիցներից ազատվելու համար կոտորել էր տվել իր հորը՝ Օրոդեսին, եղբայրներին ու պարթև մեծամեծներից շատերին և երկրում ստեղծել էր խառն ու անկայուն վիճակ: Արտավազդը դրսից ոչ մի օգնություն չստանալով և մենակ մնալով Հոռմեացիների դեմ՝ ստիպված է լինում կրկին ընդունել Հոռմի գերիշխանությունը և ճանաչել «Հոռմեական ժողովրդի դաշնակցի ու բարեկամի» պարտավորությունները:

36 թ. Անտոնիոսը սկսում է իր պարթևական արչավանքը: Նա խոշոր ուժերով դուրս գալով Եգիպտոսից՝ գալիս է Հայաստան և բանակ է դնում Կարնո դաշտում, որտեղ հավաքվել էին նաև «դաշնակից» թագավորների զորքերը: Այստեղից Անտոնիոսի բանակը, որ կազմված էր ավելի քան 100.000 զորքից և 300 սայլերի վրա բարձած պաշարողական մեքենաներից, հունիսին շարժվում է դեպի Ատրպատական՝ այնտեղից պարթևների վրա հարձակվելու համար: Անտոնիոսը դանդաղ շարժվող պաշարողական մեքենաների պաշտպանությունը և ուղեկցումը հանձնարարելով երկու լեգեոն զորքի՝ ինքը գլխավոր ուժերով արագ գալիս և պաշարում Ուրմիո լճի հարավարևելյան կողմում գտնվող Ատրպատականի մայրաքաղաք Փրասպան կամ Գանձակը: Ատրպատականի մայրաքաղաքը ուժեղ և համառ դիմադրություն է ցույց տալիս՝ վիժեցնելով թշնամու հետագա մտադրությունները:

Շուտով Ատրպատականին 50.000 հեծելազորով օգնության են գալիս պարթևները: Պարթևական խոշոր զորամասերից մեկը, անցնելով հակառակորդի թիկունքը, պաշարում և ոչնչացնում է դեռևս գլխավոր բանակին չհասած պաշարողական մեքենաները և գլխովին կոտորում նրանց ուղեկցող Հոռմեական զինվորներին: Այս մեքենաների ոչնչացումով ոչ միայն Հոռմեական բանակը զրկվում է իր ունեցած գերակշռությունից, այլև նրա հաղթությունը դառնում է խիստ կասկածելի:

Հայկական հեծելազորը, որին, ըստ երևույթին, նույնպես հանձնարարված էր այս մեքենաների պաշտպանությունը, ոչ մի օգնություն ցույց չի տալիս հոռմեացիներին, չի ցանկանում կռվել պարթևների դեմ: Արտավազըրը, կանխատեսելով հոռմեացիների պարտությունը և հույս ունենալով վերանորոգելու պարթևների հետ բարեկամական դաշինքը, չի մասնակցում կռիվներին և իր զորքի հետ վերադառնում է Հայաստան:

Ատրպատականում տեղի ունեցած կռիվների ընթացքում Անտոնիոսի բանակը ծանր կորուստներ է կրում: Վրա հասնող աշնան ցրտերը և սննդամթերքների պակասությունը ավելի ևս ծանրացնում են հոռմեական զորքի վիճակը: Անտոնիոսը ոչ մի էական հաջողություն չհասած և նույնիսկ պարթևների երկիրը չմտած՝ ստիպված է լինում իր մնացած զորքի հետ Ատրպատականից նահանջել Հայաստան, նահանջի ճանապարհին տալով նույնպես զգալի կորուստներ:

Անտոնիոսը Հայաստան գալուց հետո Արտավազդին ցույց է տալիս կեղծ հարգանք և բարեկամություն, որպեսզի իր զորքի համար նրանից վերցնի կենսամթերք, փող և չզրգոի հայերի թշնամությունը: Անտոնիոսը վախենալով, որ պարթևները, մարերը և հայերը միացած՝ կարող են ձմեռվա պայմաններում հարձակվել ու գլխովին ոչընչացնել իր բարոյալքված ու հուսաբեկված բանակը, զորքի հետ դուրս է գալիս Հայաստանից և գնում Ասորիք՝ ճանապարհին ցրտից կորցնելով ևս 8000 մարդ:

Անտոնիոսը պարթևական արշավանքի ժամանակ կորցնում է ավելի քան 32.000 մարդ և հսկայական նյութական ու ֆինանսական միջոցներ: Այսպիսով, պարթևների դեմ հոռմեացիների կազմակերպած երկրորդ արշավանքը ևս վերջանում է նրանց համար խայտառակ պարտությունով:

Անտոնիոսը և նրա հրամանատարները այս խայտառակ պարտությունը հետագայում սկսում են վերագրել Արտավազդի իրրև թե կատարած դավաճանությունը: Սա ոչ միայն մի միջոց էր ծեծված ու պախարակված հոռմեացի զորավարին՝ Անտոնիոսին արդարացնելու համար, այլև հնարված մի պատրվակ՝ Հայաստանը նվաճելու ու կողոպտելու համար: Իրապես Արտավազդի հանցանքը և սխալն այն էր եղել, որ նա, հավատալով հոռմեացի նենգ զորավարի ցույց տված կեղծ հարգանքին ու բարեկամությունը, պարենամթերքներ էր հայթայթել հոռմեական բանակին և ձմեռվա շատ ծանր պայմաններում կատարվող նահանջի ժամանակ չէր հարձակվել բարոյալքված այդ բանակի վրա ու հայկական ձյունառատ լեռները գերեզման չէր դարձրել նրանց համար:

Նախքան Հայաստան արչավելը Անտոնիոսը նենգությամբ ու խաբուծյամբ աշխատում է ձերբակալել Արտավազդ II-ին: Այդ նպատակով նա մի քանի անգամ իր մոտ է հրավիրում Արտավազդին, սակայն վերջինս, հասկանալով այդ հրավերների տակ թաքնված նենգությունը, հրաժարվում է գնալ նրա մոտ:

Ք. ա. 34 թ. գարնանը Անտոնիոսը առանց նախօրոք պատերազմ հայտարարելու Փոքր Հայքի վրայով հանկարծակի ներխուժում է Հայաստան և արագ չարժվում դեպի Արտաշատ: Արտավազդը իր երկիրը ավերածություններից փրկելու, գուցե և անձնական բանակցությունների միջոցով հաշտության եզր գտնելու հույսով գնում և ներկայանում է Անտոնիոսին, իսկ սա դրժելով իր խոստումները՝ անմիջապես ձերբակալում և շղթայում է նրան:

Սկզբում Անտոնիոսը ձերբակալված Հայոց թագավորին իր հետ ման է ածում Հայաստանի բերդերը, որպեսզի առանց կռվի կարողանա բռնագրավել արքունի գանձերը: Նա ամեն տեղ անամոթաբար հայտարարում է, որ Արտավազդին ձերբակալել է միայն նրա համար, որպեսզի փրկագին վերցնի: Սակայն բերդերի կայազորները նրան չեն լսում և չեն բավարարում նրա ընչաքաղցուծությունը:

Վրեժխնդրության ցասումով և զայրույթով լցված Հայերը և Հատկապես Հայկական զորքերը թագավոր են հռչակում ձերբակալությունից զերծ մնացած Արտավազդի անդրանիկ որդուն՝ Արտաշեսին, և պատերազմի են դուրս գալիս հռոմեական նվաճողների դեմ: Սակայն Հայկական զորքերը, որոնք չէին նախապատրաստվել մեծ պատերազմի համար, ճակատամարտում պարտվում են: Արտաշես II-ը (34-20) փախչում է պարթևների մոտ:

Հայկական զորքի պարտությունից հետո հռոմեացիները նվաճում են Հայաստանը և սկսում անխնա կերպով կողոպտել: Նրանք այն աստիճանի են ստորանում, որ նույնիսկ կողոպտում են Հայաստանի տաճարները: Ինքը՝ Անտոնիոսը հափշտակում է Եկեղյաց գավառի Երիզա ավանի տաճարում գտնվող Անահիտ աստվածուհու ոսկեձույլ արձանը:

34 թ. ամառվա վերջերին Անտոնիոսը զորքի մի մասի հետ, կողոպուտի միջոցով ձեռք բերած հսկայական հարստություններով վերադառնում է Եգիպտոս՝ իր հետ տանելով նաև ձերբակալված Արտավազդին, սրա ընտանիքին, որդիներին՝ Տիգրանին ու Արտավազդին: Նա Հայաստանում տարած իր «հաղթանակի» առթիվ Ալեքսանդրիայում կազմակերպում է հաղթական շքերթ՝ տրիումֆ: Ոսկե շղթա-

ներով կապված Արտավազը, սրա ընտանիքի անդամները և մյուս գերիները տարվում էին չքերթի առջևից, իսկ Կլեոպատրան նստած էր ոսկե գահի վրա՝ արծաթապատ բեմում: Հոռմեացիները Արտավազդին և նրա ընտանիքի անդամներին ազատություն էին խոստանում, եթե նրանք Կլեոպատրայի առջևից անցնելիս նրան անվանեին «Թագուհիների թագուհի» և նրան դիմեին աղերսանքով: Սակայն հայ թագավորն ու իր ընտանիքը, մահը գերադասելով ստրկական աղբսանքով ձեռք բերված ազատությունից, արհամարհանքով լի հպարտությամբ անցնում են Կլեոպատրայի առջևից. «Հայերը,՝ ասում է Դիոն Կասիորը,՝ ցույց տվին իրենց հոգու վեհությունը, ուստի և փառավոր անվան արժանացան»:

Բացի հաղթական չքերթից՝ Անտոնիոսը Հայաստանի նվաճման առթիվ կտրել է տալիս նաև իր ու Կլեոպատրայի պատկերներով դրոշմված և «Անտոնիոսը Հայաստանը նվաճած» մակագրությամբ դրամներ:

Այս չքերթից հետո Անտոնիոսը Կլեոպատրա-Հայաստանի ան- յին հանդիսավոր կերպով Հայտարարում է «Թա- կախություն վե- թագուհիների թագուհի», նրա և իր որդիներին տա- րականգնումը լիս է առանձին երկրներ, որոնք հոռմեական պրովինցիաների մեջ էին մտնում կամ ինքնու- ռույն թագավորություններ էին: Այսպես, օրինակ, նա իր և Կլեոպատրայի վեց տարեկան որդուն՝ Ալեքսանդրին, տալիս է Հայաստանը, Մարաստանը և Պարթևական թագավորությունը, որը դեռ անհրա- ժեշտ էր նվաճել:

Անտոնիոսի այս արարքները, նրա պարթևական անհաջող ար- շավանքը դժգոհություն են առաջ բերում Հռոմում և զցում նրա հե- ղինակությունը: Օկտավիանոսը, որը ձգտում էր միապետական իշ- խանություն, օգտագործում է այս դժգոհությունները և պայքարի է դուրս գալիս Անտոնիոսի և Կլեոպատրայի դեմ: Երկու կողմերի միջև ճակատամարտը տեղի է ունենում 31 թ. սեպտեմբերի 2-ին Ակտիում հրվանդանի մոտ, որը վերջանում է Անտոնիոսի պարտությամբ: Դեռևս ճակատամարտի սկզբում նախ Կլեոպատրան, իսկ ապա Անտոնիոսը փախչում են Եգիպտոս և ինքնասպանությունը վերջ են տալիս իրենց կյանքին:

Ակտիումի ճակատամարտից առաջ Կլեոպատրայի հրամանով Արտավազը II-ը մահապատժի է ենթարկվում, իսկ նրա կնոջը և որդիներին Օկտավիանոսը տանում է Հռոմ:

Ակտիումի ճակատամարտից հետո, 31 թ. աշնանը, պարթևների

մոտ ապաստանած Արտաշես II-ը, օգտվելով ստեղծված նպաստավոր դրույթունից, պարթևական զորքերով վերադառնում է Հայաստան: Նա ջախջախելով այստեղ գտնվող հռոմեական ուժերին՝ վերականգնում է Հայաստանի պետական անկախությունն ու ինքնուրույնությունը և վերագրավում իր հայրենի գահը:

Նույն այս ժամանակ կամ դրանից քիչ հետո Արտաշես II-ը Հայպարթևական ուժերով հարձակվում է Ատրպատականի վրա, որի Արտավազդ թագավորը հռոմեացիների դաշնակիցն էր և պարթևների ու հայերի վտանգավոր թշնամին: Ատրպատականի Արտավազդ թագավորը, որի հեծելազորը Անտոնիոսը տարել էր Ակտիումի ճակատամարտում Օկտավիանոսի դեմ կռվելու համար, չի կարողանում դիմադրություն ցույց տալ հայպարթևական ուժերին, պարտվում է և գերի ընկնում: Պարթևների համաձայնությամբ Ատրպատականը միացվում է Արտաշեսի թագավորությանը, որով Արտաշես II-ը ոչ միայն դառնում է Հայաստանի, այլև Ատրպատականի թագավոր:

Հայաստանում ժողովրդական զանգվածները խոր գայրույթով և վրեժխնդրությամբ էին լցված հռոմեական նվաճողների ու կեղեքիչների դեմ: Արտաշեսի վերադարձից հետո հակահռոմեական պայքարը համաժողովրդական բնույթ է ստանում: Արտաշեսը, որն իր հոր գերության և եղբրական սպանության պատճառով նույնպես լցված էր ցասումով ու ատելությամբ, հրամայում է անխնա կերպով կոտորել Հայաստանի տարբեր մասերում մնացած հռոմեական կայազորներին ու բոլոր հռոմեացիներին:

Օկտավիանոսը Հռոմում իր դիրքերը ամրապնդելու և ձեռք բերած հաղթանակը վտանգի չենթարկելու նպատակով առժամանակ համբերությամբ տանում է Հայաստանում հռոմեացիներին տրված այս հարվածը և խուսափում է կռվել հայերի ու պարթևների դեմ:

Ք. ա. 29 թ. Արտաշես II-ը բանակցություններ է վարում Օկտավիանոսի հետ: Նա Օկտավիանոսից պահանջում է գերությանից ազատել և Հայաստան վերադարձնել Հռոմ տարված իր կրտսեր եղբայրներին՝ Տիգրանին ու Արտավազդին: Սակայն վերջինս մերժում է կատարել այդ պահանջը՝ պատճառաբանելով, որ Արտաշեսը կոտորել է տվել իր երկրում մնացած բոլոր հռոմեացիներին:

Արտաշեսը, դաշնակցած պարթևների հետ, վարում է միանգամայն ինքնուրույն և հակահռոմեական քաղաքականություն: «Արտաշեսը,– վկայում է հռոմեացի պատմագիր Տակիտոսը,– որն իր հոր հետ կապ ունեցող հիշողության պատճառով մեզ թշնամացած էր, պահպանեց իր անձը և իր թագավորությունը Արշակունիների ուժով:

Նա ևս իր պապի և իր հոր նման կրում էր «արքայից արքա» տիտղոսը»:

**Արտաշեսյան
Թագավորության
անկումը** Սակայն Հոռոմը երկար չէր կարող հանդուրժել անկախ Հայաստանի հզորացումը, մանավանդ նրա դաշնակցությունը պարթևների հետ: Հայպարթևական դաշնակցությունը ոչ միայն գերակշռություն էր ստեղծում Արևելքում՝ ընդդեմ Հոռոմի, այլև անմիջական սպառնալիք Հոռոմի տիրապետության տակ գտնվող Ասորիքի, Փյունիկիայի, Կապադովկիայի, Պոնտոսի և մյուս երկրների համար:

Ք. ա. 27 թ. Հոռոմում հաստատվում են միապետական կարգեր: Օկտավիանոսը դառնում է Հոռոմի առաջին կայսրը: Հոռոմեական սենատը նրան շնորհում է «Օգոստոս» պատվատիտղոսը, այսինքն՝ «սրբազան» կամ «աստվածների կողմից բարձրացյալ»:

Օգոստոսն իր դիրքերն ամրապնդելուց հետո աշխատում է Հայաստանը կրկին ենթարկել Հոռոմի գերիշխանությանը:

Դեռևս 29 թ. Պարթևական թագավորության ներսում առաջանում են գահակալական նոր կոիվներ, որոնք՝ Հոռոմի թելադրանքով ու օժանդակությամբ, շարունակվում են նաև հետագա տարիներին: Օգոստոսը օգտագործելով այս նպաստավոր դրությունը՝ աշխատում է դիվանագիտական ճանապարհով, ռազմական ճնշում գործադրելու, նենգասպառնալիքի և այլ միջոցներով Հոռոմի համար ձեռնտու հաշտության դաշնագիր կնքել պարթևների հետ, քանզև Հայպարթևական դաշնակցությունը և մեկուսացնել Հայաստանը:

20 թ. Օգոստոսը ռազմական մեծ ուժերով գալիս է Ասորիք: Հրահատ IV-ը, նկատի ունենալով իր երկրի անկայուն վիճակն ու ներքին պայքարը, ինչպես և վախենալով հոռոմեացիների ներխուժումից, ստիպված է լինում համաձայնություն կնքել Օգոստոսի հետ: Այդ համաձայնությամբ պարթևները ոչ միայն ետ են վերադարձնում Կրասոսի և Անտոնիոսի արչավանքների ժամանակ իրենց գրաված արծվակիր դրոշները, այլև հարկադրված են լինում ճանաչել Հոռոմի գերիշխանությունը Հայաստանի նկատմամբ:

Այս համաձայնությունից հետո Օգոստոսն իր որդեգիր Տիբերիոս Կլավդիոսին մեծ զորքով ուղարկում է Հայաստան և հրամայում գահնկեց անել Արտաշես II-ին ու նրա փոխարեն գահ բարձրացնել նրա կրտսեր եղբորը՝ Տիգրանին:

Նույն այս ժամանակ հոռոմեական գործակալների զրգունով, գուցե և կաշառքով, Հայաստանի իշխող վերնախավի շերտերում ևս առա-

ջանում են ներքին երկպառակություններ: Հոռոճը Հայաստանի քաղաքների հայ և օտար առևտրա-դրամատիրական շրջաններում ուներ իր կողմնակիցները: Սրանք ոչ միայն շահագրգռված էին Ասորիքի, Պոնտոսի, Կապադովկիայի քաղաքների հետ ունեցած իրենց տնտեսական-առևտրական կապերով, որոնք զգալի չափով խափանվել էին Արտաշես II-ի թագավորությունից ժամանակ, այլև ձգտում էին հոռոճեական ուժերով ավելի ևս ամրապնդել իրենց տիրապետությունը և հարստանալ:

Երբ դեռ հոռոճեական զորքերը Հայաստան չէին մտել, Հոռոճի կողմնակիցները դավադրաբար սպանում են Արտաշեսին և կազմալուծում երկրի պաշտպանությունը: Հոռոճացիները օգտվելով ստեղծված այս դրությունից՝ առանց դիմադրություն հանդիպելու մտնում են Հայաստան և գրավում նրա մայրաքաղաք Արտաշատը: Այստեղ Տիրերիոս Կլավդիոսը Ք. ա. 20 թ. Արտավազդ II-ի միջնակ որդուն՝ Տիգրան III-ին հանդիսավոր կերպով հայտարարում է Հայաստանի թագավոր (20-8): Սա ավելի քան տասը տարի ապրած ու դաստիարակված լինելով Հոռոճում՝ դարձել էր նրա ջատագովներից, նրա հյու-հնազանդ կամակատարներից մեկը:

Տիգրան III-ի գահ բարձրացվելը և Հոռոճի գերիշխանությունից վերահաստատումը Հայաստանում հոռոճացիները սկսում են մեծ ազդեցություն ունենալ: Այս առթիվ Օգոստոսը կտրել է տալիս «Հայաստանը նվաճված» կամ «Հայաստանը վերանվաճված» մակագրություններով և Հայաստանի խորհրդանիշները պատկերող ոսկե ու արծաթե դրամներ: Հոռոճեական նշանավոր բանաստեղծներից Հորացիոսը գրում է. «Հային ցած է գցել Տիրերիոս Կլավդիոսի ահռելի ուժը», իսկ Օվիդիոսը նշում. «Հայն այժմ աղերսում է խաղաղություն»:

Օգոստոսն իր կտակի մեջ Տիգրան III-ի նման մի աննշան թագավորի Հայաստանում գահ բարձրացնելը համարում է նույնիսկ Հայերին տրված մեծ շնորհ: «Մեծ Հայաստանը, - ասում է Օգոստոսը, - թեև ես կարող էի նրա Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել պրովինցիա, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին, այդ թագավորությունը տալ Տիգրանին, որն Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը»:

Հակառակ Օգոստոսի պարծենկոտ հայտարարությանը և Հոռոճում կատարվող տոնախմբություններին, չնայած հայ իշխող դասակարգի առանձին շերտերի դավաճանությունը և նրանց՝ թշնամու հետ ունեցած համագործակցությունը, փառավոր ուղի անցած և իր մեջ կեն-

սական մեծ ուժեր ունեցող Հայ ժողովուրդը երբեք մտադիր չէր կորցնել իր պետական անկախությունը և զենքը ցած դնել հոռմեական նվաճողների ու կեղեքիչների առաջ: Հոռմեական նշանավոր բանաստեղծ Վերգիլիոսը, որն ավելի լավ էր հասկացել Հայերին, քան իր գրչակիցները, փոխաբերաբար գրում էր. «Արաքսը զայրույթով լի է դեպի կամուրջը», այսինքն Հայաստանը զայրույթով է լցված դեպի հոռմեական լուծը: Եվ, իսկապես, Հայ ժողովուրդը հետագայում ևս, մեծ մասամբ մենակ, իսկ երբեմն էլ պարթևների հետ դաշնակցած, փշրում ու ոչնչացնում է հոռմեական «կամուրջը»:

Տիգրան III-ի գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Սակայն, անկասկած, նա վարել է հոռմեասեր քաղաքականություն:

Տիգրան III-ի մահից հետո, Ք. ա. 8 թ., Հայերը ապստամբում են Հռոմի դեմ և առանց նրա համաձայնության գահ բարձրացնում թագաժառանգ Տիգրան IV-ին և նրա խորթ քրոջը՝ էրատոյին: Սրանք Հայաստանը ազատագրում են Հռոմի գերիշխանությունից, վերականգնում նրա անկախությունը և վարում միանգամայն ինքնուրույն քաղաքականություն: Հոռմեական պատմագիր Կուրտիոս Ռուփոսը, խոսելով Տիգրան IV-ի ժամանակ Հռոմի դեմ Հայերի բարձրացրած ապստամբության մասին, վկայում է, որ այդ ժամանակ Հայերը ավելի հզոր էին, քան պարթևները, որոնք մեծ չափով ենթարկվել էին Հռոմի ազդեցությանը, և նույնիսկ Հրահատ IV-ը իր չորս որդիներին իբրև պատանդ ուղարկել էր Հռոմ:

Հայերի ապստամբությունը ոչ միայն վարկաբեկում էր Հռոմի հեղինակությունը Արևելքում, այլև կարող էր օրինակ ծառայել մյուս երկրների համար: Ուստի Օգոստոսը մի տարի հետո նոր զորքեր է ուղարկում Հայաստան՝ Հռոմի գերիշխանությունը կրկին վերականգնելու համար: Տիգրան IV-ը և էրատո թագուհին, որոնք ոչ մի օգնություն չէին կարող սպասել Հռոմի հետ բարեկամացած պարթևներից, ստիպված են լինում հոռմեական զորքերի ճնշման տակ ապաստանել հարևան երկրներից մեկում: Հոռմեացիները Ք. ա. 5 թ. գահ են բարձրացնում Տիգրան III-ի եղբորը՝ Արտավազդ III-ին (5-2):

Սակայն հոռմեական այս նոր թեկնածուի տիրապետությունը երկար չի տևում: Իր Հայրենիքի անկախության ձգտող Հայ ժողովուրդը Ք. ա. 2 թ. ապստամբություն է բարձրացնում սրա դեմ: Ապստամբած Հայերը օգնություն ստանալով պարթևների նոր թագավոր Հրահատակից՝ պարտություն են մատնում Հայաստանում գտնվող հոռմեական զորքերին, գահընկեց են անում Արտավազդին և նրան ու հոռ-

մեացիներին դուրս վտարում երկրից: Նրանք հայկական գահի վրա կրկին հաստատում են Տիգրան IV-ին և էրատո թագուհուն:

Հոռմը, որն այդ ժամանակ հասել էր իր հզորության գագաթնակետին, իհարկե չէր կարող հաշտվել Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխությունների հետ: Օգոստոսը Ք. Հ. 1 թ. խոշոր ուժերով Արևելք է ուղարկում իր մյուս որդեգիր Գայոս Կեսարին: Սա բանակով գալիս է Ասորիք և պատերազմի նախապատրաստություններ է տեսնում: Հրահատակը իրեն ամուր չզգալով պարթևական գահի վրա և վախենալով հռոմեացիների հարձակումից՝ հաշտություն է կնքում Գայոս Կեսարի հետ և պարտավորվում է չմիջամտել Հայաստանի գործերին ու չօգնել նրան:

Տիգրան IV-ը հաշվի առնելով ստեղծված այս անբարենպաստ դրությունը՝ իր հերթին նույնպես հաշտություն է կնքում հռոմեացիների հետ: Սակայն շուտով Ք. Հ. 1 թ. նա սպանվում է կովկասյան լեռնականների դեմ մղվող պատերազմում, իսկ նրա քույրը՝ էրատոն հրաժարվում է գահից:

Տիգրան IV-ի և էրատո թագուհու անունով մեզ է հասել մի գեղեցիկ դրամ, որն այժմ պահվում է Փարիզի Ազգային գրադարանում: Այս դրամի տարբեր երեսներին դրոշմված են Տիգրանի և էրատոյի պատկերները, որոնց շուրջը հունարեն մակագրված են. «Տիգրան՝ արքայից արքա» և «էրատո՝ քույրը Տիգրան թագավորի»:

Տիգրան IV-ի մահով վերջանում է Արտաշեսյան հարստությունը Հայաստանում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ**

1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

**Գյուղատնտես-
սությունը**

Հին Հայաստանի տնտեսությունը հիմքը և նրա առաջատար ճյուղը շարունակում էր մնալ գյուղատնտեսությունը՝ չնայած քաղաքների, արհեստագործության և առևտրի աննախընթաց զարգացմանը: Երկրի բնակչության ճնշող մեծամասնության հիմնական տնտեսական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր:

Ք. ա. IV դարի երկրորդ կեսում Հայաստանի անկախության վերականգնումը, իսկ այնուհետև II–I դարերում հայկական հողերի միավորումը և Հայաստանի հզորացումը, բազմաճաղար քաղաքային բնակչության և գործի կենսամթերքների նկատմամբ ունեցած պահանջը, մասնավոր սեփականատիրական տնտեսությունների առաջացումը, ավելի կատարելագործված երկաթե գործիքների զանգվածային կիրառումը նպաստավոր պայմաններ են ստեղծում և խթանում են գյուղատնտեսության զարգացումը: Հատկապես Արտաշեսյան թագավորության և հետագա շրջանում բնդարձակվում են ցանքատարածությունները, բարելավվում է հողի մշակությունը: Բարեկարգվում ու մաքրվում են հին ջրանցքները, անցկացվում են նոր ջրանցքներ ու առուներ: Հատուկ ուշադրություն է դարձվում երկրագործական մշակարույսերի բերքատվության բարձրացմանը: Այդ նպատակով հողամշակման մեջ կիրառվում են ավելի արդյունավետ ձևեր ու մեթոդներ: Նախկինում գոյություն ունեցող հողամշակման երկդաշտային համակարգից անցնում են եռադաշտային համակարգին: Հողերը պարարտացվում են գոմաղբով ու մոխիրով, ուշադիր կերպով ցանքսերը քաղհանում ու մաքրում են մոլախոտերից, փրկեցնում են հերկված դաշտերը և այլն:

Երկրագործությունն մեջ կարևոր տեղ էին գրավում ոչ միայն հացահատիկային, այլև յուղատու և թելատու տեխնիկական բույսերի մշակությունը: Սկզբնաղբյուրների վկայությունից, հնագիտական և լեզվական տվյալներից երևում է, որ III–I դարերում և հետագա շրջանում Հայաստանում մշակում էին ցորեն, գարի, հաճար, սիսեռ, ոսպ, կորեկ, բրինձ, քնջութ, կտավատ, կանեփ, հավանաբար նաև բամբակ: Այս դարաշրջանում արմատավորվում և զգալի չափով տարածվում է և բանջարանոցային ու բոստանային մշակաբույսերի մշակությունը: Դրանցից մշակվում էին կաղամբ, ձակնդեղ, ստեպլին (գաղար), վարունգ, ձմերուկ, սեխ, սոխ, բողկ, շաղգամ և այլն:

Ինչպես հնում, նույնպես և այս պատմաշրջանում Արարատյան դաշտում, Սյունիքի հարավային շրջաններում, Արածանիի հովտում, Վանա լճի շրջակայքում, Ծոփքում և այլ վայրերում զարգացած էր նաև այգեգործությունն ու պտղաբուծությունը: Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանը «մեծ մասամբ այգեչատ ու գինեվետ է»: Մի այլ տեղ նա, խոսելով Հայաստանի մասին, ասում է. «Ամբողջ այս երկիրը լիքն է հացահատիկներով, պտղատու և մշտադալար ծառերով»: Հայաստանում աճեցնում ու խնամում էին խնձորի, դեղձի, տանձի, սալորի, սերկևիլի, ծիրանի, ընկույզի, կաղինի, նշի, թթի, նոսան, թզի և այլ պտղատու ծառեր:

Զգալի չափով զարգացած էր նաև գյուղատնտեսական մթերքների մի մասի վերամշակումը: Քնջութի, կտավատի, կանեփի հատիկներից, ընկույզից, կաղինից, նշից և յուղատու կորիզների միջուկներից հանում էին ձեթ, խաղողից պատրաստում էին գինի, օղի և չամիչ, զանազան պտուղներից՝ չորացրած մրգեր և օշարակներ, իսկ վարդից ու ծաղիկներից՝ անուշահոտ յուղեր:

Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ կային ալպյան հարուստ արոտավայրեր, առաջվա նման զարգացած էր նաև անասնապահությունը: Երկրի մի շարք նահանգներ հռչակված էին ձիաբուծությամբ:

Երկրագործության, այգեգործության և անասնապահության զուգընթաց գյուղական բնակչության մի մասը զբաղվում էր նաև մեղվաբուծությամբ:

Ժողովրդական ավանդությունը վկայում է, որ «Արտաշեսի Ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող էր կարելի գտնել ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային մասերում, երկրի շենություն պատճառով»: Մի այլ տեղ ասված է. «Ոնադաղություն և շենություն բերող Տիգրանը յուղով ու մեղրով էր կերակրում ամեն հասակի մարդկանց»: Չնայած այս վկայությունների մեջ եղած որոշ չափազանցություններին և

գունագարդուճներին, այնուամենայնիվ դրանք ցույց են տալիս, որ իրոք II–I դարերում Հայաստանում գյուղատնտեսությունը գտնվել է զարգացման շատ ավելի բարձր աստիճանի վրա, քան նախորդ դարերում: Անկախ այս վկայություններից, անկասկած, հիշյալ և հետագա դարերում Հայաստանում գյուղատնտեսությունը հասել էր զարգացման այնպիսի աստիճանի, որ ոչ միայն բավարարում էր իր իսկ սեփական, այլև քաղաքային բազմահազար բնակչության, հայկական մեծաթիվ զորքի, արհեստագործության և արտաքին առևտրի՝ գյուղատնտեսական մթերքների ու հումքի նկատմամբ ունեցած պահանջները:

Հանքամշակությունը և արհեստները

Հայաստանի մի շարք նահանգներ ու գավառներ, բայց հատկապես Սյունիքը, Գուգարքը, Աղձնիքը, Սպերը, Ռշտունիքը և այլն, հարուստ էին մետաղահանքերով և օգտակար հանածոներով: Այդ մետաղահանքերից շատերն օգտագործվում էին դեռևս բրոնզի դարում և ուրարտական շրջանում: Սակայն դրանց շահագործումը ավելի ուժեղանում ու արդյունավետ է դառնում II–I դարերում և հետագա շրջանում: Արտաշեսյան պատմաշրջանում Հայաստանում արդյունահանվում էր ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար, անագ, սուրճա, ծծումբ և այլն: Հայկական հին սկզբնաղբյուրների վկայությունների համաձայն հանքերում աշխատողներն ըստ մետաղների կոչվում էին «երկաթահատ», «կապարահատ», «պղինձահատ», «արծաթահատ», «ոսկեհատ»:

Ինչպես շատ հնում, նույնպես և այս շրջանում շահագործվում էին նաև նախնական, Կողբի, Կաղզվանի և այլ վայրերի հարուստ աղահանքերը: Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանում կար և արդյունահանվում էր ծիրանի գույն տվող սանդիքս անունով հանքային ներկը, որը կոչվում էր նաև «Հայկական ներկ»: Հին աշխարհում ավելի մեծ չափով հռչակված էր հայկական «որդան կարմիր» կոչվող ներկը, որը բացառապես մշակվում և արդյունահանվում էր Արարատյան դաշտում:

Արդյունահանվող մետաղների ու օգտակար հանածոների, ինչպես և գյուղատնտեսական արտադրանքի՝ կաշվի, բրդի, թելատու մշակաբույսերի, փայտի և բուսական ներկերի հումքային հարուստ հենքի վրա զարգանում է նաև արհեստագործությունը: Հնագիտական, մատենագրական և լեզվաբանական տվյալները ցույց են տալիս, որ հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում ևս ավելի բարելավվում ու կատարելագործվում են արհեստավորական գործիքները, արհեստա-

գործուիթյան գլխավոր ու հիմնական ճյուղերը զգալի չափով տրոհվում են և առաջանում նոր ու ավելի նեղ մասնագիտացված արհեստներ, բարձրանում է արհեստավորների հմտուիթյունն ու վարպետուիթյունը: Բացի հնուց գոյուիթյուն ունեցող բրուտի դրգից, արհեստագործական մի շարք ճյուղերում հանդես են գալիս նաև ոտքի կամ ձեռքի ուժով պտտվող ճախարակներ, ճախարակահաստոցներ, գայլիկոններ, ծակող, կտրող, տաշող և հարթող գործիքներ:

Աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը, արհեստների ավելի նեղ մասնագիտացումը, դրանց միջև առաջացած փոխադարձ կապն ու կախվածուիթյունը, արտադրանքը սպառողների ավելի լայն շուկայում վաճառելու անհրաժեշտուիթյունը, քաղաքային բնակչուիթյանը տրվող արտոնուիթյունները խթանում են գյուղերում ապրող արհեստավորների զգալի մասին՝ կենտրոնանալու քաղաքներում և քաղաքատիպ ավաններում: Մեծ մասամբ նվաճված երկրներից, իսկ երբեմն նույնիսկ Հայաստանի տարբեր շրջաններից արհեստավորների կենտրոնացումը քաղաքներում տեղի էր ունենում նաև պետական բռնի ուժով: Այսպիսով, արհեստագործուիթյան հիմնական կենտրոններ են դառնում քաղաքներն ու քաղաքատիպ ավանները:

Կենտրոնանալով քաղաքներում, մասնագիտացված արհեստները հասնում են զարգացման ավելի բարձր աստիճանի: Ընդլայնվում է արհեստագործական արտադրուիթյունը և նկատելի չափով աճում է շուկայի համար նրա բաց թողած ապրանքային արտադրանքի քանակը:

Քաղաքի արհեստավորները բավարարում էին պետուիթյան, ստրկատերերի, քաղաքային բնակչուիթյան, արտաքին առևտրի, մասամբ նաև գյուղական բնակչուիթյան պահանջները: Հայաստանի գյուղական շրջանները դեռևս հիմնականում ինքնամփոփ կյանք էին վարում: Գյուղերում ապրող արհեստավորները պատրաստում էին այն բոլոր գործիքները և տնային գործածուիթյան իրերը, որոնք անհրաժեշտ էին գյուղացու համար:

Հին Հայաստանում զարգացման բավականին բարձր աստիճանի էին հասել երկաթի ու պղնձի մշակման հետ կապված արհեստները: Երկաթագործներն ու դարբինները պատրաստում էին գյուղատնտեսական ու արհեստագործական աշխատանքային բազմազան գործիքներ՝ երկաթե խոփեր, գերանդիներ, մանգաղներ, բահեր, մուրճեր, ունեիներ, սղոցներ, կացիներ, դանակներ, սանձեր, շղթաներ և այլն, իսկ պղնձագործները՝ պղնձե և բրոնզե մեծ ու փոքր կաթսաներ, ամաններ, ջահեր և տնային ու կենցաղային գործածուիթյան այլ առարկաներ: Գառնիի հնագիտական պեղումների ժամանակ գտնվել

են քարտաշի երկաթե մուրճ, կոփելու և փորագրելու սուր հատիչներ, դանակներ, եռաժանի կամ եղան և այլ իրեր, որոնք պատկանում են Ք. Հ. I դարին:

Իր ժամանակի ռազմական տեխնիկայի առաջադիմություն և զենքերի զանգվածային արտադրություն տեսակետից բարձր մակարդակի վրա էր գտնվում զինագործությունը: Զենքերի արտադրությունը հիմնականում կենտրոնացված էր քաղաքներում ու ամրոցներում գտնվող արքունի մեծ արհեստանոցներում կամ «գործոց տներում», որտեղ աշխատում էին նաև զգալի թվով ստրուկներ: Զինագործական այդ արհեստանոցներում հայկական մեծաթիվ բանակի համար պատրաստում էին սրեր, թրեր, դաշույններ, պատերազմական կացիներ, նիզակներ, նետ ու աղեղներ, նետի երկաթե սովորական և կեռ սլաքներ, վահաններ, զրահներ, սաղավարտներ, ռազմակառքեր, հավանաբար՝ նաև պարիսպներ քանդող մեքենաներ:

Այս դարաշրջանում գործածվող մետաղների մեջ ամենատարածվածը դառնում է երկաթը: Աշխատանքային գործիքները և հարձակողական կտրող զենքերը գրեթե բացառապես պատրաստվում էին երկաթից: Գործիքների և կտրող զենքերի մի մասը պատրաստվում էր նաև պողպատից, որին հայկական սկզբնաղբյուրները անվանում են «պողովատ»:

Զգալի չափով զարգացած էր նաև ոսկերչությունը: Ոսկերիչ վարպետները արքունիքի և ստրկատեր ավագանու համար ոսկուց ու արծաթից պատրաստում էին գոհարապատ և քանդակազարդ թագեր, խույրեր, մանյակներ, գոտիներ, օղեր, մատանիներ, ճարմանդներ, գեղազարդված բաժակներ, բաժակակալներ, թասեր, ճաշասեղանի սպասեղեններ և այլ իրեր: Հասարակ քաղաքացիների զարգարանքի առարկաները մեծ մասամբ պատրաստվել են արծաթից, բրոնզից ու պղնձից, իսկ քիչ զեպքերում՝ նաև ոսկուց: Գառնիի և Վաղարշապատի I-II դարերին պատկանող հասարակ քաղաքացիների դամբարաններից գտնվել են ոսկու հատիկներից շինված ու քարեր ունեցող, ինչպես և արծաթե օղեր, արծաթից, բրոնզից և պղնձից պատրաստված մատանիներ, ճարմանդներ, ապարանջաններ և զարդարանքի այլ առարկաներ: Այս իրերից մի քանիսի վրա կան նաև քանդակներ ու նախշեր: Հետաքրքրություն են ներկայացնում նաև Գառնիի դամբարաններից հայտնաբերված արծաթագույն մետաղե հայելիները:

Նախորդ դարաշրջանի հետ համեմատած՝ խոշոր առաջադիմություն էր տեղի ունեցել նաև մանածագործություն և նրա հետ կապ-

ված արհեստների զարգացման բնագավառում: Բացի բրդից, վուլչից, կանեփից և բամբակից պատրաստվող սովորական կտորեղեններից, Հայաստանում արտադրվում էին նաև «ղիպակ», «սնդուս», «ծիրանի» և «բեհեզ» կոչվող մետաքսե և բամբակե նուրբ ու ծաղկավոր կերպասներ: Սրանից էին կարվում թագավորական և բարձրաստիճան ավագանու տան անդամների զգեստները, որոնք հաճախ գեղազարդվում էին ոսկե, արծաթե թելերով ու մարգարիտներով: Հայաստանում արտադրվում էին նաև գորգեր, կարպետներ, բազմոցների ու բարձերի երեսներ և այլն:

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում նոր առաջացած և զարգացման բավականին բարձր աստիճանի հասած արհեստագործություններից մեկն էր ապակեգործությունը: Գառնիի և Վաղարշապատի նշված դամբարաններից հայտնաբերվել են զեղնավուն, կապտավուն, մուգ կարմրավուն, մանուշակագույն, արծաթագույն և այլ գույներով բազմաթիվ սրվակներ, փոքր շշեր, ջրամաններ, թասիկներ, ինչպես և հախճապակու և սովորական ապակու կտորներ: Այս իրերից չատերը, որոնք պատրաստված են մեծ հմտությամբ, իրենց վրա ունեն նախշեր ու զարդարանքներ: Առավել հետաքրքրություն է ներկայացնում մանուշակագույն փոքր շշերից մեկը, որի ցածի մասը երկու հակադիր կողմերից գեղազարդված է կանացի հերարձակ գլուխներով:

Ջարգացած էին նաև կավագործությունը, փայտամշակությունը, քարամշակությունը, կաշեգործությունը և դրանց հետ կապված արհեստները: Հայկական ինքնուրույն և թարգմանական հին մատենագրության մեջ հիշատակված են մի քանի տասնյակ արհեստներ: Անկասկած է, որ այդ արհեստների մեծ մասը գոյություն է ունեցել նաև հելլենիզմի դարաշրջանում: Այդ հանգամանքը պարզ կերպով երևում է նրանից, որ հիշյալ արհեստների անունները, ինչպես, օրինակ, «քարտաշ», «հյուսն», «վարսավիր», «հացարար», «կավագործ», «ղերձակ», «կոշկակար» և այլն բնիկ հայերեն կամ ամենաուշը՝ մինչև III դարը պահպանվել են հայոց լեզվի մեջ փոխառված բառեր են:

Աշխատանքի հասարակական բաժանման ներքին և արտա- խորացման, գյուղատնտեսության, հանքամշակ- քին առևտուրը կության և արհեստագործության ընդհանուր վերելքի իբրև բնական հետևանք Հայաստանում զգալի չափով զարգանում է նաև ներքին առևտուրը: Քաղաքների առաջացման ու զարգացման, արհեստները քաղաքներում կենտրո-

նանայլուն զուգընթաց աճում և ընդլայնվում է ներքին շուկան: Եթե առաջ արհեստավորները գրեթե բացառապես արտադրում էին պատվիրատուի պատվերով և նրա նյութով, ապա այժմ նրանք իրենց արտադրանքի զգալի մասը սկսում են արտադրել շուկայի, անձանոթ սպառողի համար: Բացի այդ, արքունի և մասնավոր սեփականատիրական տնտեսություններն ու արհեստանոցները ևս իրենց արտադրանքի մի մասը դուրս են բերում շուկա՝ վաճառելու համար:

Թեև քաղաքացիներից չատերը միաժամանակ զբաղվում էին գյուղատնտեսությունը, բայց ո՛չ սրանց և ո՛չ էլ մասնավոր տնտեսությունների արտադրանքը չէր կարող բավարարել քաղաքային բազմահազար բնակչության և արհեստագործական մի շարք ճյուղերի գյուղատնտեսական մթերքների ու հումքի նկատմամբ ունեցած պահանջները: Քաղաքներում զգալի չափով աճում է գյուղատնտեսական մթերքների, իսկ գյուղերում՝ քաղաքներում վաճառվող առանձին գործիքների, տնային և կենցաղային իրերի պահանջը: Այս պատճառով էլ հատկապես քաղաքամերձ գյուղական շրջաններն իրենց արտադրանքի մի մասը դուրս են բերում շուկա: Հայկական հին մատենագրություն մեջ պահպանված «կաղամբավաճառ», «ոչխարավաճառ», «մսավաճառանոց», «գինեվաճառիկ», «ծիրանավաճառ», «հացարար» և այլ բառերը ցույց են տալիս, որ իրոք դեռևս հելլենիզմի դարաշրջանում գյուղատնտեսական մթերքների մի մասը դարձել էր վաճառքի առարկա և ապրանքային բնույթ էր ստացել:

Ներքին առևտրի հետ միաժամանակ զարգանում է նաև արտաքին առևտուրը: Դեռևս Երվանդունիների ժամանակ ընդգրկվելով հելլենիստական երկրների տնտեսական հարաբերությունների ոլորտի մեջ, Հայաստանը առևտրական կապեր է ստեղծում Միջագետքի, Ասորիքի, Պարթևստանի, Պոնտոսի, Կապադովկիայի, Ատրպատականի, Վրաստանի և այլ երկրների հետ:

Տնտեսական կապերի ստեղծման և արտաքին առևտրի զարգացման մեջ կարևոր դեր է կատարում միջազգային քարավանային տարանցիկ առևտուրը, որի երկու հիմնական մայրուղիները անցնում էին Հայաստանի վրայով:

Վաղ հելլենիզմի շրջանից սկսած՝ կարևոր նշանակություն է ստանում Միջագետքից դեպի Կոլխիդա գնացող ճանապարհը: Դուրս գալով Տիգրիս գետի ափին կառուցված Սելեկիա քաղաքից՝ այս ճանապարհը Մարաստանի, Ատրպատականի և Արարատյան դաշտի վրայով գնում էր Կոլխիդա, իսկ այնտեղից էլ՝ Բոսփոր (Ղրիմ) և Մերձագոլվյան շրջաններ: Այս հիմնական մայրուղուն էին միանում

նաև էկրատան քաղաքում՝ Հնդկաստանից ու Պարսից ծոցից, իսկ Ատրպատականի Գանձակ մայրաքաղաքում՝ Չինաստանից, Հեռավոր Արևելքից, Բակտրիայից և Քուչանաց թագավորությունից եկող ճանապարհները:

Արարատյան դաշտում այս ճանապարհի գլխավոր Հանգուցային կայանն էր Հանդիսանում սկզբում Արմավիրը, իսկ հետագայում՝ Արտաշատը: Ք. ա. II դարում Արտաշատը առանձին ճանապարհներով, Վրաստանի մայրաքաղաք Արմավիր-Մցխեթի վրայով, կապված էր Կովսիդայի, իսկ Փոքր Հայքի վրայով՝ Սև ծովի պոնտական նավահանգիստների և Փոքր Ասիայի հետ:

Մի կողմից՝ Բոսփորի թագավորության ու Մերձագոլյան շրջանի, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի ու Ատրպատականի միջև տեղի ունեցող տարանցիկ առևտրի մեջ միջնորդի դեր էին կատարում սարմատա-սկյութական ցեղին պատկանող աորսները, որոնք բնակվում էին Տանայիս (Դոն) գետի երկարությամբ: Նրանք, վկայում է Ստրաբոնը, «քարավանային առևտուր էին կատարում և ուղտերով հրեղ-կական և բարբելոնական ապրանքներ էին տեղափոխում, դրանք ստանալով հայերից ու մարերից: Սրանով էլ նրանք հարստանալով՝ ոսկեհուռ զգեստներ էին կրում»:

Հելլենիզմի դարաշրջանում ևս միջազգային առևտրի մեջ բացառիկ դեր էր կատարում Արեմենյան Դարեհ I-ի ժամանակ կառուցված, ծովային ու ցամաքային ուղիներով Հնդկաստանի հետ կապված «Արքայական ճանապարհը», որի մի հատվածը, ինչպես արդեն նշվել է, անցնում էր Հայաստանի հարավային նահանգների՝ Աղձնիքի և Ծոփքի վրայով: Այս մայրուղու նշանակությունը ավելի է մեծանում, երբ Հյուսիսային Միջագետքի և Աղձնիքի սահմանների մոտ նրան են միանում սկզբում Սելևկիայից ու Անտիոքից, իսկ հետագայում նաև Տիգրոնից եկող ճանապարհները:

Ծոփքում «Արքայական ճանապարհը» բաժանվում էր երկու ճյուղի. մեկը հին ուղիով գնում էր դեպի Կապադովկիա և Փոքր Ասիայի արևմտյան երկրամասերը, իսկ երկրորդը՝ Փոքր Հայքի վրայով դեպի Սև ծովի պոնտական նավահանգիստները: Ծոփքում առևտրական քարավանների կայաններ ու հանգուցակետեր էին հանդիսանում ոչ միայն Արշամաշատը և Արկաթիակերտը, այլև Տոմիսա ամրոցը, որի մոտ գտնվում էր Եփրատի կարևոր գետանցքներից մեկը:

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի տնտեսական-առևտրական կապերը հելլենիստական աշխարհի հետ ավելի են աշխուժանում: Հայաստանը կարճ ժամանակով իր վերահսկողության տակ է առնում

ոչ միայն միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիները, այլև Եփրատի հիմնական՝ Զեզմայի, Սամոսատի և Տոմիսայի գետանցքները, որոնք մաքսային մեծ եկամուտ էին բերում:

Ռազմական ու տնտեսական նկատառումներով Տիգրան II-ը կառուցում է նաև Տիգրանակերտից Արտաշատ գնացող «Արքունի ճանապարհը»: Այս ճանապարհը Հայաստանի Հյուսիսային քաղաքները ոչ միայն կապում է Հայաստանի հարավային, այլև Միջագետքի, Ասորիքի, Կապադովկիայի վաճառաչահ քաղաքների հետ:

Վերոհիշյալ տարանցիկ առևտրական ճանապարհներով Հնդկաստանից Հայաստան էին ներմուծվում համեմունքներ, թանկագին քարեր, փղոսկր, Զինաստանից՝ հում մետաքս և մետաքսե կտորներ, Ասորիքից՝ նուրբ ապակյա ամաններ, զեղարվեստական իրեր և պերճանքի առարկաներ, Մերձագոլյան չրջանից՝ թանկագին մորթիներ և այլն: Հայաստանը իր գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքներով նույնպես գործուն կերպով մասնակցում էր միջազգային առևտրին: Ստրաբոնը, խոսելով Փոքր Հայքի սահմանի մոտ գտնվող պոնտական Կոմանա քաղաքի մասին, գրում է. «Կոմանան բազմամարդ քաղաք է և հանդիսանում է Հայաստանից եկած ապրանքների նշանավոր վաճառատեղի»: Հայաստանից տարբեր երկրներ էին արտահանվում բուսական ու հանքային ներկեր, հատկապես «որդան կարմիր», գինի, դեղաբույսեր, զանազան քարեր, ձիեր, ջորիներ, մետաղներ և այլն:

Ներքին ու արտաքին առևտրի զարգացման հետևանքով Հայաստանում մեծանում ու ուժեղանում է նաև դրամական չրջանառությունը: Վաղ հելլենիզմի դարաչրջանից սկսած՝ Հայաստանում հատված գրեթե ամբողջ դրամը դառնում է վաճառվող ապրանքների ընդհանուր արժեքաչափ, չրջանառություն և հարստություն կուտակման միջոց: Բացի Ծովքից, սեփական դրամներ հատանելու անհրաժեշտություն է առաջանում նաև Մեծ Հայքում: Մեզ են հասել Տիգրան II-ի, Արտավազդ II-ի, Արտաշես II-ի, Տիգրան III-ի, Տիգրան IV-ի և էրատո թագուհու՝ իրենց պատկերներով կտրած դրամները: Հայաստանի գրեթե բոլոր հին բնակավայրերում հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ սելևկյան, պարթևական, պոնտական, հռոմեական և այլ դրամներ:

Չնայած ապրանքափոխանակության, առևտրի և դրամական չրջանառության զգալի չափով զարգանալուն՝ հելլենիզմի դարաչրջանում ևս Հայաստանի տնտեսությունը բնատնտեսական և փակ բնույթ ուներ:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հասարակարգը և իշխող դասակարգը Որոշ վերապահումով կարելի է ասել, որ հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում տիրում էին ստրկատիրական կարգեր: Սակայն այդ կարգերը նման չէին հին Հունաստանում և հին Հռոմում գոյություն ունեցող դասական ստրկատիրական կարգերին: Հայկական Հասարակությունն իր բնույթով արևելյան հելլենիստական տիպի, համեմատաբար ավելի թույլ զարգացած ստրկատիրական հասարակություն էր: Երկրի տարբեր շրջանները հասարակական-տնտեսական զարգացման տեսակետից գտնվում էին տարբեր աստիճանների վրա: Եթե քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում և քաղաքամերձ շրջաններում տիրում էին ստրկատիրական հարաբերությունները, ապա գյուղական շրջաններում տիրապետող էր գյուղական համայնքը: Ծայրամասային և լեռնային շրջաններում դեռևս ուժեղ էին նաև տոհմացեղային հարաբերությունների մնացուկները և ցեղային կապերը: Ի տարբերություն դասական ստրկատիրական երկրների, Հայաստանում ստրկական աշխատանքը ոչ միայն չի կարողանում ազատ քաղաքացու աշխատանքը դուրս մղել արտադրության բոլոր ճյուղերից և փոխարինել նրան, այլև ստրուկները չեն կազմում բնակչության ճնշող մեծամասնությունը:

Իշխող հիմնական դասակարգը հանդիսանում էր ստրկատերերի դասակարգը, որի նյութական բարեկեցությունն ու հարստությունը պայմանավորված էին ստրուկների և գյուղական համայնքի անդամների աշխատանքի շահագործումով:

Երկրում իշխանությունը գտնվում էր թագավորական ազգատոհմի անդամների և հայկական տարբեր տոհմերից ծագող ռազմաստրկատիրական ավագանու ձեռքում: Սրանցից էին նշանակվում պալատական և պետական բարձրաստիճան պաշտոնյաները, նահանգների ու գավառների կառավարիչները, զինվորական հրամանատարները: Իշխող դասակարգի անբաժանելի մասն էին կազմում նաև քրմական դասը, միջին ու ստորին պետական պաշտոնյաները, քաղաքների և գյուղական վայրերի մեծ ու փոքր ստրկատերերը:

Երկրի քաղաքական ու ռազմական կյանքում կարևոր դեր էին կատարում նաև ծայրամասային ու լեռնային շրջանների ցեղային առաջնորդները: Սրանք ոչ միայն իրենց երկրամասերի կիսանկախ իշխան-

ներն էին, այլև ցեղային սկզբունքով կազմակերպված իրենց գործա-
մասերի հրամանատարները: Գասակարգային հասարակություն
պայմաններում աստիճանաբար քայքայվող հասարակական այս խա-
վը նույնպես համալրում էր տիրապետող դասակարգի շարքերը:

**Ինչպես Արևելքի բոլոր երկրներում, նույնպես Պետական և մասնավոր ստրկատիրական տնտեսությունները և Հայաստանում հողի սեփականությունը գերա-
զույն իրավունքը պատկանում էր պետությունը, թեև հելլենիզմի դարաշրջանում այդ իրավունքը
զգալի չափով խախտվել էր և զուտ իրավական ու ձևական բնույթ էր ստացել: Երկրի բոլոր հողերը կոչվում էին «արքունի երկիր»: Պետությունը կամ թագավորին էին պատկանում նաև երկրագործության համար կենսական նշանակություն ունեցող արհեստական ոռոգման սիստեմները և ջրօգտագործման իրավունքը:**

Երկրի ամենախոշոր սեփականատերը հանդիսանում էր պետու-
թյունը: Բացի հողային ընդարձակ տիրույթներից, պետությունը Հա-
յաստանի գյուղական գրեթե բոլոր շրջաններում ուներ նաև ստրկա-
կան և մասամբ վարձու աշխատանքի վրա հիմնված մեծ թվով տրն-
տեսություններ, իսկ քաղաքներում ու ամրոցներում՝ խոշոր արհես-
տանոցներ, որոնք կոչվում էին «գործոց տներ»: Պետական տնտե-
սություններում արտադրվում էին գյուղատնտեսական զանազան
մթերքներ, բուսական ներկեր, ձեթ, գինի և այլն: Հավանաբար այս
տնտեսություններում էին մշակվում և կենտրոն ուղարկվում շրջակա
գյուղերից հարկի ձևով գանձվող գյուղատնտեսական բնամթերք-
ները: Պետական արհեստանոցներում կամ «գործոց տներում», բացի
զենքերից ու սպառազինությունից, արտադրում էին գյուղատնտե-
սական ու արհեստավորական աշխատանքային գործիքներ, հա-
գուստներ, կոշիկներ, տնային գործածությունից իրեր, պերճանքի ու
զարդարանքի առարկաներ և այլն:

Պետության մենաշնորհային սեփականությունն էին հանդիսա-
նում նաև երկրի բոլոր հանքերը, որոնք գրեթե բացառապես մշակ-
վում էին ստրուկների աշխատանքով: Պետական տնտեսությունից ճյու-
ղերից մեկն էր նաև ձկնորսությունը: Լճերի ափերին գոյություն ու-
նեին «արքունի ձկնորսարաններ»:

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում հողի պետական սեփա-
կանության կողքին առաջանում և որոշ չափով զարգանում է նաև
հողի մասնավոր ու ժառանգական սեփականությունը: Այս տեսա-
կետից խիստ ուշագրավ են Արմավիրում հայտնաբերված հունարեն

արձանագրություններից երկուսը, որոնց մեջ արդեն դատապարտվում է մոտիկ ազգականների միջև ժառանգական գույքի անարդարացի բաժանումը և Արտեմիս-Անահիտ աստվածուհու անունից պահանջվում է ժառանգական գույքի և հողային կալվածքների բաժանումն ու սահմանադատումը կատարել արդարացի կերպով: Տակիտոսը, խոսելով Հռոմա-պարթևական տասնամյա պատերազմի (54–64 թթ.) մասին, վկայում է, որ Տրդատը ավերում էր հայկական ավագանու այն ներկայացուցիչների կալվածքները, որոնք թեքված էին հռոմեացիների կողմը, իսկ Կորբուլոնը, ընդհակառակը, ավերում ու հրդեհում էր նրանց կալվածքները, որոնք թշնամարար էին տրամադրված հռոմեացիների դեմ: Բերված այս վկայություններից երևում է, որ նախկինում լոկ օգտագործման իրավունքով ստրկատերերի տիրապետման տակ գտնվող հողերը աստիճանաբար դարձել էին նրանց մասնավոր ու ժառանգական սեփականությունը:

Հին սկզբնաղբյուրներից և ավանդական պատմություններից քաղելով՝ Մովսես Խորենացին տարբեր առիթներով տեղեկացնում է, որ հայ թագավորները և ավագանու ներկայացուցիչները դրսից բերված գերի ստրուկներին բնակեցնելով՝ հիմնում էին նոր ավաններ և գյուղեր, որոնք կոչվում էին «դաստակերտ» կամ «ձեռակերտ», որը բառացի նշանակում է «ձեռքով շինված»: Այս դաստակերտների սահմաններում կամ նրանց սահմաններից դուրս առաջանում են նաև անմիջականորեն ստրկատերերի կողմից վարվող և ստրկական աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ, որոնք կոչվում էին «ազարակ»: Նման դաստակերտներ ու ազարակներ ունեին թագավորները, թագավորական տան անդամները, ստրկատիրական ավագանու ներկայացուցիչները և հեթանոսական տաճարները:

Իբրև կանոն, դաստակերտները և ազարակները հիմնվում էին գյուղական համայնքներին չպատկանող ազատ հողերի վրա: Սակայն ստրկատերերը, հաճախ խախտելով այս կարգը, սկսում են բռնազրավել գյուղական համայնքներին պատկանող հողերը և նրանց հաշվին ընդարձակել իրենց դաստակերտների ու ազարակների սահմանները: Այս երևույթը արդեն Ք. ա. II դարի առաջին կեսում խոր դժգոհություններ է առաջ բերում գյուղական համայնքների ներսում: Արտաշես I-ը ստիպված է լինում հողերի վերաբաժանում կատարել և գյուղական համայնքներին պատկանող ու ստրկատիրական տնտեսությունների միջև իր անունով հատուկ սահմանաքարեր դնել, որոնք կոչվում էին «Արտաշիսական»:

«Բոլոր իր առաքինի արարքներից, ուղղադատ գործերից հետո,– տեղեկացնում է Մովսես Խորենացին,– Արտաշեսը հրամայում է գյուղերի և ագարակների սահմանները որոշել, որովհետև նա բազմամարդացրել էր Հայոց աշխարհը, դրսից բերելով շատ ազգերի, որոնց բնակեցրել էր լեռներում, հովիտներում ու դաշտերում: Եվ սահմանների համար նա հաստատում է նշաններ այսպես. հրամայում է տաշել քառակուսի քարերը, փորել մեջերը փոսեր՝ պնակի նմանությամբ և թաղել գետնի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի աշտարակներ՝ գետնից քիչ բարձր»:

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ թե՛ ագարակները և թե՛ դաստակերտները ստրկատիրական կալվածքներ էին: Սակայն սրանց միջև կար էական տարբերություն: Եթե ագարակները զուտ ստրկատիրական տնտեսություններ էին, ապա դաստակերտները գյուղերի ձևով կառուցված ստրկատիրական տիրույթներ էին:

Բացի ագարակներից ու դաստակերտներից, թագավորական տան անդամները, ստրկատիրական ավագանու ներկայացուցիչները և խոշոր ստրկատերերը քաղաքներում, ամրոցներում և իրենց կալվածքներում ունեին նաև ստրկական աշխատանքի վրա հիմնված արհեստանոցներ կամ «գործող տներ»:

Թե՛ պետական և թե՛ մասնավոր ստրկատիրական տնտեսությունների ու արհեստանոցների արտադրանքը ոչ միայն գործադրվում էր իշխող դասակարգի ու զորքի սպառողական կարիքները բավարարելու, ստրկական աշխատուժը վերարտադրելու համար, այլև նրանց արտադրանքի մի մասը դուրս էր բերվում՝ ներքին ու արտաքին շուկաներում վաճառելու համար:

Քրմական դասը իշխող ստրկատիրական դա-

Քրմական դասը սակարգի անբաժանելի մասն էր կազմում: Նա և **տաճարական** կարևոր դեր էր կատարում երկրի կրոնական ու **տնտեսությունը** քաղաքական կյանքում և խոշոր ազդեցություն ուներ բնակչության գիտակցության վրա:

Երկրում թագավորից հետո երկրորդ ղեմքը հանդիսանում էր քրմապետը: Այդ պատճառով էլ, ինչպես Ուրարտուում և Արևելքի մյուս երկրներում, նույնպես և Հին Հայաստանում քրմապետ էր նշանակվում թագավորի եղբայրներից կամ որդիներից մեկը: Քրմապետը ոչ միայն երկրի հոգևոր պետն էր, այլև թագավորի առաջին խորհրդականը: Նրա ձեռքում էր գտնվում նաև գերագույն դատավորի պաշտոնը, իսկ քրմական դասի ձեռքում՝ երկրի դատական գործը:

Բացի քրմապետի պաշտոնից, մնացած ամբողջ քրմությունը տոհմա-ժառանգական ու կաստայական բնույթ ուներ: Մովսես Խորենացին վկայում է, որ քրմական ծառայությունը ժառանգաբար պատկանում էր հայկական հին ազգատոհմերից մեկին՝ Վահուհիներին: Գրեթե բոլոր քրմերը ծագում էին այս ազգատոհմից:

Հեթանոսական տաճարները միաժամանակ հանդիսանում էին տնտեսությունների կարևոր կենտրոններ: Նրանք ունեին ընդարձակ հողային տիրույթներ ու արտավայրեր, բազմաթիվ դաստակերտներ, ազարակներ ու արհեստանոցներ: Անահիտ աստվածուհու գլխավոր տաճարին էր պատկանում ամբողջ Եկեղյաց գավառը և նրա անունով էլ կոչվում էր նաև «Անահտական»: Ջենոբ Գլակը վկայում է, որ Աշտիշատի նշանավոր մեհյանը ուներ 12 մեծամեծ ավաններ: Տաճարական տնտեսություններում աշխատում էին տաճարներին նվիրված ստրուկ-սպասավորները, որոնց հույն մատենագիրները անվանում են «հիերոդուլներ»:

Մեհյանները հարստանում էին նաև թագավորների, ստրկատերերի ու հասարակ ժողովրդի նվիրատվություններով: Ազաթանգեղոսը, խոսելով Տարոն գավառի Աշտիշատ ավանում գտնվող Վահագն աստծու մեհյանի մասին, վկայում է, որ սա մեծագանձ էր, լի էր ոսկով, արծաթով և թագավորների տված բազմաթիվ նվերներով: Նման հարուստ գանձեր ունեին նաև մյուս նշանավոր մեհյանները: Գոյություն ունեցող սովորույթի համաձայն պատերազմների միջոցով ձեռք բերված ստրուկների ու ավարի մի մասը ևս բաժին էր հանվում տաճարներին:

Անձնական ունեցվածքներ, հարստություններ և ստրուկներ ունեին նաև քրմապետներն ու բարձրաստիճան քրմերը: Մովսես Խորենացին վկայում է, որ Բագարանի գրավման ժամանակ Արտաշեսի դայակ ու զորավար Սմբատի ձեռքն են ընկնում ոչ միայն քրմապետ Երվադի անձնական գանձերը, այլև նրա 500 անձնական ստրուկները, որոնց Սմբատը տանում բնակեցնում է Մասիս լեռան թիկունքում՝ իր նոր կառուցած նույնանուն Բագարան դաստակերտում:

Արտադրողական ուժերի ընդհանուր վերելքի, առևտրի ու դրամական շրջանառության զարգացման, հասարակական աշխատանքի և տընտեսական հարաբերությունների հետագա խորացման իբրև բնական հետևանք՝ հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում առաջանում և զարգանում են քաղաքները: Քաղաքների զարգացմանը որոշ չափով նպաստում է նաև

միջազգային տարանցիկ առևտուրը: Հայաստանի տարածքի վրայով անցնող առևտրի այդ հյուսիսային ճանապարհի վրա առաջանում են Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Նախճավան ու Վաղարշապատ, հարավային ճանապարհի վրա՝ Արշամաշատ, Արկաթիակերտ ու Տիգրանակերտ, իսկ Տիգրան II-ի կառուցած «Արքունի ճանապարհի» վրա՝ Վան, Զարեհավան, Զարիշատ և Մծուրն խոշոր քաղաքները: Նույն այս ճանապարհների և նրանց ճյուղավորումների վրա առաջանում են նաև մոտ երկու տասնյակ քաղաքատիպ ավաններ:

Մեծ թվով քաղաքների առաջացումն ու զարգացումը ստրկատիրական կարգերին հատուկ ու բնորոշ երևույթներից մեկն էր: Քաղաքները հանդիսանում էին ոչ միայն արհեստագործություն, առևտրի և հայկական հելլենիստական մշակույթի, այլև տնտեսություն հիմնական կենտրոններ:

Ինչպես Արևելքի մյուս հելլենիստական երկրներում, նույնպես և Հայաստանում քաղաքները մեծ մասամբ հիմնադրվում և կառուցվում էին թագավորների կողմից: Այդ պատճառով էլ նրանք ոչ միայն կոչվում էին իրենց հիմնադիրների անունով, այլև համարվում էին պետության սեփականությունը և հանդիսանում էին արքունի դաստակերտներ: Հայ թագավորները հատուկ ուշադրություն էին դարձնում քաղաքների զարգացմանը, որովհետև նրանք ոչ միայն խոշոր եկամուտներ էին տալիս պետական գանձարանին, այլև կենտրոնական իշխանություն համար ամուր հենարան էին հանդիսանում: Քաղաքային բնակչության ստրկատիրական և առևտրա-վաճառուական խավերը իրենց հերթին նույնպես շահագրգռված էին կենտրոնական իշխանություն հզորություն, որովհետև միայն կենտրոնացված ու հզոր պետությունը կարող էր պատերազմների միջոցով հայթայթել թարմ ու էփան ստրուկներ, ընդլայնել ստրկատերերի շահագործման պայմանները, ապահովել առևտրական քարավանների անվտանգ երթևեկությունը: Բացի այս, վերոհիշյալ խավերը կենտրոնական պետության ռազմական ուժի մեջ էին տեսնում իրենց ունեցվածքը պահպանելու, ստրուկներին ու շահագործվող դասերին հնազանդություն մեջ պահելու երաշխիքը:

Հելլենիստական Հայաստանի քաղաքները ևս հիմնված էին հողային սեփականության և երկրագործության վրա: Ավելին, այստեղ քաղաքները շատ ավելի սերտորեն էին կապված գյուղի հետ, քան հին Հունաստանի ու հին Հռոմի քաղաքները: Քաղաքային բնակչությունը արհեստագործության, առևտրի կամ վաճառություն հետ

միաժամանակ զբաղվում էր նաև երկրագործությունը: Յուրաքանչյուր քաղաք իր շրջակայքում ուներ թագավորի կողմից հատկացված ընդարձակ հողային տարածություններ, որոնք հաճախ հավասար էին մի ամբողջ գավառի: Վան քաղաքին պատկանող տարածքը կազմում էր մի առանձին գավառ և այդ քաղաքի ուրարտական շրջանի անունով կոչվում էր «Տոսպ» (Տուչպա), Նախճավան քաղաքինը կրում էր նույն քաղաքի անունը՝ «Նախճավան», իսկ Վաղարշապատ քաղաքինը կոչվում էր «Քաղաքաղաչտ»: Քաղաքներին պատկանող հողերը բաժանվում էին ազատ քաղաքացիների միջև: Արհեստավորները և հասարակ քաղաքացիները իրենց հողաբաժինները մշակում էին իրենք, իսկ ստրկատերերը և հարուստ քաղաքացիները՝ ստրուկների, կախյալ գյուղացիների ու վարձկան մշակների միջոցով: Քաղաքային իշխող խավերը ունեին նաև այդ հողերի վրա հիմնված ազարակներ ու դաստակերտներ:

Հայաստանի քաղաքներն իրենց կառուցվածքով նման էին Արևելքի Հելլենիստական քաղաքներին: Նրանք, մի կողմից, ենթարկվում էին կենտրոնական իշխանությունը և համարվում էին արքունի դաստակերտներ, իսկ մյուս կողմից, հին հունական քաղաք-պետությունների կամ պոլիսների նման ունեին ներքին ինքնավարություն:

Քաղաքային ինքնավարության բարձրագույն մարմինը հանդիսանում էր քաղաքի խորհուրդը, որի անդամները ընտրվում էին ազատ քաղաքացիների կողմից: Քաղաքային ինքնավարության մարմիններն էին կառավարում ու կարգավորում քաղաքի ներքին վարչական, դատական, տնտեսական ու մշակութային կյանքը:

Քաղաքները իբրև կանոն մարզերի կառավարիչներին կամ զինվորական հրամանատարներին չէին ենթարկվում, այլ ենթարկվում էին միայն կենտրոնական իշխանությանը կամ թագավորին: Յուրաքանչյուր քաղաք ուներ թագավորի կողմից նշանակված իր կառավարիչը, որը կոչվում էր «չահապ» կամ «վերակացու քաղաքի»: Սրա հիմնական պարտականություններին էին՝ հետևել ու հսկել թագավորի կարգադրությունների, պետական պարտավորությունների կատարմանը, քաղաքից գանձվող հարկերի հավաքմանը և այլն: Քաղաքի կառավարիչը իրավունք չուներ միջամտել ներքին ինքնավարության մարմինների գործունեությանը: Նա կարող էր միայն այդ մարմիններին հանձնարարություններ և խորհուրդներ տալ:

Յուրաքանչյուր քաղաք ուներ նաև քաղաքացիներից հավաքագրված իր սեփական զորամասը, որը խաղաղ ժամանակ զբաղվում էր իր բնակավայրը հանկարծակի հարձակումներից պաշտպանելու,

ներքին կարգը ապահովելու և հնարավոր ապստամբություններն ու ելույթները ճնշելու համար: Սաղաղ ժամանակ, բացի մայրաքաղաքից, մյուս քաղաքներում թագավորական զորքերը մըշտական մնալու իրավունք չունեին: Միայն պատերազմի կամ կենտրոնական իշխանությունից դեմ այս կամ այն քաղաքի ապստամբության դեպքում թագավորը կարող էր իր զորքերը մտցնել քաղաք: Տիգրանակերտի հյուսիսային պարսպի ավերակների վրա հայտնաբերվել է հավանաբար Ք. հ. IV դարի վերջի հայ Արշակունի թագավորներից մեկի թողած հունարեն արձանագրությունը, որն ուղղված է քաղաքի ներքին ինքնավարություն մարմին՝ քաղաքային խորհրդին: Այդ արձանագրությունից իմանում ենք, որ Տիգրանակերտի քաղաքային համայնքը ապստամբել է թագավորի դեմ, սակայն թագավորը ճնշել է ապստամբությունը և իբրև հետագա ապստամբությունները կանխելու միջոց իր զորքերը թողել է քաղաքում:

Հայաստանի քաղաքները էթնիկական-կրոնական տեսակետից ունեին խայտարեղես բնակչություն: Բացի հայերից, քաղաքներում ապրում էին նաև հրեաներ, ասորիներ, հույներ և պարսիկներ, որոնց Տիգրան II-ն ու Արտավազդ II-ը իրենց արչավանքների ժամանակ բռնի կերպով բերել էին Արևելքի տարբեր երկրներից:

Ուշոր քաղաքներում հատկապես մեծ էր հրեաների թիվը: Փավստոս Բուզանդը, խոսելով 367 թ. պարսից Շապուհ II թագավորի (309–379) Հայաստան կատարած արչավանքի մասին, տեղեկացնում է, որ պարսիկները գերեվարել և Պարսկաստան են տարել Արտաշատ, Երվանդաշատ, Զարեհավան, Վան և Նախճավան քաղաքներից 177 հազար ծուխ, որից 95 հազար ծուխ հրեա և 82 հազար ծուխ հայ: Մովսես Խորենացին նույնպես վկայում է, որ Արմավիրում, Արտաշատում, Վաղարշապատում և Վանում կային մեծ թվով հրեաներ: Ուշագրավ է նաև, որ հայերենում առևտրի հետ կապված մի քանի բառեր, ինչպես, օրինակ՝ «չուկա», «խանութ», «հաշիվ», «գաղութ» և այլն ունեն սեմական ծագում և փոխառություններ են ասորերենից: Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքներում ոչ միայն զգալի թիվ են կազմել հրեաներն ու ասորիները, այլև նրանք կարևոր դեր են կատարել Հայաստանում առևտրի ու քաղաքային կյանքի զարգացման մեջ:

Քաղաքային բնակչության էթնիկական-կրոնական տարբեր խմբերը ապրում էին համայնքներով՝ քաղաքի առանձին թաղամասերում: Այդ համայնքները ունեին իրենց ներքին վարչական մարմինները, դատարանները և մշակութային-կրոնական հիմնարկները: Հիշ-

յալ դատարանները մեծ մասամբ տեղական իրավական նորմաների հիման վրա քննում և կարգավորում էին նույն համայնքի անդամների միջև առաջացած քաղաքացիական, ժառանգական, ամուսնական և այլ վեճերը: Քրեական ծանր հանցագործությունները և տարբեր համայնքների անդամների միջև առաջացած դատական գործերը քննվում էին համաքաղաքային դատարաններում:

Քաղաքային բնակչությունից իշխող վերնախավի մեջ էին մտնում ստրկատերերը, խոշոր առևտրականներն ու վաշխատուները: Սրանք ունեին մեծ արհեստանոցներ կամ «գործոց տներ», ազարակներ, դաստակերտներ, խանութներ և տներ: Սրանց ձեռքում էր գտնվում քաղաքային ինքնավարությունից վարչական ու դատական մարմինների ղեկավարությունը: Քաղաքում մեծ թիվ էին կազմում արհեստավորները, որոնք աշխատում էին իրենց սեփական մանր արհեստանոցներում կամ արքունի ու մասնավոր «գործոց տներում»: Քաղաքում կային նաև մեծ թիվով հողագործներ, օրավարձով աշխատողներ և լյուսպեն պրոլետարներ: Վերևում հիշված սոցիալական բոլոր խավերը կազմում էին քաղաքի ազատ բնակչությունը և կոչվում էին «քաղաքացիներ»:

Բացի անձնական ազատությունից և քաղաքային ինքնավարությունից իրավունքից, ազատ քաղաքացիները օգտվում էին նաև հարկային, պարհակային, զինվորական և այլ արտոնություններից, որոնք շնորհվում էին թագավորների կողմից: Սրանք ենթարկվում էին ոչ թե համապետական, այլ քաղաքային ինքնավարության օրենքներին, թեև միաժամանակ հարկատու էին կենտրոնական իշխանությունը: Քաղաքացիները իրենց իրավական ու սոցիալական դրությունը ավելի բարձր էին կանգնած, քան ազատ գյուղացիները կամ համայնականները: Մովսես Խորենացին վկայում է, որ հայոց Վաղարշակ թագավորը «հրամայեց, որպեսզի քաղաքացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, և որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխաններին»:

Քաղաքների ազատագրված, իրավագուրկ և ընչազուրկ բնակիչները հանդիսանում էին ստրուկները, որոնք դաժան կերպով շահագործվում էին պետական և մասնավոր «գործոց տներում», ազարակներում ու տնային ծառայությունների մեջ:

Հելլենիզմի դարաշրջանում ևս Հայաստանի ազատ բնակչությունից մեծամասնությունը ապրում էր շենքերում, գյուղերում ու ավաններում և միավորված էր գյուղական համայնք-

**Գյուղական
համայնքը**
ներում:

Գյուղական համայնքի հիմքը և նրա տնտեսական միավորը հանդիսացող գյուղացիական ընտանիքը կոչվում էր «երդ» կամ «ծուխ», իսկ համայնքի անդամը կամ համայնականը՝ «չինական»: Գյուղական համայնքը կազմակերպված էր տարածքային հատկանիշով: Յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ իր որոշակի տարածքը, որի մեջ մտնում էին բնակատեղը, վարելահողը, արոտավայրը, անտառաչերտը, ջրերը, գետերն ու առուները:

Գյուղական համայնքում տները, գոմերը, բակերը, տնամերձ հողամասերը, անասունները, աշխատանքային գործիքները և տնային գործածությունների իրերը հանդիսանում էին ընտանիքների, այսինքն՝ երդերի կամ ազատ շինականների մասնավոր, ժառանգական սեփականությունը:

Թեև գյուղական համայնքների հողերի գերագույն սեփականություն իրավունքը պատկանում էր պետությունը, սակայն այդ իրավունքը մեծ մասամբ ձևական նշանակություն ուներ, քանի որ գյուղական համայնքները շարունակում էին իրենցը համարել հողերի ընդհանուր սեփականությունը, և նրանց ձեռքում էր գտնվում հողերի օգտագործման ու վերաբաժանման տնօրինումը: Յուրաքանչյուր համայնքի սահմանների մեջ գտնվող արոտավայրերը, անտառները, լճերը, գետերը համայնքի անդամների կողմից օգտագործվում էին համատեղ, համահավասար իրավունքով և ըստ կարիքի: Հակառակ սրան, վարելահողը պարբերաբար, ըստ ընտանիքի անդամների թվի, վերաբաժանվում էր երդերի կամ ծխերի միջև՝ անհատական օգտագործման համար, բայց առանց օտարելու և վաճառելու իրավունքի: Շինականը իրեն բաժին հասած վարելահողը, որը կոչվում էր «հող երդոյ», հիմնականում մշակում էր իր ընտանիքի անդամների ուժերով և իր սեփական արտադրություն միջոցներով, որով և ստացված արդյունքն էլ յուրացնում էր մասնավոր կարգով: Շինականները, բացի հողից, արտադրություն միջոցների մասնավոր սեփականություն հիմքի վրա հիմնված անհատական տնտեսություն վարող ազատ և մանր արտադրողներ էին:

Գյուղական համայնքի գերագույն մարմինը հանդիսանում էր համայնքի ընդհանուր ժողովը, որը որոշում էր հողաբաշխման, ջրօգտագործման և համայնքի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող կարևոր հարցերը: Ընդհանուր ժողովը համայնքի ընթացիկ գործերը վարելու, վեճերը կարգավորելու համար ընտրում էր նաև ավագների խորհուրդ, գեղջավագ կամ գյուղապետ, իսկ ջրօգտագործումը կանոնավորելու համար՝ ջրապետ կամ ջրաբաշխ:

Շինականներն իրենց օգտագործած հողաբաժինների համար, ինչպես և իբրև երկրի հպատակներ, բնամթերային և դրամական հարկեր ու տուրքեր էին վճարում պետութանը, կատարում էին շինարարական, փոխադրական և այլ պարհակներ, որոնք կոչվում էին «մարդահարկ», «հարկ բեռնակրաց», «հարկ քարահատաց», «խաչար» և այլն: Պատերազմի ժամանակ նրանք կատարում էին նաև զինվորական ծառայություն:

Պետական հարկերի ու տուրքերի վճարման տեսակետից, հավանաբար, գյուղական համայնքում գոյություն ունեւ համապարտ երաշխավորության սխտեմ: Պետական կարգադրությունները, հարկերի գանձումը և շինականներին պարհակների, զինվորական ծառայության ուղարկելը իրագործվում էր գյուղապետի կողմից, որով և գյուղապետի կամ գեղջավազի պաշտոնը դասակարգային հասարակության պայմաններում երկակի բնույթ էր ստանում: Մի կողմից՝ գյուղապետը հանդիսանում էր գյուղական համայնքի ընտրովի ու հասարակական ղեկավարը, իսկ մյուս կողմից՝ հանդես էր գալիս իբրև պետական պաշտոնյա:

Գյուղական համայնքում գոյություն ունեցող արտադրության մասնավոր սեփականատիրական բնույթը և արտադրված արդյունքի մասնավոր յուրացումը համայնքի երդերի կամ ծխերի միջև անխուսափելիորեն առաջ է բերում տնտեսական, ունեցվածքային տարբերություն: Դեռևս Քսենոփոնի ժամանակ Հայաստանում գյուղական համայնքի ծխերի միջև նկատվող տնտեսական, գույքային տարբերությունը հելլենիզմի դարաշրջանում ստրկատիրական հարաբերությունների, առևտրի ու դրամական շրջանառության զարգացման հետևանքով ավելի է խորանում: Գյուղական համայնքի ներսում առաջանում են, մի կողմից, տնտեսապես հարուստ, իսկ մյուս կողմից՝ աղքատ ու չքավոր ընտանիքներ:

Աղքատ շինականների մի մասը աստիճանաբար ընչազրկվում և հողազրկվում է: Դրան զգալի չափով նպաստում է քաղաքներում ու գյուղերում զարգացող վաշխառությունը: Ծանր պարտքերի տակ ընկած ազատ համայնականը հարկադրված է լինում ոչ միայն իր շարժական գույքը, այլև իր հողաբաժնի օգտագործման իրավունքը, բայց ոչ հողը, վաճառել կամ գրավ դնել պարտատիրոջ կամ հարուստ համագյուղացու մոտ: Այս ճանապարհով հողազրկված շինականը դառնում է հարուստ գյուղացիների վարձկան մշակը:

Սակայն գյուղական համայնքի առկայության պայմաններում ունեւր գյուղացու շահագործման հնարավորությունները սահմանա-

փակ էին, որովհետև նա չէր կարող անընդհատ ընդարձակել իր հողային տարածությունները և դրա հիման վրա շահագործել մեծ թվով վարձկան մշակների և ստրուկների աշխատանքը: Նա չէր կարող նաև դուրս գալ գյուղական համայնքից, որովհետև այդ դեպքում կզրկվեր համայնքի տնօրինությունից տակ գտնվող հողից ու ջրից օգտվելու իրավունքից: Համայնքի կաշկանդիչ այս պայմաններից դուրս գալու նպատակով տնտեսապես հարուստ ու քաղաքականապես ազդեցիկ ընտանիքները աստիճանաբար ձգտում են մասնավոր սեփականություն վերածել համայնքին պատկանող կամ նրա տնօրինության տակ գտնվող վարելահողը, արոտավայրերն ու ջրանցքները: Մի կողմից՝ հարուստ գյուղացիների այս ձգտման, իսկ մյուս կողմից՝ չքավոր համայնականների մի մասի ընչազրկման ու հողազրկման հետևանքով ոչ միայն սրվում է պայքարը համայնքի ներսում, այլև գյուղական համայնքը սկսում է աստիճանաբար քայքայվել:

Սակայն ինչպես Արևելքի մյուս երկրներում, նույնպես և Հայաստանում ստրկատիրական ու ապրանքադրամական հարաբերությունների համեմատաբար թույլ զարգացման, համայնքի ներսում առաջացած անբավարար շերտավորման և հողի պետական սեփականությունից հետևանքով գյուղական համայնքների քայքայումը տեղի էր ունենում շատ դանդաղ կերպով: Հեղինիզմի դարաշրջանում ևս գյուղական համայնքները, չնայած նրանց աստիճանական քայքայմանը, դեռ զգալի չափով ուժեղ էին և համեմատաբար կայուն:

Գյուղական համայնքում արտադրողական ուժերի զարգացումը տեղի էր ունենում շատ դանդաղ: Նրա ներսում գերիշխում էր ոչ թե ընդլայնված, այլ պարզ վերարտադրությունը: Գյուղական համայնքը իր գոյությունը ոչ միայն արգելակում էր երկրի արտադրողական ուժերի հետագա վերելքը, այլև Արևելքի, այդ թվում և Հայաստանի տնտեսական հետամնացությունից, դանդաղաչարժությունից հիմքն էր հանդիսանում:

Ինչպես Արևելքի հեղինիստական մյուս երկրների, նույնպես և Հայաստանի տնտեսական կյանքում դեռևս շատ կարևոր դեր էր կատարում գյուղական համայնքը: Սակայն նա ստրկատիրական կարգերում լուրջ անցողիկ ու քայքայվող տնտեսական կացութաձևի բնույթ ուներ: Որքան էլ նշանակալից լինեի նրա դերը հասարակական տնտեսության մեջ, այնուամենայնիվ նա, իբրև քայքայվող տնտեսաձև, ստրկատիրական շահագործման պայմաններում տիրող հարաբերությունների վերարտադրության հիմնական աղբյուրներից մեկն էր:

Ստորուկները

Ք. ա. II-I դարերում Հայաստանում ստրկատիրությունը տարածված և ընդհանուր երևույթ է դառնում: Հնում գոյություն ունեցող պետական և տաճարական ստրկատիրության կողքին առաջանում ու զարգանում է նաև մասնավոր ստրկատիրությունը:

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ստրկության հիմնական աղբյուրը պատերազմներն էին: Հայկական և Հունա-Հռոմեական պատմիչները վկայում են, որ Արտաշես I-ը, Տիգրան II-ը և Արտավազդ II-ը իրենց կատարած նվաճումների ու արչավանքների ժամանակ տարբեր երկրներից Հայաստան են բերել ու ստրկացրել հարյուր-հազարավոր գերիներ: Ըստ Ապպիանոսի վկայության՝ Տիգրան II-ը միայն Կապադովկիայից Հայաստան է բերել մոտ 300.000 մարդ: Անչուշտ, նա նման մեծ թվով գերիներ է բերել նաև Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Հյուսիսային Միջագետքից և այլ երկրներից:

Ռազմագերիների ստրկացումը համարվել է բնական ու օրինական: Մշակված և սահմանված կարգի համաձայն ռազմական ավարը և գերիները բաշխվում էին թագավորի, ստրկատիրական ավագանու ներկայացուցիչների և տաճարների միջև: Պատերազմի միջոցով ձեռք բերված ստրուկները կոչվում էին «օտարածին ստրուկներ»:

Ստրկության երկրորդ կարևոր աղբյուրը ստրուկների բնական աճն էր, ստրուկներից ծնված երեխաները: Այս կամ այն ստրկատիրոջ տանը իր ստրուկներից ծնված երեխաները նույնպես համարվում էին ստրկատիրոջ սեփականությունը, նրա ստրուկները: Այս կարգի ստրուկները, ի տարբերություն գերեվարությանը ձեռք բերված ստրուկների, կոչվում էին «ընդոծին»:

Ստրկության երրորդ կարևոր աղբյուրը պարտային ստրկությունն էր: Հայաստանի ստորին դասերին պատկանող ազատ քաղաքացիները՝ չինականները և ռամիկները, հաճախ ընկնելով ծանր պարտքերի տակ և չկարողանալով վճարել դրանք, գոյություն ունեցող օրենքի համաձայն պարտատիրոջ կողմից ստրկացվում և վաճառվում էին: Շատ դեպքերում պարտատերը ոչ միայն ստրկացնում էր պարտապանին, այլև նրա կնոջն ու երեխաներին: Անվճարունակ չինականներն ու ռամիկները հաճախ նաև իրենք էին ստիպված լինում իրենց երեխաներին ստրկության վաճառել՝ պարտատիրոջ պարտքը վճարելու համար: Գնման ու վաճառքի միջոցով ձեռք բերված ստրուկները կոչվում էին «արծաթագին» կամ «դրամագին»:

Ծինականները և ուսմիկներն ազատագրվում, ընչազրկվում և ստրկացվում էին նաև պետական ու կրոնական ծանր հանցանքներ գործելու դեպքում:

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ստրուկները լրիվ կերպով ընչազրկված, ազատագրված ու իրավազրկված էին: Նրանք համարվում էին իրենց տիրոջ սեփականությունը: Ստրկատերը կարող էր ստրուկին ոչ միայն նվիրել, վաճառել, ծեծել, բանտարկել և խեղանդամ դարձնել, այլև սպանել: Ստրուկը կարող էր ազատվել միայն տիրոջ կամքով և փրկագնամամբ: Սակայն փրկագնաման դեպքում անգամ, եթե առանձին փրկավճար չէր տրված, ազատագրված ստրուկի կինն ու երեխաները մնում էին ստրկատիրոջ մոտ, որովհետև սրանք շարունակում էին ստրկատիրոջ սեփականությունը համարվել:

Երկրի ամենամեծ ստրկատերը հանդիսանում էր պետությունը կամ թագավորը: Պետությունը պատկանող ստրուկները կոչվում էին «արքունի ստրուկներ»: Մեծ թվով ստրուկներ ունեին նաև տաճարները և ավագանու ներկայացուցիչները: Տաճարներին պատկանող ստրուկները կոչվում էին «սպասավոր» կամ հունական տերմինով՝ «հիերոդուլ»:

Նյլենիզմի դարաշրջանում ստրուկների աշխատանքը մեծ չափով կիրառվում էր պետական, տաճարական և մասնավոր ստրկատիրական ազարակներում, արհեստանոցներում, հանքերում, ձկնորսարաններում, քաղաքների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների շինարարության վրա և այլն: Ստրուկների աշխատանքը առաջվա նման մեծ չափով կիրառվում էր նաև տնային ծառայություն մեջ: Արական սեռին պատկանող տնային ստրուկները կոչվում էին «ծառա» կամ «սպասավոր», իսկ իգական սեռին պատկանողները՝ «աղախին» կամ «սպասուհի»:

Հայ թագավորները, հեթանոսական տաճարներն ու ստրկատերերը իրենց բաժին հասած բոլոր ռազմագերիներին լրիվ չէին ստրկացնում, այլ նրանց մի մասին բնակեցնում էին ստրկատիրական տիրույթներում, այսինքն՝ դաստակերտ կոչվող ավաններում ու գյուղերում: Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ դաստակերտների բնակիչները մեծ մասամբ գերեվարված ու դրսից բերված, հողին ամրացված և իրենց տերերին ենթարկված, բայց և գյուղական համայնքի սկզբունքով հողաբաժին՝ «հող երդոյ» ստացած և ինքնուրույն տնտեսություն վարող կիսաստրուկ հողագործներ էին, որոնք բացի պետական հարկերից, իրենց արտադրանքի մի մասը վճարում

էին հողատեր-ստրկատերերին: Կիսաստրուկ հողագործների սոցիալական այս շերտը Արևելքի երկրներում հայտնի էր վաղուց: Սրանք Ասորեստանում և Ուրարտուում կոչվում էին «ինքնուրույն տնտեսություն վարող պետական ստրուկներ»: Սրանք իրենց տնտեսական ու սոցիալական դրուժյամբ նման էին հելլենիզմի դարաշրջանում եգիպտոսում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում գոյություն ունեցող «լաոյ» կոչված կախյալ հողագործներին կամ Հոտմի ու շրջանի պատմությունից հայտնի «կոլոն» կոչվող կիսաստրուկներին: Այս տեսակետից խիստ ուշագրավ է, որ Ստրաբոնը Վրաստանի հասարակության չորրորդ դասը անվանում է թագավորական հողի վրա նստած «լաոյներին» և նրանց կոչում է «թագավորական ստրուկներ»: Անկասկած է, որ այս նույն դասը գոյություն ուներ նաև Հայաստանում և, ամենայն հավանականությամբ, այդ դասը կազմում էին դաստակերտների կիսաստրուկ կամ կախյալ հողագործները:

Պետական կարգը

Հայկական պետությունն իր բնույթով հելլենիստական տիպի կենտրոնացած ստրկատիրական պետություն էր:

Պետական կառավարման ձևը բացարձակ միապետությունն էր՝ թագավորի անսահմանափակ իրավունքով: Թագավորը ոչ միայն հանդիսանում էր երկրի գերագույն կառավարողը, այլև զորքի գերագույն հրամանատարը և երկրի գերագույն դատավորը: Նրա իրավունքի մեջ էին մտնում պատերազմ հայտարարելը, խաղաղության դաշնագիր կնքելը, պետական և զինվորական բարձր պաշտոնյաներ նշանակելը, պետական հարկեր սահմանելը և այլն: Դրամ կտրելու իրավունք ուներ միայն թագավորը: Հայ թագավորները կրում էին «Մեծ Հայքի թագավոր» կամ «թագավոր Հայոց մեծաց», իսկ Տիգրան II-ից սկսած՝ նաև «արքայից արքա» տիտղոսը:

Երկրի կառավարման, ներքին և արտաքին քաղաքականության մեջ կարևոր դեր էին կատարում թագավորի խորհրդականները: Սրանք բացառապես նշանակվում էին թագավորական տան անդամներից, ավագանու ներկայացուցիչներից և բարձրաստիճան քրմերից: Թագավորի առաջին խորհրդականներից մեկն էր քրմապետը:

Պետական կենտրոնական կարևոր գործադիր գերատեսչություններից էին հարկային-ֆինանսական, արքունի տնտեսություն կառավարման, պետական-հասարակական աշխատանքների, շինարարությունների կազմակերպման, ռազմական, դատական գերատեսչությունները, որոնք գտնվում էին ավագանու ձեռքում: Պետական ներքին ու արտաքին գրազրույթունը, օրենքների ու կարգադրությունները

րի հրատարակումը, հարկային ցուցակները և այլն կենտրոնացված էին արքունի գրասենյակում, որը կոչվում էր «ղիվան»: Այս գրասենյակում աշխատող գրագիրները կոչվում էին «ղպիր», իսկ նրանց պետը՝ «ղպրապետ» կամ «ղիվանապետ»:

Վարչական տեսակետից Հայաստանը բաժանված էր տասնհինգ նահանգների կամ «աշխարհների» և նրանց կազմի մեջ մտնող մեծ ու փոքր բազմաթիվ գավառների: Նահանգների վարչական բաժանման հիմքում մեծ մասամբ ընկած էին նախկին ցեղային մեծ միությունների կամ պետական միավորումների տարածքները, իսկ գավառների հիմքում՝ նախկին ցեղային երկրները: Թեև Հայաստանի վարչական բաժանման մանրամասնությունները մեզ հայտնի են ավելի ուշ շրջանի սկզբնաղբյուրներից, բայց ուսումնասիրողները իրավացի կերպով գտնում են, որ այդ բաժանումը կատարվել է Տիրգրան II-ի ժամանակ, քանի որ բոլոր նահանգները Հայաստանի կազմում են գտնվել միայն նրա թագավորության օրոք: Ք. հ. I դարի հոռոմեացի հեղինակ Պլինիոսը տեղեկացնում է, որ իր ժամանակ Հայաստանը բաժանված էր 120 ստրատեգիաների, այսինքն՝ ռազմավարչական շրջանների կամ զորավարությունների:

Թե՛ նահանգները և թե՛ գավառները կառավարվում էին թագավորի նշանակած կառավարիչների կողմից: Այս պաշտոններում մեծ մասամբ նշանակվում էին թագավորի ազգականները, մերձավորներն ու զինվորական հրամանատարները, իսկ երբեմն նաև տեղական ավագանու ներկայացուցիչներն ու ցեղային առաջնորդները: Նահանգների կառավարիչները կոչվում էին «աշխարհակալ» կամ «կուսակալ», իսկ գավառների կառավարիչները՝ «գավառակալ» կամ «կողմնակալ»:

Նահանգների ու գավառների կառավարիչների պարտականությունն էր հետևել տեղերում կարգի պահպանմանը, ճնշել առաջացած ապստամբություններն ու ելույթները, հետևել հարկերը ժամանակին հավաքելու և կենտրոն ուղարկելու գործին, վերահսկել պետական տնտեսությունների գործունեությունը և այլն: Հիշյալ խընդիրները կատարելու համար նրանք իրենց տնօրինության տակ ունեին զորամասեր, կայազորներ, վարչական ու հարկահավաք պաշտոնյաներ:

Արտաքին հարձակումներից երկիրը պաշտպանելու համար Հայաստանը ըստ աշխարհագրական կողմերի բաժանված էր սահմանապահ հորս խոշոր զինվորական իշխանությունների կամ շրջանների, որոնք կոչվում էին բղեշխություններ, իսկ այդ շրջանների զորա-

հրամանատարները՝ բղեչյալներ: Հայաստանի բոլոր նահանգներն ու գավառները կցված էին այդ բղեչյալություններին: Պատերազմի դեպքում նահանգների ու գավառների կառավարիչները իրենց տրամադրությունն տակ գտնվող զորամասերով պարտավոր էին ներկայանալ այն բղեչյալությունների զորահրամանատարներին, որոնց որ նրանք կցված էին: Սահմանապահ զինվորական այս իշխանությունները կամ չբժանները, ինչպես վկայում է Մովսես Խորենացին, կազմակերպել էր Արտաշես I-ը և այդ իշխանությունների զորահրամանատար նշանակել իր որդիներին ու իր զորավար Սմբատին: Ավելի ուշ՝ ավատատիրություն ժամանակ բղեչյալ կարևոր պաշտոնը անցնում է տեղական ավատատերերի ձեռքը: Հայկական սկզբնաղբյուրների վկայություններից Հայտնի են Ծովիքի, Աղձնիքի, Նոչիրականի և Գուգարքի բղեչյալությունները:

Տիգրան II-ի ժամանակ նվաճված երկրները վերածված էին առանձին փոխարքայությունների, որոնք կառավարվում էին Տիգրանի կողմից նշանակված փոխարքաների միջոցով:

«Շատ թագավորներ,– վկայում է Պլուտարքոսը,– սպասավորում էին Տիգրանին: Բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին լինում որպես ուղեկիցներ և թիկնապահներ, և երբ նա գնում էր ձիով, նրանք կարճ քիտոններ հագած, վազում էին առջևից, իսկ երբ նստած էր լինում և պաշտոնական գործերով էր զբաղվում, նրանք կանգնած էին լինում նրա շուրջը՝ իրար ձեռքից բռնած»:

Պլուտարքոսի այս վկայությունից երևում է, որ Պարսկաստանի և Արևելքի շատ երկրների նման Հայաստանում ևս իրենց գոյությունը պահպանել էին նախկին պետական մանր միավորումների թագավորիկները, ցեղային միությունների և ցեղերի առաջնորդները: Ենթադրվում է, որ այս վկայության մեջ նշված չորս թագավորները ոչ այլ ոք են, եթե ոչ V դարի Հայ մատենագիրների վկայություններից Հայտնի Հայաստանի չորս բղեչյալները, որոնք սկզբում եղել են ինքնիշխան մանր թագավորներ, իսկ հետագայում նվաճման իրավունքով ենթարկվել են Մեծ Հայքի թագավորներին և դարձել նրանց ենթակաները:

Պետական տնտեսական-ֆինանսական միջոցները գոյանում էին հիմնականում պետական տնտեսություններից, արհեստանոցներից, հանքերից ու ձկնորսարաններից ստացվող եկամուտներից, քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկերից, տուրքերից ու մաքսից: Ք. ա. II-I դարերում Հայկական պետության եկամուտի կարևոր աղբյուրներ էին նաև պատերազմի միջոցով ձեռք բերվող

ավարը և նվաճված երկրներից գանձվող հարկերը:

Բանակը

Հայկական բանակը պարտադիր զինվորական ծառայություն հիման վրա ազատ բնակչության բոլոր խավերից հավաքագրված բանակ չէր: Բանակի կորիզը կազմում էր արքունի մշտական զորքը, որի կազմը համալրվում էր արտոնյալ խավերից: Պատերազմի դեպքում բանակը համալրվում էր նաև աշխարհագորային, իսկ երբեմն նաև զորակոչային հիմունքով քաղաքային ու շինականներից կազմված զորամասերով: Հայկական բանակի մաս էին կազմում նաև ցեղային սկզբունքով կազմակերպված զորամասերը, որոնք կոչվում էին իրենց առաջնորդների հրամանատարությունում ու ղեկավարությունում՝ ենթարկվելով միաժամանակ բանակի գլխավոր հրամանատարությանը:

Հայկական բանակը բաժանվում էր զնդերի, գումարտակների, վաչտերի և ավելի մանր ստորաբաժանումների, թեև զինվորական այդ ստորաբաժանումների թվական կազմի և նրանց ներքին կառուցվածքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել: Բանակը կազմված էր թեթևազեն և զրահավորված հեծյալ ու հետևակ զորամասերից, պարիսպներ քանդող սակրավոր ջոկատներից, օժանդակ ուժերից և գումակից: Իր մարտունակությունը Արևելքում հատկապես հռչակված էր հայկական հեծելազորը կամ «հայոց այրուձին»:

Հունա-հռոմեական սկզբնաղբյուրները վկայում են, որ Տիգրան II-ի ժամանակ հայկական բանակը բաղկացած էր 300 հազար մարդուց: Այդ բանակի մեջ անշուշտ մտնում էին նաև հպատակեցված ու դաշնակից երկրների օժանդակ զորամասերը: Բուն հայկական զորքի թիվը հավանաբար հասնում էր մոտ 120 հազարի:

Բանակի գերագույն հրամանատարը և մեծ մասամբ զորքին առաջնորդողը պատերազմում հանդիսանում էր թագավորը: Սակայն բանակը ուներ նաև իր գլխավոր հրամանատարը, որ կոչվում էր սպարապետ:

Հայկական բանակում մարտիկները զինված էին երկար նիզակներով, տեգերով, սրերով, թրերով, դաշույններով, վաղը ու սակր կոչվող տապարներով, նետ ու աղեղով: Թշնամու հարվածներից իրենց դեմքը պաշտպանելու համար մարտիկները կրում էին վահաններ, իսկ գլուխն ու իրանը պաշտպանելու համար հագնում էին մետաղե լարերից կամ թերթերից պատրաստված սաղավարտներ ու զրահներ: Հայերը թշնամու դեմ օգտագործում էին նաև կեռ ճանկերով, թունավորված նետի սլաքներ:

ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
I-III ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Առաջին դարի սկզբից Հայաստանը կորցնում է իր պետական անկախությունը և դառնում մեծապես Հռոմին ենթարկված երկրներից մեկը: Հայաստանը աստիճանաբար պրովինցիալի վերածելու նպատակով հռոմեացիները սկսում են այնտեղ նշանակել ծագումով օտար թագավորներ: Հռոմի դրածո այս թագավորները հայկական գահի վրա իրենց զգալով ժամանակավոր և անապահով՝ ոչ միայն չէին պաշտպանում երկրի շահերը, այլև, որքան կարելի է, կողոպտում էին այն: Սրանք մեծ մասամբ իրենց տիրապետությունը պահպանում էին հռոմեական ռազմական ուժերի միջոցով:

Ի պատասխան Հռոմի այս քաղաքականության Հայ ժողովուրդը նոր ապստամբություններ է բարձրացնում: Նա Հռոմի դեմ անհավասար, բայց հերոսական պայքար է մղում, համառ ջանքեր է գործադրում՝ իր պետականությունը և անկախությունը վերականգնելու համար:

Տիգրան IV-ի սպանությունից և էրատո թագուհու՝ գահից հրաժարվելուց հետո 2 թ. Օգոստոսի որդեգիր Գայոս Կեսարը, որը դեռ գտնվում էր Արևելքում, հայկական գահը հանձնում է Ատրպատականի թագավոր Արիտրարզանին՝ փաստորեն Հայաստանը միացնելով Ատրպատականի հետ: Այս երևույթը խոր վիրավորանք է պատճառում Հայ ժողովրդին և հայկական ավագանուն, որովհետև Ատրպատականը ոչ հեռու անցյալում գտնվում էր Հայաստանի տիրապետության տակ և հանդիսանում էր նրա ենթակա երկրներից մեկը:

Հայ ժողովուրդը, վրդովված դրանից, ապստամբություն է բարձրացնում, բայց Գայոս Կեսարը հռոմեական ուժերով ճնշում է այն:

Միայն Արտագերս ամրոցը չարունակում է համառ դիմադրություն ցույց տալ թշնամուն: Գայոս Կեսարը գալիս է պաշարված բերդի մոտ: Բերդապահ զորքի հրամանատար Աղդոնը բերդի պարիսպների տակ կեղծ բանակցություններ է սկսում Գայոս Կեսարի հետ և նրան է հանձնում ամրոցում պահվող արքունի գանձերի ցուցակը: Երբ ընչաքաղց հոտմեացի զորավարը ուշադիր կերպով ծանոթանում էր այդ ցուցակին, Աղդոնը դաշույնով մահացու հարվածներ է տալիս նրան և թաքնվում է բերդում: Ստացած վերքերից էլ Գայոս Կեսարը հետագայում մահանում է: Գազազած հոտմեացիները երկարատև պաշարումից հետո հրեհհուն և գրավում են Արտագերսը և քանդում նրա պարիսպները: Աղդոնը թշնամիների ձեռքը կենդանի չընկնելու համար ամրոցի աշտարակից իրեն զցում է խարույկի մեջ:

Արիորարզանի գահակալությունը Հայաստանում երկար չի տևել: Երկու տարի հետո 4 թ. սա, ինչպես վկայում է Տակիտոսը, մահանում է պատահական մահով: Պետք է կարծել, որ հայերը սրան թունավորել կամ այլ միջոցով սպանել ու վերացրել են մեջտեղից:

Հայաստանի գահը Օգոստոսը հանձնում է Արիորարզանի որդուն՝ Արտավազդ IV-ին: Սակայն հայերը, հավանաբար մեկ տարի հետո, 5 թ. նոր ապստամբություն են բարձրացնում և սպանում են նաև հոտմեական այս նոր դրածոյին:

Հայ ժողովրդի համառ դիմադրությունը, Արիորարզանի կասկածելի պատահական մահը և Արտավազդ IV-ի սպանությունը հարկադրում են Հոմերի հրաժարվելու Հայաստանը Ատրպատականի հետ միացնելու իր ծրագրից: 6 թ. Օգոստոսը Հայաստանում թագավոր է նշանակում Տիգրան V-ին՝ Հրեաստանի Հերովդես թագավորի թոռանը: Իր կտակի մեջ Օգոստոսը հայտնում է, որ սա «հայոց արքունի տոհմից էր»: Սակայն իրականում նա ծագումով հրեա էր և միայն մոր կողմից հեռավոր ազգակցական կապ ուներ Արտաշեսյան թագավորական տան հետ:

Նույն 6 թ. հայերը նոր ապստամբություն են բարձրացնում: Նրանք հոտմեացիներին և Տիգրան V-ին դուրս վտարելով Հայաստանից կրկին գահ են բարձրացնում Արտաշեսյան թագավորական տոհմի վերջին ներկայացուցիչ էրատո թագուհուն: Սակայն սա արդեն ծերացած լինելով, չի կարողանում երկիրը կառավարել, որի պատճառով էլ կարճ ժամանակից հետո հեռացվում է գահից: Դրանից հետո մի քանի տարի Հայաստանը մնում է առանց թագավորի:

6 թ. ապստամբությունից հետո Հայաստանը, ազատագրվելով Հոմերի գերիշխանությունից, ավելի քան հինգ տարի ինքնուրույնու-

թյուն է ձեռք բերում: Սակայն հայ ավագանին չի կարողանում օգտագործել այդ ժամանակը՝ երկրում կայուն պետականություն ստեղծելու համար: Դրան մեծ չափով խանգարում են ավագանու տարրեր հոսանքների միջև գոյություն ունեցող հակասությունները և դրանց միջև մղվող պայքարը:

11 թ. պարթևական գահին տիրում է ծագումով Արշակունի, վարչական ու ռազմական մեծ ընդունակություններ ունեցող Արտավան III-ը (11-40): Սա ճակատամարտում հաղթում և երկրից դուրս է վտարում Հռոմի կողմնակից ու կամակատար Վոնոն թագավորին, որը մինչև թագավոր դառնալը երկար ժամանակ ապրել ու դաստիարակվել էր Հռոմում:

Պարտված և գահընկեց արված Վոնոնը գալիս է Հայաստան, որի գահը դեռևս թափուր էր: Նա հռոմեացիների և նրանց կողմնակից հայկական ավագանու ներկայացուցիչների օգնությամբ գրավում է հայկական գահը և կարճ ժամանակով դառնում է Հայաստանի թագավոր (12-16): Սրա գահակալության շրջանում Հայաստանը կրկին ընկնում է Հռոմի գերիշխանության տակ:

Իհարկե, Արտավան III-ը երկար չի կարող հանդուրժել իր հակառակորդի գահակալությունը Հայաստանում: Նա, երկրում իր իշխանությունը ամրապնդելուց հետո, պատերազմի սպառնալիքով Հռոմից պահանջում է իր ախոյանին հեռացնել Հայաստանից: Խուսափելով Արևելքում վտանգավոր պատերազմից՝ Հռոմը բավարարում է Արտավանի պահանջը, մանավանդ որ, ինչպես վկայում է Հովսեպոս Փլավիոսը՝ «Հայաստանի մեծամեծները, որոնք Նպատ լեռան շուրջն էին բնակվում, հարել էին Արտավանին»: Օգոստոսին հաջորդած Տիրերիոս կայսեր (14-37) կարգադրությամբ Ասորիքի հռոմեական կուսակալը 16 թ. իր մոտ է հրավիրում Վոնոնին և ձերբակալում է:

Տիրերիոսը չուտով Արևելք է ուղարկում իր որդեգիր Գերմանիկոսին: Սա 18 թ. հռոմեական զորքերով գալիս է Արտաշատ և հայերի համաձայնությամբ Հայաստանի թագավոր է հռչակում Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդուն՝ Ջենոնին, որն ամենավաղ մանկությունից ապրել էր հայկական միջավայրում և յուրացրել էր հայերի սովորույթներն ու բարքերը: Հայերը փոխում են սրա օտար ու խորթ անունը և վերանվանում են Արտաշես:

Ջենոն-Արտաշես III-ը (18-34) Հռոմի կողմից Հայաստանում նշանակված օտարազգի թագավորներից միակն է, որ թագավորել է բավական երկար, մոտ 17 տարի, և մահացել իր բնական մահով: Այս հանգամանքն, անշուշտ, պետք է բացատրել նրանով, որ նա ոչ միայն

վարել է մեղմ և համեմատաբար Հոռմից անկախ քաղաքականու-
թյուն, այլև պայքարել է երկրի ինքնուրույնություն համար:

Զենոն-Արտաշեսի գահակալության ժամանակ Հայաստանում
հաստատվում է խաղաղություն: Սակայն այդ խաղաղությունը նրա
մահից հետո կրկին խախտվում է. Հայաստանի համար նոր պայքար
է սկսվում Պարթևական թագավորության և Հռոմեական կայսրու-
թյան միջև:

Արտավան III-ը, որը Իրանի հարևան ցեղերի դեմ մղած հաղթա-
կան կռիվների ընթացքում զգալի չափով ամրապնդել, ընդարձակել
և հզորացրել էր Պարթևական թագավորությունը, Զենոն-Արտաշեսի
մահից հետո 34 թ. հայկական ավազանու համաձայնությամբ իր
անդրանիկ որդուն՝ Արչակին դարձնում է Հայաստանի թագավոր:
Հայերը համակրանքով են ընդունում Արչակ I-ի (34-35) գահակալու-
թյունը, որովհետև նրանք, թեկուզ և Հայաստանը Արչակունիների
հարստության պետական համակարգի մեջ մտցնելու պայմանով,
ձգտում էին վերականգնել երկրի պետական անկախությունն ու ինք-
նուրույնությունը:

Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխությունը մեծ հարված
է հասցնում Արևելքում Հռոմի հեղինակությունը և խոշոր վտանգ էր
ստեղծում հռոմեական մյուս տիրապետությունների համար, մանա-
վանդ որ Արտավան III-ը Կապադովկիայում, Պոնտոսում և մյուս
երկրներում սկսել էր հակահռոմեական ապստամբություններ հրա-
հրել: Հռոմեական կայսրությունն իր ուժերն ու մեքենայությունները
լարում է առաջացած այս վտանգը վերացնելու և Հայաստանում իր
գերիշխանությունը վերականգնելու համար: Նա ոչ միայն նոր խոշոր
ուժեր է ուղարկում Արևելք, այլև իրերներին, աղվաններին և Կով-
կասի լեռնականներին դուրս է բերում պարթևների ու հայերի դեմ:

Այս ժամանակ հռոմեացիներին հաջողվել էր խախտել անդրկով-
կասյան ժողովուրդների բարեկամությունն ու միասնությունը: Իրե-
րական և աղվանական իշխող վերնախավերը, վախենալով Պար-
թևական թագավորության հետագա ուժեղացումից, անցել էին Հռո-
մի կողմը: Հատկապես Իբերիայի Փարսման թագավորը դարձել էր
Հռոմի «բարեկամն ու դաշնակիցը»:

Հռոմեացիների թելադրանքով 35 թ. Փարսմանը և նրա եղբայրը՝
Միհրդատը կաշառքի ու դավադրության միջոցով պալատական ծա-
ռայողների ձեռքով Արչակին թունավորելուց հետո մեծ զորքով հար-
ձակվում են Հայաստանի վրա և գրավում Արտաշատը: Արտա-
վան III-ը լուր ստանալով որդու սպանության մասին՝ իր մյուս որ-

դուն՝ Օրոդեսին գորքով ուղարկում է Հայաստան՝ իրերներից վրեժ լուծելու համար: Սակայն Փարսմանը և Միհրդատը աղվաններից և Կովկասի լեռնականներից օգնական մեծ ուժեր ստանալով՝ հաղթում են Օրոդեսին: Դրանից հետո Արտավանը ինքը մեծ գորքով չարժվում է Հայաստան: Սակայն հենց այդ ժամանակ հոռմեացիները ոչ միայն իրենց գորքերով սկսում են սպառնալ Պարթևական թագավորությունը սահմաններին, այլև ապստամբություն են առաջացնում Տիգրանում և պարթևական ավագանու ղեգոհ մասի միջոցով գահ են բարձրացնում իրենց կամակատարներից մեկին: Արտավանը ստիպված է լինում առժամանակ փախչել Վրկանաց աշխարհ:

Այսպիսով, Հոռմին կրկին հաջողվում է իր գերիշխանությունը վերահաստատել Հայաստանում: Հոռմեացիների համաձայնությունամբ հայկական գահին տիրում և Հայաստանի թագավոր է դառնում Փարսմանի եղբայրը՝ Միհրդատը: 37 թ. պարթևական գահի վրա վերահաստատված Արտավանը ստիպված է լինում հաշտություն կնքել հոռմեացիների հետ:

Տիրերիոսին հաջորդած Կալիգուլա կայսրը (37–41) հավանաբար պարթևների հետ նոր ընդհարումներ չառաջացնելու, Հոռմի ծախսերը կրճատելու նպատակով, սակայն Հայաստանի ինքնուրույնությունը պահպանման և պարթևների կողմից չգրավվելու պայմանով Հայաստանի թագավոր Միհրդատին 37 թ. կանչում է Հոռմ, ձերբակալում է և աքսորում:

Սակայն Հոռմի նոր կայսր Կլավդիոսը (41–54), օգտվելով Արտավան III-ի մահից հետո պարթևների մոտ առաջացած գահակալական կռիվներից, որոշում է Հայաստանը կրկին ենթարկել Հոռմի տիրապետությանը: Այդ նպատակով նա 43 թ. աքսորից ազատում է Միհրդատին և նրան հոռմեական գորքեր տալով, ուղարկում է Հայաստան, միաժամանակ կարգադրելով Փարսմանին իրերական գորքերով օգնելու իր եղբորը: 43 թ. արևմուտքից՝ հոռմեական, իսկ հյուսիսից՝ իրերական գորքերը միաժամանակ հարձակվում են Հայաստանի վրա: Հայերը հայկական բանակի սպարապետ Գիսակ Դիմաքսյանի գլխավորությամբ դիմադրություն են ցույց տալիս երկիրը ներխուժած թշնամիներին: Սակայն հոռմեական և իրերական գորքերն իրենց ունեցած գերակշռության շնորհիվ հաղթահարում են հայերի դիմադրությունը և վերանվաճում Հայաստանը:

47 թ. հայկական գահի վրա կրկին հաստատվում է Միհրդատը: Սրա իշխանության մասին Տակիտոսը վկայում է, որ «ավելի դաժան էր, քան հարմար էր նոր թագավորության»: Հայերը, բնականաբար,

ատելությամբ էին լցված հոռմեական այս դրածոյի հանդեպ: Այդ պատճառով էլ, ինչպես վկայում է նույն Տակիտոսը, Միհրդատը Հայաստանին տիրում էր Գառնի բերրում և այլ վայրերում գտնվող հոռմեական գորքերի ուժերով: Միհրդատը զոհ է գնում իր հարազատ եղբոր՝ Փարսմանի և սրա որդու կազմակերպած դավադրությանը:

Փարսմանը ուներ Հռադամիզդ անունով փառասեր, իշխանասեր և ամեն վատ բանի ընդունակ մի որդի: Սա ծրագրում է գրավել իր հոր գահը: Սակայն Փարսմանը, վտանգն իրենից հեռացնելու նպատակով իր որդուն մատնացույց է անում Հայաստանի գահը և խորհուրդ տալիս դավադրության միջոցով սպանել Միհրդատին, որը ոչ միայն իր եղբայրն էր, այլև իր աղջկա ամուսինը և Հռադամիզդի աները:

Հռադամիզդը իր հորեղբոր հետ կեղծ բարեկամություն հաստատելուց և դժգոհ հայ մեծամեծներից շատերին իր կողմը գրավելուց հետո 51 թ. իբերական գորքերով հարձակվում է Միհրդատի վրա, իսկ սա հանկարծակի հարձակումից ահաբեկված, բուն երկրի բնակչության մեջ ոչ մի հենարան չունենալով՝ փախչում է Գառնի ամրոցը և ապավինում հոռմեական կայազորի պաշտպանությանը: Հռադամիզդը պաշարում և գրոհով փորձում է գրավել Գառնին, սակայն դա նրան չի հաջողվում: Դրանից հետո նա կաշառում է հոռմեական կայազորի ազահ հրամանատար, պրեֆեկտ Կելիոս Պոլլիոնին, որը Միհրդատին հանձնում է իր հակառակորդի ձեռքը: Հռադամիզդը Միհրդատին և նրա կնոջը, այսինքն իր քրոջը խեղդել է տալիս ծանր գորգերի տակ, որովհետև խոստացել էր նրանց չսպանել ոչ սրով և ոչ էլ թույնով: Հռադամիզդը սպանել է տալիս նաև Միհրդատի որդիներին այն պատճառաբանությամբ, որ սրանք լաց էին եղել իրենց ծնողների եղբրական սպանության ժամանակ:

Միհրդատի սպանության լուրը Արևելքի հոռմեական բարձրատիճան կառավարիչներն ու հրամանատարներն ընդունում են բացահայտ անտարբերությամբ և նույնիսկ ուրախությամբ: Նրանք խորհրդակցություն են գումարում՝ Հայաստանում ստեղծված դրությունը քննարկելու համար: Այստեղ շատերը գտնում են, որ Հռոմի քաղաքական շահերի և անվտանգության տեսակետից օտարների ամեն մի ոճրագործություն պետք է ընդունվի ուրախությամբ, որ նույնիսկ անհրաժեշտ է նրանց մեջ առաջ բերել ատելություն և երկպառակություններ: Խորհրդակցություն մասնակիցները, ինչպես վկայում է Տակիտոսը, գալիս են այն եզրակացություն, որ «Թող Հռադամիզդն ունենա իր իշխանության տակ հանցանքով ձեռք բերածը, միայն թե նա լինի ատելի ու վատանուն, որովհետև այդ ավելի օգուտ կբերե,

քան եթե նա վտարվելու լինի փառքով»:

51 թ. Կապաղովկիայի հոռոմեական կաշառված կուսակալի ներկայությամբ Հոաղամիզդը Արտաշատում հայտարարվում է Հայաստանի թագավոր:

Իր հայրենիքի անկախություն և պետականություն վերականգնման համար պայքարող հայ ժողովուրդը, բնական է, որ ավելի խոր ատելություն պետք է լցվեր մարդկային բարոյականությունից զուրկ, դաժան ու ոճրագործ Հոաղամիզդի և սրան հովանավորող հոռոմեացիների հանդեպ:

51 թ. իր եղբայրների համաձայնությամբ գահ է բարձրանում պարթևական ամենանշանավոր թագավորներից

Տրդատ I-ի գահակալությունը

մեկը՝ Վաղարշ I-ը (51-75): Սա իր գահակալության հենց սկզբից վճռական պայքար է մղում հոռոմեական ազդեցություն դեմ, մեծ դարկ է տալիս իրանական մշակույթի դարգացմանը, վերականգնում է զրադաշտական կրոնը և հավաքում այդ կրոնին վերաբերող հին գրքեր:

Վաղարշը գահակալական հնարավոր կոիվները կանխելու նպատակով իր Բակուր եղբորը դարձնում է Ատրպատականի թագավոր, որը դեռևս առաջին դարի սկզբից անցել էր պարթևների գերիշխանության տակ: Նա որոշում է նաև հոռոմեացիներին ու նրանց կամակատար Հոաղամիզդին դուրս քշել Հայաստանից և հայկական գահը տալ իր մյուս եղբորը՝ Տրդատին, իսկ Հայաստանը դարձնել Արշակունյաց տոհմի երկրորդ ինքնուրույն թագավորությունը: Սրանով Վաղարշը ձգտում էր նաև իր թագավորության սահմաններն ապահովել հոռոմեական վտանգից և դաշինք կնքել հայերի հետ:

Հայաստանում գերիշխանություն հաստատելու համար Հռոմի և Պարթևական թագավորության միջև մղվող պայքարի ընթացքում հայկական ավագանու ճնշող մեծամասնությունը թեքված էր պարթևների կողմը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ պարթևները չէին սպառնում Հայաստանի ինքնուրույնությունը և նրա տարածքային ամբողջությունը, մինչդեռ հոռոմեացիները ձգտում էին Հայաստանը վերածել հոռոմեական պրովինցիայի: Բացի այդ, հայերը ոչ միայն իրենց երկրի դիրքով, բարքերով ու նիստուկացով, իրենց հասարակական, քաղաքական, զինվորական կազմակերպության նմանությունները շատ մոտ էին պարթևներին, այլև նրանց հետ կապված էին մշակութային, կրոնական և ամուսնական փոխադարձ կապերով: Մինչդեռ «Հայերը, - ինչպես վկայում է Տակիտոսը, - լի էին

ատելությամբ դեպի Հոռոմեացիները»:

Երկիրը Հոռոմեացիների տիրապետությունից դուրս բերելու և կայուն պետականություն ստեղծելու նպատակով հայկական ավագանին ընդառաջելով Վաղարշ I-ի ցանկությունը՝ համաձայնություն է գալիս նրա հետ, որպեսզի հայերն ու պարթևները համատեղ կերպով պայքարեն Հռոմի դեմ, և Տրդատը դառնա Հայաստանի թագավոր:

52 թ. Վաղարշը և Տրդատը պարթևական զորքերով մտնում են Հայաստան: Արտաշատը և Տրգրանակերտը հոժարակամ իրենց դռները բացում են պարթևական զորքի առաջ: Պարթևները և ապրտամբույթուն բարձրացրած հայերը երկրից դուրս են քշում Հոռոմեացիներին և նրանց «դաշնակից» իրերներին: Հռոգամիզդը առանց դիմադրություն ցույց տալու փախչում է իր հոր մոտ՝ Իբերիա, Տրդատը հայտարարվում է Հայաստանի թագավոր: Սակայն վրա հասնող դաժան ձմեռը, պաշարի պակասությունը և զորքի մեջ առաջացած համաճարակը հարկադրում են Վաղարշին ու Տրդատին՝ իրենց զորքերով ժամանակավորապես թողնել Հայաստանը:

Հռոգամիզդը օգտվելով պարթևների հեռանալուց՝ 53 թ. իբերական զորքով կրկին ներխուժում է Հայաստան և սկսում դաժան հաշվհարդար տեսնել ապստամբած ու պարթևների կողմն անցած հայերի հետ: Համբերությունից դուրս եկած հայերը զինված ջոկատներով չըջապատում են թագավորական պալատը և փորձում են սպանել Հռոգամիզդին: Հայերի վրեժխնդրությունից ազատվելու համար Հռոգամիզդը ապավինում է իր ձիերի արագավազությունը և կնոջ հետ փախչում դեպի Իբերիա: Սակայն նրա հղի կինը, չզիմանալով փախուստի ճանապարհի դժվարություններին և ցնցահար լինելով, աղերսում է ամուսնուն, որ իրեն պատվավոր մահով ազատի գերություն անարգանքից: Հռոգամիզդը, վարժված լինելով դաժանությունների ու հանցագործությունների մեջ և վախենալով, որ ուրիշը կտիրանա իր կնոջը, եթե ինքը կենդանի լքի նրան, դաշույնահարում է նրան և զցում Արաքս գետը: Սակայն շուտով հովիվները փրկում են դժբախտ ու կիսամեռ թագուհուն, կապում ու գյուղական դեղերով բուժում են նրա վերքերը, այնուհետև ուղարկում Տրդատի մոտ, որն ընդունում է նրան սիրալիբ կերպով և պահում արժանավայել պատվով:

Հայերի բարձրացրած այս նոր ապստամբությունից հետո, 54 թ., Տրդատը պարթևական զորքերով կրկին գալիս է Հայաստան և վերահաստատվում հայկական գահի վրա:

Տրդատ I-ի գահակալությունը ոչ միայն Հայաստանում փաստորեն

հիմնադրվում է հայ Արչակունյաց թագավորական հարստությունը, այլև վերանում է հոռմեական տիրապետությունը, որի հաստատման ու պահպանման համար Հոռմը մոտ հարյուր տարվա ընթացքում ապարդյուն կերպով հսկայական ուժեր ու նյութական միջոցներ էր ծախսել: Հայաստանում հոռմեական տիրապետության այսպիսի անկայուն վիճակը առաջին հերթին իր հայրենիքի անկախության համար պայքարող հայ ժողովրդի, իսկ այնուհետև պարթևների համառու երկարատև դիմադրության հետևանք էր:

Կորբուլոնի արչավանքը

Արչակունյաց արքայատան և պարթևական գերիշխանության հաստատումը Հայաստանում առաջ է բերում նոր պատերազմ հոռմեական կայսրության և Պարթևական թագավորության ու նրա դաշնակից Հայաստանի միջև, որը տևում է տասը տարի (54-64):

Հոռմեական տիրապետությունը Հայաստանում վերականգնելու նպատակով նոր գահ բարձրացած Ներոն կայսրը (54-68) Արևելք է ուղարկում հոռմեացի հայտնի զորավար Կորբուլոնին: Սա, գալով Արևելք, ձեռնամուխ է լինում Հայաստանի դեմ նոր արչավանքի նախապատրաստմանը:

Տասնամյա պատերազմի առաջին չորս տարիների ընթացքում կողմերի միջև փոփոխակի հաջողություններով տեղի են ունենում միայն փոքր ու սահմանային ընդհարումներ: Երկու կողմերն էլ առժամանակ խուսափում են պատերազմական խոշոր գործողություններից: Սակայն շուտով այս դրությունը խախտվում է, և պատերազմը սուր ընթացք է ընդունում:

58 թ. գարնանը Կորբուլոնը, օգտվելով Վրկանաց աշխարհում պարթևների դեմ առաջացած ապստամբությունից և պարթևական զորքի այնտեղ զբաղված լինելուց, հոռմեական մեծ ուժերով ներխուժում է Հայաստան: Նրա թելադրանքով նույն այդ ժամանակ Հայաստանի վրա են հարձակվում նաև հարավից Կոմմագենեի Անտիոքոս, հյուսիսից՝ Իբերիայի Փարսման թագավորները, հենիոխները և Հոռմի մյուս դաշնակիցները: Հայաստանի համար ստեղծվում է ծանր դրություն: Տրդատը իր եղբորից՝ Վաղարշից ոչ մի օգնություն չստանալով, ստիպված է լինում հոռմեացիների և նրանց դաշնակիցների դեմ կռվել միայն հայկական ուժերով: Նա առավելապես մղում է մանր պարտիզանական կռիվներ և աշխատում է խանգարել Սև ծովի նավահանգիստներից ստացվող հոռմեական զորքի պարենավորումը:

Կորբուլոնը, երբ նկատում է, որ Տրդատը խուսափում է վճռական

ու կանոնավոր ճակատամարտից, իր գորքերով չարժվում է դեպի Արտաշատ: Հոռոմեացիները իրենց հաղորդակցության ճանապարհները ապահովելու և հայկական գորքերին հենակետերից զրկելու նպատակով Արտաշատի ճանապարհին պաշարում ու գրավում են մի քանի ամրոցներ, որոնց բոլոր չափահաս բնակիչներին սրի են անցկացնում, իսկ անոռոմեացիներին՝ ստրկություն վաճառում:

Արտաշատին սպառնացող վտանգը վերացնելու համար Տրդատը իր գորքերով մայրաքաղաքի մատույցների մոտ չրջապատում է հռոմեական արշավող բանակը և հարձակվում նրա վրա, բայց առանձին հաջողություն չի ունենում: Այս անհաջող ընդհարումից հետո Տրդատը ստիպված է լինում իր գորքերով Հայաստանից նահանջել Ատրպատական:

Տրդատի հեռանալուց հետո Կորբուլոնը առանց կռիվ գրավում է Արտաշատը և իր բանակի հետ 58-59 թթ. ձմեռը անցկացնում է այնտեղ: 59 թ. գարնանը հռոմեական զորքը դուրս գալով Արտաշատից՝ շարժվում է դեպի Տիգրանակերտ: Նախքան հեռանալը հռոմեացիները Կորբուլոնի հրամանով հրդեհում, քարուքանդ են անում ու հողին են հավասարեցնում Արտաշատը: Կորբուլոնը այս վայրագությունը արդարացնում էր նրանով, որ Հայաստանի մայրաքաղաքն իր պարիսպների լայնածավալություն պատճառով առանց ուժեղ պահակազորի չէր կարելի պահպանել, իսկ ինքը այնքան ուժ չուներ, որ թե՛ Արտաշատը պահպաներ և թե՛ պատերազմ մղեր: Իրապես Արտաշատը կործանելու հիմնական պատճառը ոչ այնքան Կորբուլոնի՝ ուժեղ չունենալն էր, որքան այն, որ Հայաստանի մայրաքաղաքը հակահռոմեական շարժումների ու պայքարի, հետևապես և Հայաստանի անկախության ձգտող ուժերի միավորման հիմնական կենտրոնն էր:

Արտաշատի կործանումը ավելի ևս ուժեղացնում է հայ ժողովրդի մեջ ատելությունը հռոմեական զավթիչների նկատմամբ: Վերժխընդրությունը լցված հայերը Արտաշատից դեպի Տիգրանակերտ շարժվող հռոմեական բանակի դեմ մղում են պարտիզանական ուժեղ կռիվներ: Թշնամու գորքերը հատկապես հանդուգն և խիստ հարձակումների են ենթարկվում Արածանիի վերին հովտի լեռնային չրջաններում: Հռոմեական բանակին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս նաև ճանապարհի վրա գտնվող ամրոցները, որոնցից երկուսը հռոմեացիները պաշարելուց և կատաղի կռիվից հետո կարողանում են գրավել:

Չնայած հայերի ցույց տված դիմադրությանը՝ այնուամենայնիվ Կորբուլոնին հաջողվում է իր գորքերով Տարոնի վրայով մոտենալ

Հայաստանի երկրորդ մայրաքաղաքին: Տիգրանակերտի մեծ մասամբ օտար ու հելլենականացած բնակիչները, որոնք առևտրատնտեսական սերտ կապերով կապված էին Ասորիքի ու Կապադովկիայի հետ և ավելի թեքված էին հոռմեացիների, քան պարթևների կողմը, քաղաքի դռները բաց են անում հոռմեական զորքի առաջ: Միայն քաղաքի անվախ երիտասարդությունը ամրանում է միջնաբերդում և համառ մարտեր է մղում թշնամու դեմ: Սակայն հոռմեացիներին վերջի վերջո հաջողվում է գրավել նաև միջնաբերդը: Կորբուլոնը սպանություններով ու հրդեհներով ավերում է նաև Հարավային Հայաստանի հայ ավագանու այն ներկայացուցիչների կալվածքները, բերդերը, որոնք թեքված էին պարթևների կողմը:

Հայաստանի վերանվաճման առթիվ Հոռմում կազմակերպվում են տոնահանդեսներ, կտրվում են պղնձե, արծաթե ու ոսկե դրամներ՝ «Հայաստանը նվաճված» և այլ մակագրություններով:

Ներոնի կողմից հայկական գահի համար նոր թեկնածու է ընտրվում Կապադովկիայի Արքեդայոս թագավորի ծոռը՝ Տիգրանը, որը 60 թ. գալիս է Հայաստան և Տիգրանակերտում գահ բարձրանում: Հայոց այս նոր թագավոր Տիգրան VI-ը (60-61), ինչպես վկայում է Տակիտոսը, երկար ժամանակ Հոռմում պատանդ լինելով՝ ձեռք էր բերել ստրուկներին հատուկ համբերություն ու ստորաքարչություն: Հակառակ հոռմեական զորքի ներկայությունը և հոռմեացիների գործադրած ահաբեկումներին, սրա թեկնածությունը Հայաստանում ընդունվում է բացահայտ դժգոհությամբ, որովհետև հայերի համակրանքը Տրդատի կողմն էր:

Կորբուլոնը Տիգրան VI-ի տրամադրությունն անհաճախ 5000 զորք թողնելուց հետո ինքը հոռմեական մնացած զորքերով Հայաստանից հեռանում է Ասորիք, որտեղ նա կուսակալ էր նշանակված Ներոնի կողմից:

61 թ. գարնանը հոռմեացիների թելադրանքով Տիգրան VI-ը հարձակվում է պարթևների գերիշխանությունն անհաճախ անցնելու վրա: Նա Հայաստանի սահմանակից այս երկիրը, ինչպես վկայում է Տակիտոսը, «ավերել էր ավելի լայն չափերով և ավելի երկարատև, քան լինում է ավագակության ժամանակ»: Հավանաբար, այս հարձակման նպատակն էր եղել ստիպել պարթևներին ընդունելու Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունը:

Տրդատի արտաքսվելը Հայաստանից և նրա փոխարեն Տիգրան VI-ի գահ բարձրանալը, ինչպես և այս վերջինի հարձակումը Ադիաբենների վրա պարթևական ավագանու շրջանում խիստ դժգոհություն-

ներ ու վրդովմունք են առաջ բերում Վաղարշ I-ի դեմ, որը Վրկանաց աշխարհում շարունակվող ապստամբությունն պատճառով երկմտանքի մեջ էր և անվճռականություն էր հանդես բերում հոռմեացիների նկատմամբ: Իր եղբորից խիստ դժգոհ էր նաև Տրդատը, որը նրան հանդիմանում և ասում էր. «Անգործությունը չէ, որ պահպանում են մեծ պետությունները, այլ մարդկանց ու զենքերի մրցակցությունը: Մարդկային բախտի գազաթնակետում նա է ավելի արդարը, ով ավելի ուժեղ է»:

**Պետոսի արչա-
վանքը և նրա
պարտությունը**

Վաղարշ I-ը հաշվի առնելով այս դժգոհու-
թյունները, անմիջապես հաշտություն է կնքում
Վրկանաց աշխարհի հետ, շտապ նոր, խոշոր ու-
ժեր է հավաքում և նույն ճ1 թ. պատերազմ է
սկսում Հոռմի և նրա կամակատար Տրգրան

VI-ի դեմ: Պարթևական բանակը բաժանվում է երկու մասի: Զորքի մի
մասը, Տրդատի հրամանատարությամբ, մտնում է Հայաստան, իսկ
մյուս մասը, իր՝ Վաղարշի ղեկավարությամբ, Միջագետքի կողմից
շարժվում է դեպի Ասորիք:

Կորբուլոնը լուր ստանալով պարթևների հարձակման մասին,
շտապ կերպով Տրգրան VI-ին օգնություն է ուղարկում երկու լեգեոն
զորք, իսկ ինքը ամրացնում է Եփրատ գետի ափը և այնտեղ պաշտ-
պանական դիրքեր գրավում, որպեսզի կասեցնի պարթևական զորքի
ներխուժումը Ասորիք: Նա համոզված լինելով, որ այժմ արդեն չի կա-
րող կովել ու հաղթել հայ-պարթևական միացյալ ուժերին, ինչպես և
վախենալով, որ վտանգավոր այս պատերազմում կարող է կորցնել
նաև նախկինում հեշտությամբ ձեռք բերած իր փառքը, խնդրում է
Ներոն կայսրից նոր զորավար ուղարկել Հայաստան: Նա իր այս խըն-
դիրքը պատճառաբանում էր նրանով, որ Ասորիքը գտնվում է
պարթևների ներխուժման վտանգի տակ և ինքը ստիպված է պաշտ-
պանել այն:

Տրդատի հրամանատարությամբ Հայաստան մտած պարթևական
զորքերը և նրանց միացած հայկական ուժերը շուտով գալիս են ու
պաշարում Տրգրանակերտը, որտեղ, ճակատամարտից խույս տալով,
ամրացել էին Տրգրան VI-ը և հոռմեական լեգեոնները: Հայ-պար-
թևական զորքերը գրոհով փորձում են գրավել քաղաքը, բայց դա
նրանց չի հաջողվում: Դրանից հետո նրանք որոշում են քաղաքը են-
թարկել երկարատև պաշարման և սովի սպառնալիքով ստիպել
թչնամուն անձնատուր լինել:

Կորբուլոնը մինչև նոր հրամանատարի գալը՝ ժամանակ չահելու,

պատերազմի պատասխանատուությունից խուսափելու և Տիգրանակերտում պաշարված հռոմեական լեգեոններին փրկելու նպատակով, Մծրին քաղաքում պարթևների առաջարկած պայմաններով զինադադար է կնքում Վաղարշ I-ի հետ: Ըստ զինադադարի պայմանների՝ Կորբուլոնը Տրդատին ճանաչում է իբրև Հայաստանի թագավոր: Միաժամանակ թե՛ Վաղարշ I-ը և թե՛ Կորբուլոնը Հայաստանից դուրս են բերում պարթևական ու հռոմեական զորքերը, ինչպես և Տիգրան VI-ին: Այսպիսով, կողմերի միջև կնքված համաձայնությունը, Տրդատի գահակալություն պայմանով Հայաստանը ճանաչվում է անկախ ու ինքնուրույն պետություն:

Վաղարշ I-ը զինադադարի պայմանների հիման վրա վերջնական հաշտություն կնքելու նպատակով ղեսպաններ է ուղարկում Հոռոմ: Սակայն Ներոն կայսրը մերժում է այդ պայմանները և ղեսպաններին ետ է ուղարկում ձեռնունայն:

Պատերազմը շարունակելու համար Ներոնը նոր բանակով Արևելք է ուղարկում Պետոս զորավարին: Սա գալով Կապադովկիա՝ Հայտարարում է, թե ինքը հաղթված Հայերի վրա հարկ է դնելու, նրանց ենթարկելու է հռոմեական օրենքներին և Հայաստանում թագավորի սովերի փոխարեն հաստատելու է հռոմեական իշխանություն: Այս Հայտարարությունից հետևում էր, որ հռոմեական կայսրությունը որոշել էր իսպառ վերացնել հայկական պետականությունը և Հայաստանը վերածել հռոմեական պրովինցիայի:

62 թ. ամռանը Պետոսը իր զորքերով Մելիտինեի մոտից անցնելով Եփրատ գետը, ներխուժում է Հայաստան և Տավրոսյան լեռների վրայով շարժվում է դեպի Տիգրանակերտ: Սակայն Հայերը ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, որի պատճառով էլ նրան հաղիվ է հաջողվում զրավել սահմանամերձ մի քանի ամրություններ: Պետոսը նկատի ունենալով վրա հասնող ձմեռվա ցրտերը, չուտով իր զորքերը ետ է տանում և բանակ է դնում Ուարբերդի դաշտում, Արածանիի ափին, Հռանդեա կոչվող վայրում:

Մեծամիտ հռոմեացի զորավարը սահմանամերձ վերահիշյալ ամրությունների գրավումը բավարար համարելով, մի ղեկուցագիր է գրում Ներոն կայսրին, որտեղ հայտնում է, որ իբր թե ինքը արդեն նվաճել է Հայաստանը, և վերջացել է պատերազմը: Սակայն իրականում չուտով նրան դառն ու խայտառակ պարտություն էր սպասում:

62 թ. աշնանը պարթևական հիմնական ուժերը Հյուսիսային Միջագետքից, իսկ հայկական զորքերը Տիգրանակերտից, գուցե և Տա-

րոնից ու այլ վայրերից շարժվում են Ծոփք՝ Պետոսի դեմ: Հայ-պարթևական զորքերը Տավրոսի լեռնանցքները պաշտպանող և դաշավայրի տարրեր մասերում գտնվող հոռմեական բոլոր զորամասերին գլխավոր ջախջախելուց հետո գալիս են ու շրջապատում Պետոսի ամրացված ճամբարը: Նրանք սկսում են ուժեղ ճնշում գործադրել, մոտիկից հարվածներ հասցնել և զգալի կորուստներ պատճառել պաշարված հոռմեացիներին: Հոռմեական բանակում խիստ կերպով ընկնում է կարգապահուիթյունը, և մեծ չափեր է ընդունում դասալքուիթյունը:

Պետոսը իր բանակի մնացած մասը վերջնական կործանումից փրկելու համար հաշտուիթյուն է խնդրում: Վաղարշ I-ը բանակցուիթյուններ վարելու և զինադադարի հաշտուիթյուն կնքելու համար Պետոսի մոտ է ուղարկում հայ զորավար Վասակին: Սա պահանջում է հոռմեացիներից անվերապահ կերպով անձնատուր լինել՝ հայտարարելով, որ Հայաստանը զրավելու կամ պահելու միայն պատրանքն է մնացել հոռմեացիների մոտ, իսկ իրական ուժը հայերի ու պարթևների ձեռքում է: Փոխադարձ քննարկումից հետո որոշվում է, որ հոռմեական լեգեոնները պետք է աղատվեն պաշարումից և անհապաղ հեռանան Հայաստանից՝ պարթևներին ու հայերին հանձնելով իրենց զրաված ամրուիթյունները, զենքերը և պարենի պաշարները:

Հայ զինվորները շրջափակելով ելքի բոլոր ճանապարհները և մտնելով հոռմեական ամրացված ճամբարը՝ սկսում են զինաթափել հոռմեացիներին, ետ խլել նրանցից զերիներին, անասունները և այն ամբողջ ավարը, որ նրանք թալանել էին Հայաստանում: Վախից սարսափած հոռմեացիները ձայն ու ծպտուն չեն հանում, որպեսզի կովի որևէ առիթ չծագի: Հոռմեական «անպարտելի» համարվող բանակը ենթարկվում է ստորացման, ծաղր ու ծանակի: Հայերը զինաթափված հոռմեացի զինվորներին ու հրամանատարներին ծնկաչոք անց են կացնում նիզակներով պատրաստված «լծի» տակով, որը այդ ժամանակ համարվում էր ամենամեծ ստորացումը և պարտվողների ստրկացման ապացույցը: Պետոսի և նրա բանակի մնացորդների հեռանալը Հայաստանից վերածվում է ամոթալի փախուստի: Նրանք մի օրվա ընթացքում, առանց ետ նայելու, փախչում են ավելի քան 60 կիլոմետր՝ ճանապարհին թողնելով վիրավորներին:

**Վաղարշ I-ը նոր դեսպաններ է ուղարկում
Հռոմ, որոնք այնտեղ են ժամանում 63 թ. գար-
նանը: Սրանք Ներոնին են հանձնում Վաղարշի
նամակը, որտեղ նա հայտնում էր, որ թեև
պարթևները հաղթել են Հռոմեացիներին և ու-
նեն զինվորական գերակշռություն, բայց առա-**

**ջարկվում է Տրդատին Հայաստանում թագավոր
ճանաչելու պայմանով հաշտություն կնքել: Ներոնը մերժում է հաշ-
տություն ատաջարկը, որովհետև այն համարում է Հռոմի համար
նվաստացուցիչ ու անպատվաբեր: Սակայն այս անգամ Վաղարշի
դեսպաններին նվերներ են տալիս և նրանց հասկացնում, որ պար-
թևների առաջարկած պայմաններով հաշտություն կկնքվի, եթե Տրե-
դատը անձամբ գա Հռոմ և իր թագը ստանա Ներոնի ձեռքից: Սրա-
նով Հռոմը ցանկանում էր մեղմացնել իր զորքերի ծանր պարտու-
թյան տպավորությունը և պահպանել իր վարկը Արևելքում:**

Ներոնը հայերի ու պարթևների դեմ պատերազմը շարունակելու
գործը կրկին հանձնարարում է Կորբուլոնին՝ տալով նրան պատե-
րազմ վարելու, հաշտություն կնքելու արտակարգ լիազորություններ:
64 թ. Կորբուլոնը խոշոր ուժերով մտնում է Ծոփք: Սակայն ելնելով
Հռոմից ստացած հրահանգներից՝ խուսափում է պատերազմից և աշ-
խատում է հաշտություն կնքել: Այդ նպատակով նա բանակցություն-
ներ է սկսում Վաղարշի և Տրդատի հետ:

Վաղարշը և Տրդատը Հայաստանը հետագա ավերումից ազատե-
լու և Հռոմի հետ կայուն խաղաղություն հաստատելու նպատակով
պահանջում են, որ կողմերի հանդիպումը և հաշտության դաշնագրի
կնքումը տեղի ունենա Հռոմեական բանակի պարտության վայրում,
որպեսզի ընդգծված լինի, որ Տրդատը հայկական գահը Ներոնից
ստանում է ոչ թե իրրև պարզև, այլ հայ-պարթևական բանակների
տարած հաղթանակի շնորհիվ: Կորբուլոնը ստիպված է լինում համա-
ձայնել Հռոմի համար ոչ պատվաբեր այդ առաջարկության հետ:

64 թ. Հռոմեացիները կողմերի միջև կնքվում է հաշտության դաշ-
նագիր: Այդ դաշնագրով Տրդատը ճանաչվում է Հայաստանի թագա-
վոր. միայն նա պետք է անձամբ գնար Հռոմ և թագը ստանար Ներո-
նի ձեռքից: Հաշտությունից հետո Հռոմեական և պարթևական զոր-
քերը հեռանում են Հայաստանից: Վերականգնվում են Հայաստանի
նախկին սահմաններն ու ինքնուրույնությունը:

65 թ. Տրդատը կնոջ ու զավակների, եղբորորդիների հետ, ինչպես
և 300 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած չքախմբի և հռոմեա-

կան մի հատուկ գործաձևի ուղեկցութեամբ ցամաքային ճանապարհով ուղևորվում է Հոռոմ, որովհետև իբրև զրազաչտական կրոնի քուրմ, հրաժարվում է ուղևորվել ծովային ճանապարհով: Նրա ուղևորութունը տևում է մոտ ինը ամիս: Տրդատին ու նրա ուղեկիցներին բոլոր քաղաքներում հանդիսավոր ու փառահեղ ընդունելություն են ցույց տալիս: Ուղևորութեան ամբողջ ծախսը, որ կազմում էր օրական մոտ 200.000 դինար-դրաքմե, այսինքն՝ մոտ 160.000 ոսկի ուրլի, վճարում էր Հոռոմեական կայսրությունը:

Տրդատը Նեապոլիս քաղաքում ներկայանում է Ներոն կայսրին, որը նրան ընդունում է սիրալիր և նրա պատվին կազմակերպում է կրկեսային խաղեր, սուսերամարտեր ու այլ հանդեսներ: Ներոնը Հոռոմի Ֆորում հրապարակում հանդիսավոր կերպով, բազմահազար բնակչության և զորքի ներկայությամբ թագադրում է Տրդատին: Թագադրման հանդեսից հետո, Հոռոմեական սենատի որոշումով, Պոմպեոսի մեծ թատրոնում ներկայացում է տրվում Տրդատի պատվին, որը վերջանում է ճոխ խնջույքով:

Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատը վերաշինելու համար Ներոնը Տրդատին նվիրում է 50 միլիոն դինար-դրաքմե, այսինքն՝ մոտ 40 միլիոն ոսկի ուրլի, ինչպես և նրան է տալիս Հոռոմացի բազմաթիվ արհեստավորներ: Հոռոմեական կայսրի այս առատաձեռնությունն նպատակն էր, անշուշտ, սիրաշահել Տրդատին և մեղմացնել Հայերի ատելությունն ու զայրույթը Հոռոմացիների նկատմամբ:

66 թ. Տրդատը իր ուղեկիցներով վերադառնում է Հայաստան:

Հռանդեսայի դաշնագրով և ապա Հոռոմում Տրդատի թագադրումով իրավական տեսակետից ևս վերջնականապես վերականգնվում է Հայ ժողովրդի պետականությունը, և Հայաստանում հաստատվում է Արշակունյաց թագավորությունը: Թեև Տրդատն ու նրան հաջորդող թագավորները ընդունում էին Հոռոմի գերիշխանությունը և համարվում էին Հոռոմեական կայսրության «բարեկամն ու դաշնակիցը», սակայն այժմ այդ գերիշխանությունը, «բարեկամությունն ու դաշնակցությունը» մեծ մասամբ ձևական էր ու անվանական, քան իրական: Իրականում Հայաստանը դառնում էր Արշակունիների ինքնուրույն երկրորդ թագավորությունը, Պարթևական թագավորությունից հետո:

Հայաստանում թագավորող առաջին Արշակունի թագավորներն իրենց ծագումով պարթևներ էին: Սակայն հետագայում նրանք աստիճանաբար, խնամիական կապեր ստեղծելով տեղական իշխանական տների հետ, լրիվ Հայանում են, և արքայատունն ազգայնանա-

յով՝ ստանում է հայկական բնույթ: Հայաստանում փաստորեն առաջանում է հայ Արչակունիների հարստությունը:

Արչակունյաց թագավորությունն հաստատումը Հայաստանում խոշոր դրական նշանակություն ունեն, որովհետև երկրում ստեղծում էր քիչ թե շատ կայուն ու կենտրոնացված պետականություն, այլև նպաստում էր հասարակական-տնտեսական կյանքի և հայկական մշակույթի հետագա զարգացմանը:

Հոանդեայի դաշնագրից հետո Արևելքում **Տրդատ I-ի հետա-հաստատվում է խաղաղություն, որը տևում է դա գործունեությունը** - հիսուն տարի (64-114): Սաղաղության այս շրջանը զգալի չափով նպաստում է Հայաստանում քաղաքների, արհեստագործությունն ու առևտրի զարգացմանը:

Տրդատ I-ը Հռոմից վերադառնալուց հետո վերաշինում է ավերված Արտաշատը, որը ի պատիվ Ներոն կայսրի վերանվանվում է Ներոնեա: Սակայն այս նոր անունը ժողովրդականություն չի ստանում և չի տարածվում: Կարճ ժամանակից հետո Արտաշատը կրկին դառնում է Հայաստանի պետական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոնը:

Տրդատ I-ը, ինչպես երևում է Գառնիում հայտնաբերված նրա հունարեն արձանագրությունից, իր թագավորության տասնմեկերորդ տարում, այսինքն՝ 77 թ., վերակառուցում է նաև Գառնիի բերդը և նրա ներսում կառուցում նոր շենքեր: Նրա կառուցած հույակապ շենքերից մեկը Գառնիի սյունազարդ և սքանչելի քանդակներով զարդարված հեթանոսական տաճարն է, որի ավերակներն անգամ մեծ հիացմունք են պատճառում ժամանակակից դիտողներին: Մովսես Խորենացին այս տաճարի կառուցումը սխալմամբ վերագրելով Տրդատ III-ին, այն անվանում է «Տուն հովանոց», իսկ ժողովուրդը այն կոչում է «Տրդատաթախտ»: Տրդատ I-ից սկսած՝ Գառնին դառնում է հայ Արչակունի թագավորների ամառային նրստավայրը:

Այդ ժամանակ Հայաստանի հատկապես հյուսիսային ու հյուսիսարևելյան շրջանների հանգստությունը որոշ չափով խանգարում են արյանները, որոնք կովկասյան մյուս ցեղերի ու վրացիների հետ միասին 72 թ. կողոպուտի նպատակով արչավում են դեպի Ատրպատական ու Հայաստան: Տրդատը հայկական ուժերով ռազմերթի ելնելով՝ ճակատամարտ է տալիս նրանց դեմ: Արյանների արչավանքը կրկրվում է նաև 75 թ.:

Տրդատի կյանքի վերջին տարիները և նրա մահվան ճիշտ թվական-

նը Հայտնի չեն: Ուսումնասիրողները ենթադրում են, որ նա թագավորել է մինչև 78 թ.:

**Հայաստանը
Սանատրուկի
ժամանակ**

Տրդատ I-ին Հաջորդում է Սանատրուկը (78–110): Նա ծագումով Արշակունի էր և Հավանաբար Տրդատ I-ի որդին: «Հայոց թագավոր Սանատրուկը,– վկայում է Հույն մատենագիր Սուիդասը,– ուներ միջին Հասակ, բայց Հակում ուներ ամեն մի մեծ բանի և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը: Նա Հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր և ուղղամիտ, ինչպես լավագույնները Հույների և Հռոմեացիների մեջ»:

Սանատրուկի ժամանակ Հայաստանում շարունակում է զարգանալ քաղաքաշինությունը: Փափստոս Բուզանդը վկայում է, որ Սանատրուկ թագավորը Արածանի գետի և նրա հետ միախառնվող Մեղրագետի խառնարանի մոտ կառուցել է Մծուրք կամ Մծուրն քաղաքը, որ դեռևս IV դարում հիմնահատակ կործանված է եղել: Սանատրուկը, ինչպես երևում է Սեբեոսի պատմության առաջին գլխում Մար Աբաս Կատինա Մծուրնացու գրքից բերված մի Հատվածից, Մծուրն քաղաքում կառուցել է նաև թագավորական ապարանք և արքունի պալատի դռան դիմաց քանդակել է տվել Հունարեն մի արձանագրություն, որտեղ Հայ և պարթև Արշակունի առաջին հինգ թագավորների մասին ժամանակագրական տեղեկություններ են եղել: Թե՛ այս և թե՛ Մովսես Խորենացու վկայություններից հետևում է, որ Սանատրուկը իր կառուցած Մծուրն կամ Մծուրք քաղաքը դարձրել է աթոռանիստ կենտրոններից մեկը:

Հ. Մանանդյանը գտնում է, որ Մծուրն քաղաքը կառուցված է եղել Մշո դաշտի արևմտյան կողմում, Արտաշատից Տիգրանակերտ գնացող առևտրական ու ռազմական մեծ ճանապարհի վրա, և որ այն առևտրական կապերով կապված էր Մելիտինեի, Տիգրանակերտի, Արտաշատի, Կարինի և Հայաստանի մյուս քաղաքների հետ:

Սանատրուկը մահանում է մոտ 110 թվականին և թաղվում Դարանաղյաց գավառի Անի ամրոցում գտնվող Հայ թագավորների տոհմային գերեզմանատանը: Սրա դամբարանը, ինչպես վկայում է Փափստոս Բուզանդը, հսկայաչեն, ամրապինդ և ճարտարագործ մի կառուցվածք էր, որը նույնիսկ չէին կարողացել բանալ պարսիկները, երբ նրանք 367 թ. գրավելով Անի ամրոցը, քանդել էին Հայ թագավորների գերեզմանները և նրանց մեջ եղած ոսկորները տարել իրենց հետ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ II–III ԴԱՐԵՐՈՒՄ

Տրայանոս կայսեր արչավանքը

Չնայած Արչակունյաց արքայատոհմի հաստատմանը, մինչև III դարի սկիզբը հայկական գահը ժառանգաբար չէր անցնում Հայաստանի Արչակունի թագավորների որդիներին: Հռանդեայի դաշնագրի հիման վրա յուրաքանչյուր թագավորի մահից հետո պարթև Արչակունիները հայկական գահի համար իրենց տոհմից առաջարկում էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել Հռոմեական կայսրության հավանությունը և հաստատումը ստանալուց հետո միայն:

Սանատրուկի մահից հետո պարթև Արչակունիների առաջարկությամբ և Հռոմեական կայսրության համաձայնությամբ Հայաստանում գահ է բարձրանում պարթևաց Բակուր II թագավորի (77–110) որդին՝ Աշխադարը (մոտ 110–113): Սրա գործունեությունն մասին մեզ ոչ մի տեղեկություն չի հասել:

I դարի հատկապես երկրորդ կեսում Հռոմեական կայսրությունը ժամանակավորապես զգալի չափով թուլանում է, և խախտվում են նրա տիրապետող դիրքերը Արևելքում: Հռոմեական կայսրության հարևան երկրները, աստիճանաբար ընդօրինակելով ու յուրացնելով Հռոմեական ռազմական տեխնիկան և մարտավարության եղանակները, ի չիք են դարձնում կայսրության ռազմական գերակշռությունը և սկսում են սպառնալ նրա տիրապետությունը:

Հռոմեական կայսրության այս թուլությունն անմիջական հետեւյալն էր նաև Հռանդեայի դաշնագիրը: Այդ դաշնագիրը Հայաստանի հարցում Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև փոխդիմումային համաձայնության գալու մի փորձ էր միայն: Հասկանալի է, որ այդ դաշնագիրը կայուն և երկարատև չէր կարող լինել, մանավանդ որ երկու կողմերն էլ հարմար առիթի էին սպասում՝ այդ դաշնագիրը խախտելու և իրենց լիակատար գերիշխանությունը Հայաստանում հաստատելու համար:

Հռոմեական կայսրությունը կրկին մեծ չափով ուժեղանում է Տրայանոս ռազմատենչ կայսեր (98–117) ժամանակ:

113 թ. պարթևների նոր թագավոր Սոսրովը, իր շահերի տեսակետից անհամապատասխան համարելով Աշխադարին, ինքնագլուխ, առանց Հռոմեական կայսրության համաձայնության Աշխադարին հեռացնում է հայկական գահից և նրա փոխարեն Հայաստանի թա-

գավոր է նշանակում Բակուր II-ի մյուս որդուն՝ Պարթամասիրին (113–114):

Տրայանոս կայսրը Հայաստանում կատարված այս փոփոխությունը համարելով Հռոմեացի դաշնագրի խախտում և Հռոմեական շահերի ոտնահարում՝ մի խոշոր արշավանք է կատարում դեպի Արևելք: Այս արշավանքի անմիջական շարժառիթը թեև Հայաստանում կատարված փոփոխություններն էին, սակայն իրականում այս արշավանքով Տրայանոսը և Հռոմեական ստրկատերերը ձգտում էին Արևելքում վերականգնել Հռոմի խախտված դիրքերը, ավելացնել կայսրություն եկամուտները, ձեռք բերել նոր հարստություններ ու ստրուկներ, ինչպես և տիրել Ջինաստանից եկող և Ատրպատականի ու Հայաստանի վրայով անցնող միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհներին:

114 թ. գարնանը Տրայանոսը իր զորքերով մտնում է Հայաստան և Ծոփքի մայրաքաղաք Արշամաշատը գրավելուց հետո գալիս բանակ է դնում Եկեղյաց գավառում: Այստեղ Տրայանոսին է ներկայանում Հայաստանի թագավոր Պարթամասիրը և իր թագը դնում նրա ոտքերի մոտ այն հույսով, որ այդ թագը կրկին ետ կստանա կայսեր ձեռքից: Հռոմեական զինվորները հայոց թագավորին առանց թագի կայսեր առջև կանգնած տեսնելով՝ մեծ աղաղակ են բարձրացնում և Տրայանոսին, անարյուն «հաղթանակ» տանելու առթիվ, կոչում են իմպերատոր: Պարթամասիրը զորքի ներկայությունը համարձակորեն ասում է, որ ինքը ոչ պատերազմի մեջ է հաղթվել և ոչ էլ գերի է վերցվել, այլ եկել է կամավոր կերպով, հավատացած լինելով, թե իրեն որևէ վիրավորանք չեն հասցնի, և ինքը կստանա իր թագավորությունը, ինչպես որ Տրդատը ստացել էր Ներոնից: Տրայանոսը մերժում է հայկական գահը վերադարձնել Պարթամասիրին և հայտարարում է, որ ինքը որոշել է Հայաստանը դարձնել Հռոմեական պրովինցիա:

Տրայանոսը Պարթամասիրին և նրան ուղեկցող պարթևներին թույլ է տալիս հեծյալ մի պահակախմբի հսկողությամբ հեռանալ Հռոմեական բանակից: Սակայն ճանապարհին ուղեկցող պարթևների և Հռոմեական պահակախմբի միջև տեղի է ունենում ընդհարում, որտեղ և սպանվում է Պարթամասիրը:

Շուտով Տրայանոսը նվաճում է Հայաստանի մեծ մասը և այն վերածում է Հռոմեական պրովինցիայի: Նվաճումից ազատ են մնում միայն Հայաստանի հյուսիսային նահանգները:

Տրայանոս կայսրը իր հետագա արշավանքի ընթացքում, 114–116

թիժ., գրավում է նաև Մծրինը, Եղեախան, պարթևների մայրաքաղաք Տիգրանը, Սելևկիան և հասնում մինչև Պարսից ծոց:

116 թ. Հայաստանում, Միջագետքում և Ադիարենեում ուժեղ ապստամբություններ են տեղի ունենում հռոմեացիների դեմ: Այս ապստամբությունները ոգևորում են նաև պարթև Արշակունիներին, որոնք մի կողմ թողնելով իրենց ներքին տարաձայնությունները՝ ամբողջ ուժերը համախմբում են արտաքին թշնամուն հակահարված տալու համար: Ապստամբներն ու պարթևական զորքերը շատ տեղերում ջարդում կամ դուրս են վտարում հռոմեական պահապան զորքերին:

Տրայանոսն իր թիկունքը վտանգված տեսնելով՝ շտապ վերադառնում է Միջագետք և դաժան կերպով ճնշում այստեղ բարձրացած ապստամբությունները: Սակայն դրանից հետո Տրայանոս կայսրը երկար չի ապրում: Նա մահանում է 117 թ. Կիլիկիայում:

Տրայանոսի մահից հետո Ասորիքում գտնվող հռոմեական զորքերը կայսր են հռչակում նրա ազգական Ադրիանոսին (117–138): Սա փոխում է իր նախորդի նվաճողական քաղաքականությունը և գլխավորապես ուշադրություն է դարձնում կայսրություն սահմաններն ամրապնդելու, խաղաղությունը պահպանելու, կայսրության սահմաններում քաղաքների ու տնտեսական կյանքի հետազարգացման վրա:

Ադրիանոսը հրաժարվում է Տրայանոսի բոլոր նվաճումներից և նոր նվաճված երկրամասերը վերադարձնում է Պարթևական թագավորությանը, որովհետև կայսրությունը առանց ուժերի ծայրահեղ լարման ու նյութական մեծ միջոցների չէր կարող պահել դեռևս տեղտեղ ապստամբություններով բռնկված, չխաղաղեցված և հռոմեացիների դեմ թշնամաբար տրամադրված այդ երկրամասերը:

Հայ ժողովրդի բարձրացրած ապստամբության և ցույց տված համառ դիմադրության, ինչպես և պարթևների հետ ընդհարվելու վտանգի հետևանքով Ադրիանոսը ստիպված է լինում հռոմեական զորքերը դուրս բերել Հայաստանից և հրաժարվել Հայաստանը հռոմեական պրովինցիայի վերածելու իր նախորդի ծրագրից: 117 թ. կրկին վերականգնվում են Հայաստանի ներքին ինքնուրույնությունն ու թագավորությունը: Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության համաձայնությունը Հայաստանում գահ է բարձրանում Արշակունիների տոհմից Սանատրուկ թագավորի որդին՝ Վաղարշ I-ը (117–140):

Հայաստանում կրկին հաստատվում է համեմատաբար երկարատև խաղաղություն: Հատկապես Արարատյան դաշտում, որը Կորբուլոնի արչավանքից հետո ավելի քան 75 տարի չէր ենթարկվել արտաքին հարձակումների ու կողոպուտի, զգալի չափով դարգանում են գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, ներքին առևտուրը և դրամական շրջանառությունը: Տնտեսական կյանքի այս վերելքի հետևանքով Արարատյան դաշտում, Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից ոչ այնքան հեռու, առաջանում է մի նոր մեծ քաղաք: Դեռևս Երվանդյանների ժամանակ գյուղաքաղաք հանդիսացող Վարդգեսավանը աստիճանաբար մեծանում, բազմամարդանում և առևտրաչափ քաղաքի է վերածվում: Հայոց Վաղարշ I թագավորը ամուր պարիսպներով ու պատվարով շրջապատում է Վարդգեսավանը և այն իր անունով վերանվանում Վաղարշապատ, որը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում կոչվում է նաև Նոր քաղաք կամ Կայնեպոլիս:

I-II դարերում Արտաշատի, Վաղարշապատի և Հայաստանի մյուս քաղաքների ու քաղաքատիպ ավանների զարգացմանը զգալի չափով նպաստում է նաև մի կողմից Ջինաստանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի, Իրանի ու Միջագետքի, իսկ մյուս կողմից՝ Ասորիքի, Միջերկրական ու Սև ծովերի նավահանգիստների, Փոքր Ասիայի և Հռոմի միջև տեղի ունեցող միջազգային աշխույժ առևտուրը: Հռանդեայի դաշնագրից հետո Հայաստանը մեծ մասամբ դառնում է չեղոք երկիր: Այդ պատճառով էլ հիշյալ և հետագա դարերում Արտաշատը դառնում է միջազգային տարանցիկ առևտրի խոշոր հանգուցակետերից ու կենտրոններից մեկը, որտեղ առևտուր անելու համար գալիս էին բազմաթիվ երկրների վաճառականներ:

Վաղարշ I-ի մահից հետո մեզ անհայտ պատճառներով Հայաստանում կրկին հաստատվում է հռոմեական գերիշխանությունը: 140 թ. Անտոնինոս Պիոս կայսրը (138–161) Հայաստանում թագավոր է նշանակում հռոմեական սենատի անդամ Սոհեմոսին (առաջին անգամ՝ 140–161), որին Խորենացին անվանում է Տիգրան: Սա ծագումով Արշակունի չէր, այլ Եմեսայի (այժմ՝ Հոմս) իշխանական տոհմից:

Սոհեմոս-Տիգրանին գահ բարձրացնելը Հայաստանում, որը բացահայտ կերպով հռոմեացիների կողմից Հռանդեայի դաշնագրի խախտումն էր հանդիսանում, իհարկե չէր կարող հանդուրժելի լինել պարթևների համար: Պարթևներն իրենց խախտված իրավունքները վերականգնելու համար երկու անգամ՝ 140 և 154 թթ., պատերազմ

սկսելու փորձ են կատարում, բայց դրանք առժամանակ կանխվում են Անտոնիոս Պիոս կայսեր սպառնալիքների և պարթևների երկրում առաջացած երկպառակությունների պատճառով:

Սակայն Անտոնինոս Պիոս կայսեր մահից հետո՝ 161 թ., պարթևական արքունիքը վճռական գործողություններ է սկսում: Վաղարշ III-ի (148–191) հրամանով պարթևական զորքերը մտնում են Հայաստան, գլխավոր ջախջախում հռոմեական լեգեոններին և Սոհեմոսին դուրս են վտարում Հայաստանից, որը փախչում և ապաստանում է Հռոմում: Պարթևները Հայաստանի թագավոր են հռչակում Արչակունի Բակուրին (161–163):

Հռոմեացիները Կապադովկիայից նոր ուժեր են ուղարկում Հայաստան: Սակայն այս ուժերը ևս Բարձր Հայքում տեղի ունեցած ճակատամարտում չարաչար պարտվում են հայ-պարթևական զորքերի կողմից:

Պարթևները Հայաստանում ձեռք բերած իրենց հաջողություններից ոգևորված՝ շուտով անցնում են Եփրատ գետը և ներխուժում են նաև Ասորիք ու Կապադովկիա:

Պարթևների հաղթական առաջխաղացումը կասեցնելու և ետ մղելու համար Մարկոս Ավրելիոս կայսրը (161–180) խոշոր ուժերով Արևելք է ուղարկում իր գահակից եղբորը՝ Լուկիոս Վերոսին (161–169):

163 թ. ամառը հռոմեական զորքերը Միջագետքի և Հայաստանի ուղղություններով անցնում են հարձակման: Հռոմեական զորաբանակներից մեկը, Ստատիոս Պրիսկոս զորավարի գլխավորությամբ, Կապադովկիայի վրայով ներխուժում է Հայաստան և համառ կռիվներից հետո նվաճում է այն: 163 թ. վերջին հռոմեացիները նվաճում են նաև Արտաշատը և այն կրկին զգալի չափով ավերում: Հայաստանի թագավոր Բակուրը գերի ընկնելով՝ ուղարկվում է Հռոմ, որտեղ որդեգրվում է արքայական Ավրելյան ազգատոհմի կողմից և այստեղ էլ մահանում է:

164 թ. հռոմեացիները Հայաստանում նորից գահ են բարձրացնում Հռոմից վերադարձած Սոհեմոս-Տիգրանին: Դրանից վրդովված հայերը Տրդատ Հայ իշխանի գլխավորությամբ հուժկու ապստամբություն են բարձրացնում: Սակայն հռոմեական զորքերը դաժան կերպով ճնշում են ապստամբությունը և ձերբակալում Տրդատին: Երբ Անտիոքում Լուկիոս Վերոսը հանդիմանում է Տրդատին՝ Հայաստանում ապստամբություն առաջ բերելու և հռոմեացիների դաշնակից հենոխների թագավորին սպանելու համար, Տրդատը բարկացած իր սու-

րը Հանում և ցանկանում է սպանել նաև Լուկիոս Վերոսին: Մարկոս Ավրելիոս կայսրը, հավանաբար, Տրդատի կողմնակիցներին սիրաչահելու նպատակով նրան փոխանակ մահապատժի ենթարկելու, աքսորում է Բրիտանիա:

Հոռոմեացիները զգալի չափով ավերված Արտաշատի փոխարեն Վաղարշապատը հայտարարում են Հայաստանի գլխավոր քաղաքը և այն դարձնում են Հռոմեական զորքերի կայան՝ հետագայում պարահակների միջոցով ավելի ևս ամրացնելով նրա պարիսպները: 164 թ. սկսած մինչև V դարի երկրորդ կեսը Վաղարշապատը դառնում է Հայաստանի մայրաքաղաքը, թեև Արտաշատը ևս հետագա դարերում շարունակում է մնալ երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային հիմնական կենտրոններից և մայրաքաղաքներից մեկը:

Միջագետքի ուղղությամբ պարթևների դեմ գործող Հռոմեական զորքերը նույնպես խոշոր հաջողություններ են ձեռք բերում: Նրանք 163–165 թթ. ընթացքում գրավում են Եդեսիան, Մծբինը, Սելևկիան, Տիգրանը: 166 թ. պարթևները ստիպված են լինում մեծ զիջումներով խաղաղության դաշինք կնքել Հռոմեական կայսրության հետ: Ըստ այդ դաշնագրի Հայաստանը կրկին ընկնում է Հռոմեական գերիշխանության տակ, թեև անվանապես պահպանվում են նրա անկախությունն ու թագավորությունը:

Մեզ հայտնի չէ, թե երկրորդ անգամ Սոհեմոսը մինչև երբ է թագավորել: Ենթադրում են, որ նա մահացել է 185 թ.:

Սոհեմոս–Տիգրանի մահից հետո հայկական **Հայ Արշակունյաց ժառանգական դինաստիայի հաստատումը** գահը գրավում է պարթևաց թագավորի եղբայր Վաղարշ II-ը (185–198): Հռոմեական կայսրությունը, որն այս ժամանակ ներքին անկայուն վիճակ էր ապրում, համաձայնվում է այս փոփոխության հետ:

193 թ. Հռոմեական կայսրության տարբեր մասերում համարյա միաժամանակ հանդես են գալիս կայսերական գահի երեք թեկնածուներ. Բրիտանիայում գտնվող լեգեոնները կայսր են հռչակում Ալբինոսին, Իլլիրիայում գտնվող լեգեոնները՝ Սեպտիմիոս Սևերոսին, իսկ Ասորիքում և Արևելքում գտնվող լեգեոնները՝ Պեսկեննիոս Նիգերին:

Սեպտիմիոս Սևերոսը (193–211) ավելի մոտիկ գտնվելով Հռոմին՝ անմիջապես գրավում է մայրաքաղաքը և իշխանությունը վերցնում իր ձեռքը: Նա շուտով համաձայնություն է կնքում Ալբինոսի հետ և որդեգրում նրան: Այս համաձայնությունից հետո Սևերոսը մեծ ուժե-

րով շարժվում է Արևելք՝ Նիգերի դեմ, որին պարթևները և Արևելքի շատ երկրներ ճանաչել էին իբրև հոմեակաև կայսր:

Նիգերը իր հակառակորդի դեմ պայքարելու համար օգնություն է խնդրում պարթևաց, հայոց և Հռոմի վասալ այլ երկրների թագավորներից: Մի շարք երկրներ գորքով օգնում են նրան: Սակայն հայոց թագավոր Վաղարշ II-ը հաշվի առնելով, որ գերակշռությունը գտնվում է Սևերոսի կողմը, չեզոքություն է պահպանում և հրաժարվում է օգնել Նիգերին: Պետք է կարծել, որ Վաղարշ II-ի չեզոքությունն այս քաղաքականության մեջ որոշ դեր են կատարել նաև Հայաստանում գտնվող հոմեակաև գործերը, որոնց համակրանքը, բայտ երևույթին, եղել է Սևերոսի կողմը:

194 թ. աշնանը Նիգերը Կիլիկիայում պարտվում է և սպանվում: Սևերոսը խիստ կերպով պատժում է Նիգերին աջակցություն ցույց տված քաղաքներին: Անտիոքը և Բյուզանդիոնը մեծ չափով ավերվում, կողոպտվում և զրկվում են իրենց քաղաքային ինքնավարությունից: 194 թ. Սևերոսը արչավում է նաև պարթևների դեմ, որոնք աջակցել էին նրա ախտյանին: Այդ արչավանքի ժամանակ նա պարթևներից նվաճում է Միջագետքը

Սևերոսը ցանկանում է ներխուժել նաև Հայաստան: Սակայն հայոց թագավոր Վաղարշ II-ը կանխում է՝ ուղարկելով նրան փող, նվերներ ու պատանդներ, ինչպես և խոստանալով զինակցություն ու բարեկամություն:

196 թ. Սևերոսը ստիպված է լինում վերադառնալ Արևմուտք, որովհետև այնտեղ նրա դեմ էր դուրս եկել Ալբինոսը: Պարթևները օգտվելով Սևերոսի և Ալբինոսի միջև առաջացած կռիվներից՝ վերագրավում են Միջագետքը և պաշարում Մծրինը, որտեղ հոմեակաև կայսրը համառ դիմադրություն է ցույց տալիս:

197 թ. վերսկսվում է հոմեակաև պատերազմը: Սևերոսը Ալբինոսին հաղթելուց հետո կրկին գալիս է Արևելք և հարձակվում է Միջագետքի վրա: Պարթևները առանց ճակատամարտ տալու դատարկում են Միջագետքը և ետ են նահանջում: Հոմեացիները շուտով ոչ միայն վերանվաճում են Միջագետքը, այլև զրավում են պարթևների մայրաքաղաք Տիզբոնը և Բաբելոնը: 199 թ. պարթևաց թագավորը ստիպված է լինում հաշտության դաշնագիր կնքել Սևերոսի հետ: Այդ դաշնագրով Միջագետքը անցնում է հոմեակաև կայսրությանը:

Հոմեակաև կայսրությանը միացվելուց հետո պարթևա-հոմեակաև հետագա պատերազմների ժամանակ Հայաստանի փոխարեն

Հիմնական ուղղմանը և դառնում Միջազգետը: Ասորիքը և հոռմեական մյուս տիրապետությունները պարթևների հարձակումներից պաշտպանելու տեսակետից Հայաստանի աշխարհագրական դիրքը մեծ չափով կորցնում է իր ուղղակարական նախկին նշանակությունը: Բացի այդ, հոռմեացիները գրավելով և պրովինցիայի վերածելով Միջազգետը՝ փաստորեն սեպ են խրում Հայաստանի և Պարթևաստանի միջև և այդ երկրները բաժանում իրարից:

Հայ Արշակունիները, որոնք վաղուց ձգտում էին ազատվել պարթև Արշակունիների վերահսկողությունից և Հայաստանում հիմնել իրենց սեփական ժառանգական արքայատունը, աշխատում են դաշինք կնքել հաղթական Հոռմեական կայսրության հետ, մանավանդ որ այժմ կայսրությունը այն չափով չէր սպառնում երկրի անկախությունն ու ինքնուրույնությունը, որքան առաջ:

Սեպտիմիոս Սևերոս կայսրը Հայերին սիրաչափելու, հայ-պարթևական հետագա հնարավոր դաշնակցությունը խափանելու, նրանց վերջնականապես իրարից բաժանելու նպատակով ընդառաջում է Վաղարշ II-ի ցանկությունը և բարեկամական դաշնագիր է կնքում նրա հետ: Ըստ այդ դաշնագրի՝ Սեպտիմիոս Սևերոս կայսրը դուրս է բերում Հայաստանում գտնվող հոռմեական զորքերը, թույլ է տալիս մեծացնել հայկական հեծելազորի թիվը և ամեն տարի զգալի գումար է բաց թողնում նրա պահպանման համար, սակայն պայմանով, որ այդ զորքը պետք է մասնակցեր հոռմեական արշավանքներին:

Այս դաշնագրի հետևանքով թեև Հայաստանը մնում է հոռմեական կայսրության «դաշնակիցն ու բարեկամը», բայց ավելի մեծ չափով է ձեռք բերում ինքնուրույնությունն ու անկախությունը: Հայաստանում հիմնվում է հայ Արշակունիների սեփական ժառանգական արքայատոհմը, որի հիմնադիրը, ինչպես ճիշտ կերպով նշել է Հ. Մանանդյանը, դառնում է Վաղարշ II-ը:

Այս Վաղարշը ոչ այլ ոք է, եթե ոչ Սորենացու մոտ հիշատակված Հայոց թագավոր Վաղարշակը:

1961 թ. Գառնիի պեղումների ժամանակ հայտնաբերվել է պահպանված մի արձանագրություն, որի նախնական ընթերցումից պարզվում է, որ այն թողել է Հայոց Վաղարշ թագավորի որդին: Այս փաստը ևս ապացուցում է, որ Վաղարշ II-ի ժամանակ հայ Արշակունիների թագավորությունը դարձել էր ժառանգական:

198 թ. կովկասյան լեռնականները նոր արշավանք են կատարում դեպի Հայաստան: Թեև Վաղարշ II-ը հաղթում և դուրս է քշում

նրանց Հայաստանից, սակայն տեղի ունեցած մարտերից մեկում սպանվում է նաև ինքը:

Վաղարշ II-ին Հաջորդում է նրա որդին՝ Սոսրով I-ը (198–215): Նա, ինչպես վկայում է Սորենացին, իր հոր վրեժը լուծելու նպատակով մի արշավանք է կատարում Կովկասի լեռնականների դեմ և հաղթում նրանց:

Կարակալա կայսեր արշավանքը Հայաստան Սեպտիմոս Սևերոսի մահից հետո կայսր է դառնում նրա որդին՝ Անտոնինոս Կարակալան (211–217): Սա անգուլթ, նենգամիտ, վրիժառու և փոքրոգի մի բռնակալ էր: Նա երազում էր նմանվել իր ամենասիրելի հերոսին՝ Ալեքսանդր Մակեդոնացուն, և նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան:

Այդ նպատակով էլ Կարակալան 215 թ. գալիս է Ասորիք: Նա պարթևների դեմ պատերազմական գործողություններ սկսելուց առաջ որոշում է գրավել Հայաստանը և դարձնել հռոմեական պրովինցիա: Հենց այդ ժամանակ Հայոց Սոսրով I թագավորի և նրա որդիների միջև ներքին տարաձայնություններ ու վեճեր էին առաջանում: Կարակալան, օգտվելով դրանից, Հայոց թագավորին և նրա որդիներին հաշտեցնելու պատրվակով կեղծ բարեկամական նամակներով իր մոտ՝ Անտիոք է կանչում Սոսրովին ու նրա ընտանիքի անդամներին: Երբ Սոսրովն ու նրա կինը միամտաբար գալիս են Անտիոք, Կարակալան ձերբակալում է վերջիններին և ուղարկում Հռոմ:

Հռոմեական կայսեր այս նենգ ու տմարդի արարքն ընդհանուր զայրույթ է առաջ բերում Հայաստանում: Հայերը գենք են բարձրացնում և չեն ուզում հպատակվել Կարակալային: Նրանք Հայաստանի թագավոր են հռչակում Սոսրով I-ի որդիներից մեկին՝ Տրդատ II-ին (215–251):

Կարակալան գորքեր է ուղարկում Հայաստան և աշխատում գենքի ուժով հնազանդեցնել Հայերին, բայց հաջողություն չի ունենում: Հայերը նրա ուղարկած զորքերին ջախջախում և դուրս են քշում երկրի սահմաններից:

216 թ. Կարակալան պատերազմ է սկսում պարթևների դեմ: Նա Մարաստանի չորջր գտնվող տարածքներն ավերելուց և Ադիաբենեն գրավելուց հետո վերադառնում և ձմեռում է Եդեսիայում: Պարթևների Արտավան V (216–224) թագավորը առանց ճակատամարտ տալու ետ է քաշվում և երկրի ներսում աշխատում է պատրաստել մի ուժեղ բանակ՝ թշնամուն հակահարված տալու համար: 217 թ. գարնանը Կարակալան նոր արշավանքի է դուրս գալիս պարթևների դեմ,

բայց հենց այդ ժամանակ էլ սպանվում է իր զինվորների ձեռքով:

Նոր կայսր Մակրինոսը (217–218) թեև շարունակում է պատերազմը, սակայն Մծբինի մոտ երկու անգամ պարտություն կրելով, ստիպված է լինում հաշտություն կնքել Արտավան V-ի հետ և իրեն պատերազմական վնասների հատուցում նրան վճարել 50 միլիոն դինար, այսինքն՝ մոտ 20 միլիոն ոսկի ուրբի: Սակայն Արտավանին չի հաջողվում հոռոմեացիներից ետ խլել Միջագետքը:

Մակրինոսը ստիպված է լինում դադարեցնել նաև թշնամությունը Հայաստանի նկատմամբ: Եվ որովհետև Սոսրով I-ը մահացել էր բանտում, ուստի Մակրինոսը նրա որդուն՝ Տրդատ II-ին, ճանաչում է Հայաստանի թագավոր և նրան ուղարկում է թագ: Մակրինոսը բանտից ազատում ու ետ է դարձնում նաև Տրդատի մորը: Բացի այդ, նա Տրդատին է վերադարձնում նաև Հայաստանից տարված ավարը և նրա հոր ունեցած կալվածքները Կապադովկիայում:

Սասանյան արքայատան հաստատումը Պարսկաստանում և Հայաստանը

Պարթևական թագավորությունյան ներսում սոցիալ-դասակարգային հարաբերությունների սրման, ներքին ապստամբությունների, անվերջ գահակալական կոիվների և Հոռոմեական կայսրության դեմ մղված անհաջող երկարատև պատերազմների հետևանքով պարթև Արշակունիների արքայատունը հեղինակազրկվում, թուլանում և կանգնում է անկման առաջ:

Պարթև Արշակունիների դեմ շարժումը սկսվում է բուն պարսկական նահանգից՝ Ֆարսից կամ Պարսքից, որը հանդիսանում է Աքեմենյանների հայրենիքը և զրադաշտական կրոնի կենտրոնը: Շարժման գլուխ է կանգնում Պարսքի Ստահր քաղաքի արքայիկ Արտաշիրը, որը նույն քաղաքի քրմապետ Սասանի թոռն էր: Արտաշիրը Պարսքը իր իշխանություն տակ միավորելուց հետո գրավում է նաև Սպահանի, Կրմանի, Սուղիստանի մարզերը:

Արտավան V-ը, անհանգստացած Արտաշիրի ձեռք բերած հաջողություններից, 224 թ. գարնանը պատերազմի է դուրս գալիս նրա դեմ: Սակայն տեղի ունեցած ճակատամարտում Արտավանը պարտվում և սպանվում է: Շուտով Արտաշիրը գրավում է նաև Պարթևական թագավորության մնացած մարզերը և նրա մայրաքաղաք Տիզբոնը:

226 թ. Արտաշիրը Տիզբոնում հանդիսավոր կերպով թագադրվում և իրեն հայտարարում է «Իրանի արքայից արքա» կամ «Իրանի շահնշահ»: Այսպիսով, Արտաշիր I-ը (226–241) Պարսկաստանում

Հիմք է դնում մի նոր արքայատան, որը նրա պապ Սասանի անունով կոչվում է Սասանյան:

Սասանյանները ավելի եռանդուն և անխնա պայքար մղելով Արևմուտքի ազդեցություն դեմ՝ մեծ չափով հովանավորում են տեղական՝ բուն իրանական մշակույթը և նպաստում նրա հետագա զարգացմանը: Նրանք հովանավորում են նաև զրադաշտական կրոնը, որի հետևանքով այդ կրոնի բարձր հոգևորականությունը խիստ ազդեցիկ դիրք է ձեռք բերում և բացառիկ դեր կատարում պետություն ներսում:

Սասանյանները, հենվելով Իրանում նոր ձևավորված ավատատիրական դասակարգի ու քրմական դասի վրա, ինչպես և համախմբելով իրանական ժողովրդի ուժերը, ստեղծում են ավելի կենտրոնացված և ուժեղ պետություն, քան Պարթևական թագավորությունն էր: Նրանք իրենց համարելով Աքեմենյանների ժառանգորդներ ու նրանց ավանդույթների շարունակողներ՝ սկզբից ևեթ ձգտում են վերականգնել հին պարսկական աշխարհակալ պետությունն ու նրա հզորությունը: Այդ նպատակով էլ Սասանյանները, ի տարբերություն պարթև Արշակունիների, Հռոմեական կայսրության դեմ սկսում են վարել ակտիվ հարձակողական քաղաքականություն և աշխատում են նրան դուրս քշել Արևելքից:

Սասանյան հարստության հաստատումը Պարսկաստանում քաղաքական ու մշակութային տեսակետից լուրջ հետևանքներ է ունենում Հայաստանի համար:

Սասանյանները սկզբից ևեթ խիստ և անհաշտ թշնամական դիրք են գրավում Հայաստանի նկատմամբ, որովհետև նրանք Հայաստանում իշխող Արշակունիներին ևս համարում էին իրենց արքայատան հակառակորդներ, փորձում էին Հայաստանում ևս վերացնել Արշակունիներին, և այն դարձնել Պարսկաստանին ենթակա մարզերից մեկը:

Հայ ժողովուրդը իր պետականությունն ու ինքնուրույնությունը պահպանելու համար ստիպված է լինում համառ ու անհավասար պայքար մղել Սասանյան Պարսկաստանի դեմ: Այդ պայքարում Հայաստանը հարկադրված է լինում հակվել դեպի Հռոմեական կայսրությունը, մանավանդ որ վայրէջքի ու անկման երկարատև ճգնաժամի մեջ մտած կայսրությունը այժմ արդեն Հայաստանի համար այնքան վտանգավոր չէր, որքան առաջ:

Դեռևս հնուց սկսած, բայց հատկապես Արշակունիների ժամանակ Հայկական մշակույթը և հեթանոսական կրոնը սերտ կապերով կապ-

ված էին իրանական մշակույթի ու կրոնի հետ: Սակայն այժմ՝ Սասանյան Պարսկաստանի և Հայաստանի միջև առաջացած անհաշտ թշնամությունն պայմաններում այդ կապերը հաճախ խանգարում ու թուլացնում էին Հայ ժողովրդի միասնությունը, նրա պայքարը սասանյան ռազմակալման դեմ: Իր ինքնուրույնությունը պահպանելու, Սասանյան Պարսկաստանի դեմ մղվող պայքարում իր միասնությունն ու դիրքերն ամրապնդելու նպատակով Հայաստանը մշակութային և կրոնական տեսակետից ևս աստիճանաբար հեռանում է Իրանից ու մերձենում Հռոմին և Արևմուտքի երկրներին: Այս ուղղությունը ամենանշանակալից փաստը այն է, որ արդեն IV դարի սկզբում Հայաստանում քրիստոնեությունը հայտարարվում է պետական կրոն:

Սասանյան արքայատան հաստատումը Պարսկաստանում ունենում է նաև այն հետևանքը, որ Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, ադվաններն ու վրացիները, քաղաքականապես ու մշակութապես ավելի սերտ կերպով մերձենում են իրար, քանի որ Սասանյանները սկսում են սպառնալ ոչ միայն Հայաստանի, այլև Ադվանից աշխարհի ու Վրաստանի անկախությունը: Սասանյան Պարսկաստանի զավթողական քաղաքականության դեմ մղվող համատեղ պայքարում ավելի ևս ամրապնդվում են Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բանակամությունն ու դաշինքը:

Ըստ հայկական ավանդական պատմության, Հայաստանի պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ և Մծբինի 40-ամյա խաղաղության դաշնագիրը որը մեջ է բերված Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Սեբեոսի և մյուս հայ պատմագիրների աշխատություններում, Սասանյան հարբատության հաստատման ժամանակ Հայաստանի թագավորն է եղել Տրդատ III-ի հայրը՝ Խոսրով I-ը կամ Խոսրով Մեծը: Սակայն այժմ պատմաբաններից շատերը գտնում են, որ այդ ժամանակ Հայաստանի թագավորն է եղել ոչ թե Խոսրով Մեծը, որը իշխել է ավելի ուշ, հավանաբար 273–287 թթ., այլ 217 թ. Մակրինոս կայսեր ձեռքից թագ ստացած Տրդատ II-ը: Նրանք գտնում են նաև, որ Տրդատ II-ի գործունեությունը հայկական ավանդական պատմության մեջ թյուրիմացաբար վերագրվել է Խոսրով Մեծին:

Պարթև Արշակունիների հարստության անկումից հետո, ինչպես վկայում է Դիոն Կասիոսը, Արտավան V-ի որդիները և Սասանյանների հակառակորդ պարթևական ավագանու ներկայացուցիչները իրենց զորքերով գալիս են Հայաստան և ապաստան գտնում հայոց

Թագավորի մոտ: Նույն այս ժամանակ կամ դրանից քիչ անց Քուչանների երկրից (Միջին Ասիա) և ձենաց աշխարհից Հայաստան են գաղթում նաև Կամսարական և Մամիկոնյան նախարարական տները, որոնք հետագայում շատ ազդեցիկ դիրք են գրավում ու կարևոր դեր կատարում Հայաստանում: Հայաստանը փաստորեն դառնում է հակասասանյան ուժերի համախմբման հիմնական կենտրոնը:

Ըստ ավանդական պատմությունից՝ Հայոց Սոսրով I Թագավորը, սակայն իրապես Տրդատ II-ը, սկզբից ևեթ աշխատում է ոչ միայն Հայաստանը պաշտպանել Սասանյան Պարսկաստանի հարձակումներից, այլև ձգտում է համախմբել Հայաստանի հարևան ու հեռավոր երկրները, ինչպես և Իրանում գտնվող պարթևական ցեղերին և միացյալ ուժերով Իրանում տապալել Սասանյանների տիրապետությունը, վերահաստատել պարթև Արշակունիների արքայատոհմը: Այդ նպատակով նա դաշինք է կնքում Աղվանից աշխարհի ու Վրաստանի հետ, ինչպես և Սասանյանների դեմ պայքարելու համար օգնություն է կանչում հոններին, ալաններին և կովկասյան մյուս ցեղերին: Նա սուրհանդակներ է ուղարկում նաև Իրանում գտնվող պարթևական ավագանու ներկայացուցիչների, ցեղապետերի մոտ և հորդորում նրանց դիմադրություն ցույց տալ ու չհնազանդվել Սասանյաններին: Սակայն նրանք չեն լսում Հայոց Թագավորին և հպատակվում են Արտաշիրին:

Տրդատ II-ը Հայկական, աղվանական, վրացական և կովկասյան ցեղերի միացյալ ուժերով հենց սկզբից մի քանի արշավանքներ է կատարում պարսկական շրջանների վրա և փորձում է տապալել Սասանյաններին: Սակայն նրա այս փորձերը ոչ մի արդյունք չեն տալիս:

Իհարկե, Սասանյաններն իրենց հերթին չէին կարող հաշվի չառնել և անտեսել Հայաստանից իրենց սպառնացող այս վտանգը: Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր I-ը, Իրանում իր իշխանությունը ամրապնդելուց հետո, որոշում է նվաճել Հայաստանը և ոչընչացնել այստեղ համախմբված հակասասանյան ուժերը: Այդ նպատակով էլ Արտաշիր I-ը 228 թ. հարձակվում է Հայաստանի վրա: Սակայն նա իր նպատակին չի հասնում: Հայկական բանակը և Հայաստանում ապաստանած պարթևական զորքերը ծանր պարտություն են մատնում Արտաշիրին և դուրս քշում երկրից:

230 թ. Արտաշիր I-ը պատերազմ է սկսում հռոմեացիների դեմ: Պարսկական զորքը, անցնելով Եփրատ գետը, ոչ միայն նվաճում է

Միջագետքը, այլև անմիջական սպառնալիք է ստեղծում Ասորիքի և Կապադովկիայի համար:

Ալեքսանդր Սևերոս կայսրը (223–235) պարսիկների առաջխաղացումը կասեցնելու, նրանց ետ մղելու և Միջագետքը վերագրավելու նպատակով մեծ ուժերով գալիս է Արևելք:

232 թ. Հռոմեական զորքերը երեք տարբեր ուղղություններով՝ Հայաստանի, Հյուսիսային և Հարավային Միջագետքի վրայով, ընդհանուր հարձակման են անցնում պարսիկների դեմ: Հայաստանի վրայով գործող Հռոմեական զորքերը, միանալով դաշնակից Հայերի հետ, ներխուժում են Մարաստան և ավերում այնտեղ գտնվող քաղաքներն ու գյուղերը: Սակայն Միջագետքի ուղղությամբ գործող Հռոմեական զորաբանակները նույնքան հաջողությամբ չեն կարողանում առաջ շարժվել, և նույնիսկ հարավային զորաբանակը ծանր պարտություն է կրում: Թեև Հռոմեացիները այս պատերազմում մեծ կորուստներ են կրում, բայց նրանց հաջողվում է վերագրավել և իրենց ձեռքում պահել Միջագետքը:

Սասանյան Պարսկաստանը մեծ չափով ուժեղանում է Արտաշիրի որդու՝ Շապուհ I-ի ժամանակ (241–272): Սա իր գահակալություն հենց սկզբում, 241–242 թթ., ոչ միայն նվաճում է Միջագետքը և Օսրոնեն-Եղեսիայի թագավորությունը, այլև հարձակումներ է գործում Ասորիքի, Կիլիկիայի և Կապադովկիայի վրա:

Հռոմեական կայսրությունը նորից ստիպված է լինում խոչոր ուժեր բերել Արևելք՝ պարսիկների դեմ: 243–244 թթ. Հռոմեական զորքերը ետ են մղում պարսիկներին, վերականգնում Օսրոնեն-Եղեսիայի թագավորությունը, վերագրավում Միջագետքը և անմիջականորեն մոտենում ու սպառնալիք են ստեղծում Սասանյան Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոնի համար: Սակայն Հռոմեական զորքի կողմից նոր կայսր Հայտարարված Փիլիպպոս Արաբացին (244–249) դադարեցնում է հետագա արշավանքը պարսիկների դեմ, Միջագետքը կայսրությունը մնալու պայմանով խաղաղություն դաշնագիր է կրնքում Շապուհ I-ի հետ և վերադառնում է Հոռոմ:

III դարի կեսից Հայաստանի արտաքին դրությունը խիստ կերպով ծանրանում է, որովհետև այդ ժամանակ Հռոմը, առավելապես զբաղված լինելով ներքին գահակալական կռիվներով և Եվրոպայում՝ գոթերի, ֆրանկների ու ալամանների, իսկ Աֆրիկայում՝ մավրիտանական ցեղերի հարձակումները ետ մղելով, ի վիճակի չէր ոչ միայն օգնել դաշնակից Հայաստանին, այլև պաշտպանել իր արևելյան սահմանները:

Տրդատ II-ը զրկված լինելով հոռմեացիներից օգնություն ստանալու հույսից՝ աշխատում է Սասանյանների հնարավոր նոր նվաճողական գործողությունների դեմ համատեղ պայքարելու համար դաշնակցել Աֆղանստանի և Հնդկաստանի Փենջար նահանգի տարածքում գտնվող Քուշանաց թագավորության հետ: Ըստ Մովսես Խորենացու վկայության՝ Հայոց Խոսրով Մեծ թագավորը, իրապես Տրդատ II-ը, հոռմեական Փիլիպպոս Արարացի կայսեր գահակալության վերջին տարիներին, այսինքն՝ 248–249 թթ., սուրհանդակներ է ուղարկում քուշանների թագավոր Վեհսաճանի մոտ և կոչ անում նրան՝ համատեղ պայքարի դուրս գալ Սասանյանների դեմ: Վեհսաճանը ընդունում է այդ առաջարկությունը, քանի որ Սասանյանները անմիջականորեն սպառնում էին նաև նրա թագավորությանը:

Սակայն Հայաստանի և Քուշանաց թագավորության դաշնակցությունը առանձին արդյունքներ չի տալիս: Ծապուհ I-ը, օգտվելով Սասանյան Պարսկաստանի համար ստեղծված նպաստավոր դրությունից, որոշում է հաշիվ տեսնել թե՛ Քուշանաց թագավորության և թե՛ Հայաստանի հետ:

Ծապուհ I-ը իր առաջին հարվածը ուղղում է Քուշանաց թագավորության դեմ: 1939 թ. Նախչ-ի-Ռուստեմի մոտ «Քաարա ի Զարդուշտ» հուշարձանի պատերի վրա հայտնաբերվել է Ծապուհ I-ի արձանագրություններից մեկը, որից տեղեկանում ենք, որ նա մոտ 248–251 թթ. նվաճել է Քուշանաց թագավորությունը և գահընկեց արել քուշանների Վասուդեա թագավորին, որն անշուշտ Մովսես Խորենացու մոտ հիշատակված նույն Վեհսաճանն է: Խիստ ուշագրավ է, որ Խորենացու մոտ ևս Վեհսաճանի կոխվր Սասանյանների դեմ, նրա պարտությունը և նրա տոհմի բնաջնջումը նշված է մոտ 248–249 թթ.:

Հայաստանը, զրկված լինելով թե՛ Հոռմի և թե՛ Քուշանաց թագավորության դաշնակցությունից, շուտով մենակ է մնում հզոր Սասանյան Պարսկաստանի դեմ: 252 թ. Ծապուհ I-ը հարձակվում է Հայաստանի վրա և նվաճում այն: Տրդատ II-ը փախչում է հոռմեացիների մոտ, իսկ նրա որդիները մեկնում են պարսից կողմերը:

«Նորից սրա (Գալլոս կայսեր) ժամանակ,– վկայում է բյուզանդական պատմագիր Զոնորասը,– սկսվեցին պարսիկների խլրտումները, և նրանք նվաճեցին Հայաստանը: Այս երկրի Տրդատ թագավորը փախավ, իսկ նրա որդիները մեկնեցին պարսից կողմերը»:

253–255 թթ. Ծապուհ I-ը հոռմեացիներից նվաճում է նաև Միջա-

գետքն ու Ասորիքը:

Պարսիկներին ետ մղելու համար 256 թ. Արևելք է գալիս Վալերիանոս կայսրը (253–260): Թեև սրան հաջողվում է վերագրավել Ասորիքը, սակայն 260 թ. Եղեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նա ծանր պարտություն է կրում և գերի է ընկնում Շապուհի ձեռքը:

Շապուհ I-ը Հայաստանը նվաճելուց հետո այնտեղ թագավոր է նշանակում Արտավազդ անունով մեկին: Մեզ հայտնի չէ այս Արտավազդ V-ի (մոտ 252–273) ո՛չ ծագումը և ո՛չ էլ գործունեությունը: Միայն հայտնի է, որ սա, ինչպես վկայում է Հոտմեացի կենսագիր Տրեբելլիոս Պոլիոնը, մի նամակ է գրել Շապուհ I-ին և նրան խորհուրդ տվել գերությունից ազատել ծերունի Վալերիանոս կայսրին:

Եղեսիայի ճակատամարտից հետո Շապուհ I-ը ոչ միայն կրկին գրավում է Ասորիքի մեծ մասը և նրա մայրաքաղաք Անտիոքը, այլև Կապադովկիայի մայրաքաղաք Մաժակ-Կեսարիան և Կիլիկիայի Տարսոն քաղաքը:

Սակայն 261 թ. Շապուհ I-ը Եփրատ գետի մոտ ծանր պարտություն է կրում Ասորիքի Պալմիրա (ասորերեն՝ Թադմոր) քաղաքի արաբ իշխան Սեպտիմիոս Օղենատոսից: Շուտով իրեն թագավոր հայտարարված այս իշխանը, իբրև Հոտմի դաշնակից ու ենթակա, նվաճում և իր իշխանությունն է ենթարկում Ասորիքը, Միջագետքը, Պաղեստինը, Կիլիկիան, Արաբիան և Կապադովկիան: Պալմիրայի թագավորությունը ավելի մեծ չափով ընդարձակվում և ուժեղանում է Օղենատոսի կնոջ՝ Ջենտրիա թագուհու և սրա որդու՝ Վահրապյաթի ժամանակ (267–273): Սրանք օգտվելով Հոտմեական կայսրության խառնակ վիճակից՝ նվաճում և իրենց տիրապետությանն են ենթարկում նաև Եգիպտոսի ու Փոքր Ասիայի մեծ մասը, ինչպես և իրենց անկախ են հայտարարում Հոտմից և դաշինք կնքում Սասանյան Պարսկաստանի հետ:

Սակայն III դարի 70-ական թթ. սկզբին Հոտմեական կայսրությունը, ետ մղելով գոթերի, գերմանական ցեղերի ու մյուս բարբարոսների հարձակումները, կարողանում է ժամանակավորապես վերականգնել իր քաղաքական հզորությունը և ուշադրություն դարձնել Արևելքի վրա: Ավրելիանոս կայսրը (270–275) մեծ ուժերով գալով Արևելք՝ 271–273 թթ. պարտության է ենթարկում Պալմիրայի թագավորությանը և վերականգնում է Հոտմի տիրապետությունը արևելեյան պրովինցիաներում:

Ավրելիանոս կայսեր այս արևելյան արշավանքի ժամանակ, հա-

վանաբար 273 թ., Հայաստանը ևս հռոմեացիների օգնությամբ ազատագրվում է Սասանյան Պարսկաստանի տիրապետությունից և վերականգնում իր ինքնուրույնությունը: Հայաստանում թագավոր է հռչակվում հայ Արչակունիների տոհմից Խոսրով II-ը (273–287), որը հավանաբար Տրդատ II-ի որդիներից մեկն էր: Սասանյան Պարսկաստանը, որտեղ Շապուհ I-ի մահից (272 թ.) հետո քաղաքական անկայուն վիճակ էր ստեղծվել, չի կարողանում դիմադրություն ցույց տալ և լուեյայն համաձայնում է Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխության հետ:

Խոսրով II-ը, որին հայ պատմագիրները անվանում են նաև Խոսրով Մեծ և սխալմամբ նրան Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիր I-ի ժամանակակից են համարում, հաճախ դաշնակցելով հարևան վրացիների ու աղվանների, իսկ երբեմն էլ հռոմեացիների հետ, ավելի քան տասներկու տարի պայքար է մղում Սասանյան Պարսկաստանի դեմ: Սակայն այդ պայքարը ինչպես Տրդատ II-ի ժամանակ, նույնպես և այժմ առանձին արդյունքներ չի տալիս:

Խոսրով II-ի հակապարսկական քաղաքականությունն ու պայքարը, բնականաբար, չէին կարող առաջ չբերել նրա դեմ պարսից քաղաքական շրջանների կատաղի թշնամությունն ու վրեժխնդրությունը: Ըստ ավանդական պատմություն՝ Խոսրով II-ը սպանվում է Վաղարշապատում, պարսից թագավորի կողմից ուղարկված վարձկան Անակ Պարթևի ձեռքով: Խոսրովի սպանությունից հետո Հայաստանը կրկին նվաճվում է պարսիկների կողմից, իսկ թագաժառանգ պատանի Տրդատը փախչում և ապաստանում է Հռոմում:

Խոսրով II-ի սպանությունը Ազաթանգեղոսի մոտ նշված է Սասանյան Արտաշիր I-ի գահակալության տասնմեկերորդ տարում (237 թ.) իսկ Մովսես Խորենացու մոտ՝ Վալերիանոս կայսեր ժամանակ (253–260): Սեբեոսը, մի կողմից՝ հետևելով Ազաթանգեղոսին, իսկ մյուս կողմից՝ օգտվելով արժանահավատ մի այլ սկզբնաղբյուրից, բայց չնկատելով ստացվող խիստ անախրոնիզմը, նույն այս դեպքը նշում է Արտաշիրի գահակալության տասնմեկերորդ (237 թ.) և Դիոկղետիանոս կայսեր չորրորդ տարում (287 թ.): Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում այս վկայություններից արժանահավատ ու ճիշտ է համարվում Սեբեոսի վկայության երկրորդ ցուցմունքը, ըստ որի՝ Խոսրով II-ը սպանվել է Դիոկղետիանոս կայսեր գահակալության չորրորդ տարում, այն է՝ 287 թ.:

295 թ. պարսից թագավոր Ներսեսը (293–302) Հայաստանը, Միջագետքը, Ասորիքը և Փոքր Ասիան նվաճելու նպատակով նոր պա-

տերազմ է սկսում Հոռոմեական կայսրութեան դեմ: Նույն այս թվականին, ինչպես վկայում է Հոռոմեացի պատմագիր Ամմիանոս Մարկելիկոսը, Ներսեսը նվաճում է Հայաստանը և հարձակվում Միջագետքի վրա:

Ներսես թագավորի այս արշավանքը դեպի Հայաստան և Հետագա դեպքերը հիշատակում է նաև Փավստոս Բուզանդը, սակայն ժամանակավրիպությունը այդ դեպքերը նշելով Հայոց Տիրան թագավորի (338–350) գերեզմանությունից, բանտարկությունից ու կուրացումից անմիջապես հետո: Ըստ Փավստոս Բուզանդի վկայությունից՝ պարսից Ներսես թագավորն իր ամբողջ զորքով, պատերազմական փղերի մեծ բազմությունը գալիս նվաճում է Հայոց աշխարհը, իսկ Հայ նախարարներից շատերը իրենց ընտանիքներով փախչում են Հոռոմեացիների մոտ:

Գիողղետիանոս կայսրը (284–305), որի ժամանակ Հոռոմեական կայսրության թե՛ ներքին և թե՛ արտաքին դրությունը մեծ չափով կայունացել ու ամրապնդվել էր, զգալի ուժերով պարսիկների դեմ է ուղարկում Արևելքում իր կառավարչակից Գալերիոս Մաքսիմիանոսին: Առաջին խոշոր ընդհարումը պարսիկների հետ տեղի է ունենում 296 թ. Միջագետքի Սառան քաղաքի մոտ, որտեղ պարսկական հեծելազորի գերազանցության պատճառով Հոռոմեական զորքը ծանր պարտություն է կրում:

Միջագետքում տեղի ունեցած այս կռիվներին, ինչպես երևում է Ազաթանգեղոսի վկայություններից, մասնակցել է նաև Հոռոմ ապաստանած և այնտեղ Գալերիոս Մաքսիմիանոսի մոտիկ ընկերոջ՝ Լիկինիոս Լիկինիանոսի մոտ ապրած ու դաստիարակված Հայաստանի գահաժառանգ Տրդատը: Ըստ Ազաթանգեղոսի վկայությունից՝ նա, հավանաբար, Սառանի ճակատամարտում ծանր վիրավորվում է և դուրս է գալիս ճակատամարտից, իսկ այնուհետև՝ ղեկքերը մեջքին կապած, իր ձիու հետ միասին լողալով անցնում է Եփրատ գետը և ազատվում գերությունից:

Գալերիոս Մաքսիմիանոսը շուտով նոր զորք է հավաքում և որոշում է այս անգամ պարսիկների դեմ ճակատամարտ տալ Հայաստանում, որտեղ նրան կարող էին օգնել նաև Հայերը: 297 թ. նա մեծ ուժերով Փոքր Հայքի վրայով մտնում է Հայաստան: Նախքան պարսիկների դեմ վճռական ճակատամարտ տալը Գալերիոս Մաքսիմիանոսը ծպտված կերպով, ըստ հունա-Հոռոմեական պատմագիրների վկայությունների՝ երկու-երեք ձիավորների, իսկ ըստ Փավստոս Բուզանդի վկայությունից՝ Սյունյաց Անդովկ ու Արշավիր Կամսարական

նախարարների ուղեկցութեամբ լրտեսում և հետախուզում է պարսկական բանակը, որը ճամբար էր դրել Բասենում: Այս հետախուզութունից հետո, ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը, մի վաղ առավոտ, երբ դեռևս պարսիկները անհոգ ու միամիտ հանգստանում էին իրենց բանակատեղում, հոռմեական և հայկական զորքերը հանկարծակի հարձակվում են պարսկական բանակի վրա, անխնա կոտորում, գերեվարում և գլխովին ջախջախում են նրան: Հոռմեական և հայկական զորքերի հաղթութունը թշնամու նկատմամբ կատարյալ էր: Բացի մեծ թվով պարսիկ զինվորներից, հոռմեացիներին գերի են ընկնում Ներսես Թագավորի կանայք, երեխաները, քույրերը և պարսիկ մեծամեծներից շատերը: Նրանք ձեռք են բերում նաև հարուստ ավար:

Ներսես Թագավորը, այս ծանր ու աղետալի պարտութունից հուսահատված, դեսպաններ է ուղարկում Դիոկղետիանոս կայսեր մոտ և խնդրում է ազատ արձակել գերիներին ու կնքել խաղաղութեան դաշնագիր: Դիոկղետիանոս կայսրը ընդունում է այդ առաջարկութունը:

298 թ. Մծբին քաղաքում պարսիկների համար ծանր պայմաններով 40-ամյա խաղաղութեան դաշնագիր է կնքվում Հոռմեական կայսրութեան և Սասանյան Պարսկաստանի միջև: Այդ դաշնագրով Սասանյան Պարսկաստանը Հոռմին է գիջում Միջագետքը և անդրտիգրիսյան երկրները:

Մծբինի դաշնագրով Հայաստանը ևս, իբրև Հոռմի դաշնակից, ազատագրվում է Սասանյան Պարսկաստանի տիրապետութունից, որով վերականգնվում են նրա ինքնուրույնութունն ու թագավորութունը: 297 կամ 298 թթ. Հոռմեական կայսրութեան օժանդակութեամբ ու համաձայնութեամբ Հայաստանում գահ է բարձրանում Նոսրով II-ի որդին՝ Տրդատ III-ը (297/8–330), որը գործուն կերպով մասնակցել էր 296–297 թթ. կռիվներին:

Տրդատ III-ի գահակալութեան ժամանակ Հայաստանում տեղի են ունենում սոցիալական–տնտեսական և մշակութային խոշոր փոփոխութուններ: Նրա ժամանակ այստեղ ոչ միայն վերջնականապես կործանվում են ստրկատիրական կարգերը և դրանց փոխարեն հաստատվում են ավատատիրական կարգեր, այլև քրիստոնեութունը հայտարարվում է պետական կրոն: IV դարի սկզբից հայ ժողովրդի պատմութեան մեջ սկսվում է մի նոր դարաշրջան՝ ավատատիրութեան դարաշրջանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ ԵՎ ԹԱՏՐՈՆ

Հեյլենիստական մշակույթը Հայաստանում

Ք. ա. III դարից հունական մշակույթը, դիցաբանությունը և հունարեն լեզուն զգալի չափով տարածվում են նաև Հայաստանում:

Մոփքի հայ թագավորների՝ հունարեն մակագրություններով կտրված դրամների երկրորդ երեսները հաճախ զարդարված են հունական դիցաբանությունից ու առասպելներից վերցված խորհրդապատկերներով: Նույն այդ դրամների վրա հայ թագավորները երբեմն նաև իրենք իրենց անվանում են «հեյլենասեր»: Արմավիրում հայտնաբերված արձանագրություններից մեկում, ինչպես արդեն նշված է, հայոց Անահիտ աստվածուհին նույնացված է հունական դիցուհի Արտեմիսի հետ և անվանված է նրա անունով: Մի այլ արձանագրության մեջ բերված է ութ տողանոց մի խրատական բանաստեղծություն, որտեղ հիշատակված են Ք. ա. III դարի հույն նշանավոր բանաստեղծ, «Գործեր և օրեր» խրատական պոեմի հեղինակ Հեսիոդոսի և նրա եղբոր՝ Պերսեսի անունները: Նշված այս փաստերը, որոնք վերաբերում են Ք. ա. III դարի երկրորդ կեսին, ցույց են տալիս, որ հայ ավագանին վաղուց ոչ միայն ընդգրկված էր հեյլենիստական մշակույթի ոլորտի մեջ, ոչ միայն լավ էր իմանում հունարեն լեզուն ու հունական դիցաբանությունը, այլև ծանոթ էր հին հունական դասականների աշխատություններին:

Ք. ա. III դարից սկսած՝ Հայաստանում սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հատկապես քաղաքների զարգացման, տեղական ու հունական մշակույթների սինթեզի, փոխազդեցության հիման վրա առաջանում և զարգանում է հայկական հեյլենիստական մշակույթը: Հայաստանում ստեղծված կամ հայկական հեյլենիստական մշակույթը զարգանում էր ինքնուրույն ուղիով, տեղական ավանդույթների, տեղական ինքնատիպ հատկանիշների պահպանումով ու զրոշմով,

Թեև միաժամանակ հանդիսանում էր Արևելքի երկրներում ստեղծված հելլենիստական ընդհանուր, մշակույթի մի մասը:

Ինչպես Արևելքի շատ երկրներում, նույնպես և Հայաստանում հելլենիստական մշակույթը առավելապես հանդիսանում էր ստրկատիրական վերնախավի ու քաղաքային բնակչության մշակույթ և տարածված էր սրանց շրջանում: Այդ պատճառով էլ հայկական հելլենիստական մշակույթը գրեթե բացառապես զարգանում էր արքունիքում, ստրկատերերի ապարանքներում և քաղաքներում:

Հակառակ սրան, գյուղական բնակչությունը, այսինքն բուն ժողովուրդը ոչ միայն պահպանում էր իր լեզուն, կենցաղը, սովորույթներն ու հավատալիքները, այլև շարունակում զարգացնել օտարամուտ ազդեցություններից զերծ հայկական մշակույթը: Որոշ չափով բուն հայկական մշակույթը պահպանվում և զարգանում էր նաև մեհյաններում:

Ք. ա. II և I դարերում Հայաստանի միավորմանը, նրա տնտեսական ու քաղաքական հզորությունը գուզրնլթաց՝ վերելք է ապրում նաև հայկական մշակույթը. Հայաստանը դառնում է Արևելքի մշակութապես զարգացած առաջավոր երկրներից մեկը:

Մովսես Խորենացին վկայում է, որ հայկական

Գրականությունը և պատմագրությունը

մեհյաններում, հատկապես Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, եղել են հայերեն լեզվով գրված մեհենական տարեգրություններ, հավանաբար նաև ուրիշ կրոնական գրքեր: Սակայն նա դժբախտաբար չի տեղեկացնում մեզ, թե այդ գրքերը ինչպիսի նշանագրերով էին գրված: Արաքս գետի ափին գտնվող Դաշրուռուն գյուղի մոտ ժայռերի վրա հայտնաբերվել են գիտությունը անծանոթ նշանագրեր, որոնք որոշ նմանություն ունեն հայկական ձեռագրերում պահպանված գաղափարագրերի հետ: Առանձին ուսումնասիրողներ, հիմնվելով հայտնաբերված այս նշանագրերի և Մովսես Խորենացու վկայությունների վրա, ենթադրում են, որ դեռևս ն. Ք. մի քանի դար առաջ Հայաստանում գոյություն են ունեցել հայկական մեհենական նշանագրեր: Եթե իրոք գոյություն են ունեցել հայկական մեհենական նշանագրեր, ապա պետք է կարծել, որ դրանք զանգվածային գործածության համար տարածված չեն եղել, այլ, ինչպես Եգիպտոսում և այլ երկրներում, ունեցել են կաստայական բնույթ, դրանց ծանոթ են եղել միայն քրմերը և դրանցով գրվել են բացառապես կրոնական գրքեր և մեհենական տարեգրություններ:

Հայերեն լեզվով աշխարհիկ բովանդակություն ունեցող երկեր, բանաստեղծություններ, երգեր նամակներ և զանազան գրություններ գրելու համար Հայերը օգտագործել են պարսկական և հունական տառերը: Մովսես Խորենացին վկայում է, որ նույնիսկ իր ժամանակ Հայաստանում գոյություն են ունեցել պարսկական ու հունական գրերով գրված սահմանափեճերի, պայմանագրերի, ավատատիրական տների ազնվական ծագումը ապացուցող գրույցների անբավ մատյաններ:

Սակայն նույն այս ժամանակ Հայկական արքունիքում, ազնվականության և քաղաքային բնակչության շրջանում գրականությունը, գիտությունը և մշակույթի մյուս ճյուղերը զարգանում էին սկզբում արամեերեն, իսկ հետագայում՝ հունարեն լեզուներով: Պետական գրագրությունները և պետական դիվանը նույնպես վարում էին այդ լեզուներով:

Առաջին Հայ հեղինակը, որի մասին մեզ տեղեկություն է հասել, Հայոց Արտաշես I Թագավորի որդի Վրույրն է: Մովսես Խորենացին, օգտվելով մեհենական պատմությունից և այլ աղբյուրներից, Վրույրին անվանում է «այր իմաստուն և բանաստեղծ»: Սակայն, դժբախտաբար, Պատմահայրը չի նշում նրա գրվածքներից կամ բանաստեղծություններից որևէ մեկը:

Հնագույն Հայ հեղինակներից ու պատմագիրներից մեկն էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցի Ողյումպ քուրմը, որը հավանաբար ապրել և ստեղծագործել է Ք. ա. I դարում: Սա գրել է «Մեհենական պատմություն», որի մեջ շատ արժեքավոր տեղեկություններ են եղել Երվանդ IV-ի և Արտաշես I-ի ժամանակ Հայաստանում տեղի ունեցած դեպքերի, քաղաքաշինարարության և մեհյանների մասին: Մովսես Խորենացին, որը զգալի չափով օգտվել է Ողյումպ քրմի աշխատությունից, սրան անվանում է «ստուգապես պատմող» և «զրող մեհենական պատմութեանց»:

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները դառնում են հելլենիստական մշակույթի կարևոր կենտրոններ: Մի շարք հույն գիտնականներ, հալածվելով կամ փախչելով հոմեացիներից, գալիս են և հաստատվում Հայաստանում:

Պլուտարքոսը վկայում է, որ Հայկական արքունիքում էր ապրում իր հայրենի քաղաքից արքորված հույն նշանավոր հոետոր ու պատմագիր Ամփիկրատես Աթենացին, որը նախընտրելով Հայաստանը՝ արհամարհանքով մերժել էր Սելևկյանների հրավերը: Հայաստանում եղած ժամանակ նա գրել է «Մեծ մարդկանց մասին» վերնա-

գրով մի աշխատություն, որտեղ, հավանաբար, շարադրված է եղել նաև Տիգրան II-ի կյանքն ու գործունեությունը:

Ք. ա. 71 թ. Հայաստան է գալիս և հայկական արքունիքում է ապրում նաև հույն հայտնի փիլիսոփա, հոետոր և պատմագիր Մետրոդորոս Ակեպսիացին, որը մինչ այդ եղել էր Պոնտոսի պետական գործիչներից և Միհրդատ Պոնտացու խորհրդականներից մեկը: Պլուտարքոսը սրան անվանում է «բազմագիտուն մարդ», իսկ Պլինիոսը՝ «Հոռոմեասյաց»: Սա գրել է Տիգրան II-ի ընդարձակ պատմությունը և կենդանիների բանականություն մասին մի փիլիսոփայական աշխատություն: Այս վերջին աշխատությունը, ինչպես վկայում է Ք. հ. առաջին դարի հեղինակ Փիլոն Ալեքսանդրիացին, թարգմանված է եղել հայերեն: Թե՛ Ամփիկրատես Աթենացու և թե՛ Մետրոդորոս Ակեպսիացու վերոհիշյալ աշխատությունները մեզ չեն հասել:

Այս ժամանակ Հայաստանում եղել են նաև հայ նշանավոր գիտնականներ և մտածողներ: Հայաստանում հելլենիստական լավագույն և բազմակողմանի կրթություն ստացած հայ գիտնականներից մեկն էր Տիրանը, որին Լուկուլլոսը գերեզմարել և տարել էր Հոռոմ: Սա Հոռոմում հռչակված էր իբրև նշանավոր հոետոր և քերականագետ: Նա հոռոմեացի նշանավոր պետական գործիչ և հոետոր Ցիցերոնի անձնական բարեկամն էր և նրա դպրոցի հայտնի ուսուցիչներից մեկը: Տիրանը Հոռոմում հիմնել էր նաև մի գրադարան, ուր հավաքել էր բազմաթիվ ձեռագիր գրքեր:

Հայկական հելլենիստական մշակույթի նշանավոր դեմքերից մեկն էր հայոց Արտավազդ II թագավորը: Սա ոչ միայն հայկական արքունիքում հելլենիստական փայլուն կրթություն ստացած, հելլենիստական մշակույթը մեծապես զնահատող ու հովանավորող պետական գործիչ էր, այլև հունարեն լեզվով գրված բազմաթիվ երկերի հեղինակ: «Արտավազդը,– վկայում է Պլուտարքոսը,– գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ»: Նրա աշխատությունները մեզ չեն հասել: Սակայն նրանցից մի քանիսը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, պահպանվել էին մինչև Ք. հ. II դարը:

I-III դարերում հայ Արշակունի թագավորները ևս Հայաստան են հրավիրել ու հովանավորել հելլենիստական մշակույթի մի շարք ներկայացուցիչներին: Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ հայոց թագավոր Սոհեմոս-Տիգրանի հրավերով Հայաստան է գալիս և երկար ժամանակ Արտաշատի հայկական արքունիքում է ապրում II դարի հայտնի հոետոր, գրող և մանկավարժ Յամբղիքոս Բարեկունացին: Սա Արտաշատում զբաղվում է հայ արքայագույնների դաստիարակու-

Թյամբ և այնտեղ գրում 35 հատորանոց «Բարեկրնիկա» պատմավիպական երկը, որից միայն առանձին հատվածներ են հասել մեզ՝ հետագա հեղինակների միջոցով:

II դարի վերջից հայ Արչակունի թագավորները առանձին հետաքրքրություն են հանդես բերում Հայաստանի պատմության նկատմամբ: Հայոց Վաղարշ II թագավորի հանձնարարությունները ասորի փրիստոփա և պատմագիր Մար Աբաս Կատինան, օգտվելով հայկական արքունի դիվանում պահվող ժողովրդական ավանդությունների, առասպելների ու երգերի ժողովածուներից, հունարեն և ասորերեն լեզուներով գրում է Հայաստանի նախնական պատմությունը: Մովսես Խորենացին և Սեբեոսը իրենց աշխատությունների առաջին մասը գրելիս՝ մեծապես օգտվել են նրա աշխատությունից: Սեբեոսը նրան անվանում է «Մծուրնեցի»: Այս անվանումը ցույց է տալիս, որ նա ծնվել կամ երկար ժամանակ ապրել է Հայաստանի Մծուրն քաղաքում: Անկասկած է, որ նա լավ է իմացել նաև Հայոց լեզուն:

Մար Աբաս Կատինա Մծուրնեցու ժամանակակից էր ասորի նշանավոր գրող ու պատմագիր Բարդաճան Եղեսացին (154–222): Ըստ Մովսես Խորենացու վկայության՝ սա Հայաստան եկած առաջին քրիստոնյա քարոզիչներից մեկն էր: Իր քարոզչության մեջ Հայերի շրջանում հաջողություն չունենալով, Բարդաճանը գալիս է Դարանադղաց գավառի Անի ամրոցը և իրեն նվիրում գիտական աշխատանքի: Այնտեղ նա գտնում, ընթերցում և Հայերենից ասորերեն է թարգմանում «Մեհենական պատմությունը», որտեղ եղել են նաև տեղեկություններ հայ թագավորների գործունեության մասին: Նա այնուհետև այս աշխատության և նոր ժամանակների վերաբերյալ իր ունեցած տեղեկությունների հիման վրա գրում է Հայաստանի պատմությունը, որը հետագայում թարգմանված է եղել նաև հունարեն: Նրա աշխատությունը ևս, որից Մովսես Խորենացին օգտվել է, դժբախտաբար մեզ չի հասել:

Բացի Ողյուձ պրմի և Բարդաճանի թարգմանած մեհենական պատմություններից, Հայերեն լեզվով գոյություն է ունեցել նաև Հայկազանց և Տիգրան Երվանդյանին նվիրված ու չորս «հազներգությունից» այսինքն՝ մասերից բաղկացած չափածո մի երկ, որը կոչվել է «Հիւսուժն Պիտոյից»: Մովսես Խորենացին, որն անձամբ կարդացել և օգտվել է այս գրքից, թեև հեղինակի անունը չի տալիս, բայց նրան անվանում է «իմաստունների մեջ իմաստնագույն»:

**Ժողովրդական
վեպը**

Ք. ա. IV–I դարերում, ինչպես և հետագա շրջանում ծաղկում է նաև հայկական ժողովրդական վեպը կամ էպոսը:

Հայ վիպասանները և գուսանները ստեղծում են Հայաստանում տեղի ունեցած դեպքերի և Հայ թագավորների շուրջ Հյուսվող պատմաավանդական բնույթի գեղարվեստական բարձրարժեք բազմաթիվ վեպեր և գրույցներ: Նրանք այդ ստեղծագործությունների մեջ մեծ չափով արտացոլել են Հայ ժողովրդի պայքարը արտաքին թըշնամիների դեմ, Հայ ժողովրդի ներքին կյանքը, նրա կենցաղը, սովորույթներն ու հավատալիքները:

Ժողովրդական պատմաավանդական վեպերի մեջ առաջնակարգ տեղ է գրավում Արտաշես I-ի անվան շուրջը Հյուսված վեպը, որը հավանաբար ստեղծվել է Ք. ա. II-I դարերում: Այդ վեպի մեջ գովերգվել են Հայկական հողերի միավորման և Հայկական միասնական կենտրոնացված պետականությունից ստեղծման համար Արտաշեսի մղած կռիվները Սելևկյանների (ըստ վեպի՝ հռոմեացիների), Երվանդ IV-ի և կովկասյան ցեղերի դեմ, Արտաշեսի կատարած շինարարական գործերը, Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը, նրա ժամանակ Հայաստանում տնտեսական կյանքի, արհեստների և մշակույթի զարգացումը և այլն:

Վեպում առանձին տեղ է գրավում Արտաշեսի կռիվը ալանների դեմ և այդ կապակցությամբ նրա ամուսնությունը ալանց թագավորի դստեր՝ Սաթենիկի հետ: Ըստ վեպի՝ ալանները, միացած կովկասյան այլ ցեղերի հետ, կողոպուտի նպատակով Վրաստանից ներխուժում են Հայաստանի Հյուսիսային շրջանները: Արտաշեսն իր զորքով շարժվում է ալանների դեմ: Տեղի ունեցած ճակատամարտում ալանները պարտվելով, քաշվում են Կուր գետի Հյուսիսային ափը և բանակ դնում այնտեղ, իսկ Արտաշեսը բանակ է դնում նույն գետի հարավային ափին: Ալանաց թագավորը հաշտություն է առաջարկում Արտաշեսին և խնդրում նրան ազատել իր որդուն, որը գերի էր ընկել Հայերի ձեռքը: Սակայն Արտաշեսը մերժում է կատարել նրա խնդիրը: Դրանից հետո ալանաց թագավորի դուստր Սաթենիկը, գալով Կուր գետի ափը, հեռվից դիմում է Արտաշեսին.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշես,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ դպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց դարմից բառնալ զկենդանութիւն,

Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն յախտննական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:

Արտաշեսը լսելով Սաթենիկի իմաստուն խոսքերը և տեսնելով նրա գեղեցկությունը՝ ցանկանում է նրան կնութեան առնել: Նա խնամախոս է ուղարկում պաճախների թագավորի մոտ՝ հաշտվելու և նրա դուստրը կնութեան խնդրելու համար: Սակայն պաճախների թագավորը պատասխանում է.

Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս
Հազարս ի հազարաց
Եւ բիրս ի բիրուց
Ընդ քաջագգւոյ կոյս օրիորդիս Ալանաց:

Լսելով, որ հայրը դատեր համար մեծ գլխագին է պահանջում, Արտաշեսը գոյություն ունեցող սովորութեան համաձայն փախցնում է Սաթենիկին:

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեան գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկեօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթն ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկեօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:

Տեղի է ունենում արքայական հարսանեկան հանդեսը, որի ժամանակ՝
Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի հարսնութեան Սաթինկանն:

Ժողովրդական վեպից բերված վերոհիշյալ հատվածների մեջ հայ վիպասաններն ու գուսանները ոչ թե պատմական ճշտությամբ նկարագրել են Արտաշեսի ամուսնությունը, այլ հայ ժողովրդի մեջ գոյություն ունեցող հարսնախոսություն, հարսի համար գլխագին պահանջելու, օղակա-

պարանով մարդկանց բռնելու, հարս փախցնելու, հարսանիքի ժամանակ դրամ չաղ տալու սովորույթները:

Այս վեպի անմիջական շարունակությունն է հանդիսանում Արտաշեսի և Սաթենիկի որդու՝ Արտավազդի անվան շուրջը հյուսված պատմա-ուսսպելական վեպը:

Ըստ վեպի՝ Արտավազդը մեծանալով դառնում է քաջ, բայց և անձնահաճ, հպարտ, իշխանասեր և նախանձոտ:

Դեռևս Երվանդ IV-ը մարական ծագում ունեցող վիչապագունների նահապետ իշխան Արգավանին էր տվել պետություն մեջ թագավորից հետո երկրորդը լինելու աստիճանը: Արտաշեսը ևս այդ աստիճանը թողել էր Արգավանին, որովհետև սա Երվանդ IV-ին չէր օգնել և իր զորքերը դուրս էր բերել ճակատամարտից:

Արտավազդը, նախանձելով Արգավանի երկրորդությունն այս աստիճանին, գրգռում է իր հորը և հայտնում, որ իբր թե Արգավանը ինքն է ուզում թագավոր դառնալ: Արտաշեսը հավատալով իր որդուն՝ Արգավանին զրկում է երկրորդություն աստիճանից և այն տալիս է Արտավազդին:

Մի անգամ Արգավանը Արտաշեսին և սրա որդիներին վիչապների տաճարում ճաշի է հրավիրում և ուզում է դավել թագավորին: Ճաշի ժամանակ Արտաշեսի որդիները, երբ իմանում են Արգավանի դավադրությունն մասին, մեծ աղմուկ և շփոթ են բարձրացնում: Այդ դեպքից զայրացած Արտաշեսը վերադառնում է Արտաշատ և իր Մաթան որդուն մեծ զորքով ուղարկում վիչապների դեմ: Սա սպանում է վիչապագուններից շատերին, այրում և ավերում է նրանց պալատը:

Այս դեպքից մի քանի տարի հետո Արտավազդը Արտաշատ մայրաքաղաքում իրեն համար ապարանք կառուցելու տեղ չգտնելով՝ վիչապագուններից խլում է Նախճավանը, Արաքս գետի հյուսիսային կողմում գտնվող նրանց գյուղերը, պալատներն ու բերդերը: Նա Շարուրի դաշտում շինում է Մարակերտ քաղաքը և բնակվում այնտեղ:

Արգավանի որդիները, այսինքն՝ վիչապագունները, չհանդուրժելով Արտավազդի արարքները, կռիվ են սկսում նրա դեմ: Սակայն քաջ արքայորդին հաղթում և սպանում է բոլոր վիչապագուններին ու նրանց հորը՝ Արգավանին:

Առասպելական և դիցաբանական բնույթ ստացած ժողովրդական վեպի այս մասերի պատմական իրողությունն այն է, որ Արտավազդը կռվել ու հաղթել է Շարուրի դաշտում և Մասիս լեռան ստորոտում բնակվող և հավանաբար մարական ծագում ունեցող մի ցեղի, որի հավատալիքների մեջ առաջնակարգ տեղ է զբաղեցրել վիչապների, այսինքն՝

օձանման երևակայական կենդանիների պաշտամունքը: Այս տեսակետից ուշագրավ է, որ հայ ժողովրդի հավատալիքների մեջ ևս Մասիս լեռը համարվել է վիշապների, քաջքերի, դեերի և չար ոգիների բնակավայր:

Ըստ ժողովրդական վեպի՝ Արտաշես թագավորը մի արչավանքի ժամանակ օտար երկրում՝ Մարանդում հիվանդանում և վախճանվում է: Նա իր մահվան անկողնում հիշելով Նավասարդի տոնը՝ ասում է.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվագելն եղանց և զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուար և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէնն է թագաւորաց:

Արտաշեսի դիակը տեղափոխվում է հայրենիք: Երկիրը խոր կերպով սգում և փառավոր թաղում է կազմակերպում իր նշանավոր թագավորի պատվին: Արտաշեսի հետ թաղում են մեծ հարստութուններ և բազմաթիվ ստրուկներ: Արտավազը նախանձելով իր հոր փառքին, ասում է.

Մինչ դու գնացեր,
Եւ զեկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեն:

Սրա համար Արտաշեսը անիծում է իր որդուն.

Եթէ դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք, տարցին
յԱզատն ի վեր ի Մասիս,
Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես:

Կատարվում է հոր անեծքը: Որսի ժամանակ քաջքերը Արտավազին գլորում են Մասսի անդունդներից մեկը և շղթայում: «Պառապանքը,- տեղեկացնում է Մովսես Սորենացին,- սրա մասին զրուցում են, թե նա արգիլված է մնում այրում, երկաթե շղթաներով կապված, և երկու շուն կրծում են նրա շղթաները, և նա ջանում է դուրս գալ և աշխարհին վերջ տալ: Բայց ասում են, որ դարբինների կոնահարություն ձայնից նրա կապանքներն ամրանում են: Դրա համար էլ մինչև այժմ դար-

բիններից չատերը առասպելին հետևելով՝ կիրակի օրերը երեք կամ չորս անգամ խփում են սալին, որպեսզի, ասում են, Արտավազգի շղթաներն ամրանան»:

Ըստ Մովսես Խորենացու մեջ բերած այս պատումի՝ Արտավազգը չարության մարմնացումն է: Սական Եզնիկ Կողբացին մի այլ պատումի հիման վրա տեղեկացնում է, որ հեթանոս հայերը հավատում են, թե Արտավազգը բանտարկված ու շղթայված է դևերի կողմից և մինչև այժմ կենդանի է, և որ նա ազատվելու է և տիրելու Հայոց աշխարհին: Վիշապների դեմ կռվելու, նրանց հաղթելու ու կոտորելու, քաջքերի կամ դևերի կողմից շղթայված լինելու երևույթները նույնպես ցույց են տալիս, որ ժողովրդական վեպի սկզբնական պատումների մեջ Արտավազգը եղել է դրական հատկանիշներով օժտված դյուցազուններից մեկը:

Այս առասպելի պատմական հիմքը անշուշտ այն է, որ Արտավազգը սպանվել և անհայտ կորել է Մասիս լեռան ստորոտում՝ վիշապագույնների երկրում: Ժողովրդի մեջ տարածված է եղել, որ դյուցազն Արտավազգին բանտարկել և շղթայել են վիշապագույնները: Հույսեր են եղել, որ քաջ արքայորդին կազատվի շղթաներից, կվերադառնա և կրկին կթագավորի: Սակայն երբ այդ հույսերը չեն արդարացել, այնուհետև կարծել են, որ վիշապագույնները Արտավազգին կերպարանափոխել և նույնպես դարձրել են չար: Արտավազգի բնավորության այս երկվութունը բացատրելու համար վիպասանները հնարել են, որ իբր թե վիշապագույնների կանայք կախարդել են նրան կամ վիշապագույնները մանուկ հասակում գողացել են իսկական արքայորդուն և նրա փոխարեն դև են դրել:

Վիշապագույնք գողացան
Զմանուկն Արտավազգ,
Եւ դև փոխանակ եղին:

Հնարավոր է, որ առասպելի այս մասում արտացոլվել են Անտոնիոսի կողմից Արտավազգ II-ի ձերբակալումն ու գերեվարումը, ինչպես և Հայաստանում գոյություն ունեցող այն հույսերը, որ Արտավազգ II-ը շուտով կազատվի գերությունից, կվերադառնա Հայաստան և կրկին գահ կբարձրանա:

Բացի վերոհիշյալ վեպերից, գոյություն է ունեցել նաև Տիգրան II-ին նվիրված մի առանձին վեպ, որը ղժբախտաբար ամբողջապես և ինքնուրույն մեզ չի հասել: Այս վեպի առանձին հատվածնե-

րը, անունները նույնության պատճառով հետագայում միացվել ու խառնվել են Տիգրան Երվանդյանի վեպին: Անկասկած է, որ այս վեպի մեջ Տիգրանին տրված «Մեծն Տիգրան», «բազմաբիրաւոր» և «հաղթող աշխարհակալ» կոչումները, Տիգրանի կողմից Հայաստանի սահմանները մեծ չափով ընդարձակելը, շատ ազգերի տիրելը և հարկատու դարձնելը, լավ գինված բյուրավոր զորքեր և մեծ հարստություններ ունենալը, Տիգրանակերտի կառուցումը և այլն վերաբերում են ոչ թե Տիգրան Երվանդյանին, այլ Տիգրան II-ին:

Ժողովրդական վեպի մեջ հայ թագավորներն ու զորավարները հանդես են բերված գունազարդված և հերոսականացված տեսքով: Նրանց վերագրված են հոգեկան լավագույն այնպիսի հատկություններ, որոնք գնահատված, հարգված ու սիրված են եղել հին Հայերի մոտ: Ըստ վեպի՝ նրանք արի ու քաջ են, հայրենասեր, իմաստուն, առաքինի, ողջխոս, պերճախոս, շինարար և արդարադատ: Ժողովրդական երգիչները հայ թագավորներին ու զորավարներին գունազարդելով դրական հատկություններով և առաքինություններով՝ ոչ թե նրանց ներկայացրել են այնպես, ինչպես եղել են կյանքում, այլ այնպես, ինչպես ժողովրդի պատկերացմամբ պետք է լինեին:

Հին Հայերի մոտ գնահատվել ու գովերգվել են նաև հերոսների մարմնի գեղեցկությունը, համաչափությունը և ֆիզիկական ուժը: Երվանդը սրտոտ է և հաղթանդամ: Արտաշեսի զորավար և դայակ Սմբատը ունի հսկա մարմին՝ իր քաջություն համեմատ, Տիգրանը դեմքով գեղեցիկ է, խարտյաչ, թիկնավետ, բարձրահասակ, գեղեցկատուն, մարմնի մասերով համաչափ և ուժով: Իսկ կանայք դեմքով գեղեցիկ են, վայելչագեղ, գեղաչյա, իմաստուն և խորագետ:

Բացի պատմա-ավանդական վեպերից և դիցարանական առասպելներից, անշուշտ, գոյություն են ունեցել նաև աշխատանքի, սիրո, ուրախություն, հարսանիքի, տխրություն, վշտի, թաղման և այլ ժողովրդական երգեր: Սակայն տարաբախտաբար հայ ժողովրդի առօրյան արտահայտող այդ երգերը մեզ չեն հասել:

Այս դարաչրջանում ևս ժողովրդական վեպերը, առասպելները և երգերը հորինում, մշակում և հարստացնում էին վիպասաններն ու գուսանները: Հայաստանում հատկապես հռչակված էին Գողթն գինեվետ գավառի երգիչները: Շրջելով ամեն տեղ, գուսանները քաղաքների ու գյուղերի հրապարակներում, իշխանական պալատներում, քաղաքացիների տներում, շինականների խորհիվներում տոնական հանդեսների, հարսանիքների ու խնջույքների ժամանակ պատմում էին դյուցազնական վեպեր և առասպելներ, նվագի ուղեկցությամբ

կատարում ժողովրդական երգեր ու պարեր: Նրանք հորինում էին նաև երգերի երաժշտությունը: Նրանց երաժշտական գործիքներն էին փանդիոր, տավիրը, քնարը, վինը, սրինգը և փոքր թմբուկը: Գառնիի հին դամբարաններից մեկում գտնվել է ոսկրից պատրաստված մի սրինգ, որը մեզ հասած ամենահին երաժշտական գործիքն է:

Հայաստանի քաղաքներում զարգացման բավականին բարձր աս-
Թատրոնը տիճանի վրա էր գտնվում հայկական հելլենիս-
տական թատրոնը: Պլուտարքոսը վկայում է, որ Տիգրանակերտում գտնվում էին մեծ թվով հույն դերասաններ, որոնց Տիգրան II-ը հրավիրել էր զանազան տեղերից իր նորակառույց թատրոնի բացումը նշանավորելու համար: Ք. ա. 69 թ. Լուկուլլոսը, գրավելով Տիգրանակերտը, այդ դերասաններին օգտագործում է իր հաղթահանողների ժամանակ թատերական ներկայացումներ և խաղեր տալու համար: Նույն պատմիչի մի այլ վկայությունից հայտնի է, որ Արտաշատը նույնպես ունեցել է իր թատրոնը, որտեղ Ք. ա. 53 թ. Կրասոսի դեմ տարված հաղթանակի տոնախմբությունների ժամանակ, հայ և պարթև մեծամեծների ներկայությունը ներկայացվել է Ք. ա. V դ. հույն նշանավոր թատերագիր էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Պլուտարքոսի վկայություններից երևում է, որ հատկապես Տիգրանակերտի թատրոնը կառուցված է եղել ոչ թե վերնախավի, այլ քաղաքային զանգվածային հանդիսատեսի համար: Նա, հավանաբար, նման է եղել հելլենիստական քաղաքների ամֆիթատրոններին: Թատրոնի շենքը ոչ միայն օգտագործվել է ներկայացումներ տալու, այլև տոնական հանդեսներ կատարելու և քաղաքացիների ժողովներ գումարելու համար: Թատրոն հաճախելը հելլենիստական քաղաքների բնակչության կենցաղի անբաժանելի մասն էր կազմում: Հովհան Մանդակունի կաթողիկոսը (478–490) թատրոնի դեմ ուղղված իր ճառում հայտնում է, որ թատրոն էին հաճախում ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք:

Արտաշատի և Տիգրանակերտի թատրոնների խաղացանկը մեզ հայտնի չէ: Սակայն անկասկած է, որ այդ թատրոններում, բացի հին Հունաստանի մեծագույն ողբերգակների երկերից, ներկայացվել են նաև Արտավազդ II-ի գրած ողբերգությունները: Մի քանի ուսումնասիրողներ ենթադրում են, որ Արմավիրում հայտնաբերված հունարեն գրված ութտողանի չափածո տեքստը վերցված է Արտավազդ II-ի ողբերգություններից մեկից:

Հայկական հելլենիստական թատրոնն իր գոյությունը պահպա-

նում և զարգանում էր նաև Ք. Հ. I-III դարերում: Ֆրանսիական նչանավոր գրող Ֆ. Ռաբլեն, օգտվելով Լուկիանոսից, հավանաբար նաև մի այլ վատահեղի սկզբնաղբյուրից, իր «Փարզանտյուն և Պանտագրյուելը» վեպում հայտնում է, որ Տրդատ I-ի խնդրանքով Ներոն կայսրը նրան է նվիրում իր ամենահայտնի միմոսներից մեկին: Թատերական ճաշակը այնքան տարածված ու հարգված էր Հայաստանում, որ նույնիսկ թատերական տեսարանները գեղազարդման նյութ են դառնում կիրառական արվեստում: Մայկոպ քաղաքի մոտ պեղված Հին դամբարաններից մեկում հայտնաբերվել է Հայոց Բակուր (161-163) թագավորի ոսկեգոծված արծաթե թասը, որի կողերը գեղազարդված են թատերական տեսարաններով, դիմակներով, պարող դերասանուհու պատկերով և այլն:

Հայկական հելլենիստական թատրոնը ծառայում էր իշխող ստրկատիրական դասակարգի շահերին: Նրա հիմնական նպատակն էր գաղափարապես ազդել աշխատավոր զանգվածների վրա:

Հելլենիստական թատրոնի կողքին գոյություն ունեւր նաև հայկական ժողովրդական թատրոնը: Այս թատրոնի դերասանները նույն գուսաններն էին: Որ իրոք գուսանները միաժամանակ եղել են դերասաններ, երևում է նրանից, որ հունարեն «միմոս» բառը հին հայերեն թարգմանությունների մեջ թարգմանված է «գուսան»:

Գուսանական խմբերը քաղաքների փայտաշեն թատրոններում, իջևանատներում, հրապարակներում, գյուղերում, տոնական հանդեսներում և այլուր ներկայացրել են ողբերգություններ, կատակերգություններ և խեղկատակություններ: Վերջին երկու ժանրերի ներկայացումների նյութը մեծ մասամբ վերցվում էր ժամանակակից և առօրյա կյանքից: Այդ տիպի ներկայացումների ժամանակ կատակաբան գուսանները կամ ծաղրածու գուսանները, նպատակահարմար դիմակներ հագած, ծաղրում էին ոչ միայն մարդկային վատ արարքները, այլև հանդիսատեսին լավ ծանոթ ժամանակակից իշխանների ու հոգևորականների ազահույությունը, ընչաքաղցությունը, շատակերությունը, սնապարծությունը, դաժանությունը, տգիտությունը, ժլատությունը և այլն: Հովհան Մանդակունին ժողովրդական թատրոնի դեմ ուղղված հիմնական մեղադրանքներից մեկը համարում է այն, որ այդ թատրոնը «որդիներին թշնամացնում է հայրերի, իսկ ստրուկներին՝ տերերի հետ»:

Ժողովրդական թատրոնի ներկայացումները տեղի էին ունենում նվագի, երգերի ու պարերի ուղեկցությամբ: Գուսանական խմբերի հետ ներկայացումների ու խնջույքների ժամանակ հանդես եկող դե-

րասանուհի-պարուհիները կոչվում էին «վարձակ»: Ք. ա. II դարի նշանավոր վարձակ դերասանուհիներից մեկն էր Նագենիկը, որը «չատ գեղեցիկ էր և երգում էր ձեռքերով», այսինքն ելույթ էր ունենում և պարում մնջախաղով:

Չորրորդ դարից սկսած՝ քրիստոնեական եկեղեցու հայրերը խիստ հալածանքներ են հարուցում թատրոնի դեմ՝ այն համարելով «հեթանոսական, դիվական և պիղծ»: Թեև ժողովրդական թատրոնն իր գոյությունը պահպանում է նաև հետագա դարերում, բայց նա մեծ անկում է ապրում:

2. ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՎ ՏՈՄԱՐ

Հայկական հեթանոսական հավատալիքները

Դեռևս հայ ժողովրդի կազմավորման գործընթացին զուգընթաց սկսում է ձևավորվել նաև հնագույն հայկական կրոնը: Հայկական պետության կազմի մեջ միավորված ցեղերի հետագա համախմբման, դրա հիման վրա մի միասնական լեզվով խոսող հայ ժողովրդի կազմավորման գործընթացը և կենտրոնացված պետականության ստեղծման ձգտումը անհրաժեշտաբար պահանջում էին միավորել նաև կրոնական գաղափարախոսությունը:

Հայկական հնագույն պանթեոնի գլխավոր աստված հանդիսանում էր Հայկը: Նրա անունով էր կոչվում Օրիոն-Երևակ աստղը և սրա համաստեղությունը: Հայկին հայերը համարում էին իրենց նախահայրը:

Զարթնող ու մեռնող բնության, արևի աստված էր Արան: Սրա պաշտամունքը շատ էր տարածված ինչպես Փոքր Ասիայի շատ ժողովուրդների, նույնպես և հայերի մեջ:

Արհեստների ու արվեստների հովանավորող աստված էր Տորքը: Սա համարվում էր Հայկի թոռներից մեկը: Սրա նշանավոր սրբավայրը կամ տաճարը գտնվում էր Անգեղ ամրոցում, որի պատճառով էլ հաճախ կոչվում է Տորք Անգեղ:

Հին հայերի մոտ շատ ուժեղ էր ջրի պաշտամունքը: Զրի, ծովի ու անձրևի աստվածուհին էր Նարը կամ Ծովինարը: Սրա պաշտամունքը երկար ժամանակ պահպանվել է ժողովրդի մեջ Նուրին և այլ անուններով: Հատկապես երաչտի ժամանակ ծիսակատարությունն-

րի ու երգերի ուղեկցութեամբ կազմվում էին թափորներ, և մաղ-
թանքներ էին արվում Մովհինարին, որպեսզի նա անձրև տար արտե-
րին: Պաշտամունքի առարկա են հանդիսացել նաև առանձին աղը-
յուրները, որոնց ժողովուրդը անվանել է «լուսաղբյուր» կամ «կաթ-
նաղբյուր»: Հայերը հավատում էին, որ այս աղբյուրներն ունեն հի-
վանդութուններ և վերքեր բուժելու հատկություն:

Ուժեղ է եղել նաև արևի, լուսնի ու աստղերի պաշտամունքը: Հա-
յաստանում գոյություն են ունեցել արևին զոհաբերելու համար նվի-
րատրված հատուկ նժույզներ: Այդպիսի նժույզներից մեկն է եղել
Քսենոփոնի ձին, որը վերջինս նվիրել է գյուղապետին, որ կերակրի ու
զոհ բերի արևին: Արևին ու լուսնին նվիրված հատուկ սրբատեղի է
գոյություն ունեցել Արմավիրում:

«Սրբազան» կամ «կենաց ծառերի» պաշտամունքը, որ գոյություն
է ունեցել դեռևս ուրարտական շրջանում, շարունակվել է նաև հայե-
րի մեջ: Ըստ Մովսես Խորենացու մեջբերած ավանդության, Արա Գե-
ղեցիկի որդին՝ Անուշավանը, նվիրված էր Արմավիրում գտնվող
սրբազան սոսիներին, որի պատճառով էլ նա կոչվում էր «Սոսա-
նվեր»: Այդ սոսիների տերևների հանդարտ կամ ուժեղ սոսափյունից
քրմերը գուշակություններ էին անում:

Հատուկ պաշտամունքի առարկա էին շան կերպարանքով պատ-
կերացվող «արլեզները» կամ «արալեզները», որոնք իբր թե պատե-
րազմում զոհված հերոսների վերքերը լիզելով՝ առողջացնում ու վե-
րակենդանացնում էին նրանց: Ըստ առասպելի, Շամիրամը հրամայել
էր իր աստվածներին՝ լիզել պատերազմում զոհված Արա Գեղեցիկի
վերքերը և վերակենդանացնել նրան: Փավստոս Բուզանդը վկայում
է, որ Մուշեղ Մամիկոնյանի սպանությունից հետո նրա դին դնում են
մի աշտարակի վրա, որպեսզի արլեզները լիզեն նրա վերքերը և վե-
րակենդանացնեն նրան:

Սակայն Արեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանա-
կից սկսած, հին պարսկական կրոնը որոշ ազդեցություն է թողնում
հայկական հեթանոսական կրոնի վրա:

Հին հայկական պաշտամունքի հիմքի վրա և մասամբ իրանական
պաշտամունքի ազդեցությամբ առաջանում և ձևավորվում է հայկա-
կան հեթանոսական կրոնի նոր պանթեոնը: Հայկական հին աստված-
ներից չատերը՝ Հայկը, Արան, Տորքը, Մովհինարը և այլք իրենց տեղը
զիջում են նոր աստվածների, թեև նրանց պաշտամունքը դրանից հե-
տո էլ երկար ժամանակ շարունակվում ու պահպանվում է ժողովրդի
մեջ:

Հայկական հեթանոսական կրոնի նոր պանթեոնի գլխավոր աստվածը Արամազդն էր, որ նշանակում է «Տեր գերագույն իմաստության»: Արամազդը համարվում էր աստվածների հայրը, երկնքի ու երկրի ստեղծողը, մարդկանց բարօրություն ու արիություն շնորհողը, երկրին լիություն ու պարարտություն պարգևողը: Հայերը նրան անվանում էին «Մեծն և արին Արամազդ»: Սրա գլխավոր մեհյանը գրտնրվում էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, որը, հավանաբար, նաև Հայոց քրմապետի կենտրոնատեղին էր:

Արամազդի դուստրն էր աստվածուհի Անահիտը, որը նշանակում է «անբիծ, անարատ»: Անահիտ աստվածուհու պաշտամունքը տարածված էր Արևելքի շատ ժողովուրդների, բայց ամենից ավելի՝ հայ ժողովրդի մեջ: «Պարսից բոլոր աստվածությունները, - վկայում է Ստրաբոնը, - պաշտվում են նաև Մարաց և Հայոց կողմից, բայց Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորին»:

Անահիտը Հայկական պանթեոնում ուներ առաջնակարգ դիրք ու նշանակություն: Նա Հայերի ամենասիրելի աստվածուհին էր, նույնիսկ գերազանցում ու մոռացության էր տալիս Արամազդին: Անահիտը համարվում էր Հայոց աշխարհի խնամակալը, ամենայն զգաստություն մայրը, մարդկանց բարերարը: Հայերի կրոնական պատկերացմամբ Հայոց աշխարհը գոյություն ուներ և կենդանություն էր առնում Անահիտ աստվածուհու շնորհիվ: Հեթանոս աստվածներից միայն Անահիտը ուներ ոսկեծույլ արձան, որի համար էլ նա կոչվում էր նաև «Ոսկեմայր», «Ոսկեծին» և «Ոսկեհատ»:

Անահիտի ամենանշանավոր մեհյանը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա (այժմ՝ Երզնկա) ավանում: Նրա մյուս նշանավոր մեհյանները գտնվում էին Արտաշատ մայրաքաղաքում և Տարոն գավառի Աշտիշատ ավանում: Այս վերջինը հայտնի էր նաև «Անահտայ աթոռ» անունով: Արմավիրում հայտնաբերված հունարեն արձանագրություններից երևում է, որ Հայաստանի այս հնագույն մայրաքաղաքում ևս գտնվում էր Անահիտ-Արտեմիս աստվածուհու նշանավոր մեհյաններից մեկը: Անահիտ աստվածուհուն զոհաբերելու համար նվիրատրված էին հատուկ երինջներ, որոնք ազատ թափառում էին արոտներում, և ոչ ոք նրանց ձեռք չէր տալիս: Սրանց ճակատին խարանված էին ջահաձև նշաններ:

Անահիտ աստվածուհուն նվիրված էր երկու տոն, որ նշվում էին գարնանն ու աշնանը: Այս տոները տեղի էին ունենում մեծ հանդիսավորությամբ, ժողովրդական երգերով, պարերով ու խաղերով:

Հայկական նոր պանթեոնի մեջ մտած, տեղական ծագում ունեցող,

Հայերի սիրելի աստվածներից մեկն էր Վահագնը: Սա համարվում էր քաջության, ուժի, հերոսության, ուղիղ և ամպրոպի աստված: Նա կոչվում էր «Քաջն Վահագն»: Հայ թագավորները և ուղիղները նրանից էին քաջություն խնդրում:

Հայ գուսանները Վահագնի և նրա կատարած քաջագործությունների մասին առասպելական բազմաթիվ երգեր ու զրույցներ էին հորինել: Այդպիսի հին երգերից մեկն էր Վահագնի ծննդին նվիրված երգը, որը Պատմահայր Մովսես Խորենացին լսել է գուսաններից և քաղվածք բերել իր «Հայոց պատմություն» մեջ: Հեթանոսական շրջանի ժողովրդական այս հին ու անկրկնելի երգի մեջ Վահագնի ծնունդը նկարագրված է այսպես.

Երկն էր երկին, երկն էր երկիր,
Երկն էր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուն էր և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելան էր,
Ընդ եղեգան փող բոց ելան էր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաչ պատանակիկ.
Նա հուր հեր ուն էր,
Բոց ուն էր մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:

Առասպելական մի այլ հին երգի մեջ նկարագրված է եղել, թե ինչպես Վահագնը կռվել է վիշապների հետ և հաղթել նրանց: Այս պատճառով էլ նա կոչվել է նաև «Վիշապաքաղ»: Ըստ մի այլ առասպելի՝ Վահագնը ձմեռվա մի ցուրտ գիշեր երկնքում գողացել է ասորաց Բարչամ աստծու հարդը, սակայն հարդը ճանապարհին թափվել է, որից և երկնքում առաջացել է Հարդագողի ճանապարհը, այսինքն Ծիր Կաթինը:

Վահագնի նշանավոր մեհյանը գտնվում էր Տարոն գավառի Աշտիշատ ավանում և կոչվում էր «Վահէվանեան»:

Հայերի հին ու սիրելի աստվածուհիներից էր Աստղիկը: Սա համարվում էր երկնային լույսի, ջրի, սիրո և գեղեցկության աստվածուհին: Սա քաջության աստված Վահագնի սիրուհին էր կամ ամուսինը: Այդ պատճառով էլ Աշտիշատ ավանում գտնվող նրա մեհյանը կոչվում էր «Սենեակ Վահագնի»:

Աստղիկին էր նվիրված հեթանոսական շրջանի ամենաժողովրդական տոներից մեկը՝ վարդավառի տոնը: Այս տոնը նույնպես նշվել է

մեծ հանդիսավորությամբ, ժողովրդական երգերով, պարերով, մարմնամարզական խաղերով և այլն: Տոնի օրը մարդիկ իրար վրա անուշահոտ կամ սովորական ջուր են ցանել, իբրև խաղաղության և անմեղության նշան՝ աղավնիներ թռցրել: Տոնը վարդավառ է կոչվել, որովհետև այդ օրը սիրո և գեղեցկության աստվածուհուն, գուցե և իրար, մարդիկ վարդ են նվիրել: Այս պատճառով էլ Աստղիկ դիցուհին կոչվել է նաև «Վարդամատն»: Վարդավառը հանդիսացել է սիրո, գեղեցկության, ջրի պաշտամունքի, վարդի ու ծաղկի տոն:

Հայկական պանթեոնի աստվածներից մեկն էր Արամազդի որդին՝ Միհրը: Սա հանդիսանում էր արեգակի, լույսի և կրակի աստված, արդարության ու ճշմարտության պաշտպան, մարդկանց կեղծիքի ու խարդախության մերկացնող: Միհր անունից են առաջացել Հայերի մեջ տարածված Միհր, Մհեր, Միհրան, Մեհրուժան, Միհրդատ և այլ արական անձնանունները: Միհր աստծու անունով է կոչվել Հայկական ամիսների ութերորդ օրը: Նրա տոնը կատարվել է մեհեկան ամսին:

Միհր աստծու նշանավոր մեհյանը գտնվում էր Դերջան գավառի Բագառիճ ավանում: Ենթադրում են, որ Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել Միհր աստծուն:

Արամազդի երկրորդ դուստրը, Անահիտի և Միհրի քույր Նանե աստվածուհին էր: Սա համարվում էր մայրության, սնուցիչ, տան կրակարանը պահպանող աստվածուհին: Սրա մեհյանը գտնվում էր Դարանաղյաց գավառի Թիլ ավանում:

Հայերի հարգված աստվածներից էր Տիրը: Սա աստվածահոր Արամազդի քարտուղարն էր, գրի, գրականության, գիտության ու արվեստի հովանավորողը, աստվածների սուրհանդակն ու պատգամախոսը: Սա իբրև «գրող» հաշվի էր առնում մարդկանց բարի ու չար գործերը, մեկնում էր երազները, Տիրը միաժամանակ մեռած հոգիներին տանում կամ ուղեկցում էր դեպի անդրշիրիմյան աշխարհ:

Տիր աստծու անունով է կոչվել Հայկական տոմարի Տրե ամիսը: Նրա անունից են առաջացել Հայերի մեջ տարածված Տիրատուր, Տիրան, Տիրայր, Տրդատ անունները և Հայերեն տիրացու բառը, որը սկզբնապես նշանակել է գիտնական:

Տիր աստծու մեհյանը գտնվել է Արտաշատ մայրաքաղաքի մոտ, Երազամույն կոչված տեղում:

Հայերի սիրելի աստվածներից մեկն էր նաև Ամանորը, որի մականունն էր Վանատուր: Ամանոր նշանակում է «նոր տարի», իսկ «Վանատուր»՝ «չյուրընկալ»: Նա հանդիսանում էր պտղաբերության,

բերքի, այգեկուծի, խաղողի, գինու և ուրախության աստված: Նրա նշանավոր մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան ավանում:

Ամանոր-Վանատուրին էր նվիրված բերքի տոնը, որը տեղի էր ունենում ամեն տարի, հայկական տոմարի առաջին ամսի՝ Նավասարդի մեկից մինչև վեցը: Ինչպես բոլոր Հին ժողովուրդների, նույնպես և հայերի մոտ բերքի տոնը նշվում էր մեծ հանդիսավորությամբ: Այդ օրերին Հայաստանի բոլոր կողմերից Բագավան էին հավաքվում տոնակատարություն մեծ թվով մասնակիցներ: Տոնին մասնակցում էին նաև թագավորը և նշանավոր իշխանները: Տոնակատարության ժամանակ կատարվում էին մեծ թվով զոհաբերություններ, կազմակերպվում էին խրախճանքներ՝ երգերի ու պարերի ուղեկցությամբ, ներկայացվում էին ժողովրդական կամ գուսանական թատերական խաղեր, տեղի էին ունենում մարմնամարզական մրցումներ, ձիարշավներ, ցլամարտեր, խաղեր և այլն:

Հելլենիզմի դարաշրջանում հայ ստրկատիրական վերնախավում և մասամբ քաղաքային բնակչության մեջ տարածվում էր նաև Հունական դիցաբանությունը: Իշխող խավերի միջավայրում հայկական պանթեոնը ստանում է հելլենիստական տեսք: Հայկական պանթեոնի աստվածները նույնացվում են Հունական համապատասխան գործառույթ ունեցող աստվածների հետ և անվանվում նաև նրանց անունով: Այսպես, Արամազդը նույնացվում է Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Ափրոդիտեի, Տիրը՝ Ապոլլոնի, Վահագնը՝ Հերակլեսի հետ: Սակայն օտարամուտ այս աստվածների ո՛չ պաշտամունքը և ո՛չ էլ նրանց անունները ժողովրդի մեջ չեն տարածվում և չուտով մոռացվում են:

**Հայկական
տոմարը**

Գյուղատնտեսությունը սերտորեն կապված է տարվա եղանակների, ժամանակի հետ: Ցանքսի, բերքահավաքի և գյուղատնտեսական մյուս աշխատանքների ճիշտ ժամանակը որոշելու համար բնական է, որ հայերը վաղ ժամանակներից պետք է ստեղծեին նաև իրենց տոմարը կամ օրացույցը:

Ինչպես այլ ժողովուրդների, նույնպես և հայկական տոմարը ստեղծվել է երկնային լուսատուների շարժման հիման վրա: Հատուկ մարդիկ են եղել, որոնք դիտել են երկնային լուսատուների շարժումը, կազմել են օրացույց և գուշակություններ արել:

Հին եգիպտացիների, բաբելոնացիների և պարսիկների նման, հայերը ևս սկզբում տարին հաշվել են լուսնի շարժումով: Լուսնային

տարին ունեցել է ընդամենը 360 օր: Սակայն Հետագայում հայերն ընդունում են նոր արեգակնային տոմարը և սկսում են տարին հաշվել արեգակի շարժումով:

Հայկական արեգակնային տոմարով տարին ուներ 365 օր և բաժանված էր տասներկու լրիվ ամիսների և մեկ փոքր ամսի: Ամիսների անուններն էին Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից և Ավելյաց: Առաջին տասներկու լրիվ ամիսներն ունեին 30 օր, իսկ Ավելյաց ամիսը ուներ ընդամենը 5 օր: Այս 5 օրյա փոքր ամիսը հայկական տոմարում ավելացվել է լուսնային տարուց արեգակնային տարվան անցնելու ժամանակ: Այդ 5 օրվա տարբերությունը նախկինում գոյություն ունեցող տասներկու ամիսների վրա չի ավելացվել, այլ առանձին ամիս է դարձել, հավանաբար նախապես սահմանված կրոնական տոների կարգը չխախտելու համար:

Հայկական ամիսների անունները հայերենով մեծ մասամբ անբացատրելի են ու անհասկանալի: Նավասարդ անունը համարում են իրանական փոխառություն, որ նշանակում է «նոր տարի»: Հոռի և Սահմի ամիսները կապվում են վրացերեն «օրի» և «սամի», այսինքն՝ «երկու» և «երեք» բառերի հետ, որով այդ ամիսները նշանակում են «երկրորդ» և «երրորդ»: Ենթադրում են նաև, որ Հոռի անունը առաջացել է եգիպտական «Օրուս» և հունահռոմեական «Հոռա» ամսանուններից: Տրե և Մեհեկան ամիսների անունները առաջացել են Տիր և Միհր աստվածների անուններից և նվիրված են եղել սրանց: Քաղոց և Մարգաց ամիսները կապված են եղել բերքահավաքի և մարգեր կապելու գյուղատնտեսական աշխատանքների հետ: Արեգ ամիսը, ինչպես ցույց է տալիս նրա անունը, նվիրված է եղել արեգակին:

Անանիա Ծիրակացու հաղորդած մի ավանդությունից համաձայն՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Մեհեկան, Արեգի և Մարերի ամիսները եղել են հայոց նախահոր՝ Հայկի դուստրերի, իսկ Տրե, Քաղոց, Արաց և Հրոտից ամիսները՝ նրա որդիների անունները:

Ամսվա յուրաքանչյուր օրը ևս ուներ իր հատուկ անունը: Այդ օրերի անուններն էին՝ Արեգ, Հրանդ, Արամ, Մարգար, Ահրանք, Մազդեղ, Աստղիկ, Միհր, Զուպարե, Մուրց, Երեզական, Անի, Պարխար, Վանատ (Վանատուր), Արամազդ, Մանի, Ասակ, Մասիս, Անահիտ, Արագած, Գրգուռ, Կորդուք, Ծմակ, Լուսնակ, Յրոն (կամ Սփիռոն), Նպատ, Վահագն, Սիմ, Վարագ և Գիշերավար:

Բերված այս ցանկից երևում է, որ ամսվա օրերը կոչվել են Հայաստանի նշանավոր լեռների, հայկական պանթեոնի աստվածների, Անի

մայրաքաղաքի, Արամ նահապետի, արեգակի, լուսնի, աստղերի և մի քանի այլ անուններով: Ավելյաց ամսի օրերը կոչվել են այն ժամանակ հայտնի 5 մոլորակների՝ Փայլածուի, Արուսյակի, Հրատի, Լուսընթակի և Երևակի անուններով:

Հայերի մոտ մինչև XI դարի վերջը գոյություն չուներ նահանջ տարվա գաղափարը: Այդ պատճառով էլ հայկական տոմարը շարժական էր, և չորս տարին մեկ անգամ մեկ օրով հայոց տարին առաջ էր ընկնում իսկական տարուց: Հայոց ամանորը (նոր տարին), որը տոնվում էր Նավասարդի մեկին, ամեն չորս տարի հետո մեկ օրով շուտ էր գալիս իսկական տարուց:

1084 թ. հայ նշանավոր գիտնական Հովհաննես Սարկավազը բարեփոխում և անշարժ է դարձնում հայկական տոմարը՝ նրա մեջ մըտցրելով նահանջ տարվա գաղափարը: Հայկական անշարժ տոմարով Նավասարդի 1-ը կամ հայոց ամանորը (նոր տարին) համընկնում է օգոստոսի 11-ին:

Հայկական տոմարն իր գոյությունը պահպանում է մինչև XVII դարի սկիզբը:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Ճարտարապետությունը - Հնուց ի վեր գոյություն ունեցող հայկական ճարտարապետությունը հելլենիզմի դարաշրջանում ստեղծագործաբար յուրացնելով հունական և փոքրասիական երկրների շինարարական արվեստի առաջավոր տարրերը, բայց և պահպանելով իր ինքնատիպ բնույթը և տեղական հատկանիշները՝ հասնում է զարգացման նոր ու բարձր աստիճանի:

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում աննախընթաց մեծ թափ ու ծավալ է ստանում շինարարությունը: Կառուցվում են մի քանի տասնյակ մեծ քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, բազմաթիվ անառիկ ամրոցներ, հոյակապ պալատներ, տաճարներ, թատրոններ, պարիսպներ, կամուրջներ, հյուրանոցներ, բաղնիքներ և այլն: Սկզբնաղբյուրները մեծ գովեստներով ու հիացմունքով են խոսում Հայաստանի հին մայրաքաղաքներ Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Տիգրանակերտի և Վաղարշապատի ճարտարապետական հուշարձանների մասին:

Սակայն, տարաբախտաբար, այդ հուշարձաններից միայն հազվագյուտ նմուշներ են հասել մեզ: Տիգրանակերտի ավերակներում պահպանվել են սև սրբատաշ քարերից կառուցված, պաշտպանական

Հզոր աշտարակներ ունեցող, թագազարդ արծիվներով քանդակազարդված՝ քաղաքի լայն ու բարձր պարիսպների մնացորդները: Պահպանվել է նաև տեղական և հունական ճարտարապետական ոճերի համակցությունը կառուցված, սլաքածե աղեղներ ու կամարներ ունեցող, սյունազարդ երկհարկանի մի շենքի կիսականգուն ճակատը: Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս շենքը եղել է պալատական շենքերից մեկը կամ Տիգրանակերտի արքունի թատրոնը:

Ճարտարապետական իր հուշարձանների մի մասի ավերակների պահպանումով երջանիկ բացառություն է կազմում Գառնիի թագավորական ամրոցը: Հին Հայկական ճարտարապետության մոնումենտալ կոթողներից, հին Հայաստանի ռազմապաշտպանական Հզոր ու առաջնակարգ կառուցումներից մեկն է այս ամրոցի կիսականգուն պարիսպը՝ իր աշտարակներով, որը հավանաբար կառուցվել է Ք. ա. III դարում, իսկ վերակառուցվել՝ Ք. հ. I դարում: Պարիսպ ունի ավելի քան 314 մետր երկարություն և 2 մետր հաստություն: Ենթադրվում է, որ նրա սկզբնական բարձրությունը եղել է 25 մետր, որից այժմ մնացել է միայն 6-8 մետր: Պարիսպը կառուցված է մինչև 5-6 տոննա կշռող բազալտե սրբատաշ քարերից: Այդ խոշոր ու ծանր քարերը իրար վրա բարձրացված և հարթ ու մաքուր շարված են առանց շաղախի: Դրանք իրար են միացված՝ երկու ծայրերը կոացրած և հաստուկ փոսերի մեջ արձիճն ձուլվածքով ամրացված երկաթե հաստ կապերով:

Ապշեցուցիչ Հզորություն ունեն պարսպից դուրս ցցված և ուղղանկյան ձև ունեցող 14 աշտարակները: Այդ աշտարակները, որ նույնպես կառուցված են բազալտածե քարերից և իրարից հեռու են գտնվում 10-12 մետր տարածությամբ, ամրոցի պաշտպանական սիստեմի մեջ վճռական դեր են կատարել: Գառնիի բերդը իր Հզոր պաշտպանական համակարգով անառիկ ու անմատչելի է եղել ժամանակի ռազմական տեխնիկայի համար:

Հայկական հեղինակազան ճարտարապետության գլուխգործոցը, նրա պսակը և անկրկնելի մարգարիտն է Գառնիի հեթանոսական տաճարը, որի ավերակներն անգամ ցնցող ու գերող տպավորություն են թողնում դիտողների վրա: Այս հազվագյուտ, փառահեղ ու չքեղ տաճարը կառուցվել է Ք. հ. I դարում: Նա ունեցել է երկթեք տանիք, եռանկյունի ճակատ և չորս կողմից 24 սյուներից բաղկացած սյունաշար: Պարսպի նման տաճարը ևս կառուցված է կարծր բազալտե հսկայական քարերից և ամրացված երկաթե կապերով ու արձիճն ձուլվածքով: Սակայն տաճարի քարերը անհամեմատ ավելի սրբա-

տաչ են ու հղկված, քան պարսպի քարերը: Տաճարի ճակատը, խոյակները, եզրերը, քարե առաստաղը և այլ մասեր գեղազարդված են բուսական ու երկրաչափական ձոխ, կատարելություն հասնող նուրբ քանդակներով, որոնք մեծ հիացմունք են պատճառում դիտողներին:

Տաճարը կանգուն է եղել մինչև XVII դարի երկրորդ կեսը, և կործանվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ: Կործանման հիմնական պատճառներից մեկը եղել է այն, որ հրազենի գործածությունից հետո շատ բախտախնդիրներ բարբարոսաբար հանել են շենքի քարերն ու մասերը իրար ամրացնող արձիճը:

Հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերվել է նաև Գառնիի պալատական բաղնիքի շենքը, որը կառուցվել է II կամ III դարերում: Իր հինգ սենյակներով կամ բաժանմունքներով, իր տաքացման համակարգով այս բաղնիքը շինարարական արվեստի տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Սա հին Հայաստանի առաջին մեզ հասած միակ քաղաքացիական կոմունալ շինությունն է:

Գառնիի պարիսպը և նրա աշտարակները, հեթանոսական տաճարը և պալատական բաղնիքի շենքը ոչ միայն ցույց են տալիս շինարարական արվեստի ու տեխնիկայի բարձր աստիճանը հին Հայաստանում, այլև մեզ մոտավոր զաղափար են տալիս Հայաստանի հին մայրաքաղաքներում, քաղաքներում, ամրոցներում և սրբավայրերում գոյություն ունեցած ճարտարապետական կոթողների մասին:

Հին Հայաստանում զարգացած էին նաև **Քանդակագործու-** քանդակագործությունը և կիրառական արվեստը և կիրառական արվեստը:

կան արվեստը Հայ և օտար սկզբնաղբյուրների վկայություններից հայտնի է, որ հայկական հեթանոսական տաճարներում եղել են մարմարից, քարից, փղոսկրից, ոսկուց, արծաթից, բրոնզից, պղնձից և այլ նյութերից պատրաստված՝ աստվածների և թագավորների մեծ ու փոքր բազմաթիվ արձաններ: Անկասկած է, որ զանազան արձաններ եղել են նաև քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում, թագավորական պալատներում, հարուստ ստրկատերերի ու քաղաքացիների տներում:

Սակայն այդ արձաններից մեկ միայն մի քանի նմուշներ ու բեկորներ են հասել: Ժամանակը գրեթե իսպառ ոչնչացրել է արվեստի այդ հուշարձանները:

Փոքր Հայքի Սատաղ քաղաքում գտնվել է բրոնզից պատրաստված Անահիտ աստվածուհու արձանի գլուխը, որն այժմ պահվում է Բրիտանական թանգարանում: Հայկական հելլենիստական արվեստի

ոճով պատրաստված այս արձանը մեզ հասած արձանների մեջ ամենալավագույնն է. կերտված է գեղարվեստական բարձր ճաշակով և մեծ վարպետությամբ: Նույն ոճի ուշագրավ ու արժեքավոր նմուշներ են հանդիսանում նաև Վաղարշապատում գտնված կավե արձանիկների գլուխները: Գառնիում հայտնաբերվել են կավից պատրաստված մի կնոջ արձանիկի իրանն ու պատվանդանը, որտեղ շատ գեղեցիկ ու բնական տրված են կնոջ կեցվածքը, ոտքերի դիրքը և շրջագեեստի հարուստ ծալքերը: Պետք է ենթադրել, որ դա եղել է աստվածուհիներից կամ թագուհիներից մեկի արձանիկը:

Հայաստանում զարգացած էր նաև կերպարվեստը: Տաճարները և պալատները ոչ միայն զարդարվում էին դրսից՝ բուսական ու երկրաչափական ճոխ զարդաքանդակներով, ինչպիսին Գառնիի Հեթանոսական տաճարն է, այլև ներսից՝ որմնանկարներով ու խճանկարներով:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գառնիի նորահայտ պալատական բաղնիքի հանդերձասրահի խճանկար հատակը, որը, հավանաբար, պատրաստվել է III դարում: Նրա այուժեն կամ թեման վերցված է հունական դիցաբանությունից: Ամբողջ խճանկարը պատրաստված է ծով ներկայացնող բաց կանաչավուն ֆոնի վրա: Նրա կենտրոնում, գեղեցիկ շրջանակի մեջ կոտոշավոր տղամարդու կիսապատկերով պատկերված է օվկիանոսը, իսկ կնոջ կիսապատկերով՝ ծովը: Այս շրջանակի չորս կողմում պատկերված են նաև հունական ծովային, սիրո և այլ աստվածների, գեղեցկություն աստվածուհի՝ Ափրոդիտեի, ծովում պարող նրա քույրերի՝ ներեիդների (ծովահարսերի), մարդկանց գլխով, ձիու ոտքերով ու ձկան պոչով էակների, ձկնորսների ու ձկների բազմաթիվ նկարներ:

Ոճանկարի վրա կան նաև հունարեն արձանագրություններ, որոնք լոկ պատկերված աստվածների ու ներեիդների անունների հիշատակագրություններ են: Բացի այդ, ամենաաչքի ընկնող տեղում, կենտրոնական շրջանակի վերևում խճանկարը պատրաստող արվեստագետ վարպետները ևս թողել են մի արձանագրություն, որտեղ ասված է. «Աշխատեցինք ոչինչ չստանալով»: Այս արձանագրությամբ արվեստագետ վարպետները ոչ թե բողոք են հայտնել, այլ պարզապես իրենց աշխատանքը նվիրել ու վարձատրություն չեն ստացել, որպեսզի արժանանան թագավորի հատուկ ուշադրությանը:

Ոճանկարը ամբողջապես պատրաստված է Գառնիի մոտից հոսող Ազատ գետից հավաքված և նրա ջրերով հղկված գունավոր խճաքարերից: Թեև խճանկարի բոլոր նկարները միանման բարձր վար-

պետութեամբ ու համաչափութեամբ չեն կատարված, թեև ամբողջ խճանկարը իր վրա կրում է հեղինակական արվեստի անկման շրջանի նշանները, բայց և այնպես, հանդիսանալով տեղում զարգացող հեղինակական արվեստի այդ բնագավառի մեզ հասած միակ ու հազվագյուտ նմուշը, մշակութային ու պատմական տեսակետից այն մեծ արժեք է ներկայացնում:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ Հին Հայաստանում գոյություն են ունեցել գոհարազարդ թագեր, խույրեր, թանկագին մետաղներից ու քարերից պատրաստված զանազան զարդեր, գորգեր և այլն: Կիրառական արվեստի լավագույն նմուշներ են հանդիսանում Մոսկի և Մեծ Հայքի հայ թագավորների, հատկապես Տիգրան II-ի և Արտավազդ II-ի պատկերներով ու զանազան տեսարաններով կտրած դրամներ, Բակուր թագավորի՝ վերևում հիշատակված արծաթե թասը, մի կնոջ կամ դերասանուհու դեմքի տարբեր արտահայտություններով գեղազարդված՝ Արմավիրում հայտնաբերված չորս ոսկե մեղալիոնները, թանկարժեք քարերի վրա տարբեր պատկերներ փորագրած կնիքները և այլն: Կիրառական արվեստի հիանալի նմուշներ են նաև վերջերս Սիսիանի դամբարան-գոհարանում գտնված վիշապազուլիս ոսկյա ապարանջանները, զավազանի զլուխները, արծաթյա գեղազարդված թասերը, որոնք պատկանում են Ք. հ. I դարին:

Հին հայկական մշակույթն իր պատվավոր տեղն է գրավում համաշխարհային քաղաքակրթութեան պատմության մեջ: